



**Մ Ա Ր Ջ Ի Կ**  
ԲԱՇԷՄ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Մ Ա Ր Ձ Ի Կ  
ՀՄԸՄ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՊԷՅՐՈՒԹ — ԼԻԲԱՆԱՆ

1990



Իբրև մատենագիտական ծանօթութիւն  
չայտնենք թէ՛ սոյն 79 խմբագրականներէն 73ի  
հեղինակն է եղբ.

**ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ**

(Ե. Երկաթ)

Իսկ վեցը՝ «Մեր Դիցազնավէպին Ոգիով»,  
«Հայ Մարգիկին Կեցուածքը», «Տարուան Մը  
Հունձքը», «Հայ Մկանին Ուժը», «Հ.Մ.Ը.Մ.ի  
Սկստութիւնը» եւ «Յարութեան Ծունչը» գրած  
է եղբ.

**ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ**

(Յ. Գեղարդ)

Գնահատանքով կ'արձանագրենք նաեւ, որ  
տարիներու սոյն աշխատութիւնը կատարուած  
է անձնուիրաբար, իբրև միութենական պար-  
տականութիւն:

Հ.Մ.Ը.Մ.Ի

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





Սոյն Հատորը Կը Հրատարակուի  
Մասնակցութեամբ

Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ՝

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ**

եւ

**ԱՐԹՈՒՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ**

## ԻԻՐԱՅԱՏՈՒԿ ԱՄՊԻՈՆ

Եթէ «Մարզիկ» պաշտօնաթերթով մեր Միութիւնը տասը տարիներէ ի վեր իր համագաղութային կեանքն ու գործը գաղութէ գաղութ ծանօթացնող եւ հանդիսադրող *Բեմ* ունեցաւ, ապա «Մարզիկ»ի *Խմբագրական էջով՝ Հ.Մ.Ը.Մ.* ունեցաւ իր գաղափարախօսութիւնը տարասփռող, իր *Հաւատքն ու Ազգային Դաւանանքը* քարոզող, իր *Ծրագրին ու Կանոնադրին* էտարեբը բացատրող, անգիր կանոնագիր՝ իր միութենական Աւանդութիւնները արանդող եւ սկսուտական ու մարզական գործով իր հետապնդած «*Հայրենիքէն դուրս, Հայրենիքին համար*» վախճանական նպատակը առաջադրող *Եզակի Ամպիոն*:

«Մարզիկ»ի իւրաքանչիւր խմբագրականով բանաձեւուած կը տեսնենք Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն եւ Հայ պատանիին ու երիտասարդին ուղղուած «*Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր*»ի բարձրիմաստ *Հրահանգ*, համագգային *Գոյապայքարի* եւ ազգային նպատակներու իրականացման նուիրուած *Մասնակցութեան Կոչ*, *Հայրենիքին Ծառայելու* եւ *Հայուն Աստծոյն Հաւատարիմ ըլլալու* ու իտականատարութեան *Հրաւէր*, *Հայուն Բարոյական*

**Գաղափարական հարազատ կերպարը անադարտ ՊաՀե-  
լու Պատգամ:**

«Մարզիկ»ի խմբագրականներու ամպիոնէն, ընթերցողը անպայման կը լսէ պատմութեան ձայնը, Հայրենիքի եւ Հայրենի հողը իրենց արիւնով ոռոգած, փաղանգ փաղանգ մարտիրոսներու կանչը, եւ հաւաքական ուժ դառնալու եւ այդ ուժով հայապահպանումէն անդին անցնելու հրամայականը, զօրակոչը:

Իրենց ազգային, բարոյական ու գաղափարական այս նկարագրին համար ալ, «Մարզիկ»ի խմբագրականները կը վերածուին առանձին գրֆոյկի, որ լոյս կը տեսնէ Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունամեակին առթիւ:

Համոզուած ենք, որ միութեանական առողջ դաստիարակութեան ծառայելու կոչուած այս հրատարակութիւնը ըստ արժանւոյն պիտի ընկալուի բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի համակիր հայ երիտասարդութեան կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



# Ա Ռ Ա Ջ Ի Ն Ը



Այս հրատարակությունը մտածումը չէ օրուան Կեդրոնական Վարչութեան, ոչ ալ Հ.Մ.Ը.Մ.ի Առաջին թէ Երկրորդ Ընդհ. Ժողովներուն:

Այս հրատարակութեան մտածումը կը պատկանի անցած տասնամեակներուն, կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի փոքրագոյն մասնաճիւղերէն մինչեւ գերագոյն ժողովներուն:

Հ.Մ.Ը.Մ. առաջին անգամ չէ, որ մարզական հրատարակութեա՛նք ալ հրապարակ կ'իջնէ:

Գրի ճամբով Հ.Մ.Ը.Մ.ը ներկայութիւն դարձած է զանազան գաղութներու մէջ, տարբեր կամ նոյն ժամանակամիջոցներուն: Բայց շրջանի մը կամ մասնաճիւղի մը ձեռնարկ՝ պարբերական այդ հրատարակութիւնները տեսած են որոշ ժամանակ միայն, ապա դադրած՝ վերսկսելու համար ատեն մը ետք, նոյն վայրին մէջ կամ այլուր:

Այժմ, երբ այս հրատարակութեամբ լոյս կը տեսնէ միջ-գաղութային առաջին մարզական թերթը, որուն կարկինին տակ պիտի առնուի ամբողջ Սփիւռք մը, իր այդ իսկ բնութեամբ եւ ընդհանրականի վերածուած ուժով, կրնանք անվարան յայտարարել, որ անհկա ի յառաջագունէ ապահոված է մնայունութեան բոլոր կարելիութիւնները:

Այս հրատարակութիւնը արդիւնքը չէ պարագայական խանդավառութեան մը, այլ կարի՛ք է, պահա՛նջ է, անհրաժեշտութիւն է:

Թերեւս այս իսկ պատճառով այս հրատարակութիւնը հրապարակ կ'իջնէ ո՛չ թէ յոյսով, ո՛չ թէ փորձի համար, այլ ինքնավստահութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը պէ՛տք է ունենար հայելի մը, որուն մէջ նայէր երբեմն-երբեմն, կոկէր ինքզինք եւ, ինչո՞ւ չէ, գոհանար:

Այս հրատարակութիւնը պիտի ըլլայ ա՛յդ հայելին:

Հ.Մ.Ը.Մ.ի 47 մասնաճիւղերը (այսօր 47, վաղը քանի՞ով ա-

ւելի) պիտի տեսնուին հոս, իրենց ամբողջ գործունէութեամբ, գայլիկէն ու մրջնիկէն մինչեւ Ընդհանուր Ժողով:

Այս հրատարակութիւնը պիտի ըլլայ «մանրամասնութիւն» նկատուող բոլոր արդիւնքներուն եւ շարժումներուն մնայուն արխիւը:

Տակաւին, այս հրատարակութիւնը միայն Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան արտայայտութիւնը պիտի չըլլայ: Հոս պիտի տեսնուին մարզական մեր բոլոր միութեանց հիմնական յաջողութիւնները, հոս պիտի տեսնուին հայրենի մարզիկները իրենց դափնիներով:

Հոս պիտի արձանագրուի նաեւ միջազգային մարզական շարժումը. աշխարհի ախոյեաններն ու ախոյեանութիւնները իրենց տեղը պիտի ունենան այս սիւնակներուն մէջ:

Մարզանքն ու արուեստը ազգութիւն չեն ճանչնար, ազգային երանգին յաւելեալ հպարտանք տալով հանդերձ:

Հ.Մ.Ը.Մ. երբեք ինքնանպատակ չէ եղած. իր պաշտօնաթերթը, իրեն պէս, ինքնանպատակ պիտի չգործէ:

Առաջին թիւը խոստում մըն է, ծրագրի նախաճաշակ մը:

Յաջորդ թիւերը պիտի ըլլան խոստումին գործադրութիւնը եւ ծրագրի աստիճանական բարելաւումն ու բիրելդացումը:

# ՄԱՐԶԻԿԸ, ՄԱՄՈՒԼԸ, ԳՐԱԳԷՏԸ



Հայ թե միջազգային գրականության մէջ մարմնամարզի զանազան արտայայտութիւնները ընդհանրապէս մամուլի՝ ճամբով արձանագրուած են եւ, այդ իսկ պատճառաւ, եղած են աւելի արդիւնքներո՛ւ տախտակ, քան վկայարան ապրումի՛:

Մամուլը մնացած է իր սահմանին մէջ, այսինքն՝ իրմէ ակնկալուածին, մարմնամարզը շարունակած է կիրարկուիլ մարդու ծնունդէն ի վեր, սակայն գրագէտը տակաւին վարանած է այդ ճամբով լուսարձակի տակ առնելու մուսան, ներշնչումի վերածելու իրողութիւն մը, որ ոչինչ ունի ընթացիկ:

Մարզական աշխարհը ներկայացնելու համար սխա՛լ պիտի ըլլայ դիմել թիւերու փաստին. ֆութպոլի խաղ մը դաշտ կրնայ հաւաքել հարիւր հազարաւոր հանդիսական, պատկերասփիւռին առջեւ գամել քանի մը միլիոն մարդ:

Մարզիկներուն հետ կը տառապին բազմութիւններ, պարտութեան մը պարագային անձնասպանութեան պարագաներ կ'արձանագրուին, յաղթանակի մը պարագային մարդիկ գինիի տակառներ կը պարպեն կէս գիշերէն առաւօտ ու մինչեւ յաջորդ քանի մը արշալոյս:

Հանդիսատես ու դերակատար (մարզիկ) կը նոյնանան մագնիսական պահերու մէջ, ամբողջ մասսա մը վարկեանը վարկեանին կ'անցընէ անձկութեան արձանագրելի՛ պահեր, կը համբուրէ երջանկութիւնը, կ'ապտակուի յուսախաբութենէ, կը ժպտի յոյսին հետ, որոշ ժամ մը կը քալէ ճշդուած այլ ժամ ու կը սկսի հեւալ ժամանակէն առաջ ու ետք:

Ա՛յս է մարզական աշխարհը, սակայն ո՛րք է մարզիկի՛ն աշխարհը. աշխարհ, որ գիրով կ'արձանագրուի, որպէսզի ընթերցումով երակներէն անցնի սիրտին:

Մէկ երկվայրկեան ժամանակով, երկվայրկեանէ՛ն ալ պա-

կասով կարենալ մրցանիշ հաստատելու համար, մարզիկը քանի՞  
ամսու, քանի՞ տարուան յամառութիւն, ճիգ, զոհողութիւն, լարու-  
ծութիւն, կարգապահութիւն, պայքարելու ոգի, խանդավառութիւն,  
հաւատք ու կանոնաւորութիւն պէտք է պարտադրէ ինք իրեն: Հա-  
ւաքական խաղերու (ֆութպոլ, պասքէթպոլ, վոլիպոլ) յաղթանակի  
մը համար որքա՞ն փորձ է պէտք, ճարպիկութիւն, ընկերասիրու-  
թիւն, պատասխանատուութեան գիտակցութիւն, գործակցութեան  
ոգի եւ չարքաշ աշխատանք:

Մարզական մամուլ ունեցեր ենք. բաւարար-անբաւարար,  
ընդմիջումներով կամ անընդմէջ, ունեցեր ենք. սակայն՝ մամուլի՝  
սահմաններուն մէջ, լրատուի՝ մակարդակով:

**Չենք ունեցած միւսը:**

Մինչդեռ մեր գրագէտներէն ոմանք անպայման անցեր են  
դաշտերէ, խաղացեր են ֆութպոլ, հաստատեր են վագրի մրցա-  
նիշներ, տողանցեր են որպէս գաշիկ ու սկառտ, մասնակցեր են  
բանակումներու:

Հետեւաբար, անկարելի չէ եւ արդար է, որ դնդերներու խը-  
ռովքը դառնայ գրականութիւն: Առ այդ գործ ունին կատարելիք  
հաւասարապէս երեքը՝ մարզիկը, մամուլը, գրագէտը:



# Ա Պ Ր Ի՛ Լ



Այդ բոլորէն էտք, մենք որոշած ենք ապրիլ:

Այսպէս:

Դաշտ ունենանք թէ ոչ, ախոյեան պիտի տանք:

Գիտաշխատանոց ունենանք թէ ոչ, գիտնական պիտի երկնենք:

Տպարան ունենանք թէ ոչ, պիտի հրատարակենք գիրք:

Անկախութիւն ունենանք թէ ոչ, պիտի պարզենք դրօշ ու պիտի դրդացնենք քայլերգ:

Դպրոց ունենանք թէ ոչ, աչբութենը պիտի գրենք տեղ մը. աւագի վրայ, սրտերու մէջ:

Մեր շարականներով պիտի ողջագորութիւնք Աստուծոյ հետ, եկեղեցի ունենանք թէ ոչ:

Պիտի ապրինք:

Պիտի ապրինք, որպէսզի ունենանք ինչ որ չունինք, ինչ որ առին մեր ձեռքէն:

Ապրիլը մեզի համար կիրք է, խոստում է, նպատակ է, վըրէժխնդրութիւն է:

Պիտի ապրինք, եթէ պէտք ըլլայ մեռցնելով:

Պիտի ապրինք, եթէ հարկ ըլլայ մեռնելով:

Մեր միջոցաւ հազարամեակներ կ'աղաղակեն:

Մեր կեանքը՝ Արարատին պէս:

Նոր դասագիրք ու նոր քարտէս զայն աչօր նշանակած են տեղ մը, սակայն գրող ու գծող հաւասարապէս գիտեն, գիտենք մա'նաւանդ մենք, որ աշխարհ վրիպակներով լեցուն է:

Պիտի ապրինք՝ սրբագրելո՛ւ համար:

Տեսէ՛ք:

Մեր պապենական հողերը կը խաշին տօթէն, սակայն մեր պապենական աղբիւրները ճամբայ չունին հողին ամուսնութեամբ բերք դառնալու:

**Իսկ մենք, մենք փոքրիկ խաղավայրի մը տարածութեան համար անգամ կը տազնապինք:**

**Տեսէ՛ք:**

**Հիմը կը դնենք շարժումներու, շարժում դառնալու համար աղերսագի՛ր կը ներկայացնենք:**

**Տեսէ՛ք:**

**Ժա՛յռ ծամելով կը ստանանք փշրանք մը սնունդ, բայց կը խորհին, որ յղփացա՛ծ ենք:**

**Ոչ ոք կը հասկնայ մեզ ու ամէն ոք կը մեղադրէ մեզ, որ մեկուսացած կ'ապրինք:**

**Ոչ ոք կը հասկնայ, որ աշխարհին համար պատիժը մեռնիլն է. մեզի համար պատիժը եղաւ միւսը. ապրի՛լը:**

**Պարզապէս վերցուցած ենք ճակատագրի սեւ ձեռնոցը ու, դիտեցէ՛ք, կ'ապրինք:**

**Մաչիսէն Մարտ կրնանք չխօսիլ Ապրիլի մասին, սակայն Ապրիլին չենք կրնար չխօսիլ մահուան մասին:**

**Ապրիլի պատմութիւնը ամէն վայրկեան կը խառնուի ամէն ինչին. մարգականին, մշակութայինին, քաղաքականին, անէծքի՛ն ու աղօթքի՛ն:**

**Ա՛յս է:**

**Հիւա՛նդ ենք:**

**Թող հիւանդացնողները մտահոգուին մեր հիւանդութեամբ:**

**Այդ բոլորէն ետք, մենք ուրիշ ելք չունինք: Փաստած ենք, որ մեր կեանքով միայն կանաչութիւն կը ծաղկի եւ բարութիւն կը հոսի:**

**Եթէ մեղք պիտի նկատուի այսքան տաժանքո՛վ ապրելու մեր այս հաշտութեանը անգամ, ըլլա՛յ:**

**Մենք պիտի գործենք սրբազան այդ մեղքը:**

**Պիտի ապրի՛նք:**

# ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԿԱՐՕՏՈՎ



Հիմա հոս ենք. սփի'ոք:

Հիմա համազգեստը ա՛յս է. սկա-  
ուտականը, մարզականը:

Հիմա ա՛յդ է ահաասիկ, որ յուզու-  
մի կը մատնէ բազմութիւնները, երբ սկա-  
ուտական տողանցք մը կը սկսի, կտրելու  
համար պողոտայ ու դաշտ:

Բանակի նախանաշակն է համազ-  
գեստը. ասիկա միաւորը հաւաքականու-  
թեա՛ն բարձրացնող նշանն է, այսօրուան  
մեր ունեցածը, որ կը խռովէ մեզ, կը տանի

կորսուած փառքերու ափսոսանքին եւ զանոնք ունենալու յոյսին  
ու վճռականութեան միանգամայն:

Համազգեստը այլոց համար զարդ է, կոկիկություն, պատա-  
նեկան աղուորություն. մեզի համար ուրի՛շ բան է համազգեստը:

Մեզի համար համազգեստը հին օրերու թագաւոր ու իշխա-  
նագուն է, պահլաւիկ ու պալատական, բարձրաստիճան բանա-  
կայի՛ն:

Մեզի համար համազգեստը հայրենիքին հզօրանքն է, պե-  
տականութեան փաստ, լինելութեան գրգիռ:

Պատմութեան վերաքա՛ղ է համազգեստը, պատմութի՛ւն է.  
անցեալ, ներկայ, ապագայ:

Ի տես գայիկներու տողանցքին, ո՛ր ժողովուրդը երջան-  
կութեան ու տխրութեան միաձուլուած արցունք կը թափէ: Եւ ինչո՞վ  
բացատրել շեշտուած այն ակնածանքը, զոր մեր համազգեստա-  
ւորները կը ստեղծեն մեր մէջ:

Ա՛յդ է: Համազգեստով կը տեսնուի ինչ որ չկայ, ինչ որ  
պէտք է ըլլայ, պիտի ըլլա՛յ:

Ա՛յդ է: Համազգեստով կը վերականգնի մօտիկ երէկը, երբ  
այլոց համազգեստաւորները (բանի մը հոգիով) տեղահան ըրին  
մեզ (հազարներով), որովհետեւ մենք համազգեստաւոր չունէինք:

Ու մանաւանդ ա՛յդ է. հիմա ունի՛նք:

Յստակ է. գլխարկ ու փողկապ, գօտի ու գուլպայ, երիզ  
եռագոյն, աստղեր ու պէճեր, փող ու թմբուկ, ծնծղայ քաղցրահունչ,

այն չէ, ինչ որ կը տեսնուի. մի՛սն է, որ կը ստեղծուի ենթագիտակցութեան մէջ. կորսուած փառքը, դոփիւնը արագավազ ձիերուն, արքաներուն արքայական շքեղութիւնը, ուժն ու սարսուռը Հաչաստանի:

Վեց հարիւր տարուան գերութեան հակադրուող յոյսն է համազգեստը, դեռ երէկի մեր մեծ ողբերգութեան պերճախօս պատասխանն է համազգեստը. աւելի՛ն, կազմակերպութեան ու միութեան միասնական փաստաթուղթն է ան:

Գարերու ընթացքին մեր արձանագրած կորուստներուն ամէնէ՛ն թանկագիններէն մէկն էր նաեւ այս, համազգեստը, որ այսօր Սփիւռքի մէջ կը շքերթէ որպէս գայլիկ-մարզիկ-սկաւառ եւ բազմութիւններ կը փշաքաղէ, հոգիներուն մէջ վերականգնելով իրմով խտացած ազգային ամէ՛ն առաքինութիւն:

Սկաւառին համազգեստը սկաւառին ըլլալէ կը դադրի յաճախ, կը ներկայանայ որպէս համազգեստ ու այդ պատճառաւ, ահաւասիկ, կ'ալեկոծէ մեզ, կը խանդավառէ կամ պարզապէս, անհաւատալիին առթած ամբողջ զմայլանքով, կը քարացնէ:

#### Տակաւի՛ն:

Թերեւս համազգեստն է նաեւ, որ այսօր, նորոգ ուխտեալներու նոր աւիւնով ու նոր թափով, զինուորին ու զինուորականին, ոստիկանին ու սահմանապահին մօտեցող արութեամբ, մեզ մեր անցեալին կը շողկապէ նոր ջերմեռանդութեամբ, որ մեզ կը դարձընէ բնական ու անհաւատալի շարունակութիւնը այն հսկայ ու անաւարտ վէպին ու վիպերգութեան, որ կը կոչուի պատմութիւն Հայոց, պատմութիւն Հայկազնեան ազնիւ ցեղին:

Ու վերջապէս, այսօր, մեր բոլոր համազգեստատրները ու համազգեստով խոռովող մեր բոլոր բազմութիւնները կը հեւան, կը տազնապին, կը խանդավառուին ու կը գործեն, պարզապէս բո՛ւն համազգեստի կարօտով:



# ՈՒՐԿԷ՛ ԱՌԻՆՔ



Յաճախ կը խօսինք մեր տուածնե-  
րուն եւ ունեցածի՛ն մասին:

Հոս հիմնած ենք սկառաւորութիւն,  
հոն ներմուծած ենք մարգականին սէրը եւ  
մարգախաղերուն նախանաշակը տուած.  
Ժողովուրդի մը նոյնիսկ տուած ենք գիր.  
Արեւելքի մէջ շրջած ենք ոչ թէ որպէս վա-  
ճառական, այլ Արեւմտքի քաղաքակր-  
թութեան հալածուած տարածիչ իբրեւ:

Արձանագրած ենք առաջնութիւն-  
ներու շարան. Առաջին Քրիստոնէայ Ազ-

գը, Առաջին բնակիչը՝ ջրհեղեղէն ետք. այս գողտրիկ երկնակա-  
մարին տակ, առաջին ցեղասպանութեան առաջին զոհը...

Անհատական առաջնութիւններու անհամար ցանկ ունինք:  
Գիտութեան մէջ, արուեստի մէջ, տնտեսութեան մէջ, մարգականին  
մէջ ու, չմոռնանք, տառապանքին մէջ:

Այս՝ մեզի հասած ծանօթութիւններու ճամբով միայն:

Այս՝ մատենագրական հսկայ հարստութենէն բզիկ-բզիկ  
եղած պատահիկներու վկայութեամբ միայն:

Ինչէ՛ր ունեցեր ենք, որոնք կորսուած են ի սպառ, որոնք  
թաղուած են հողի տակ, կամ պառկած՝ դրացիներու արձանագրու-  
թիւններու հարստութեան մէջ:

Հոռմի կրկէսներուն մէջ յաղթական ելոյթ ունեցեր են մեր  
թագաւորներն ու իշխանները, Հոռմի կաշար եղած են հաչորդիներ.  
ու մենք չենք պահած կամ չենք կրցած փրկել անոնց հետքը մի-  
ջազգային դաւադրութիւններէն:

Ոչ միայն նախանձախնդիր չենք եղած մեր ունեցածին,  
այլեւ մեր ամէնէն յախուռնները դատապարտած ենք խոր վիրապ-  
ներու շղթային:

Պարգապէս ու պարագաշականօրէն սպառնացած ենք Կի-  
րակի օրերը սալին մուրճ չգարնել:

Տառապանքին թէ մարդկային ազնուագոյն տեսլականին  
մէջ առաջնութիւններ ապահոված մեր ժողովուրդը, սակայն, ուրկէ՛  
առած է զանոնք:

Իր կարողութիւնները ձրիօրէն աջ ու անեակ բաժնող ժողո-  
վուրդը այսօր կ'անդրադառնա՛յ, որ պապենական ժառանգութիւն  
մըն է իբրը, անսպառ կարողութիւն մը, որ կու գայ հազարաւոր տա-

րիներու վերիվայրումներէն, Արարատեան աշխարհի լեռնականներէն:

Դաշտ ունեցած ենք Քրիստոսէ առաջ. երբ դաշտ ունեցած ենք, յստակ է որ ունեցած ենք ինչ որ կը պատկանի դաշտին. ըմբշամարտ թէ մենամարտ, վազք թէ ոստում, ծանրաբարձութիւն թէ... մարզական իրաւ ոգի:

Մենք առած ենք մեր պապերէ՛ն այն՝ ինչ որ առատաձեռնութեամբ կու տանք հանդիպակացին, պարզապէս մեր պապերուն հանդէպ երախտամոռութեան անգիտակից բայց ծանրակշիռ մեղքով:

Կը նմանի՞նք պապեանական ժառանգը մսխող անառակ որդիին:

Պահ մը, միայն պահ մը անդրադառնանք, որ մեր ունեցածը մերը չէ միայն, այլ անոնց, որոնք պատմութիւն կերտեցին, եւ անոնց, որոնք պատմութիւն պիտի վերակերտեն:

Թերեւս արժեւորուինք աւելի, երբ պեղենք թէ ուրկէ՛ առած ենք մեր ունեցածը եւ այնքան չխօսինք մեր տուածներուն մասին:

Իջնենք բունի արմատներուն:

Ու մատենագրութեամբ ապրող թէ պեղումներու ճամբով հինը վերականգնելու կոչուած մեր ընտիրները թող ըսեն մեզի, թէ Նաասարդեան մեր խաղերուն որո՞նք առաջին էլան, ի՛նչ մըրցանիշներ հաստատեցին:

Յայտնաբերեն՝ հողին պահած գաղտնիքները:

Մինչ այդ, սակայն, շարունակենք ունենալ մեր մարզադաշտերը, նոր Տորքերու, Սասունցի Դաւիթներու ակնկալութեամբ եւ այն յոյսով մանաւանդ, որ մեր ողիմպիականները օր մը իրենց բացման հանդիսութեան բոցը պիտի բերեն Արարատի կատարներէն:

# ԿԱՊ ՈՒ ՃԱՄԲԱՅ



Եթե բոլոր ճամբաները Հոռոմ չտանէին, Հոռոմը Հոռոմ ըլլալէ կը դադրէր եւ ճամբաները կը մնային ճամբայ միայն եւ ոչ՝ կայսրութեան փառքին հաղորդակից դառնալու միջոց:

Այսօր մենք ունինք մեր Հոռոմը:

Մեր Հոռոմին գացող ճամբաները աւելի լայն են, աւելի ընդարձակ:

Հարցը այն է, որ մենք ճամբայ չըբացինք դէպի աշխարհ: Պարզապէս մեզի պարտադրուեցաւ Սփիւռքը, որուն որպէս բնական փոխադարձութիւն, մենք սկսանք որոնել վերադարձի ուղիներ:

Մենք չընտրեցինք Սփիւռքը: Ընդհակառակն: Սփիւռքը մեր վերքն է: Վերք, որ թերեւս բուժուելու համար հազար դեղ ունի, սակայն նախապէք չի ազդում դեղը կը մնայ անհկա՝ վերադարձի ճամբան եւ կապը:

Կապ իրարու հետ, կապ՝ շրջապատին հետ, կապ՝ անցեալին հետ, կամուրջ՝ ներկայէն ապագայ:

Այլապէս կը կտրատուի թելը: Սկիզբ ու վերջ չ'ունենար թելը: Կը թափուի թելը:

Իսկ մեզի համար թելը ամէն ինչ է: Անհկա անվախճան սկիզբ մըն է, մեր ողնասիւնը, որուն մէջէն անմահանուն գետեր կ'անցնին եւ որուն իրաքանչիւր ողնայարը ունի լերան մը անունը:

Պատմութեան գիծը անադարտ պահելու հսկայական ճիգն է մերը, որ կապը ամրացնելու պարտաւորութեան տակ կը դնէ մեզ:

Կապի մասնագիտութիւնը պէտք է ըլլայ մերը:

Արեւելքէն Արեւմուտք ու Հիւսիսէն Հարաւ, Սփիւռքը ներդաշնակ գործելու եւ նոյնանպատակ ներկայանալու պարտաւորութեան տակ է:

Այդ է: Բոլոր ճամբաները դէպի Հոռոմ պէտք է տանին: Հ.Մ.Ը.Մ.:

Սփիւռքեան ծովուն մէջ տեղ-տեղ կամուրջ, տեղ-տեղ ովապիս ու ամէն տեղ՝ կապ:

Ի՞նչ էին միջ-մասնաճիւղային հանդիպումները երէկ եւ ինչի՞ կը ծառայեն այդ հանդիպումները այսօր:

Մղոններով իրարմէ հեռու հայորդիներ կու գան քով քովի ու կը կրկնեն ցեղի նոյն երգը:

Նոյն օճախին մէջ ծնելու բնականութենէն իսկ զրկուած՝ սեռունդներ Հ.Մ.Ը.Մ.ով կը տեսնեն զիրար:

Ծնունդով գաղթական երիտասարդներ իրենց նոր հայրենիքներու հպարտանքը կը թափեն իբրեւ պարարտացուցիչ՝ հին ալ մայր հայրենիքի արմատներուն:

Հ.Մ.Ը.Մ.՝ Գլխագիր Կապ:

Առաջ՝ տողանցք ու ջահագնացութիւն էր, քաղաքէ մը իր լոյսը տարածող: Հետզհետէ դարձաւ մրցանք ընդմէջ քաղաքներու, ապա ներկայացաւ իբրեւ միջ-մասնաճիւղային (իմա՛ միջ-երկրային) շարժում:

Հիմա ընդարձակուած են սահմանները: Պահանջին չափով: Հանդիպումները տեղական կամ դրացիական ըլլալէ դադրած են:

Պարզապէս աշխարհի հինգ ցամաքամասերէն հայորդիներ կը մէկտեղուին նոյն դրօշին տակ, համամարդկային նոյն զգացումներով եւ, մա՛նուաւոր, նոյն ցեղի կանչին դիմաց դառնալու համար երդում-բարեւ, խմբական «պատուի առ»:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտները ամէն տարի իրենց քաղաքին մէջ կը կազմակերպեն բանակում:

Սակայն երկու տարի առաջ Յունաստանի մէջ կազմակերպեցին իրենց առաջին ԸՆԴՀԱՆՈՒՐ բանակումը: Այս տարի երկրորդ ԸՆԴՀԱՆՈՒՐ բանակումը տեղի պիտի ունենայ Ֆրանսայի մէջ:

Երկու տարի ետք կ'որոշեն նոր տեղ: Չորս տարի ետք՝ ալ տեղ: Վեց տարի անց՝ ով գիտէ ո՛ր:

Բայց իւրաքանչիւր հայ գիտէ, որ վերջին հաշուով պիտի գայ տարին, երբ բանակումը պիտի ըլլայ տեղ մը, որուն համար տեղի կ'ունենան այս «միջանկեալները», թէկուզ միջ-ցամաքային տարողութեամբ:

Կապ ու ճամբայ:

Այսինքն՝ դժբախտութեան հակադրուած իմաստութիւն:

Մինչեւ, մինչեւ բացուին դռներն յուսոյ:



# ԲՈՂՈՐԻՆ ԴԷՄ



Մարդուն գոյությունն է ի վեր դարերուն իրաքանչիւրը արձանագրեց ողբերգութիւն մը:

Վերջինը՝ քսաներորդ դարը, տուաւ երկու ընդհանուր պատերազմ եւ անոնց միջանկեալ քանի մը տարին աշխարհը պահեց պաղ պատերազմի մէջ, երրորդ ընդհանուր պատերազմի սարսափով:

Հոս՝ կրակներու մէջ, հոն՝ արեան հեղեղի, այլ տեղ մը՝ ռումբերու անձրեւին,

ամէն տեղ սպառնալիքի մը տակ մնաց մարդկութիւնը:

Գիտութիւնը բռնեց քանի մը տասնեակ թոն երկաթ ու նետեց լուսին:

Այս յաջողութիւնը սփոփանք չբերաւ:

Պատկերասփիւռը աշխարհը կապեց աշխարհին:

Հոգիներու մէջ սակայն բան չփոխուեցաւ:

Խլիրդէն աւելի անպարտելի, մարդուն մէջ մնաց, շարունակեց բոյն շինել ջարդասէր մանրէն:

Այս եղաւ այս դարը: Անցածներուն պէս:

Այս եղաւ մեր դարը: Գալիքը պիտի կրնա՞յ չնմանիլ ծնողին:

Խաղաղութեան եւ բարեկամութեան համամարդկային բողոք ճիգերը ցարդ ընկոյզի կեղեւ իսկ չլեցուցին:

Ո՞վ երգ լսեց եւ հրաժարեցաւ վատութենէ:

Ո՞վ եկեղեցիէն ելաւ, բայց անմիջապէս չնմանեցաւ դուրսին:

Ո՞վ բարութեան ուժեղ կոչը կարդաց, բայց չքուէարկեց վատութեան:

Արուեստը ի՞նչ չափով կրցաւ բարոյական ներշնչել մարդկութեան:

Վերջինը եղաւ ողիմպիական խաղերուն դէմ սարքուած խաղը:

Այսօր Ամերիկան պոչքոթի ենթարկեց Մոսկուան, վաղը Մոսկուան կրնայ պոչքոթի ենթարկել Ամերիկան այնպէս, ինչպէս նախորդ ողիմպիական խաղերուն ալ «բացակայութեամբ ներկայ»ներ գտնուեցան:

Մեզի համար բացականերու «պատճառաբանությունները» իմաստ չունին որեւէ՝ պարագայի:

Կրնան անոնք յարգելի ալ ըլլալ, բայց չեն կրնար տեղին նկատուիլ, երբ կը հակադրուին արուեստին, ողիմպիականին, կրթօրհին ու մարդկութեան դէմ որեւէ դրական շարժումի:

Փոխվրէժը նաեւ իր սահմանները ունի: Բայց չարութեան մանրէն սահման չի ճանչնար ու յստակ է, որ արար աշխարհ բռնւորած է այդ ախտէն:

Եթէ իմաստ ունի մեր խօսքը մեծերուն համար (կը տարակուսինք), ըլլալիքը պարզ է. աջը իրեն դէմ կրնայ նկատել ըստածը, ձախը կրնայ նոյնը մտածել:

Մինչ, այս պարագային, մենք աջին ալ դէմ ենք, ձախին ալ:

Այլապէս աջին ալ հետն ենք, ձախին ալ:

Կողմ ճշդելու համար մէկ պայման ունինք. յարգուին սահմանները: Հաշտուած ենք այն իրողութեան հետ, որ մրցակցութիւնը չի կրնար չշարունակուիլ: Սակայն բարութեան եւ իմաստութեան զոները պէտք է մնան անհուպ:

Արուեստը, մարզական շարժումը, բարեսիրական կազմակերպութիւններու բարի ներկայութիւնը պէտք չէ խնդրոյ առարկայ դառնան որեւէ պատճառաւ, ոեւէ մէկուն կողմէ, որեւէ ժամանակ:

Այլապէս մարդկութեան վտիտ յոյսերը եւս կը տժգունին. այլապէս մարդկութիւնը բաց պատուհան չ'ունենար շնչելու համար:

Ռումբերու տէրերը ազատ են անոնց գործածութեան դաշտը ճշդելու տեսակէտէն, սակայն ա՛յս դաշտերէն ներս պէտք չէ մուտք գործեն անոնք. ասիկա չէզոք գօտի է. ասիկա կը պատկանի միւսներուն. անոնց, որոնք կը հաւատան համամարդկայինին:

Ողիմպիականի պատմութիւնը միայն ցաւով պիտի արձանագրէ բացակայութիւնները եւ ոչ մէկ պատճառաբանութիւն բանաւոր պիտի արձանագրէ այդ բացակայութիւններուն առջեւ:

Ահա թէ ինչու դէմ ենք բոլոր անոնց, որոնք եղբայրութեան դաշտերը կը լքեն, թէկուզ այլ եղբայրութիւններու պատրուակով:

# ՍԵՐՈՒՆԴԸ ԼԵՌՆԵՐՈՒ ՎՐԱՅ



Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնությամբ շարքին մէջ սկսուողական բանակում մը կամ ընդհանուր բանակումներ երեւոյթ չեն: Պարզապէս ընթացիկ, բնական արտաշնչութիւններ են անոնք՝ բանակումները, որոնք կը կազմակերպուին լոկալ մնջիկ, կը կազմակերպուին պետական անսահման կարելիութիւններ ենթադրող ինքնավստահութեամբ:

Սկսուողական Ա. Բանակումը Յունաստանի մէջ, Բ. Ընդհանուր Բանակումը Ֆրանսայի մէջ նոր էին ո՛չ որպէս բանակում, այլ որպէս նոր մագրցում միջ-գաղութային կապին:

Այդ է ընդհանուրը, որուն համար կ'արժէ մելան հոսեցնել:

Սակայն ընդհանուրին անցնելէ առաջ՝ պէտք է ընդհանրութեան մէջ չկորսուելու իմաստութիւնը ունենալ: Անհրաժեշտ է վերաքաղ մը ընել այլեւս երեւոյթ չնկատող բաներու, որոնք հասարակ չեն, դիրքին եւ իրագործելի չեն շատերու համար, որոնք մերը ըրինք տքնաջան աշխատանքով, տասնամեակներու փորձառութեամբ. եւ այժմ, երբ գտած ենք ակը, խմենք զոգլալ ջուրէն, հովանանք ու զովանանք: Միայն ու պարզապէս չնայինք վազող ջուրին...

Նոր սերունդի առողջ պատրաստութիւնը միշտ ալ առաջնահերթ մտահոգութիւնը եղած է հին թէ փոխանցման սերունդներուն:

Աւելի պարզն ու հասկնալին: Ծնող երեխային «ապագան», «լաւագոյն դաստիարակութիւնը», «մարդ դառնալու» մտահոգութիւնը՝ ծնողի մը համար կեանքի տագնապ է. իսկ այդ մտահոգութեան բարոք լուծումը՝ կեանքի նպատակ:

Դպրոց ինչո՞ւ կը դրկենք: Արհեստի ինչո՞ւ կը դրկենք: Վրստահելի ուսուցիչն ու վարպետը ինչո՞ւ կը փնտռենք: Ինչե՞ր չենք ըներ մեր զակին համար, որպէսզի մեծնայ լաւագոյն պայմաններու մէջ, մեր կարելիութիւններէն յանախ ատելի բարձր գին վճարելով ատոր փոխարէն:

Մինչեւ 18 տարիք ամէն մարդ իր կազմաւորման շրջանը

կ'ապրի, ֆիզիքական վերիվաչրումներու շրջանակին մէջ է, եւ այդ տարիքին համար կը լարուին ծնողներու ծնողական պարտականութիւն-պարտաւորութիւնները:

Այդ տարիքին լաւագոյն դպրոցը ա՛յս է, սկաուտութիւնը, որ արտադպրոցական եւ արտատնային լաւագոյն կազմակերպութիւնն է, որ հաճելին կը խառնէ օգտակարին, որ կը կազմաւորէ, կը տաշէ նկարագիրը, որ անմոռանալի յիշատակներով կը լեցնէ մանկութեան եւ պատանութեան օրերը եւ անհատական աճումը կը ներդաշնակէ միաժամանակ եւ ամենայն բնականութեամբ սերունդի մը օղակուելու, սերունդի վերածուելու հօգօրանքին:

Մեծերու նկատմամբ յարգանքի, խոստումը ոչ մէկ գնով դրժելու, հաւատարմութեան, նկարագրի թէ ֆիզիքական մաքրութեան գործնական դպրոցն է սկաուտութիւնը:

Սկաուտութիւնը հսկայ այն խաղաղվայրն է, ուր լեռ ու ձոր կայ, ջրվեժ ու կենդանական-բուսական ամբողջ աշխարհ մը, պրոպրետուսի լայն կարելիութիւններ, ընկերային էակ դառնալու ամէն բնական միջոց:

Ասիկա խաղն է, մարզանքն է, արշաւն է, ձիւնագնացութիւնըն է, բանակումն է եւ... ընդհանո՛ւր բանակումը:

Ափսո՛ւ անոր, որ սկաուտ չէ եղած:

Ափսո՛ւ անոնց, որոնք իրենց զաւակները սկաուտ չեն արձանագրած:

Սկաուտութիւնը մնաչուն ու վերանորոգ սերունդն է լեռներու վրայ, վրաններու տակ, ծառերուն հետ, ջուրերու մօտիկ, միշտ՝ մարդկայնականութեան եւ ազգայնականութեան մէջ:

Աստուած, Հայրենիք, Պատիւ: Ընկերական սէր, իրերօգնութիւն: Նախաձեռնութեան ոգի: Վերացական նկատող բոլոր գեղեցիկ բաները գործի վերածող թելադրանք եւ միջավայր:

Հ.Մ.Ը.Մ.ը իր սկաուտական թելով ասիկա՛ տուաւ. պիտի շարունակէ տալ:

Բանակումները պիտի յաջորդեն բանակումներու, սերունդը պիտի շարունակէ կազմաւորուիլ լեռներու վրայ:

Կը մնայ, որ զուլալ ակը դիտելով չգոհանանք: Խմենք եւ լիանանք:



# ՄԵՐ ԴԻԻՑԱԶՆԱՎԷՊԻՆ ՈԳԻՈՎ



Լոյսի ու խաւարի պայքար մըն է կեանքը, չարի ու բարիի գօտեմարտ մը:

Լոյսի ջահագնացումին մը խաւարին դէմ՝ Հայ ժողովուրդին պատմութիւնը այն վայրկեանէն, երբ սուրա՛ց Հայկ Նահապետին հրեղէն նետը դէպի Բելի նենգ սիրտը:

Արի ու բարի գործերու սխրանք մը՝ ցուցանիշը մեր գոյապայքարին այն օրէն ի վեր, երբ Սասունցի Դաւիթ զարկա՛ւ ոսկի կշռող պղինձէ թասը՝ հայ ժողովուրդը հարստահարող, հայ ժողովուրդի արդար քրտինքին բերքը կողոպտող՝ Բաղինի ու Կոզբաղինի նման վաշխառուներու գլխուն:

Ս. Էջմիածինի եւ Զուարթնոցի գեղակերտ գմբէթներուն տակ լոյսի, մտքի եւ հոգիի գեղեցկութեան պաշտամունքին նուիրաբերութենէն առաջ ու ետք իր Նաւասարդեան խաղերով եւ այրումիով՝ հայ ժողովուրդը վկայութիւնը տուաւ, թէ «հողէ անօթ»ը լաւագոյնս կոփել ու թրծել անհրաժեշտ է զայն աշտանակ ծառայեցնելու համար սրբազան, յաներժական լոյսին:

Նարե՛կ գրեց, բայց «Առաւօտ Լուսոյ» արձագանգող քաղցրահունչ կամարներէն չհեռացուց Անահիտն ու Վահագնը: Հին ու նոր աստուածները միասին բնակեցուց իր սրտին մէջ ու յարկին տակ: Եւ անոնց եղբայրացումէն, կենակցութենէ՛ն ծնաւ այն սերունդը, որ անհրաժեշտ պահուն ու պարագային խաշով ու սուրով հրաշակերտեց Աւարայր, Սարդարապատ:

Դիցագնակերտ այդ սերունդին դափնեկիր ներկայացուցիչները հանդիսացան նաեւ երէկ՝ հռոմէական մարզադաշտերը դղրդացնող արքայազուն Վարազդատները, այսօր՝ միջազգային ողիմպիականներուն առիծի բաժինը խող Վարդանեանները:

Մոսկուայի ողիմպիական մարզադաշտը փակած է արդէն իր դռները: Բայց տուն վերադարձող Անահիտի եւ Վահագնի շառաւիղները՝ Վարդանեաններ, Ազարեաններ կամ Սիրվարդ Էմիրզեաններ երդուած են չքնանալ իրենց դափնեպսակներուն

վրայ, այլ նորե՛ն ճգնի՛լ՝ նոր մրցանիշներ հաստատելու ի խնդիր, այլ մանաւանդ, չորս տարի ետք աւելի մեծ թիւով պխոյեաններ հասցնելու համար Լոս Անճելըսի դիցազնահանդէսին:

Հայ մկանին ու մկունդին ապահոված այս դափնիներն ու պխոյեանութիւնները տօնական օրերու հպարտառիթ պերճանքները չեղան լոկ, այլ ամէնօրեայ շարժո՛ւմ, ազգային դաւանանքի մը հանապազորդ հացն ու մակընթացութիւնը:

Վկայ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մշտանորոգ շարքերը եւ մարզիկները ի սփիռս աշխարհի: Վկայ՝ մարզականին զուգահեռ՝ կենսունակ միւս շարժումը, որ կը կոչուի սկաուտութիւն, հայ սկաուտութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւն, որ «հրաթեւ տորմիդներով եւ կամաւոր բանակներով» հայ երիտասարդութիւնը կ'առաջնորդէ դէպի ոգեկան բարձունքներ:

Մեր պատմութեան ճամբով, մեր դիցազնավէպին ոգիով:

Յարանորոգ ճիգ ու կենսունակութիւն՝ առանցքը մեր կեանքին:

Պարտութիւնները մարզական ոգիով դիմակալելու ասպետականութիւն եւ զանոնք յաղթանակի վերածելու մաքառման աննահանջ կորո՛վ, քաջութիւն:

Հայ երիտասարդութիւնը՝ բոլորի՛ն, բոլորի՛ն իրաւունքները ճանչցողն ու յարգողը: Բոլորին ուղեկիցը՝ Լոյսի ճամբուն վրայ:

Բայց նաեւ՝ Հայկ Նահապետին սուրացող նետը խաւարին դէմ, անարդարութեան դէմ:

Այլասիրութիւն, եղբայրասիրութիւն՝ անպայման եւ առաջին հերթին: Բայց իր ալ իրաւունքը ոտնակոխուած չտեսնելու, արդար դատը արժեցնելու վճռակամութիւն եւ զոհաբերութիւն:

Ա՛յս է պատմութեան պատգամը եւ դարերու վճիռը, ապագայի վազբուղին:

# ՎԵՐԱՄՈՒՏ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՎԵՐԱԾՐԱԳՐՈՒՄ



Լաւ բան ըսելը լաւ բան է, սակայն բաւարար չէ:

Լաւ բան լսելն ալ անկասկած առաքինութիւն է, սակայն այդ եւս բաւարար չէ:

Բան լսել-ըսելը թերեւս գործին կէտն է, սկիզբն է, սակայն ամբողջական է խօսքը միայն այն պարագային, երբ կը վերածուի գործի:

Իսկ մարզականի պարագային, գործը միայն պարտականութիւնը չէ միու-

թեան մը, եթէ նոյնիսկ ան կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.:

Մարզականին կազմակերպումը Հ.Մ.Ը.Մ.էն առաջ կամ Հ.Մ.Ը.Մ.ին զուգահեռաբար կապուած է եւ կապուած պիտի մնայ դպրոցներուն:

Որքան ալ զօրատր ըլլայ, մարզական միութիւն մը կրնայ ունենալ մէկ դաշտ, երկու: Սերունդի մը առողջ աճը կապուած է սակայն հարիւրատր դաշտերու, ինչ որ կ'ենթադրէ օգտագործումը դպրոցական բակերուն:

Մարզական միութիւն մը արտադպրոցական գործ կը կատարէ, մինչ դպրոցական գործ պէտք է նկատուի մարզանքը:

Գործնականն ու բնականը այդ է:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան հիմնադիր Հինդլեան ուսուցիչ էր եւ տնօրէն: Անոր դպրոցին մէջ ծնունդ առաւ սկաուտական շարժումը, անոր խնամքին յանձնուած վարժարանին մէջ փորձարկուեցաւ սկաուտութիւնը, որովհետեւ ան լսեց Գր. Յակոբեանի խօսքը, կարդաց գրութիւնը եւ գործի վերածեց զայն:

Գրիգոր Յակոբեան, Յովհաննէս Հինդլեան, Ծաւարշ Զրրիսեան:

Մէկը մտածեց, միւր փորձարկեց, երրորդը համադրեց:

Մտածող, իրացնող եւ համադրող միասնաբար նկատուեցան հիմնադիր:



Հիմնադիր միութեան մը:

Սակայն հարցը այն է, որ մարզական գործը ընդհանրական գործ է, կ'ենթադրէ յաջորդականություն, անընդմեջ ընթացք եւ ոչ՝ մասնագիտություն միայն:

Իրենց կառուցով ու կարելիություններով վարժարանները առաջնահերթ պարտականություն ունին մարզանքն ու մարմնակրթաճանաչող կազմակերպելու, սիրելի դարձնելու եւ ճաշակի վերածելու:

Մարզանքի ուսուցիչ չունինք ըսել եւ չմտահոգուիլ՝ արդարանալի չէ:

Նոյնիսկ մարզանք չկիրարկելու պարագային չքմեղանալ անով, որ բակ չկայ կամ պզտիկ է եղածը, կրկին ընդունելի չէ:

Եթէ խմբական մարզանքներու նախաճաշակը համոզուած ենք որ պետք է տալ, ապա ո՞ր դպրոցը չի կրնար փինկ փոնկի սեղան մը ճարել եւ այդ սեղանին տեղ ապահովել:

Եթէ ֆութպոլ, պասքեթպոլ կարելի չէ կիրարկել վարժարանի մը մէջ, կարելի չէ՞ վոլիպոլի մասին մտածել: Երկարութեան կամ բարձրութեան ուսումները այդքան մեծ տարածություն չեն պահանջեր: Վազքի փորձեր անգամ կարելի է ընել առանց... բակ ունենալու:

Կրնանք խօսիլ տակաւին միջ-դպրոցական տարեկան մարզահանդէսներու մասին:

Տարուան ընթացքին նոյն շարժումները, մարզական նոյն պատրաստությունը իրացնել տալ աշակերտներուն, տարեվերջին քանի մը ընդհանուր փորձերով պատրաստել միջ-դպրոցականը:

Բոլորովին անկարելիութեան մէջ գտնուող վարժարանները, որպէս մարզանքին ու մարզականին հաւատացող, կրնան մղել աշակերտները, որ սկսուտ ըլլան: Ինչ որ չեն կրնար առնել վարժարանէն, առնեն այլ տեղէ մը:

Առնուազն:

Սփիւռք կը նշանակէ աշխարհ: Երկրագունտի վրայ, մինչ տեղ մը վերամուտ է, այլ տեղ մը՝ ամառնային արձակուրդի պատրաստություն է:

Արձակուրդ թէ վերամուտ, մարզականի գծով վերանորոգում, վերածրագրում աւելի քան այժմէական է հաստատ այն համոզումով, որ մաքուր նկարագիրը կարելի է կերտել միայն առողջ մարմնի մէջ:

# ՀԱՅ ՄԱՐԶԻԿԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ



Արագ տեղափոխություններ ասի  
մը վերածած են աշխարհը:

«Երկրագունտի շրջանը ութսուն  
օրէն» անտող անցեալի չափանիշը՝ քսմի-  
ծաղ կը բերէ մեր շրթներուն: Օր մը, երկու-  
քը՝ բաւարար են ներկայիս՝ հարաւէն-հիւ-  
սիս, կամ արեւելքէն-արեւմուտք՝ օդանաւի  
թելով նուաճելու երկու քաղաքներու միջեւ  
ինկած անջրպետը: Այսինքն՝ մարդիկ, ուր  
ալ գտնուին, ոչ միայն սերտօրէն կապուած  
կը մնան իրարու՝ ձայնով (հեռախօս) կամ  
պատկերով (հեռատեսիլ), այլեւ ի մի ներդաշնակուած կ'ապրին՝  
արագաստը ճամբաներով:

20րդ դարու այս բարիքը զարգացուց մարդկային փոխա-  
րաբերությունները, զարկ տուաւ Գիտութեան ու Արուեստի տարած-  
ման եւ անփոխարինելի լծակը դարձաւ մարզական կեանքի ճո-  
խացման, միջազգային մրցում-հանդիպումներու բազմացման:

Եւ սակա՛ս սեւ թէ ճերմակ, կարմիր թէ դեղին մորթ ունե-  
ցողներուն՝ հաւասարապէս: Հնարաւորութիւն ստեղծուեցաւ, առի-  
թը տրուեցաւ ամէնո՛ւն, անխտի՛ր, երբ մարզական ոգին ներկայ  
էր եւ խթան՝ ազնիւ ոգորումին, գեղեցկակերտ յաղթանակին:

Մփիռքի տարածքին, մարզական մեր ակումբներու ներկա-  
յացուցիչ՝ տղոց թէ աղջիկներու խումբերն ալ, իրենց չափով, օգ-  
տուեցան կեանքը բարեշրջող այս հոլովոյթէն: Տասնեակ տարիներ  
առաջ՝ շոգեկառքով, լաւագոյն պարագային ինքնաշարժով, իսկ  
ներկայիս՝ անելի յաճախ եւ՝ օդանաւով, կը հասնին մէկ երկրա-  
մասէն միւսը, մրցանքի մը կամ մրցահանդէսի մը մասնակցելու  
համար: Երբեմն ալ կը հրաւիրուին այլ երկիրներու եւ օտար ազ-  
գերու մարզական ակումբներուն հետ հանդիպում ունենալու՝ մար-  
զական-երիտասարդական գիծով միջժողովրդային փոխյարաբե-  
րութեանց կապ ու սատար դառնալով:

Հոս է, որ կանգ կ'առնենք պահ մը եւ ուղիղ կը նայինք  
դարձեալ մեր տղոց եւ աղջիկներու աչքերուն խորը:

Մարզանքն ու մարզախաղը, շրջապտոյտներու ծիրին մէջ,  
անկասկա՛ծ, անելի հմայիչ կը դառնան երիտասարդութեան: Եւ ոչ  
ոք կրնայ ուրանալ, վայելքին հետ, այդ շրջապտոյտներուն բերած  
նպաստը քաղաքակրթութեան, երբ մարզական մաքուր ոգին է գա-  
հակալը՝ դերակատարներու սրտերուն:

Տակաւի՛ն: Յաղթանակի մը համար ազնուօրէն մաքառիլը, յաղթանակ մը կերտելու համար սպառած ֆիզիքական, մտային եւ հոգեկան կենսուժը անպայմա՛ն որ թանկագին օժանդակ է մարդակերտումին:

Այս բոլորը՝ պահանջ է արդէն՝ ողիմպոսի աստուածներու հարազատ շտառիղներէն: Բայց հայ մարզիկ-մարզիկուհիէն կ'ակրնկալուի աւելի՛ն:

Ուրիշներ, ուրիշ ազգերու մարզական խումբեր մրցելո՛ւ համար իրարու հետ կը ճակատին առաւելաբար: Յաղթանակ ապահովելու, եւ յաղթանակին հետ՝ հաւաքական թէ անհատական փառք ու շահ: Ու մարզադաշտէն դուրս՝ կրնան մոռնալ մարզիկի իրենց կոչումը եւ թոյլատրեն իրենք իրենց՝ սովորական հաճոյքն ու շուայտանքը:

Տարբեր է մեր ակնկալութիւնը հայ մարզիկ-մարզիկուհիներէն, մանաւանդ անոնցմէ, որոնք կը կրեն Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը ու կը մրցին Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական դրօշին տակ: Խմբովին կամ առանձին-առանձին՝ անոնք ներկայացուցիչներն են ազգի մը, որ՝ «Փոքր Ածու», բայց տուած է իր նպաստը համաշխարհային քաղաքակրթութեան ու մշակոյթին, ու հակառակ իրեն հանդէպ գործուած անարդարութիւններուն, բազմիցս զինք ոչնչացնելու փորձերուն, որոշա՛ծ է ապրի՛լ եւ տէ՛ր դառնալ, օր մը, մարդկային եւ ազգային իր բոլոր իրաւունքներուն:

Ըսել կ'ուզենք՝ հայ մարզիկէ մը, հայ մարզիկուհիէ մը որքան որակաւոր խաղ, նոյնքան եւ աւելի մաքուր ու ամրակոտ նրկարագիր կը պահանջուի, նախ՝ հպարտութիւն եւ յոյս ներշնչելու ազգակիցներուն, ապա՝ հմայք ստեղծելու շրջապատին մէջ, եւ արժանացնելու մեր ժողովուրդը օտարներու գնահատանքին: Դաշտին վրայ, թէ դաշտէն դուրս՝ կեցուածք, զոր մարդը յայտնաբերէ գնդակին ետեւէն վազող, գնդակը հարուածող անհատին մէջ:

Մարզաշխարհը լայն պողոտայ մը կը բանայ հայ երիտասարդութեան առջեւ՝ հասնելու համար միջազգային բեմ եւ Հայր ճանչցնելու, պարտադրելու աշխարհին:

Հայ երիտասարդութիւնը յանձնառութիւն մը ունի միշտ, ինչ ասպարէզի ալ ծառայէ, ու իր գերագոյն հաճոյքը՝ իր դերը լաւագոյնըս կատարելու մէջ պիտի փնտռէ:

Խաղ, յաղթանակ, արդար իրաւունք: Բայց, խումբին ու ակումբին ճամբով ազգին ու հայրենիքին յաւերժութիւնն ու փառքը ապահովելը՝ գերագոյն նպատակակէտ:

Ա՛յս է մեր պահանջը Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկներէն ու տղոցմէն:



# Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ը



Ղեկավար ըլլալը պատիւ է, որովհետեւ ղեկավար ըլլալ կ'ենթադրէ հաւատք, գիտակցութիւն, զոհողութեան ոգի, կազմակերպելու կարողութիւն, օրինակելի մնալու կամք:

Ղեկավար ըլլալ ամէն մարդու չէ տրուած, որովհետեւ որքան ան արդիւնք է փորձառութեան, հետեւողականութեան եւ ենթակաշական զանազան գործօններու, նոյնքան ան բնածին է, ինչպէս հանճարն ու տաղանդը:

Իսկ ղեկավար մնալը՝ արդէն ուրիշ բան է. ան արդիւնք է ակնկալուածին, յոգնութիւն եւ ընկրկում չճանչցող հաւատքին եւ ստանձնուած գործի սիրոյն:

Ղեկավար մնալն ալ ամէն մարդու գործ չէ, որովհետեւ ա՛յդ եւս կ'ենթադրէ ներքին այնպիսի ուժականութիւն, որ կրնայ բացատրուիլ միայն բնութենէն առնուած առաւելութեամբ:

Ղեկավարելը արուեստ է, մասնագիտութենէ աւելի՝ վիճակ է, կարողութեան եւ հաղորդականութեան գումար, որոնց խարիսխը անկասկած անհատականութիւնն է:

Ղեկավարելը անպայման վարչական-ատենապետ-քարտուղար-գանձապահ հանգամանքը չէ:

Ղեկավար ըլլալու վկայականը վաւերական չէ նոյնիսկ քրէւէներու արդիւնքով:

Ղեկավարը, այն որ մեծ է ու իրաւ, քուէներու օրէնքին ենթակայ չի կրնար մնալ, ընտրուի թէ ոչ՝ ղեկավար է, որովհետեւ չի կրնար ուրիշ բան ըլլալ:

Ծնած է անոր համար, ճշդուած է անոր համար: Երբ ներս մտնէ, պատկառանքի մթնոլորտ կը ստեղծուի եւ ցուցմունք ստանալու տրամադրութիւն, մանաւանդ նոր բան սորվելու յոյս:

Ղեկավարը ծրագրող եւ ծրագիրը իրագործող, իր միութեան նորանոր յաջողութիւններուն կերտիչն է:

Մեծ է մանաւանդ այն ղեկավարը, որ ղեկավար կը պատրաստէ, եւ մանաւանդ հաւաքական ղեկավարութեամբ կը գործէ:

Վերջապէս, վարիչ-վարչական նշանակուիլ-ընտրուիլը պարզապէս առիթ ու միջոց է ղեկավար դառնալու. հանգամանք

ստանալը ՍԿԻԶԲ մըն է եւ ոչ թէ ՎԱԽԾԱՆ մը այդ տիտղոսին արժանանալու համար:

Ընտրութենէն ետք ընտրեալին գո՛րծն է, որ զայն պիտի հաստատէ ղեկավարութեան արժո՞րհն կամ անոր պիտի մերժէ այդ պատիրը:

Ղեկավարէ կամ ղեկավարութենէ զուրկ միութիւնները կամ հաւաքականութիւնները խուժանի կը վերածուին, չեն կրնար արդիւնք տալ:

Ղեկավար ու ղեկավարութիւն ստեղծելն ու պահելը միութեան կան կամ հանրաշին հաւաքական արժանիք է:

Առանց զինուորի հրամանատար մը սուտլիկ պուպրիկ է, առանց հրամանատարի զինուորը՝ կորսուած ոչխար:

Բուն, մնաչուն եւ արժէքաւոր ղեկավարը ա՛ն է, որ առանց վարչական-ստեճնապետ իրաւունքներուն կը մնայ գործի ընթացքի մէջ, զինուորներու շարքին եւ, որպէս այդպիսին, կու տայ գործակցութեան օրինակելի փաստը:

Ղեկավարը մանաւանդ ա՛ն է, որ գիտէ զինուոր դառնալ, հրահանգ ստանալ:

Յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի նման համագաղութային կազմակերպութիւն մը այս սահմանումներուն ենթակայ ղեկավարներ ունեցած է եւ պէտք է շարունակէ ունենալ:

Մարզական այս միութիւնը մարզանքին հետ ստանձնած է գաղափարական, ազգային եւ համամարդկային նկարագիր ջամբելու առաքելութիւն, որով իր պարտականութիւնն է նաեւ ղեկավար պատրաստել, ինչպէս եւ անոր ղեկավարութեան պարտականութիւնն է սերունդներու դաստիարակութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.էն դուրս ազգային ընդհանուր մեր կառոյցին ակնարկելով եւ կշռելով սփիւռքեան մեր իրականութիւնը, կը նկատենք, որ կարեւոր դպրոց մը կը պակսի մեզի, ղեկավար-վարչական-խմբապետ պատրաստող դպրոցը:

Ծիշո՞ղ է, որ մեր կեանքը, մեր միութիւնները իրենք բնական դպրոցներ են առ այդ, սակայն մասնագիտութիւն տալու կոչուած դպրոցները կրնան փութացնել եւ աւելի արդիւնաւորել պատրաստութիւնը:

Վերջին հաշուով, պէտք է պատրաստել Ղեկավարը, կամ՝ ծնիլ զայն:

# ՏԱՐՈՒԱՆ ՄԸ ՀՈՒՆԶՔԸ



Հազարաւոր կանաչ, երկնուղեշ ծառեր կը տապալին ամէն օր, սպիտակ թուղթի թելով հոգիի հաղորդութիւն եւ մտքի լոյս քաշխելու համար մարդկութեան: Այս առաքելութենէն շեղած թերթն ու գիրքը կ'արձանագրուին Չարիքի տոմարին մէջ, ափսոսալ տալով անտառին կորսուած գեղեցկութիւնը:

Տարի մը առաջ, ՄԱՐԶԻԿը մամուլին յանձնուած պահուն, գիտակից էինք սպիտակ թուղթի երկսաչրի հանգամանքին. եւ վճռական՝ յանձնառու եղանք մեր առաքելութեան:

Մարզական այս ամսագրին համար, առաջին օրէն, մենք մեր ծառերը կտրեցինք Սօսեաց անտառէն, որպէսզի արեւորդի մեր պապերուն, նետաձիգ մեր քաջազուններուն կենարար շունչն ու պատգամը սօսափեն անոր էջերը:

Բերինք ատաղձը Սօսեաց դալար անտառէն՝ անոր ծառերուն պաղիկ կերպարով կերտելու համար երիտասարդ իրանները եւ այդ ծառերուն թա՛րմ, կենսաքաշխ աիւնով ոռոգելու համար ծըլարձակ հոգիները:

Ամէն ամիս, մատուցինք ինչ որ մարմնապէս գեղեցիկ էր, ուժե՛ղ եւ հոգեպէս վերացնող՝ մարզական ու երիտասարդական աշխարհին մէջ, սեւ գիծ քաշելով տխուր երեւոյթներուն տակէն:

Հպարտութեամբ հիւրընկալեցինք Հայաստանի մէջ, Արարատի շուքին յայտնագործուող մերօրեայ քաջամարտիկները՝ միջազգային մրցանիշներ եւ յաղթանակներ խլած արմենազարմ ախոյեանները, հայ դնդերի ազնիւ ուժով վարակելու համար նոր սերունդը:

Հաղորդեցինք ի սփիւռս աշխարհի Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտներուն յաղթական արշաւները, մարզական խումբերուն եւ մարզիկներուն յարանորոգ շարժումներն ու յաջողութիւնները, մասնաճիւղերու եւ վարչութիւններու նպատակասլաց ոգորումները՝ գօտեպնդելու համար տարասփիւռ մեր ժողովուրդը «ձուլում» կոչուող դեպի դէմ եւ բաց պահելու համար անոր դիմաց ապագայի լուսաշող հեռանկարները:



Խանդավառուեցանք ազնի մրցակցութեան նոր դրօշակիրներով. շնոցանք, սակայն, վաստակն ու գաղափարականը անոնց, որոնք հինուց աստի ակօսը բացին նորածիլ ուժերուն:

Վերջապէս, քառասուն աղբիւրէ ջուր բերինք, քառասուն բովանդակալից եւ պատկերազարդ էջերուն ակնահանոյ տեսք մը տալու, ամսօրեայ այս հանդէսը հասցնելու համար երոպական նրման հրատարակութիւններու մակարդակին:

Եւ ահա հունձքը՝ 12 ամսուան մէջ 12 թիւ:

Երկրորդ տարին կը դիմաւորենք նոր ծրագիրներով, նոր խանդավառութիւններով, ակնաղբիւրը պահելով միշտ լաւագոյնին սլացքն ու ձգտումը:

Հաւատարիմ ու հաւատաւոր աշխատակիցներ ունեցանք. կը հաւատանք որ պիտի կրկնապատկուի անոնց թիւը:

Բաժանորդներու, նուիրատուներու, ընթերցողներու բանակ մը թիկունք կանգնեցաւ մեզի. կը հաւատանք որ պիտի քառապատկուին (պէ՛տք է քառապատկուին) անոնց շարքերը:

Հ.Մ.Ը.Մ.ի վեհագոր ոգին եւ գաղափարական անսպառ հարստութիւնն էին մեր միակ դրամագլուխը, երբ ծնունդ տուինք ՄԱՐԶԻԿԻն:

Հ.Մ.Ը.Մ.ի նոյն այդ դրամագլուխն է մեր այսօրուան ու վաղուան յաջողութիւններուն եւ իրագործումներուն գրաւականը:

Հ.Մ.Ը.Մ.ի նոյն այդ ոգիին ու գաղափարականին եղջերափողն է այս ամսագիրը: Անոր կանչը, առողջ ու մաքուր կեանքի եւ անշահախնդիր ու անբասիր վայելքի հրաւեր մը, պէտք է հասնի աշխարհի չորս ծագերուն, ուր հայ կայ: Հա՛յ, որ օտարութեան մըջուշին մէջ ջերմացնէ հոգին, ջերմացնէ հաշու յաղթանակներով, տոգորուի Վահագնեան ուժով ու մնայ միշտ պատրաստ ծառայելու Աստուծոյն եւ Հայրենիքին:

# ԴԱՇՏԻ ՏՂԱՔԸ ԵՒ «ՄԻՒՍ»ՆԵՐԸ



Մեր միութեան արդիւնքը՝ ֆուտպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ, հեծանիւ, լողարշաւ եւայլն, եւայլն կը տեսնուի դաշտերու վրայ:

Սկաւտական ելոյթներն ալ՝ բանակումները, տողանցքները, արշաւները, անկասկած, շօշափելիներն են:

Այս արդիւնքը արդիւնք ընող մեր Միութեան միւս խումբերը (վարչական կազմ, յանձնախումբեր) յաճախ չեն երեւիր կամ երբ երեւին՝ արդիւնք չեն նկատուիր, այլ միջոց:

Անոնք՝ «միւս»ները քննարկման ենթակայ են անընդմէջ, պաշտօնապէս՝ ընդհանուր ժողովէ ժողով, անպաշտօն՝ մի՛շտ. դաշտերու վրայ, ակումբներու մէջ, նոյնիսկ՝ խանութներո՛ւ:

Անոնք՝ «միւս»ները կը տանին Միութեան ամէնէն սեւ աշխատանքը, քիչ պարագաներու ծափի գոհունակութեան կ'արժանանան, յաճախ մեղադրանքի եւ քննադատութեանց թիրախ կը մընան, սակայն կը շարունակեն գործել, որովհետեւ անոնք իրենց կարգին են՝ արդիւնք են, են՝ միջոց:

Միջոց են սերունդ պատրաստելու, դաշտերուն վրայ յաղթանակ ապահովելու, միջոց են Հ.Մ.Ը.Մ.ը՝ Հ.Մ.Ը.Մ. պահելու:

Իսկ արդիւնք են Հ.Մ.Ը.Մ.ի՛ն եւ անոր դաստիարակութեան՝:

«Միւս»ները՝ սեւ աշխատանքի պայծառ մարդիկը վերցուցած են վարչական գործ. այսինքն՝ Միութեան ծրագիր կանոնագրի պահակութիւնը եւ այդ ծրագիր կանոնագրի բիրեղացումը ստանձնած, այսինքն՝ դաշտի տղոց՝ դա՛շտ, դաշտերուն՝ տղա՛ք ապահովելու պարտականութիւնը վերցուցած սրբազան «խենթ»եր են:

«Միւս»ները, որոնք դաշտերու վրայ ա՛լ գործ չունին, բայց դաշտերուն վրայ գործ ստեղծելու տենդէն բռնուած են եւ որոնք կը վազեն ու կը հեւան:

Հասկնալու համար «միւս»ները եւ անոնց անսահման հաւատքը, կ'արժէ անգամ մը գէթ հետեւիլ անոնց գործին եւ տեսնել այդ գործը:

Գործը, որ կը ծրագրուի Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ժողովներուն, Երջանաչին եւ մասնաճիւղերու Անդամական Ժողովներուն

մէջ: Ծրագիրներ, որոնք գործի վերածուելու ճամբուն կը դրուին վարչութիւններու եւ յանձնախումբերու նիստերուն մէջ:

Բազմամակարդակ, բազմաճիղ լարուած վարչամեքենայ մը, որ կը ծրագրէ ու կը գործէ անդադար, կը տազնապի կազմակերպելու համար միութենական, սկաուտական եւ մարզական կեանքը ի խնդիր նորահաս սերունդներու հաշտեցի պատրաստութեան:

Նիւթական ո՛չ մէկ վարձատրութիւն ունին անոնք եւ բարոյական գոհունակութիւնը միայն աշխատանքի արդիւնքին մէջ կը կայանայ:

Անպառ այլասիրութեան հերոսներն են անոնք՝ «միա»ները, որոնք այսքան տարի աշխատած են եւ ոչինչ՝ ո՛չ ընտանեկան հարցերը, ո՛չ ապագայի սարսափը, ո՛չ անմիջական թէ հեռակայ ապերախտութեան հաւանականութիւնը պիտի կարենան կասեցնել անոնց աննահանջ նուիրումութիւնը:

Ոչ մէկ վճարովի պաշտօն կրնայ ընել այն գործը, զոր ըրած են ու պիտի շարունակեն ընել անոնք:

Սարսափելի սէրն է, հաւատքն է, հաւատքի լեռնանման արժեշտփն է այս մէկը, որ չի կրնար ընբռնուիլ պարզ մահկանացուներէն:

Անոնք՝ «միա»ները, հանրային կեանքի խոնարհ հերոսներն են, որոնց նուիրում պարագայական անուշ քանի մը խօսքը կրնայ իրէ՛նց իսկ կողմէ՛ն կատուիլ չափազանցութիւն եւ բարձրացրնել բողոքի ալիք:

Ա՛յս է մեր հանրային կեանքը, իր ուժով:


Եթէ մէկը յանձն առնէ Հ.Մ.Ը.Մ.ի 50 մասնաճիղերու գումարած ժողովները օրի վերածել եւ այդ օրերը այս նիւթապաշտ դարու ճաշակին յարմարցնելով դրամի վերածել, պիտի տեսնենք, որ աստղաբաշխական թիւ մը պիտի տայ արժեւորումի այդ գործողութիւնը:

Տակաւին չենք խօսիր այդ ժողովներէն բխած որոշումներու գործադրութեա՛ն տրամադրուած ժամանակին եւ ֆիզիքական յոգնութեան մասին:

Գործի բնոյթը այլեւս մեկնաբանութեան կը կարօտի՞:

Պարզ է. որպէսզի դաշտի տղաքը դաշտ ունենան, ու դաշտերը տղաք, անհրաժեշտ է օժանդակել «միա»ներուն, անոնց, որոնք վարչական կը կոչուին կամ յանձնախումբի անդամ:

# ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԻՒՏԾԷՆ



Իր հիմնադրությունէն մինչեւ այսօր, ամէն անգամ որ Հ.Մ.Ը.Մ. բանակում կազմակերպեր է կամ կազմակերպեր է միջմասնաճիւղային հանդիպումներ, ֆուտպոլի, պասքեթպոլի կամ այլ մարզական միայն պետական կարելիութեանց տէր միութեան մը գործը կրնայ ըլլալ այս, սակայն քիչեր կրկնապէ՛ս հիացած են այն իրողութեամբ, որ որոշ պիտոճէ ենթադրող այդ հսկայական ձեռնարկները իրագործուած են գրեթէ ոչինչով:

Անհատաւոր թոող իրողութիւն մըն է որ կ'արձանագրենք: Նախաձեռնութեան մը համար ո՛չ առաջին եւ ոչ ալ վերջին պայման նկատուած է «պատրաստ» կամ «անհրաժեշտ» գումարը: Աւելի՛ն: Հ.Մ.Ը.Մ. «պահեստի գումար» երբեք չէ ունեցած: Հ.Մ.Ը.Մ. ապրած է օրը-օրին, ապրած է մեծահարուստի պէս, ձգած է նիւթապէս կուշտ միութեան մը տպաւորութիւնը. աւելին՝ Հ.Մ.Ը.Մ. երբեք չէ ալ մտահոգուած դրամով:

Ամէն անգամ, որ կարիքը ունեցած է նիւթականի, բարեկամներ առանց աղմուկի բերած են իրենց մասնակցութիւնը: Ամէն դուր բացուած է Հ.Մ.Ը.Մ.ին առջեւ, եւ Հ.Մ.Ը.Մ. իր անմիջական կարիքէն աւելի չէ ուզած, չէ փնտռած:

Սակայն...

Նիւթապէս զօրատր ոչ մէկ միութիւն կրցած է նիւթապէս անապահով Հ.Մ.Ը.Մ.ը շուքի մէջ ձգել, նոյնիսկ պիտոճէական մըրքումի մէջ:

Միշտ ալ շքեղ եղած են ձեռնարկները, մեծ դաշտերու վրայ, լուսատր սրահներու մէջ, կոկի՛կ հաւաքականութեան մը ներկայութեան:

Այս երեւոյթը անկասկած իր բացատրութիւնը ունի:

Հ.Մ.Ը.Մ.ականները իրենց միութեան գործին նայած են որպէս մէկ ամբողջութիւն: Գործը ստորաբաժանումի չեն ենթարկած: Այսինքն, միաժամանակ տրամադրած են իրենց ժամանակը, ֆիզիքական ներկայութիւնը եւ դրամը:

Չորս տարեկան զաչիկէն մինչեւ հասուն վարչական,



իրենց բանակումի, իրենց ձեռնարկի յաջողութեան համար դուրսէն ակնկալութիւն չեն ունեցած: Անպայմա՛ն մասնակցած են ծախսին:

Այս իրողութիւնը Հ.Մ.Ը.Մ.ականի բնատրութեան մաս կազմած է: Անգիր կանոնագրութի՛ւն:

«Հ.Մ.Ը.Մ.ական» բնորոշումի մէջ համակիրը այնքան տեղ ունի, որքան անդամատետր ունեցողը:

Հ.Մ.Ը.Մ.ը, խոշոր ու համերաշխ ընտանիք մը, որ ինքն իր մէջ հաշիւ չէ պահած, հաշիւի հաշուական մտածումը չէ ունեցած:

Պիտո՞ւն ըստած տնտեսական հասկացողութիւնը իր ընթացիկ սահմանումէն անդին չէ անցած, եւ Հ.Մ.Ը.Մ. թերեւս բացառութիւն է այս դարու միութեանական բոլոր կառոյցներուն մէջ:

Հաւա՛տքը վարած է այս միութիւնը իր հիմնադրութենէն մինչեւ այսօր:

Հաւատարմութի՛ւնը եղած է միութեան մեկնակէտը:

Սէ՛րը եղած է միութեան հիմքը:

Երեսակաչել, որ այս միութիւնը, եթէ դրամ ալ ունեցած ըլլար, ինչե՛ր պիտի չյաջողէր իրագործել: Դպրոցական բակերու մէջ իրենց փորձերով, մեծ դաշտերու վրայ յաղթանակ արձանագրած այս միութիւնը ո՛ր կրնար հասնիլ, եթէ իր մարզական խումբերը սեփական կամ նոյնիսկ վարձու դաշտերու վրայ փորձերու կարելիութիւն ունենային:

Հազարով ընդհանուր բանակում ընող այս միութիւնը քանի՛ հազար կրնար հաւաքել վրաններու տակ եւ սերունդներուն ջամբել որքա՛ն աւելի կրակ:

Առանց պիտո՞ւնի այսքան բաժակ, այսքան բանակ, այսքան տարածք ապահոված այս միութիւնը ուրիշ ինչեր պիտի չկարենար ընել:

Ժամանակը չէ՞ եկած, որ համազաղութային այս հսկայ միութիւնը նաեւ հսկայանայ նիթապէս:

Հաւատքը, որ լեռներ կրնայ շարժել, նոյն հաւատքը պիտի կարենա՞յ գործի կարկինին անկաշկանդ բացուածք տալ, պիտո՞ւնէական ալ ամբողջեամբ:

Ժամանակն է այս մասին եւս մտածելու:

# ՀԱՄԱՍՓԻՒՌՔԵԱ՛Ն



Պարզ է, որ հայկական գաղթօճախները ինքնանպատակ չեն, չեն կրնար ըլլալ կամ մնալ, որովհետեւ անոնց՝ գաղթօճախներուն հիմնադրութիւնը, կազմաւորման պատճառները նոյնն են, արիւնլուայ նո՛յն թուականի ծնունդ եւ նոյն պատճառներու հետեւանք:

Տրամաբանութեան բնական ընթացքով, մեր բոլոր գաղթօճախները գոյութեան նոյն նպատակն է որ կը հետապնդեն, ժամանակաւոր «հանգստաւէտ կամ ապահով» թաքստոցներու վիճակը կը պարզեն, առժամեայ են, առժամեայ պէտք է հոշակոյին, մինչեւ, «մինչեւ բացուին դռներն յուսոյ»:

Մինչեւ բացուին դռներն յուսոյ, գաղթականութի՛ւնն է որ տեսակ կը փոխէ, կ'արձանագրուին գաղթականութեան մէջ գաղթականութիւններ, կը շարունակուի տեղի փնտռտուքը, սակայն անփոփոխ կը մնայ հարազատ տան հասցէն:

Գաղթօճախները շատ են, բազմազան են, բազմազան խրնդիրներով, բարդ ընթացքով, սակայն, ինչ ալ ըլլայ իւրաքանչիւրի ներկան կամ ապագան, այդ գաղթօճախներու գոմարն է որ կը կոչուի **Սփիւռք**:

Իսկ Սփիւռքը մէկ ամբողջութիւն է: Ան առաքելութիւնը ունի հաչրենիք ապրեցնելու՝ հաչրենիքէն հեռու, հաչրենիքի՛ն համար, եւ, իր անմիջական կամ հեռաւոր, սակայն մնայուն եւ անվերաբընճելի նպատակն է՝ տուն դարձ:

Այս իրողութեան լոյսին տակ է, որ աշխատանքի կարկինները կը բացուին տակաւ, մտածողութիւնները կը խորանան եւ կը նոյնանան:

**Ա՛յդ է:**

Ազգային մեր դժուարութիւնները կը յաղթահարուին միայն համագաղութային գործակցութեամբ եւ լրացումներով, ինչպէս եւ մեր ազգային ձգտումները առաւել կարելիութիւններ կը ստեղծեն, երբ առ այդ շարժումները կ'ըլլան ներդաշնակ եւ համընդհանուր:

Համասփիւռքեան մտածողութիւնը եւ գործելակերպը ամբացնելու ճամբան անկասկած որ կ'անցնի միջ-գաղութային շը-



փումներէն, միջ-գաղութային կապերէն եւ միջ-գաղութային գործակցութենէն:

Իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ. համագաղութային եղաւ գործով եւ Հ.Մ.Ը.Մ. ամէնէն երախտաշատ արդիւնքը արձանագրեց միջ-գաղութային շարժումներու ճամբով:

Պարզապէս յիշենք միջ-մասնաճիւղային հանդիպումները, յիշենք տողանցող կակուղ թաթիկներէն մինչեւ միւս երիտասարդները, դնդերաւոր ու հաւատաւոր բանակ, ու զանոնք դիտող յուսից բազմութիւններն ու անոնց խորհրդաւոր լացը, ի տես զանազան դրօշներու մէկ ու նոյն դրօշով առաջնորդուելու փաստին:

Այսօր, միջ-գաղութային շարժումներու մղիչ նոյն միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ. արդէն ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ կառոյցով ալ դարձած է համագաղութային:

Այլ բացատրութեամբ, եթէ Հ.Մ.Ը.Մ. երէկ ազգային բնագործ կը գործէր, իր գործի բնականութի՛ւնն էր միջգաղութային կապի թրթռացումը, այսօր այդ կապի ամբացումը արդէն պահանջ ու պարտաւորութիւն է Հ.Մ.Ը.Մ.ին համար:

Գործը այսօր աւելի լայն է, աւելի հիմնական, աւելի պատկառելի, հետեւաբար՝ աւելի գործակցութիւն ակնկալող:

Համագաղութային, համասփիւռքեան տիրականութեամբ մարզիկ ու մարզասէր հասարակութիւն շարժելու յանձնառութեան տակ է Հ.Մ.Ը.Մ.ը, որուն համար անհրաժեշտ վարկը պէտք է քրէարկուի բոլորի՛ն կողմէ:

Կեդրոնական Վարչութիւն, միջ-գաղութային շարժումներու Կեդրոնական Օրգան, կեդրոնակա՛ն մնալու եւ կեդրոնացնելո՛ւ համար ազգային մեր ձգտումները, ԳՈՐԾՈՎ բարձրացած են ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆԻՆ, որով գրաւականները չեն կրնար տարակուսանքի տակ առնուիլ:

Օր մը հաւաք Կիպրոսի մէջ, յաջորդ օր՝ Ֆրանսայի, այսօր՝ Գանատայի:

Պարզ է: Վաղը՝ Կեդրոնական Վարչութի՛ւնը կ'որոշէ թէ ո՛ր:

Համասփիւռքեան տարողութեամբ արդիւնքներու հասնելու համար, միջ-գաղութային եռուզեռը պէտք է խոչընդոտ չճանչնայ:

# Ե Ղ Ա Ի



Իրաքանչիւր ձեռնարկէ ետք, մանաւանդ երբ յաջողութեամբ պսակուած է ան, հոգեկան անհուն խաղաղութեամբ անոնք կ'ըսեն՝

— Եղաւ:

Անոնք՝ նախաձեռնողները:

Մանաւանդ երբ ձեռնարկ մը նոր է, նոր է իր տարողութեամբ եւ բնոյթով, մանաւանդ երբ ձեռնարկը կ'ենթադրէ ռիսք, հազիւ աւարտած, որպէս գերագոյն երջանկութեան գերագոյն արտայայտութիւն,

անոնք մէկ բառի մէջ կը սեղմեն իրենց հպարտութիւնը.

— Եղաւ:

Անոնք՝ աշխատողները:

Մեծ ու պզտիկ բոլոր դերակատարները, ձեռնարկի յաջողութեան իրենց մաղթանքը անգամ բանաձեռնողները, ձեռնարկին ներկայ թէ ձեռնարկով հետաքրքիր իրաքանչիւր ոք, հաճելի էջ մը դարձնող ընթերցողի մը նման, կ'ըսէ.

Եղա՛ւ:

Այդ «եղաւ»ը անկասկած ըլլալիքի նախաճաշակն ալ կ'արտայայտէ, քաջ մը առաջ երթալու գրաւականն է նաեւ այդ «եղաւ»ը, որ գնահատանք է եւ խոստում միաժամանակ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնած միջգաղութային առաջին պասքէթպոլի մրցումները վերջացան, ակընկալուած մթնոլորտը ստեղծեցին Գանատայի մէջ: Նախքան ձեռնարկի իրագործումը անհաւատալի թուող նիւթական հսկայ յանձնառութիւնը, ձեռնարկէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ին յաւելեալ վարկ ապահովեց, իրագործուեցա՛ւ, եղա՛ւ:

Աշխարհի հինգ ցամաքամասերէն ծիածան նետեց Հ.Մ.Ը.Մ.ը գանատական երկինք, հաւաքեց իր հաւատաւորներէն (միութենական-համակիր) մեծ գումար մը, ծախսեց. այդ ծախսով ալ՝ բանակ մը անխոնջ նուիրեալներու, օրն ի բուն աշխատանքով, իր մարզիկներուն ապահովեց նոր խանդավառութիւն ու, մանաւանդ յագեցուց հազարաւոր պապական հաշորդիներու կարօտի ծարարը:

**Գործ էր. եղաւ:**

**Հաշուեկշիռը պերճախօս է:**

Տարիներու հետք գծեց հոգիներու մէջ մեր դրօշը, դրօշով յատկանշուող ամէն նոիրական զգացում. ու անգամ մը եւս տեսանք, որ մարգախաղ մը կրնայ ազդակ մնալ ազգահրահրումի, որուն կարիքը ունի իրաքանչիւր գաղութ. Սփիւռքը լրիւ:

**Այդ է:**

Փորձը ցոյց տուաւ, որ կարելի է եւ պէ՛տք է իրաքանչիւր մարգախաղի անունով համազարդութային ձեռնարկ կազմակերպել, օր մը պասքէթ, ուրիշ օր մը ֆութպոլ, այլ օր մը փինկ-փոնկ ու հեծանիւ ու, թերեւս, բոլորը նոյն օրուան մէջ, բայց ամէն քանի մը տարին անգամ մը՝ տեղ մը:

**Անպայման:**

Շատ են ու պատրաստ անոնք, որոնք կը հաւատան Հ.Մ. Ը.Մ.ին եւ անոր գործին.

Մարգախաղը ազգապահպանման ծառայեցնելու կարելիութեան:

Այս երթը, ո՛վ գիտէ, թերեւս տանի անոր, որ օր մը Հ.Մ. Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ճշդէ իր պասքէթպոլի, ֆութպոլի եւ այլ մարգախաղերու կեդրոնակա՛ն խումբերը, որոնք, որպէս Հ.Մ.Ը.Մ.ի միջ-գաղութային ներկայացուցչական խումբ մակարդակ մը եւս բարձրացած, կարենան մրցիլ աղմկայարոյց մրցորդներու հետ եւ փրոփականտ դառնալ այս միութեան, մանաւանդ ազգի՛ն:

**Ուրիշ երջանկութիւն մը կրնայ ըլլալ եւ այդ:**

**Ու մինչ ա՛յդ, ու ատո՛ր համար, ցարդ եղածը՝ լա՛ւ եղաւ:**

# ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ԿԱՐԾԻՔԸ

## ՄԱՐՁԻԿ



Անհատապես թե որպես հաաքա-  
կանութիւն, իւրաքանչիւր մարդ եւ ազգ-ժո-  
ղովորդ հետաքրքրուած է ուրիշներու  
կարծիքով:

Այդ հետաքրքրութիւնը քիչերու  
մօտ կրատրական է: Մեծամասնութեան  
մօտ, ուրիշներու կարծիքը դրական դար-  
ձընելու ճիգ կայ, մասնաւոր ծրագրում կայ,  
աշխատանք կայ:

Անձեր, ձեռնարկներ, հաաքակա-  
նութիւններ, զանազան եւ զարմանազան

միջոցներու կը դիմեն, որպէսզի ուրիշներու կարծիքը ունենան  
իրենց հետ:

Ուրիշներու կարծիքը բարոյա-նիւթական դրամազուլիսի կը  
վերածուի յանախ եւ կը նկատուի յաջողութեան հիմնական բանա-  
լիներէն:

Ուրիշներու կարծիքը բան մըն է. աչդ կարծիքին ճիշդ կամ  
սխալ ըլլալը՝ ուրիշ բան է:

Ուրիշներու կարծիքին մէջ տպաւորութիւն գործելու ռազ-  
մավարութիւն ալ կայ, եւ կարծիք մը միշտ կարծիք է վերջին հաշ-  
ւով, աչսինքն՝ փոփոխական, երբ համոզումի չէ վերածուած:

Երբ մակարդակ եւ անհատականութիւն չունի, ուրիշներու  
կարծիքին խաղին մէջ ինկողը յանկարծ կ'իյնայ ուրիշի կարծիքով  
ինքզիքն դատելու ինքնախաբէութեան մէջ, որ կրնայ տանի...  
ինքնակործանումի:

Ուրիշներու կարծիքը երկասյրի սուր է երբեմն:

Սակայն մեր պարագային, հարցը այն է, որ մենք Սփիւքի  
մէջ կազմակերպուած ձեւով, յստակ ծրագրումով ուրիշներու մօտ  
դրական կարծիք ստեղծելու աշխատանք չենք տարած:

Մեզ ինքնաբերաբար ճանչցողները բան մը կ'ըսեն մեր մա-  
սին: Թիւով քիչ ենք, հետեաբար մեզ ճանչցողները եւս աչքառու  
բանակ չեն: Իսկ բնական կարգով շահուածը՝ գործ չէ:

Մեր անմիջական շրջանակը անգամ մակերեսային հաստատումներ է անդին չէ անցած: Յոգնեցուցիչ շանկերգի վերածած է այն, որ աշխատասէր ժողովուրդ ենք, որ մուրացկան չունինք, որ պատուախնդիր ենք, որ հաւատարիմ ենք եւ խոստմնապահ:

Մեր ճամբով քիչեր կը ճանչնան մեր պատմութիւնը, մեր ընկերային վիճակը, մեր քաղաքական դատը:

Այս է, որ կազմակերպուած չէ մեր մօտ:

Հ.Մ.Ը.Մ. միջ-գաղութային պասքեթպոլի մրցաշարք կազմակերպեց Գանատայի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի համար ո՛չ առաջինն է եւ ոչ վերջինը նման տարողութեամբ գործ մը: Մարզական այս հսկայ Միութիւնը ուրիշներու մօտ կարծիք ստեղծելու բնական այնպիսի կարելիութիւն ունի, որ ափսոս պիտի ըլլայ զայն առաւելագոյն չափով չշահարկելը:

Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկաուտական բոլոր խումբերը, երբ տեղէ տեղ կ'երթան, իրենց կեցուածքով, գործակցութեան ոգիով եւ հաղորդականութեամբ անպայման դրական տպաւորութիւն կը գործեն:

Բացի այն իրողութենէն, որ Սփիւռքի տարածքին ցրուած հաշորդիներուն նոր խանդ եւ հպարտանք կը բաշխէ Հ.Մ.Ը.Մ., ուրիշներու մօտ կարծիք ստեղծող պատկառելի արդիւնքի կը վերածուի Ան:

Այս դիտանկիւնէն մեկնած՝ կրկնակ արժեւորում կը ստանայ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնը:

Մեզ այլոց ծանօթացնելու զուլալ աղբիւր է այս Միութիւնը, որուն գործունէութեան վրայ պէտք է գորգուրալ առաւել խանդադատանքով:



# ՀԱՅ ՄԿԱՆԻ ՈՒԺԸ

ՄԱՐՁԻԿ **marzic**



Վարդանեա՛ն, Չուլլույեա՛ն, Համբարձումեան...

Կարծես՝ Հայոց պատմության խորերէն եկած դափնեպսակ իշխանագուններ ըլլային, որ կրկին գազաթնացուցին Հայուն հպարտութիւնը:

Կարծես վերակենդանացած ամենի ֆետաչիներ ըլլային, որոնք հայուն ազնրօրէն յաղթանակելու անփշրելի կամքը կոթողեցին ի դիմաց աշխարհի հիացիկ աչքերուն:

Երեք ախոյեան միջազգային յառաջաբեմին վրայ՝ երիտասարդական Ուժի եւ Գեղեցկութեան երե՛ք բարձրակէտ, յաճախ «մեծ» ազգերու զլացուած երեք սխրագործութիւն, միաժամանակ:

Անոնց անունին ու պատկերին դիմաց, հայ մամիկը չկրցաւ զսպել ուրախութեան արցունքները, փառք տալով Աստուծոյ՝ նոյեան տապանը Արարատի լանջին հանգչեցուցած եւ առաջին անգամ Հայն ու Հայաստանը ստեղծած ըլլալուն համար:

Ուժացման ճամբուն վրայ դեգերող հայն անգամ Թորգոմեան արիւնին եռալը զգաց երակներուն մէջ՝ ի տես եւ ի լուր ազգակից ախոյեաններու հաւատք ներշնչող հասակին, անունին:

Միջազգային մամուլը խանդավառութեամբ ներբողեց «ծագումով հայ» խորհրդային կամ ֆրանսահպատակ սիւփըր-սթար մարզիկներուն նուաճումները:

Թրքական թերթերը, հեռատեսիլն ու ձայնասփիւռը, հայորդիներուն հաստատած մրցանիշներուն արձագանգ հանդիսացած ատեն, թէեւ ծածկեցին անոնց ազգային պատկանելիութիւնը, սակայն այնպէ՛ս մը հնչեցին մանաւանդ Վարդանեան ազգանունը, որ կը զգային, թէ անմա՛հ էր, Կարմիր Վարդանի ոգին կենդանի՛ էր ամէնուրեք, եւ փոքր ու ճերմակ պաստառին վրայ ցոլացող ծանրաբարձութեան իշխանին առիւծի նայուածքը կը խոռովէր իրենց հոգին...

Առաջին հերթին մաքրակենցաղ զբօսանք՝ այո՛, բայց ահա թէ ո՛ր կրնայ տարածել սփորը իր հմայքն ու առաքելութիւնը:



Կը բարձրանայ ինք՝ անհատ մարզիկը, բարձրացնելով իրեն հետ իր հաւաքականութիւնը, իր ազգը:

Համակրանք ու հիացում կը ստեղծէ իր անձին շուրջ, միաժամանակ յարգանք պարտադրելով զինք ծնած ժողովուրդին եւ հայրենիքին հանդէպ:

Պարզ է այլեւս, որ մկանի յաղթանակը այսօր նոյնքան խօսիլ կու տայ իր մասին, աշխարհի չորս ծագերուն, որքան մտքի նուաճումը կամ արուեստի ստեղծագործութիւնը:

Երեք ճանապարհներն ալ, ըստ կոչումի, բաց են երիտասարդութեան առջեւ, նախ՝ անձնապէս լիանալու, լիարժէք անձ դառնալու, ապա եւ ազգին ու հայրենիքին փառքը հիւսելու յաշտ մարդկութեան ու տիեզերքին:

Վարդանեանը, Չոպլուեանը, Համբարձումեանը յիշեցինք: Չմոռնանք բնա՛ւ Սարգիսեանը եւ միւս հայ ախոյեանները, որոնք, հայրենիքէն ներս թէ դուրս, պատուաւոր պատուանդանի վրայ են այսօր եւ կրնան վաղը գագաթնանալ իրե՛նք ալ:

Ուզեցինք յիշեցնել լոկ, որ հայ երիտասարդն ու երիտասարդուհին մարզանքն ու մարզախաղը չընդունին սոսկ իբր ժամանց եւ զբօս, այլ ախոյեանութեան մը երազը փայփայեն՝ մրցանիշ մը խորտակելու կամքով տոգորուն:

«Ամէն զինուոր մարաջախտի գաւազանը պէտք է ունենայ իր պայուսակին մէջ», կ'ըսէր Նափոլէոն:

Վարդանեաններու, Չոպլուեաններու, Համբարձումեաններու օրինակը թող ներշնչարան հանդիսանայ հայ երիտասարդութեան:

# Ն ՈՐ Ր Տ Ա Ր Ի



**Որո՞նց համար:**

«Նոր»ի փնտռտուքը ունին միայն անոնք, որոնք յուսախաբ են հիսնէն:

Նորի փնտռտուքը ունին նաև անոնք, որոնք ունին, բայց չեն գնահատեր իրենց ունեցածը, որոնք կ'ակնկալեն՝ առանց յստակացնելու իրենց փափաքը, որոնք աչք ունին, բայց չեն տեսներ:

Նորի մէջ հինի շարունակութիւնն է փնտռուածը սակայն, այն, որ նոր երեսալու համար ինքնաժխտումի չ'երթար, բայց որ

կ'առաջադրէ գումար, թուաբանութեան չորս գործողութիւններէն ալ վեր, կը բանաձեւէ ջնջումի ունայնամտութիւն մը:

Նոր չէ նորի եւ հինի բախումը, որ իմաստուններուն համար միայն անցման շրջան է, սահմանագծային խուզարկում եւ թէ նորը հիննալու դատապարտուած է վերջին հաշուով եւ հինը՝ նորով վերածնելու, ինչպէս ցանուելու սահմանուած ցորենի հատիկ:

**Նոր կամ հին տարի՞ն:**

Բայց մենք դարերո՞ւն կունակ դարձուցած ենք եւ կ'երդնունք, որ մեր Նոր Տարին ոչ է եկած, բայց անցած՝ ասուպի արագութեամբ:

**Թերթատե՞ր էք Հայոց Պատմութիւնը:**

Մեր ժողովուրդը իր Ծնունդի՝ օրէն Ծնունդ ուզած է տօնել, բայց այդ առիթը տրուած չէ իրեն:

**Հազիւ վառեր են մոմերը, փոթորիկներ մարե՛ր են զանոնք:**

Հարցը այն է, որ մենք Նոր Տարի չենք ունեցած եւ Նոր Տարի ունենալու համա՛ր միայն ապրած ենք, ու կը շարունակենք ապրիլ:

\*\*\*

**Նոր Տարին ե՛րբ պիտի գայ:**

**Մե՛ր Նոր Տարին:**

Հրապարակ նետեր ենք մեր հողի աւիշը՝ որպէս ընտրեալ արիւն. կ'ապրինք հինը, կը ձգտինք նորին, մոռցեր ենք միայն մեր այսօրը, բայց տակաւին չերեցան մե՛ր մոգերը:

Յոյսը մեր յամառութիւնն է միայն, ոչ թէ Նոր Տարիներու շարունակականութիւնը:

Գժբախտ ենք, սակայն դժգոհ չենք մեր դժբախտությունէն:

Ոչ որ պիտի հասկնայ մեզ. անհասկնալի մնալու ուխտ չունինք, սակայն կը մերժենք ընթացիկ դառնալու մեղրահամ հրաւերները եւ կը ծառանանք մեզ ընթացիկ դարձնելու որեւէ ճնշումի դէմ:

Մեզ միայն մեր հո՛ղը կը հասկնայ եւ մե՛նք միայն կը հասկընանք մեր հողը:

Մենք Նոր Տարի ունինք, որ պիտի գայ...

Մեր Նոր Տարիին իրական աստղեր պիտի տողանցեն, իրական կաղանդ պապաներ պիտի գան անջրպետէն, իրական պիտի ըլլան ծառերը, եւ մոմերը շինուած պիտի ըլլան անխառն մեղրէ:

Մեր Նոր Տարիին պիտի լսուին շարականներ, ծնծղանէ՛ր պիտի ընկերանան հուռաներուն եւ մեր լեռները, մեր ձորերը, անտառները լեզու առած՝ պիտի երգեն:

Բարութեան, արութեան եւ արդար քրտինքի ժողովուրդին Նոր Տարին պիտի ըլլայ մերը, եւ մեզի այցի պիտի գայ՝ աշխա՛րհ:

Նոր Տարի՛ն:

Նո՞ր Տարին:

Մեր Նոր Տարին սերունդներո՛ւ ստեղծագործութիւնը պիտի ըլլայ, եւ միայն այն ժամանակ պիտի գրկենք զիրար, պիտի հրաժարինք մեր փայփայած տառապանքէն եւ ողջունենք զիրար:

Մինչ այդ, բոլոր Նոր Տարիներուն պիտի նաչինք կասկածանքով, բոլոր Նոր Տարիներուն պիտի ձեւացնենք ուրախանալ եւ բոլոր Նոր Տարիներուն կեղծ, կեղծ, կեղծ կաղանդ պապուկներով պիտի ողողենք հրապարակը:

Մինչ այդ, ներկայացող իրաքանչիւր Նոր Տարին պիտի քննենք, գայն պիտի հռչակենք անվաւեր եւ պիտի շարունակենք մե՛ր Նոր Տարիին փնտռուքը:

Այս պիտի մնայ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը, որպէս Նոր Տարի փնտռող ժողովուրդի, Նոր Տարի ապահովելու համար ճակատ մեկնող երիտասարդի:

# ՋԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՇՈՒՐՋՊԱՐ



Բոլո՛ր գաղութներուն մէջ, օգտագործելով բոլո՛ր առիթները, ամէ՛ն բնոյթի միութիւն կը կազմակերպէ ձեռնարկ:

Ձեռնարկները կը միտին մշակոյթի տարածման, կը միտին մէկտեղուելու, երբեմն տօնական օր մը պանծացնելու, բայց ընդհանրապէս, թաքուն կամ բացաչաչտ, ձեռնարկները կը մնան նիւթական գոչացնելու միջոց:

Երբեմն այնքան բազմաթիւ կ'ըլլան ձեռնարկները, որ հանրութեան մէջ դժգոհութեան ալիք կը բարձրանայ: Ժողովուրդը որո՞ւն հասնի: Ո՞ր հրքաւէրը ընդունի, մերժէ ո՞ր մէկը:

Սակայն, վերջին հաշուով, բախտատուր են ա՛յն գաղութները, որոնք ձեռնարկ ընելու միջոց ունին, ունին առ այդ անհրաժեշտ մարդոժ, քան անոնք, որոնք ձեռնարկի ծարաւէն կը տառապին:

Դիտուած է, որ ձեռնարկներու տարողութիւնը, ինչպէս եւ յաջողութեան մեկնակէտը մեծ աղերս ունին յայտարարուած նրպատակին հետ:

Ակումբի կամ դաշտի գնո՛ւմ. ժողովուրդը անակնկալի կը բերէ քեզ: Յուսացածէդ միշտ աւելին կը ստանաս: Ժողովուրդը դրամ կու տայ, փոխարէնը իրեն հետ կը տանի շինարարի հպարտանքը: Ազգային նկարագրի բնական արտայայտութիւն մը կը տեսնես հոս:

Կրթական օճախ մը բա՛ց ունի: Ձեռնարկը կը դառնայ բալասան:

Ընթացիկ ու տարեկան ձեռնարկները անգամ ամէն տարի քիչ մը աւելի կը գերազանցեն անցնող տարին:

Իրենց արդիւնքէն դատած, ձեռնարկները կը յայտնաբերեն ցեղային արժանիքի մը գոյութիւնը: Տակաւին՝ կը փաստեն գոչութեան եւ գոչատեւելու կամք մը:

\*\*\*

Քաղաքացիական պատերազմ, անորոշութիւն, ռումբ:

Տարտղնուած, երբեմն քանդուած տնտեսութիւն, անորոշութիւն՝ ամէն ճակատի վրայ:

Բայց ահաասիկ Լիբանանի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի ուր մասնաճիւղերէն մէկը ակումբ-դաշտ գնելու անհրաժեշտութիւնը կը յայտնէ շրջապատին, կը կազմակերպէ ձեռնարկ ու կը յաջողի հաւաքել աւելի քան վեց հարիւր հազար Լ. Ոսկիի գումար մը: Մէկ գիշերուան մէջ, մէկ հաւաքոյթով:

Առաջին երեւոյթը չէ այս Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ, ոչ ալ յատուկ է այս երեւոյթը միայն լիբանանահայութեան:

Ամէն տեղ, ուր երկու հայորդի քով-քովի եկած են, մտածած են իրենց մատուռին մասին, անոր քով՝ դպրոցին, ու անոնց մօտ՝ ակումբին: Միշտ ալ կարկինը բացուած է փոքր, ապա լայննալու համար: Այս՝ արտասահմանեան ցեղային մեր երթը եղած է:

Սեփական դաշտերը մատուռի, դպրոցի ու ակումբի մթնոլորտը խտացուցած են յաճախ, ու երիտասարդութիւնը աճած է ե՛ր մարմնով ե՛ւ հոգիով, ի պատկերի իւրում հարազատ:

Ձեռնարկներու շուրջպարը վա՛յ որ դադրի:

Ձեռնարկներու շուրջպարը վա՛յ որ պարպուի իր վախճանական նպատակէն:

Բայց մեր ոսկի ժողովուրդը եւ մեր գաղափարականը վկայ, քանի կանք՝ պիտի շարունակուի ձեռնարկներու ընդմէջէն հոգիներու շուրջպարը, աւելի կայտառ, աւելի հաստատակամ, մինչեւ բացւին դռներն յուսոյ...



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ



Սկաուտության ստեղծման 75ամեակին եւ անոր հիմնադիր՝ Լորտ Պէշտըն Փաուրլի ծննդեան 125ամեակին զուգադիպեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Միջ-Գաղութային Ա. Համագումարը:

Լորտ Պէշտըն Փաուրլ զօրավար մըն էր եւ, առաւելաբար, զինուորական թիկունքային աշխատանքներու օժանդակելու առաջնահերթ նպատակով գլուխը կանգնեցաւ երիտասարդական այս շարժումին:

Սկաուտութիւնը մեր մէջ փոխադրողը (եթէ մոռնանք «Կտրիճներ»ու կազմակերպութիւնը երկու դար առաջ, Ռումանիոյ մէջ) եղաւ մանկավարժ-մտաւորական մը՝ Յ. Հինդլեան, հայ պատանիէն առողջ եւ այլանուէր մարդը կերտելու ազնի առաջադրանքով:

Պէտք եղաւ որ ծնի՝ Հ.Մ.Ը.Մ.ը, անոր հիմնադիրները, մտաւորական թէ վաճառական՝ ամէն դասակարգէ, համախմբեն Մեծ Եղեռնէն մազապործ ազատած հայ որբերը, կոփեն ու կռանեն անոնց վտիտ մարմինն ու հոգին ոչ միայն Աստուծոյ ծառայելու (իմա՝ բարի գործ, անանձնական ուրախութիւն), այլեւ՝ Հայրենիքին զոհաբերուելու ուխտով, որպէսզի հայ սկաուտութիւնը մարդկային եւ գաղափարական կարկիւնը լայն բանաչ, հասնի գերազանց չափանիշի (dimension) եւ դառնայ ազգակերտման միաւոր:

Իր ծննդավայրին՝ Պոլսոյ եւ շրջակայքին մէջ, Յեղասպանութենէն վերապրողներուն համար Բարի Սամարացի, ազգային ձեռնարկներուն՝ արթուն պահակ եւ ընկճուած հոգիներուն արիւթիւն ներշնչող բարձրահունչ շեփոր՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը, իր պապենական հողերուն վրայ, Երեւանէն մինչեւ Կարս ու Ալեքսանդրապոլ, եղաւ միաժամանակ այն կամաւոր բանակը, որ ոտքի հանեց հայ պատանին ու պարմանուհին, կերտեց անոնց մարմինն ու հոգին, ջրդեղեց անոնց կամքը հայ հողին ու հայ ժողովուրդին համար ապրելու գաղափարականով եւ իր արիւնը չսակարկեց՝ հայրենիքին պատարագ դառնալու գերազնի օրինակը տալով:

Քաղաքական փոթորիկներ պոկեցին Հ.Մ.Ը.Մ.ի նորաբոյս կադնին իր ծննդավայրէն ու Հայրենիքէն, ցիր ու ցան ըրին ճիղերը՝ աշխարհի տարածքին: Մահաշունչ մրրիկը փորձեց մարել ոսկեվառ խարոյկը Հ.Մ.Ը.Մ.ի արիներուն. բայց կայծերը թռան աստղերու պէս եւ նոր խարոյկներ վառեցին Սփիւռքի տարածքին:

Ու Հ.Մ.Ը.Մ.ի Արին, խիտ ու երկար շարքերով, իր նուիրական դրօշին ներքեւ դարձեալ քալեց քաղաքներէն, գիղերէն ու տողանցեց մարգադաշտերու երկայնքին՝ հպարտութեամբ ուռեցնելով սխրանքի կարօտ հայոց կուրծքերը օտար աշխարհի մէջ:

Օտարն ալ անտարբեր չմնաց Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութեան նուաճումներուն եւ գնահատանքը արտայայտելու առիթը չփախցուց:

Այս իրողութեան նորագոյն ապացոյցը քաղաքակրթութեան օրրան Աթէնքը տուաւ, իր արուարձաններէն Քոքինիոյ մէկ փողոցը «Հայ Սկառուտի» անուամբ վերամկրտելով յամի Տեառն 1982ին: Բարեկենդանի նուէր մը: Այլ միտքի ու մարմնի քանդակագործ հեղին եղբայր ժողովուրդէն բարի «վարուց վկայական» մը մաքրակենցաղ, անձնագոհ եւ կարգապահ այն երիտասարդ կազմակերպութեան, որ կը կոչուի Հ.Մ.Ը.Մ. եւ հայ սկառուտներ:

Լորտ Պէլտըն Փաուրլ Հ.Մ.Ը.Մ.ի տիպար սկառուտութիւնը առաջին գնահատողներէն մէկը եղաւ, երբ մարդակերտ ու ազգանուէր իր առաքելութեան նուիրուած էր ան նորանկախ Հայաստանի տարածքին՝ հիացումը յայտնելով մանաւանդ անոր անկրկնելի ուղեցոյց-նշանաբանին՝ «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր»ին:

Հ.Մ.Ը.Մ.ի Արի՛, բարձրացի՛ր ու բարձրացո՛ւր, մինչեւ Արաւսի կատարը:

Այդ յաղթանակը կ'ըլլայ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Ա. Համագումարի ծրագիրներուն իրագործման դափնեպսակը:

# ՄԻՒՍ ԴՊՐՈՑԸ



Յաճախ երբ մարդիկ դպրոց կ'ըսեն, կը մտածեն ու կը խօսին այն վայրի մասին, ուր կը դասաւանդուին լեզու, թուաբանութիւն, պատմական նիւթեր...

Ուր կայ ուսուցիչ ու տնօրէն, առաւօտեան աղօթք, երեկոյեան սերտողութիւն, պատիժ ու գնահատանք, վիճակացոյց ու վկայական:

Ուր կայ ուսում եւ կրթութիւն, ուր պատրաստութիւն կայ կեանքի եւ ապագայի:

**Կան մարդիկ, որոնք դպրոց կը նկատեն նաեւ տունը, ընտանիքը:**

Շարունակելով այլաբանական որոնումները, մարդիկ ալ կան, որոնք դպրոց կը նկատեն շրջապտոյտը, մարդոց հետ յարաբերութիւնը. կան մարդիկ, որոնք շուկա՛ն կը հռչակեն մեծագոյն դպրոց...

Յամենայն դէպս շատ են իրա՛ւ դպրոցներէն դուրս գործող դպրոցները: Այն հիմնարկները, որոնք կը ջամբեն ուսում ու կրթութիւն, այն միջավայրերը, որոնք կու տան ուսում ու կրթութիւն, այն շարժումները, որոնց ուղղակի թէ անուղղակի նպատակն է մարդուն մա՛րդ պատրաստութիւնը:

Անկասկած ոչ մէկ չափանիշով կարելի է ստորագնահատել դպրոցը եւ ոչ ալ մրցակցութիւն յայտարարել մարդկային ամէնէն առողջ այն հիմնարկին հետ՝ անոր հակադրելով այլ կարելիութիւններ: Միտքը դպրոցին լրացուցիչ ըլլալու ազնիւ կարելիութիւնն է. այն, որ կը ձգտի բան մը անելցնել եղածին վրայ:

Մեր իրականութեան մէջ, դպրոցին քով կարելի է անվարան դնել միւս դպրոցը, որուն ճակատին գրուած է Հ.Մ.Ը.Մ.:

Հոս իւրաքանչիւր տարիք ունի իրեն համապատասխան մթնոլորտը եւ կարգը.— գալիկ, արծուիկ, արի, արեւոյշ, երէց, սկաուտ, պարմանուհի, մարզիկ, վարչական: Հոս իւրաքանչիւր աշակերտ միաժամանակ ուսուցիչ է ու տնօրէն. եւ վկայականները կը ստացուին տարիներու գումարով, աստղ, կարողութեան արտայայտութեամբ՝ աստիճան:

Մասնագիտական պեճերը բազմաթիւ են եւ բազմատեսակ:

Հոս մարզանքը տղոց սիրած խաղն է, միջոցն է, նպատակը չէ: Նպատակը միւսն է. նկարագրի կերտումը, ընկերային էակ դառնալու գրաւականը, ազգային մեծնալու հպարտանքը, մարդ դառնալու կիրքը:

Կ'ուզէք քննութեան տակ առէք Հ.Մ.Ը.Մ.ականը, կ'ուզէք քննեցէք Հ.Մ.Ը.Մ.ը:

Ասիկա այն միութիւնն է, որ իր ժողովուրդին տուաւ համազգեստի ճաշակ, պարզեց եռագոյն, հնչեցուց Յառաջ Նահատակ:

Ասիկա այն միութիւնն է, որ գօտիին ու գլխարկին վրայ կրբեց Արարատ ու Արաքս եւ իր երթին մէջ բարձրացաւ ու բարձրացուց:

Եղեռնէն ետք, որպէս կազմակերպութիւն իր ժողովուրդի անդրանիկ զուակ՝ Հ.Մ.Ը.Մ. իր խառնուածքով ու կեցուածքով մնաց հարազատ:

Ասիկա այն միութիւնն է, որ Աստուծոյ հաւատարմութեան եւ հաշրենիքի ծառայութեան երդում ըրաւ:

Սորվեցուց կարգապահութիւն, բնութեան սէր, նկարագրի մաքրութիւն. սորվեցուց մարդ ու հայ մնալու արու կեցուածք:

Հայ Դատի պատրաստութիւն տեսաւ փողով ու թմբուկով, որպէսզի «սառած սրտեր բորբոքի՛ն»:

Հ.Մ.Ը.Մ.ը՝ այս միւս դպրոցը:



# Զ Փ Տ Ո Ւ Մ Ը



Ըստ հայկական «զարտոդութեան», միջազգային սկսուտութեան նշանաբանը՝ «մի՛շտ պատրաստ» իրացունցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ, սակայն նախամեծար մնաց միւսը, իրը.— Բարձրացի՛ր, Բարձրացուր:

Պ. Պ. Ատրունի մեծ թուաբանագէտը եղաւ մեր ընտանիքի նշանաբանի հեղինակը ու անգամ մը եւս փաստուեցաւ, որ գիտական բիրտը միտքը, մեծութիւն մնալու համար, անպայման պէտք է չենի բարոյական լիցքի:

Սկսուտական միջազգային ընտանիքը պարզապէս հիացաւ ազգի մը այս ընտրութեան. մի՛շտ պատրաստի տեղ՝ Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր. եւ չառարկեց:

Ու ինչպէս միշտ, իր նկարագրին պատշաճեցնելով հանդերձ իր նշանաբանը, Հ.Մ.Ը.Մ. չանտեսեց նաեւ միւսը:

Հ.Մ.Ը.Մ.ականներ պարզապէս թրծուեցան այն սկզբունքով, որ պէտք է միշտ պատրաստ ըլլան բարձրանալու եւ բարձրացնելու համար:

Մարզանքի եւ մարզուելու առաքելութիւն վերցուցած այս միութիւնը երբեք միայն մարզական չմնաց: Հայ մարմնամարզական՝ թէ մարմնակրթական ընդհանուր միութիւն պէտք էր մկրտել այս միութիւնը: Մարմնակրթական, ճշդեց մեր ազգային նկարագիրը:

Իրաքանչիւր բանաձեւում, որ բարոյական եւ հոգի չունի, չի կրնար տոկալ ժամանակի գտումին:

Հ.Մ.Ը.Մ. ինքզինք խարսխեց անժամանցելի սկզբունքներու վրայ:

Մեր ճշդած նշանաբանը ինքն իր մէջ վերանորոգ է, անսպառ է, անվախճան:

Ոչ բարձրանալը սահման ունի, ոչ բարձրացնելը:

Յաիտենական ինքնակերտումի ընթացք մըն է այս բանաձեւումը, որ իր հասկացողութեամբ իսկ պարզապէս կերտում է: Ազնիւ, ազնուացնող, համամարդկային, այլասէր եւ ուղիղ:



Հարց է նշանաբանի մը ճշդումը, անոր գիտը, անոր ծանրությոնը եւ մարդկային ու ազգային խառնուածքի հարազատ արտայայտութիւն ըլլալու պայմանի յարգումը:

**Տեսանք.** այդ մէկը իրագործուած է լաւագոյնս:

Այլ հարց է, սակայն, յայտնաբերուած նշանաբանի կեանքի կոչումը, իրագործումը, առ այդ տարուող աշխատանքը, հաւատքը, յարատեւութեան ոգին:

Ցարդ անկրկնելի այս միութիւնը ե՛ւ իր հիմքը ըրաւ արմատատըր, ե՛ւ իր անը դարձուց պայծառ:

Կը մնայ որ շարունակուի՝ վեհափառ այդ ձգտումին ձգտումը:

Անհրաժեշտ է որ սերունդներ անբաժանելի շղթաներու պէս ազուցուին իրարու, զօրանան իրարմով, բարձրանան ու բարձրացնեն:

Սերունդներ պարտին սերո՛ւնդ ստեղծել, նորը գոյն պէտք է տայ հինին, հինը ճամբան հարթէ նորին:

**Աւելի՛ն:**

Բարձրացողը պէտք չէ անտեսէ զինք վեր բռնող բազուկը. ու բարձրացնողը պէտք չէ հրաժարի իր ձեռնասունը բարձունքի վրայ տեսնելու հրճուանքէն:

Մարդկային կեանքը ինքը փորձառութեանց բնական փոխանցում է, ուր մարդկային յառաջդիմութիւնը քարայրէն մինչեւ լուսին ա՛յս ունի իրաւ:

Չյայտարարուած, բնազդային եւ բնական բարձրանալ-բարձրացնել եղած է մարդկութեան երթը:

Մեր նշանաբանը՝ Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր այն խոր, խոր, խոր սէրն է, աղամանդեայ բիրեղագոյնը, որ որքան բաժնուի, կը գումարուի այնքան:

Գործին ընթացքը խոչընդոտի չի կրնար հանդիպիլ, եթէ սերունդներ այս ակէն խմեն ջուրը:

Այդ է. պէտք է ձգտումը պահել ձգտում, որպէսզի որեւէ իրագործում ինքն իր մահը չբերէ:

# ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Մամուլի պատմության մեջ տարին-երկուքը իմաստ չունին: Կարելի չէ արժեւորել թերթ մը (օրաթերթ, ամսաթերթ թէ պարբերաթերթ), երբ տարիներու վաստակ չէ կապուած իր անուան:

Թերթը կը նմանի մանկան մը. երբ կը ծնի, կ'ուրախանայ շրջապատը, որ զայն կ'առնէ գուրգուրանքի տակ: Կարելի է գուշակութիւններ ընել անոր ապագային մասին, սակայն կարելի չէ վճռականօրէն ըսել՝ որ երեխան տեղ պիտի հասնի:

Յետոյ, արտասահմանեան մեր իրողութեան մէջ կարելի է թուել հրատարակութիւններու երկար շարք մը, որոնք ծնան, սակայն չկրցան ապրիլ:

Ծնունդ տալը բան մըն է, ապրեցնելը՝ ուրիշ բան:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական այս հրատարակութիւնը՝ «Մարզիկ»ը, ըսած ենք տեղ մը, ծնաւ ոչ թէ որպէս խանդավառութեան մը արդիւնք, այլ որպէս պահանջի մը գոհացում, կարիքի մը պատասխան:

«Մարզիկ»ին ծնունդ տալու համար տարիներու աշխատանք տարուեցաւ, հող ու մթնոլորտ պատրաստուեցաւ. նախ կառուցային իր վերջնական ձեւը գտաւ Հ.Մ.Ը.Մ., օժտուելով Կեդրոնական Վարչութեամբ, որմէ ետք բնական ու իրաւական հանգամանք ստացաւ «Մարզիկ»ը՝ իր ծնունդէն իսկ առաջ:

Երկար ապրելու, միշտ ապրելու բաւարար գրաւականով հրապարակ իջաւ «Մարզիկ»ը:

Ան կը թեւակոխէ իր երրորդ տարուան սեմին:

Առաջին երկու տարիներուն ի՛նչ տուաւ «Մարզիկ».— պէտք չկայ համադրական փորձի, որովհետեւ ընթերցողի անմիջական տրամադրութեան տակ է ան իր բոլոր թիւերով եւ տակաւին չէ նետուած գրադարաններու այն դարակներուն մէջ, ուր կը շարին հին ու արժէքաւոր հաւաքածոները:

Յետոյ, շուտ է նորածինին արժեւորումը:

Այս պարագային թերեւս անելի արդար է հարց տալ, թէ

շրջապատը ի՞նչ չափով առաւ զայն իր գուրգուրանքին տակ: Այս հարցումին պատասխանն ալ անկասկած դրական է ցարդ:

Հ.Մ.Ը.Մ. միայն հպարտութեամբ կրնայ արձանագրել, որ այս թերթը հիմնեց ռումբերու տարափին տակ ու զայն ապրեցուց ռումբերու տարափին հակառակ:

«Մարզիկ» արտասահմանէն շարունակեց յօդուած ստանալ, երբ երկիրը զրկուած էր նամակատան մը գոյութենէն, երբ օդակայանը չկար եւ փակ էին նաւամատոցները:

Ու «Մարզիկ» հասաւ արտասահման, նոյնքան հրաշքով, առանց խօսելու զանազան դժուարութեանց, «Մարզիկ»ը «Մարզիկ» պահելու այլազան խոչընդոտներու մասին:

Արգելք չադրահարելու եւ պայծառութիւն սփռելու կոչուած այս Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ., «Մարզիկ»ի երրորդ տարուան մուտքին առիթով, միայն կրնայ հպարտութեամբ եւ վճռականութեամբ յատարարել, որ գործը կը շարունակուի:

Առ այժմ էականը այդ է, մի՛շտ էականը այդ է.— գործի շարունակումը, շարունակականութիւնը: Մնացածները,— դանդաղումներ, ուշացումներ, աւելի լատին ակնկալութիւն,— կը սրբագրուին, կ'ըլլան:

Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.ի անհամար համակիրներ ի սփիռս աշխարհի, կը հաւատանք, տակաւ կը կեդրոնացնեն իրենց գուրգուրանքը նորածինին նկատմամբ, որ աղուոր է, կաշտառ, պայծառ ու ժպտերես:

Քանի տարի կը գումարուի տարիի վրայ, գործի արմատները կը դառնան այնքան հաստատարուն: Առ այժմ ու կրկին էականը այն է, որ գործը կը շարունակուի:

# ԻՆՉ Կ'ԸՆԵՆ ՄԵՐ «ՄԻԻՍ» ԵՂԲԱՅՐՆԵՐԸ



Մենք՝ միութենականներս ա՛յն ենք, ինչ որ ենք:

Կ'ընենք ինչ որ կրնանք. կը գործենք մեր կարողության սահմաններուն մէջ, կը հաւատանք բանի մը ու կը շարժինք մեր հաւատքի չափով:

Անկասկած, կատարեալ չենք:

Ունինք շատ թերութիւններ, շատ տկարութիւններ. երբեմն սխալներ կը գումարուին սխալներու վրայ: Հազիւ յաջողութիւն մը արձանագրած՝ կը նկատենք, որ

բաղդատմամբ ըլլալիքին՝ եղածը քիչ է:

Շատ անգամ կը զգանք, որ մեզի համար ըսուած է՝ յօժար է հոգիս, տկար է մարմինս:

Երբեմն մեր մտքի թռիչքը կ'անցնի գործնականութեան սահմանները ու կը ձախողինք, երբեմն մտքի թռիչք չենք ունենար եւ կը չորնանք գործնականութեան սահմաններուն մէջ:

Մենք՝ միութենականներս թերեւս ա՛յն չենք, ինչ որ պէտք է ըլլայինք:

Ասիկա չքմեղանք չէ: Ոչ ալ ինքնարդարացում:

Ոչ յաւելեալ յանձնառութենէն փախուստ, ոչ քննադատութեան առաջքը առնելու ռազմավարութիւն:

Միութենական մը պարտի ինքզինք սրբագրել, պարտի հաշի տալ, պարտի նորոգուիլ եւ իրաւունք չունի ըսելու. «Ձեռքէս աչքբան կու գայ», ու կռնակ դարձնելու Պիղատոսի պէս:

Երբ աչքպէս կը խօսինք, պարզապէս մեր միութենականի ազնիւ խօսքն է, որ կը խմբագրենք մեր «միւս» եղբայրներուն:

Անոնց, որոնք միութենական չեն:

Արտասահմանեան մեր իրականութեան մէջ հաշտպահանումէն անդին անցնելու հրամայականին առջեւ կը գտնուինք: Հաշտարժի հանգրուանն է ասիկա, որուն ի տես կրնանք եւ պէտք է թելադրանքներ ընենք մեր միւս եղբայրներուն:

Չենք պնդեր որ աչս կամ ա՛յն կազմակերպութեան անդամակցին:

Չենք ճշդեր միութեան մը անունը:

Սակայն կ'ըսենք.

Մեր իրականութեան մէջ կան ամէ՛ն ճաշակի, ամէ՛ն մտա-

ծողութեան գոհացում տուող կազմակերպութիւններ՝ քաղաքական կուսակցութիւններէն սկսեալ մինչեւ մարզական միութիւնները, բարեսիրական ընկերակցութիւններէն՝ եկեղեցւոյ տիկնանց միութիւնները, դպրաց դասերէն՝ երգչախումբերը, հայրենակցական միութիւններէն՝ թաղական խորհուրդները, պատանեկան եւ երիտասարդական միութիւններէն՝ միւս տասնեակները:

Եթէ պակաս միութիւններ կան, ստեղծե՛նք:

Սակայն, որպէս հայ անհատ, շտուծենք առանց միութեան մը անդամակցելու:

Միտքը ա՛յս է:

Իրաւամբ, առնենք մեր բազմաթիւ միութիւններէն մէկը՝ Հ.Մ.Ը.Մ.ը եւ, որպէս սոսկ օրինակ, խորհրդածենք.

Չորսէն տասնութ տարեկան տղաքը ի՞նչ կ'ընեն, երբ սկսուտ չեն, մարզիկ չեն, գաղափարական իրե՛նց տարիքի յատուկ կազմակերպութեան մը անդամ չեն:

Ի՛նչ կ'ընեն:

Փողոցն ու փողոցաչի՞նը գոհացում կու տայ անոնց:

Պատահական եւ պարագայական ընկերնե՛ր պէտք է շրջապատեն զիրենք:

Անհրաժե՛շտ է, որ տունէն դուրս տնեցիի աչքը չըլլայ տղուն վրայ:

Անհրաժեշտ է, որ տունէն զատ տուն չունենա՞յ երիտասարդը:

Ո՞ր տրամաբանութեամբ միութենական չենք ըներ տղաքը:

Երբ Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական-մարզական տողանցքի մը 2-3000 պատանիներ կը քալեն, նոյն տարիքի տղոց նոյնքան եւ աւելի թիւ մը նախանձո՛վ կը դիտէ աչդ անցքը:

Նոյն տարիքի տղոց շատ աւելի մեծ թիւ մը ա՛յլ տեղ է, տողա՛նցք իսկ չի դիտեր:

Ո՞ւր են: Աւելի լաւ տե՞ղ:

Մեր համոզումն է, որ, միութենական ըլլալով, անհատը կը շահի, ազգը կը շահի: Միութենական չըլլալով կը տուժէ անհատը, եւ ազգը կը կորսնցնէ շատ բան:

Կոչէ աւելի, ներքին վերլուծումի առաջարկ է ասիկա:

Կը մնայ, որ պատասխանը խմբագրեն մեր մի՛ւս եղբայրները, որոնք մեր եղբայրները պիտի մնան, եւ պիտի շարունակենք զիրենք կանչել, կանչել, կանչել՛:



# Խ Օ Ս Ք Ը



Ծիշոյ է, որ խօսք մը կը դառնայ անհիմաստ, երբ չի վերածուիր գործի: Սակայն ճիշդ է նաև այն, որ գործը չի կրնար սկսիլ առանց խօսքին:

Ի՛նչ է խօսքը: Խօսք կը նշանակէ մտածում, գաղափար, ճշդում, գիտ, սրբագրություն, նկատողություն, առաջարկ, քննարկում:

Խօսք կը նշանակէ բաղձանք, բնորոշում, հաստատում, գնահատում, ժխտում, քննադատություն, եզրակացություն:

**Խօսքը մտքի եւ զգացումի արտայայտությունն է:**

Ամէն գործի սկիզբը կայ խօսքը: Որեւէ գործ առանց խօսքի չի կրնար ըլլալ: Զուր չէ ըսուած. «Խօսքը գործին կէսն է»: Պիտի յստակացնենք. Խօսքը գործին առաջին կէսն է:

Այս բանաձեւումով՝ խօսքը մանաւանդ ծրագրում է, սահմանում է, կարելիութեանց արժեւորում է, վախճանականին հաւատքն է եւ խօսքը գործի վերածելու վճռակամությունն է:

Անհատական թէ հաւաքական յառաջդիմութեանց մեկնակէտն է խօսքը, որով հիմնական կարելորություն ունի ան:

Սխալ խօսքը ծնունդ կու տայ ձախաւեր գործի: Անտեղի խօսքը կը պղտորէ ըլլալիք գործը: Անհիմաստ խօսքը ժամավաճառ կը դարձնէ մեզ, եւ կ'ամլացնէ գործը:

Խօսիլը անկասկած կարողություն կ'ենթադրէ: Գործ է ինքնին խօսքը: Խօսքի վարպետ մը հիմնադիրն է վարպետ գործի: Այս դերակատարությունը վստահուած է մտաւորականութեան: Հասարակական կեանքի մէջ հիմնական պատասխանատուութիւնը անո՛ր կ'երթայ: Մտաւորականութիւնը պիտի բանաձեւէ խօսքը, իսկ մասսան գործի պիտի վերածէ զայն:

Եթէ խօսիլը կարողություն է, ա՛յլ կարողություն է մտիկ ընելը: Ամէն մարդու խօսիլ չէ տրուած, եւ ամէն մարդ մտիկ ընելու կարողություն չունի:

Դաստիարակությունը նպատակ ունի բոլոր ճակատներու վրայ յաջողություն արձանագրելու: Դաստիարակությունը կը մղէ որ խօսողները ճիշդ խօսին, եւ մտիկ ընողները մտիկ ընեն: Պարզ է: Մտիկ ընել կը նշանակէ խօսքը գործի վերածել: Այլապէս ի՛նչ մտիկ ընել:

Կան տաղանդաւոր մարդիկ, որոնք կրնան ե՛լ խօսիլ, ե՛լ խօսքը գործի վերածել:

Մեր հանրային կեանքը վիրաւոր է անով, որ խօսքը եւ գործը միաժամանակ տրուած է նոյն մարդոց:

Աշխատանքի բաժանումը շատակ սահման չունի, չի կրնար ունենալ: Գուցէ պէտք է բաւարարուիլ խօսողի խօսքէն եւ անկէ անպայման խօսքին իրագործումը չակնկալել:

Այս բանաձեւումին գործադրութիւնն է, որ քսաներորդ դարու թեքնոլոժիին մեզ հասցուց լուսին:

Ամէն խօսք՝ խօսք չէ անկասկած, ինչպէս ամէն գիր գրականութիւն չէ, ամէն գծագրութիւն՝ արուեստ, ամէն երգ՝ երաժշտական որակ ունեցող եւ ամէն գործ՝ գործ:

Հարցը այն է, որ սիրուածը, ընտրուածը, ճշդուածը դառնայ գործադրութեան նպատակ:

Խօսքը կրնայ երկար ըլլալ, կրնայ ըլլալ նախադասութիւն մը եւ վերածուիլ նշանաբանի, առածի, իմաստուն մտքի:

Խօսքին չափը նշանակութիւն չունի: Սակայն նշանակութիւն ունի անկասկած ինքը՝ խօսքը:

Կամ համոզիչ է, կամ ոչ: Կամ ճիշդ է, կամ չէ: Կամ ընդունելի է, կամ ոչ:

Ամէնէն մտահոգիչը կը դառնայ այն պարագան, երբ որեւէ խօսք իմաստ չունենայ: Կամ՝ երբ գործի վերածուելիք խօսք չըստի:

Եթէ նոր խօսքերը վիճելի են ոմանց համար, հիները բարեբախտաբար իրենց ուժականութիւնը չեն կորսնցուցած:

Ահա Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր խօսքը՝ Բարձրացի՛ր, բարձրացուր: Ահա Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր խօսքը՝ Մի՛շտ պատրաստ: Ահա Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր երգը՝ Յառա՛ջ, Նահատակ ցեղի անմահներ:

Խօսքը ըսուած է եւ խօսքեր կը լսուին տակաւ: Խօսքը գործի վերածելը դադար չի կրնար ճանչնալ: Սրտին կը նմանի դադարած գործ մը: Եթէ կեցա՛ վերջացաւ:

# ՓՈԽԱՆՑՈՒՄԸ



ՄԱՐՁԻ Կ *مارچ*  
marzi

չացուցիչով, սակայն, նույնիսկ այդ պարագային, անձը անձ չէ, այլ խումբի մը խօսնակը:

Ներկայացուցիչին տրուած շարգանքը ներկայացուցիչի՛ն, բայց, մանաւանդ, անոր միջոցաւ ներկայացուած մարմինի՛ն կ'երթայ բնականօրէն:

Կը փոխուին վարչական կազմերը: Գացողները կը դառնան հին, եկողները՝ նորընտիր: Փոխուող նախագահները կը դառնան նախկին. պատմութեան կ'անցնին հանգստեան կոչուած զօրավարները:

Այդ փոփոխութիւնները, սակայն, վարչական նշանակութիւն ունին միայն, երբէք շարունակականութեան կասեցում, նույնիսկ եթէ կարգ մը պարագաներու հոշակոյին արմատական կամ անկիւնադարձային:

Վարչութիւնը մնալուն է, վարչականները՝ փոփոխական:

Պետութիւնը մնալուն է, կառավարութիւնը՝ փոփոխական:

Խումբը մնալուն է, խումբի անդամները՝ փոփոխական:

Գործը մնալուն է, գործողները՝ փոփոխական:

Հարցը այն է, որ ընդհանրապէս աճապարանք կայ նորին առթած յոյսին առջեւ՝ հինը շուտ... հիւնցնելու:

Երախտամոռութեան զգացում մը կը ծնի այս վարուելակերպէն, որուն հետեւանքները կը հասնին մինչեւ մնալունն ու փոփոխականը իրարու հետ շփոթելու վտանգին:

Նոր տարի՞ է:

Կը քննենք հինը խստագոյն դատավարութեամբ, նորը կը դիմաորենք առաելագոյն խանդավառութեամբ, ու կը մոռնանք, որ հինը ծնաւ նորը:

Ու չենք տեսներ նորին մէջ հինը, որ պիտի ապրի ժառանգականութեան անչեղլի իսկ օրէնքով: Բնազանցական պարտադրանքով ու բնականութեամբ:

Սխա՞լ պիտի ըլլար ըսել՝ վերջին հաշտով հին ու նոր չկայ, կայ միայն փոխանցում:

Սխա՞լ պիտի ըլլար նոյն այս տրամաբանութեամբ եզրակացնել, որ փոխանցումի պահուն պէտք է առնուազն հաւասար չափով գնահատել փոխանցողն ու ստանձնողը:

Արդարութեան կշիռքն է չափանիշը ընկերութեան մը գօրեղ կաշտութեան: Վա՛յ որ կշիռքին եզրերը անդադար էլեւէջեն...

Անոնք՝ կշիռքին եզրերը պէտք է միշտ մնան իրարու հաւասա՛ր:

Նոր տարի է, նոր վարչութիւններ են, անցած ու գալիք բոլոր օրերը լեցուն եղած են ու պիտի մնան փոփոխութիւններով, հինի ու նորի փոխանցումներով:

Յստակ է, որ եթէ չըլլար քարայրի մարդը, Լուսնի մարդը չէր կրնար ծնիլ:

Ա՛յդ է:

Պատմութեամբ մէկ, միութեամբ պայմանատր, նոյն դրօշով ու նոյն քաշերգով, հինին ու նորին փոխանցումի սահմանագծին վրայ, հաւասար տաքութեամբ՝

Ենորհատր Նոր Տարի:

Ծնունդը սո՛ւրբ մնայ:

Փոխանցումը վերջ չունենա՛յ:

Հինը մնայ իր պարտականութիւնը ամբողջացուցած մարդու գոհունակութեամբ, նորը ճառագայթէ աւանդը հաւատքո՛վ ստանձնած մարդու վճռականութեամբ:

Այն ատեն սերունդներ «Փառք ի բարձունս» պիտի երգեն:



# Հ.Մ.Ը.Մ.Ի Գ. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ



Հ.Մ.Ը.Մ.Ի Գ. Պատգամատրական  
Ընդհ. Ժողովը տուած է ժամադրութիւն եւ  
նշած ժամադրավայր:

14 Ապրիլ 1983:

Հինգ երկրամասերէ, 14 երկիրնե-  
րու Հ.Մ.Ը.Մ.Ի 54 մասնաճիւղերու ներկա-  
յացուցիչներ, թիով շուրջ 60, պիտի ներ-  
կայացնեն 15.000 միութենականներու  
փափաքը, պահանջը, պատրաստակամու-  
թիւնը, գործը եւ գործերու ծրագիրը:

Չորս տարին անգամ մը, այս ան-  
կրկնելի Միութիւնը կը քննէ ինքզինք եւ իրմով՝ գրեթէ լրիւ Սփիւռ-  
քը՝ անոր մարմնակրթական բոլոր հարցերով:

Կանոնագրով նախատեսուած եւ կանոնաւորաբար կի-  
րարկուող օրէնքէ մը աւելի, հոգեկան եւ կազմակերպական պա-  
հանջ է այլեւս այդ՝ իւրաքանչիւր չորս տարին անգամ մը գումար-  
ւող Հ.Մ.Ը.Մ. մեծ ընտանիքի Պատգամատրական Ընդհ. Ժողովը:

Հ.Մ.Ը.Մ.Ի անդամական գերագոյն այդ հաւաքը միութենա-  
կան պայծառ եւ ուժեղ կառոյցի մը արտայայտութիւնն է անկաս-  
կած եւ է, մա՛նաւանդ, սփիւռքեան կազմակերպ կեանքի կայտառ  
ու հաւատաւոր համանուագը:

Ի՛նչ ազգ-հայրենիք-պարկեշտ քաղաքացիութիւն, եթէ երի-  
տասարդութիւն մը պիտի չկարենայ ինքզինք պոռալ, ինքզինք  
քննել, ուժովնալ ինքնիրմով եւ շրջապատով, վերադառնալու հա-  
մար գոյատեւման պայքարին առաւել աիշով եւ դիմադրականու-  
թեամբ:

Հ.Մ.Ը.Մ. մեր ժողովուրդի երիտասարդական այն թեւն է,  
որ դաշտով եւ լեռնայինով մաքուր նկարագիր կերտած, օրին նաեւ  
ժողովական կարգ հաստատած, այժմ ժողովական այդ կարգը իր  
առաւելագոյն չափանիշին բարձրացուցած՝ կը ղեկավարէ ինք-  
զինք, կը ղեկավարէ շրջապատը եւ կը պատրաստուի հաւաքական  
հաշուեքննութեան:

Ժողով կը նշանակէ հաշիւ ներկայացնել եւ հաշիւ պահան-  
ջել:

Ժողով կը նշանակէ քննադատութիւն, ինքնաքննադատու-  
թիւն եւ ծրագրում:



Ժողով կը նշանակէ վերաքաղ, վերարժեւորում, վերատեսութիւն, վերահաստատում, սրբագրութիւն, վերասրբագրութիւն եւ, հիմնականը, նոր ո՛ւխտ:

Իսկ Պատգամատրական Ընդհանուր Ժողովը արդէն ընդհանրական ամէն ինչ է, մեծ է, մեծագոյնն է, մեծցնող է եւ համապարփա՛կ:

Հ.Մ.Ը.Մ. կը պատրաստուի իր Պատգամատրական Ընդհանուր Ժողովին:

\*\*\*

Իւրաքանչիւր մասնաճիւղ պիտի տանի սեղանի մեծ ու պզտիկ, բայց երբեք պզտիկցնող հարցերը, որոնք պէտք է լուծում գտնեն:

Իւրաքանչիւր մասնաճիւղ պիտի մտահոգուի այն բոլոր շրջաններով, ուր տակաւին Հ.Մ.Ը.Մ. չկայ որպէս կազմակերպութիւն, եւ ուր սակայն անպայման կայ Հ.Մ.Ը.Մ. որպէս ոգի:

Ընդհ. Ժողովը պիտի որոշէ տեղ մը հող տալ շունչի՛ն, այլ տեղ՝ շունչ տալ հողի՛ն:

Իւրաքանչիւր շրջան պիտի բերէ այլ շրջանի մը օգտակար ըլլալու մտածում եւ առաջարկ, եւ Ընդհանուր Ժողովը պիտի դառնայ իրապէ՛ս ընդհանրական:

Զըսի՛նք: Ժողով կը նշանակէ հաւաք, հաւաքական վերլուծում եւ հաւաքական եւ ընդհանրական մտածողութիւն:

Ուրիշ ո՛ր այնքան ճշմարիտ է գերագոյն պատգամը, որքան Ընդհանուր Ժողովի մը.— Փրկութիւնը հաւաքական ուժի մէջ:

Ծիշդ չէ՛՞ նաեւ այն,

Որ Ընդհանուր Ժողով մը ուժեղ կը դառնայ այնքան, որքան բժախնդիր, լուրջ եւ հաւատաւոր կը մնայ Ընդհ. Ժողովի պատրաստութիւնը:

Ընդհանուր Ժողովէն առաջ, Ընդհ. Ժողովին համար տարած աշխատանքն է, որ գերազանցապէս վարկ եւ փայլք կու տայ եւ կը դառնայ անհաշի բերք:

Վերջին հաշիով,

Կաղանդի գիշեր մըն է Ընդհ. Ժողովը, որ, ուրախութեան եւ զիրար գտնելու եւ զիրար ողջունելու կարգին, մանաւանդ աղօթք է յաջողութեան, աղօթք՝ Սփիւռքը սփիւռք ըլլալէ դադրեցնելու եւ բոլոր դրօշները նոյն դրօշին շուրջ հաւաքուած պահելու, նոյն դրօշին վերածելու ճիգին, կիրքին, երթին:

Յաջողութիւն ժողովի պատրաստութեան եւ ողջոյն՝ Երրորդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովին:

# ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՆՉՈՎ



Վարսունհինգ տարի առաջ...

Նորէն կը դողանջէին Ս. Զատկեր-  
ւան զանգերը:

Կ'աւետէին՝ Աստուածորդուն յա-  
րութիւնը, Կեանքի յաղթանակը Մահուան  
դէմ,

Ո՛չ, չէր մեռներ ա՛յն անձը, ա՛յն  
ազգը, որ գիտակից զոհաբերութեամբ կը  
բռնէր Գողգոթայի ճամբան եւ կը խաչուէր  
իր հաւատքի՛ն, իր արդա՛ր տեսլականին  
համար:

Չորս տարիէ ի վեր հայ ժողովուրդը խաչը ուսին մագլցած  
էր Գողգոթան: Թշնամին կը պատրաստուէր թաղել՝ զինք, իր երա-  
զին հետ:

Բայց, ո՛վ հրաշք, Սարդարապատի մէջ երկնային լոյսը կը  
ժայթքէր հողէ՛ն: Գերեզմանաքարը կը թռէ՛ր, կը փոշիանար ընդ-  
միշտ: Թշնամի զինուորները կը փախչէին խելակորոյս, եւ երակնե-  
րուն մէջ մնացած կաթիլ մը թանկագին արիւնով (Անաթոլ  
Ֆրանս)՝ Հայը ոտքի կը կանգնէր յաղթական, անմահութիւնը  
իմացեալ մահով վաստկած:

Հայաստանը կը վերածնէր:

Մայիսեան վարդաբոյր հովերուն հետ Յարութեան Ծունչը  
կը թեւածէր Հայաստանի մոխրակալած տարածքին վրայ՝ կեանքի  
վերակոչելով տկարը, յուսահատը, կիսամեռը:

Կենարար այդ շունչը կը հասնէր Պոլիս, ուր ապաստան գը-  
տած հայութեան «մնացորդաց»ը, անապատէն հաւաքուած «որբե-  
րու բանակ»ին հետ, ծնունդ կու տար Հ.Մ.Ը.Մ.ին՝ Հայ Մարմնա-  
կրթական Ընդհանուր Միութեան:

Շարժումին գաղափարախօս-ռահվիրան՝ Շաւարշ Քրիս-  
եանն ալ խաչուած էր, ա՛ն ալ՝ Եղեռնի գեհեռական ճամբուն վրայ:  
Բայց առաքեալները ո՛ղջ էին:

Եւ Գրիգոր Յակոբեաններու եւ Տիգրան Խոյեաններու, Յ.  
Ծ. Սիրունիներու եւ Հայկ Ծիզմէճեաններու փաղանգը կու գար  
քով-քովի, մարմին կու տար խաչեալ երազին:

Հ.Մ.Ը.Մ.ը, Աստուածորդուն օրինակով, ոտքի կը կանգ-  
նեցնէր գերեզմանի դատապարտուած երիտասարդութիւնը, կը վե-  
րադարձնէր կեանքի՛ հիւանդները, կը բանար աչքը կոյրերուն, որ

տեսնեն անոնք հաշտութեան լուսաշող ապագան եւ ուխտեալները դառնան ազատութեան ճանապարհին: Իր գաղափարական նկանակը սնունդ կը դարձնէր ծլարձակող սերունդներուն, բազմութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ համախմբուած երիտասարդութեան մկանները շուտով կ'ունճանային, կը կոփուէին մարմինները, կը կռանուէին հոգիներն ու կամքերը: Հինաւորց արքայական մեր այրուծին յիշեցնող «հրաթեւ տորմիդ» կը կազմէին անոնք: Եւ աստրէն, ջարդէն ընդամէնը հնգամեակ մը ետք, անապատէն վերադարձած այդ մանուկները, այժմ դարձած Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ եւ մարզիկ, կը խլէին առաջնութիւնը Պոլսոյ միջազգային տողանցքներուն, կը յայտնաբերէին ախոյեաններ, մարզադաշտերու վրայ պարտութեա՛ն կը մատնէին ջարդարար ոսոխին խումբերը՝ ոսոխին իսկ հողին վրայ: Ապա, «կամաւոր բանակ» կը կազմէին ու կ'երթային նորաստեղծ, անկախ Հայաստան, ժամը հնչելուն՝ իրենց արինն իսկ չսակարկելով անոր յաւերժութեան:

Յետոյ՝ Սփիւռք, ժողովուրդի՛ն հետ, ու ճիւղարձակում գաղութ-գաղութ: Յաղթանակէ յաղթանակ թեւածում եւ հպարտառիթ սխրա՛նք:

Այսօր՝ 55 մասնաճիւղ, 15.000 երիտասարդ-երիտասարդուհի դրօշի տակ:

Նորէ՛ն կը դողանջեն Ս. Զատկուան զանգերը:

Դափնեպսակները անցեալին կը պատկանին: Լաւագոյն պարագային կ'ըլլան փառք ու ներշնչարան:

Վաղը՝ նոր մեկնակէտ կը պահանջէ, նոր գործ, նոր յաղթանա՛կ:

Վաթսունհինգ տարիներ անցեր են: Նոր վաթսունհինգամեակի ի խնդիր՝

Յառա՛ջ...

# «ԽԻՍՏ ԳՆԱՀԱՏԵԼԻ»

(Հ.Մ.Ը.Մ.Ի Գ. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ  
ԸՆԳԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ)



Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը չարգեց  
ժամադրությունը:

Արեւելքէն, արեւմուտքէն, հիսիսիւէն  
ու հարաւէն օդանաւեր Աթէնք իջեցուցին  
Հ.Մ.Ը.Մ.Ի 55 մասնաճիւղերէն 53ի՝ 60  
ներկայացուցիչները:

Գումարուեցաւ երկարաշունչ ժո-  
ղով. օրը 12 ժամ, յաջորդաբար 4 օր, 9  
նիստով:

Քննուեցան տարուած աշխա-  
տանքները, լուծուեցան զանազան հար-  
ցեր, տրուեցան որոշումներ եւ եզրակացութի՛ւն — պրավօ՛:

Հոս, հակառակ քաղաքացիական պատերազմին, հոն, հա-  
կառակ հեռաւորութիւններու, այլ տեղ, հակառակ կղզիացման, ու-  
րիշ անկիւն մը, հակառակ զանազան դժուարութիւններու, ուրեմն  
ամէնուրեք, Հ.Մ.Ը.Մ. շարժած է, քալած:

Իրապէ՛ս:

Ո՞րն է մեծագոյն գնահատանքը — այն որ դուրսէ՛ն կու  
գալ, թէ այն որ եզրակացութիւնն է ներքին ու բո՛ւն մարդուն:

Հ.Մ.Ը.Մ. ինքն իրեն համար ԱՊԻԻՍ ըսաւ:

Խիստ, երբեմն անգութ ըլլալու չափ ծանր քննադատու-  
թիւններէ ետք Հ.Մ.Ը.Մ. գտաւ, որ շատ գործ տեսած է եւ մանա-  
ւանդ պարտի շատ ատելի ծանր յանձնառութիւններու ի սպաս դնել  
իր եռանդը:

Հ.Մ.Ը.Մ.ի շրջանաւարտ Կեդրոնական Վարչութիւնը 110  
մեքենագիր տեղեկագրով «սեղմ գիծերու մէջ» ներկայացուց իր  
քառամեայ գործունէութեան «ամփոփ» մէկ պատկերը:

Եթէ Երջանաչին եւ մեկուսի վարչութիւնները եւ մասնաճիւ-  
ղերու վարչութիւնները եւս իրենց քառամեայ գործունէութեան տե-  
ղեկագիրը ուզէին կարդալ, միայն զանոնք ունկնդրելու համար  
տասնեակ օրերու կարիք պիտի զգացուէր:

Ու... ասիկա գո՛րծ է:

Մեր ժողովները սակայն յրբեւե՛նական հանդիսութիւններ  
չեն, որպէսզի բաւարարուին տարուած աշխատանքի գնահատու-

մով, յոբելեարի գործունեության վերջակէտ դառնան թէկուզ երախտագէտ, շնորհապարտ եւ յարգալիր դասինեպսակի տուչութեամբ:

Տարուած աշխատանքին մէջ անպայման կը դրոյի տարուելիք պարտականութեան ծանրութիւնն ու լրջութիւնը, յաջորդականութեան վճռակամութիւնը. եւ եթէ բանաձեւումը առաջին ակնարկով հաշուեփակ մըն է, խորքին մէջ սակայն նորին հետ կանխիկ պայմանագրութիւն մըն է:

Այս բանաձեւումո՛վ միայն կ'առնուի ԽԻՍՏ ԳՆԱՀԱՏԵԼԻ բանաձեւումը, զոր Հ.Մ.Ը.Մ. իր շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան միջոցաւ քուէարկեց ինքն իրեն:

Այս բանաձեւումո՛վ միայն Հ.Մ.Ը.Մ. կը մնայ Հ.Մ.Ը.Մ., որ որքան յառաջանայ տարիքով, կ'երիտասարդանայ այնքան, որ որքան աշխատի, կ'աշխուժանայ այնքան, որ որքան գնահատուի, կը համեստանայ այնքան ու կը պրկէ ինքզինք նոր իրագործումներու պատրաստակամութեամբ:

«Խիստ գնահատելի» բանաձեւումը խստագոյն պահանջ է յառաջիկայ գործունեութեան համար:

Համագաղութային բնոյթ եւ տարողութիւն ստացած այս միութիւնը համագաղութային տարողութեամբ կարկին գործածելու յանձնառութեան տակ կը մնայ ամէն օր քիչ մը աւելի, ամէն օր քիչ մը տարբեր, ամէն օր քիչ մը կատարեալ:

Մանաւանդ որ խիստ գնահատելին նաեւ յոյսին կապուած գնահատանք է, ոչ միայն եղածին, այլեւ ըլլալիքին համար:

Բարեբախտաբար Հ.Մ.Ը.Մ. միշտ գիտցած է արժանի ըլլալ գուրգուրանքի եւ վստահութեան:

Հ.Մ.Ը.Մ.ը՝ խիստ գնահատելին:



# ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

**ՄԱՐՁԻԿ** *ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՊՐԵՍՍ*  
**հարիկ** *ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՊՐԵՍՍ*



Անհատական, ընտանեկան թե հաւաքական բոլոր մարզերու եւ ամէն ձեռի գործառնութիւններու հիմքերէն մէկը ա՛յս է, հաւատարմութիւնը:

Բոլոր խոստումներու, բոլոր համաձայնութիւններու, ուխտերու եւ երդումներու առաջին եւ վերջին փնտռածն է ան՝ հաւատարմութի՛նը:

Հաւատարմութեան մէջ կայ կամք, կայ գիտակցութիւն, կայ պատասխանատւութեան զգացում, կայ պատիւ, կայ զոհողութեան ոգի եւ կայ մարդկային ամէնէն արու կեցուածքներէն մէկը:

Մեր սկառուներու երդման առաջին պարբերութեան մէջ կը հանդիպինք անոր.

«Պատուոյս վրայ կ'երդնում, ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել հայրենիքիս»...

Հաւատարմութեան փաստը անկասկած նախ խօսքն է, խոստումը, ապա միւսն է՝ գործը՝ հաւատարմութիւնը գործի վերածելու առաքինութիւնն ու կիրքը:

Մեր երկիրը հաւատարմութեան փաստը արձանագրեց դարեր առաջ Աւարաչրի դաշտին վրայ Վարդանով եւ Վարդանանքով. հաւատարմութեան բնութիւնը ընտանեկան չարկէն ներս քարացաւ Արա Գեղեցիկի ու Նուարդի աւանդութեամբ. հողին հաւատարմութիւնը Ապրիլ 24ի տուրքը արձանագրեց, ու նոյն հաւատարմութիւնը կոթողեց Մայիս 28:

Իր սկզբունքին հաւատարիմ բանակներ կախաղաններէն ճօճեցան, ու այդ իսկ պատճառաւ հաւատարմութիւնը արեամբ նրփրականացած մարդկային գիծ դարձաւ:

**Հ.Մ.Ը.Մ.** ծնունդը եղաւ ազգային հաւատարմութեան:

**Հ.Մ.Ը.Մ.** իր ծնունդէն ետք դարձաւ հաւատարմութեան արժանի եղելութիւն:

Հիմա, անհատական թէ հաւաքական չափանիշերու գործածութեան պարագային, անվարա՛ն կարելի է մեղանշողի մը ըսել.

— Մի՛ դաւեր Հ.Մ.Ը.Մ.ին: Հաւատարիմ մնայ անոր...

Ըստած է եւ պիտի կրկնուի, թէ Հ.Մ.Ը.Մ. միայն մարգական միութիւն չէ, չեղաւ, պիտի չըլլայ: Հ.Մ.Ը.Մ. գաղափարի եւ գաղափարակերտումի միութիւն է, որ ազգային պատմութենէն կը ներշնչուի ու կը դաստիարակուի եւ միաժամանակ կը դառնայ սերունդներու դաստիարակ:

Կը մնայ հաւատարիմ իր ծնողին (հողին եւ ազգին), կը դառնայ սերունդներու հաւատարմութեան համակրելի քուրմ:

Զարմանալի չէ փաստօրէն, որ Սփիւռքի աշխարհաժառայ տարածութեան մէջ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները իրարու կը նմանին:

Զարմանալի չէ, որ երբ երկու հայեր քով քովի գան ու տեսնուի որ երկուքն ալ Հ.Մ.Ը.Մ.ական են, անմիջապէս իրենք զիրենք կը նկատեն ծնունդով իրարու ծանօթ-բարեկամ-եղբայր:

Զարմանալի չէ, որ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները նոյն գիծը ունին, նոյն նկարագիրը, նոյն բնատրոյթինը, նոյն ապրումը:

Այս այսպէս է, որովհետեւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները հաւատարիմ են նոյն անփոփոխ եւ անփոփոխելի ճշմարտութիւններուն եւ արժէքներուն.

Հաւատարմութիւն Աստուծոյ եւ Հայրենիքի,

Հաւատարմութիւն Ազգի եւ Հողի,

Հաւատարմութիւն մարդկային բոլոր առաքինութեանց,

Հաւատարմութիւն մեր տասնաբանեային:

Հ.Մ.Ը.Մ.ականը գիտէ,— այդպէս կը դաստիարակուի,— որ հաւատարմութիւնն է հիմքը անհատական եւ ընտանեկան ու ազգային ամբողջութեան: Ու Հ.Մ.Ը.Մ.ականը գիտէ ու կը գործէ որպէս այդպիսին.— հաւատարմութեան անունով պէտք է պատրաստ ըլլալ ամէն ձեռի զոհողութեան:

Հ.Մ.Ը.Մ. հաւատարմութեան հաւատարիմ միութիւնն է. այդ իսկ պատճառով կրկնապէս ուժեղ է, որովհետեւ, ծնունդը ըլլալով հաւատարմութեան, է միաժամանակ հաւատարիմներո՛ւ կերտիչ:

# Պ Ա Տ Ի Ի Ը



Այն որ Մարդու արժանատու-  
թեան առաջին սանդիսամատն է,  
Այն որ միաժամանակ միջոց է ու  
նպատակ,  
Այն առանց որուն ի՛նչ մարդ, ի՛նչ  
կեանք:

Պատիւը պատուել-պատուելուիլ չէ.  
պատիւը Աստուծոյ շունչն է, որուն կորուս-  
տը համազօր է մահուան, որուն ներկայու-  
թիւնը մեծագոյն գանձն ու հարստութիւնն  
է եւ որով կա՛մ կանք, կա՛մ չկանք:

Պատիւը շօշափելի այն հասկացողութիւնն է, որ միջին եզր  
չի ճանչնար, յարմարեցումներ չ՛ընդունիր, այսինքն կա՛մ կայ, կա՛մ  
չկայ:

Վերջապէս պատիւը այն է, որ երբ մեկնի, անվերադարձ  
է, ինչպէս վերջին շունչը:

Ա՛յդ է, գոչութեան այդ անչափելի՛ն է գրաւականը հայ  
սկաւտի եւ մարզիկի երդումին:

Հ.Մ.Ը.Մ.ական սկաւտն ու մարզիկը, պարզ անդամը կամ  
ցենզատր վարչականը հաւասարապէս կ՛ըսեն.

— Եթէ չյարգենք մեր երդումը, թող խնդրոյ առարկայ դառ-  
նայ մեր պատիւը:

\*  
\* \*

Երդում ընողները գիտե՛ն ծանրութիւնը գրաւին:

Կ՛արժէ՞ նպատակը, որուն համար նժարին կը նետուի պա-  
տիւը:

Այդ ի՛նչ է, որ պատուով կ՛երաշխատորուի:

— Պատուոյս վրայ կ՛երդնում ըլլալ հաւատարիմ Աստուծոյս  
եւ Հայրենիքիս.

— Պատուոյս վրայ կ՛երդնում միշտ օգնել ուրիշին.

— Պատուոյս վրայ կ՛երդնում գործել իբրեւ պարտականու-  
թեան գիտակից արի եւ վեհանձն մարդ.

— Պատուոյս վրայ կ՛երդնում հնազանդիլ հայ սկաւտի  
դաւանանքին:

Իսկ ի՛նչ է ԴԱԻԱՆԱՆՔԸ, որուն հնազանդութիւն կը խոս-  
տանայ Հ.Մ.Ը.Մ.ականը.

— Խօսքի նուիրականութիւն, հնազանդութիւն, հաւատարմութիւն եւ ուղղամտութիւն, օգնելու պատրաստակամութիւն, բարեկամութիւն բոլորին հետ, բարեկրթութիւն, գուրգուրանք Մայրենիին վրայ, պաշտպանութիւն անասուններու եւ բոյսերու, զուարթութիւն եւ խանդավառութիւն, աշխատասիրութիւն ու կորով, տընտեսելու կարողութիւն ու մաքրութիւն մտածումի, խօսքի եւ գործի:

**Դաւանանքի իրաքանչիւր համարը օղակ մըն է միւսին համար, ինքն իր մէջ ամբողջութիւն մըն է ու ամբողջ դաւանանքը իր 12 յօդուածներով կը միտի մարդ թրծելու:**

Երդումի եւ դաւանանքի ազնուական ու ծանր յանձնառութեան դիմաց բնական է, որ մեծ ըլլայ գրաւականը եւ գրաւականներու մեծագոյնը պէտք է ճշդուի որպէս ապահովութեան մութհակ:

Երդումին հաւատարիմ, Դաւանանքը իրագործելու պատրաստակամ՝ **Հ.Մ.Ը.Մ.**ականը ամենայն ինքնավստահութեամբ կը ստորագրէ՝ **ՊԱՏԻԻ:**

\*  
\* \*

**Հ.Մ.Ը.Մ.**ի պատմութիւնը եղաւ պատուոյ եւ պատուախընդրութեան արձանագրութիւն: **Հ.Մ.Ը.Մ.** իր պատիւը բարձր պահելու համար մնաց բարձր ու ճակատաբաց:

**Զմրոտեց ինքզինք:**

Խոստումը խօսքէն գործի վերածելու դժուարին ճիգին մէջ ոչ միայն ընկրկում չարձանագրեց, երդումնադրուժ չեղաւ, այլ ինքզինք վտանգեց անվտանգ պահելու համար պատիւը, ու անոր շուքին տակ հաստատեց իր վրանը, ակումբն ու դաշտը եւ շարունակեց կրկնել.

— Աստուած, Հայրենիք, Մարդ:

**Այսինքն Երկինք, Երկիր, Ծունչ:**

Ա՛յս էր, այս մօտեցումն ու նկարագիրը, որ **Հ.Մ.Ը.Մ.**ը մեծ պահեց. ա՛յս է, որ մեծ պիտի պահէ **Հ.Մ.Ը.Մ.**ը եւ ա՛յս է, որ կ'ակընկալուի իրաքանչիւր **Հ.Մ.Ը.Մ.**ականէ.

Երդում Պատուոյ վրայ, որ պիտի պատուընուին Աստուած, Հայրենիք եւ Մարդ:

**Հ.Մ.Ը.Մ.**ը՝ այս է:

**Պատի՛ւ:**

# ԻՐԱՐՈՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ

ՄԱՐՁԻԿ  
ماركيز  
marzi  
SPORTS MAGAZINE



գամ արդար է դասել «պատուոյ անդամ»:

Գտնուեցա՞ւ եկեղեցական հայր մը, որ տեսաւ Հ.Մ.Ը.Մ.ը եւ չհիացաւ անոր կառոյցին:

Ինչպէ՛ս չի՞շել Տաճատ Արք. Ուրֆալեանը:

Գտնուեցա՞ւ կաթողիկոս մը, հայ եկեղեցոյ բարձրագոյն իշխան, որ կոնդակով ու բանի չգնահատէր այս անկրկնելի միութիւնը:

Եկեղեցական հայրերու համակրանքը, ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ին եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական թելին նկատմամբ, անկասկած իր պատճառները ունի եւ երբեք պատահական կամ պարագայական չէ:

Նախ Հ.Մ.Ը.Մ. ինքն իր կառոյցին մէջ, որպէս դաստիարակութիւն եւ հոգեբանութիւն, ընկալած է հայաստանեայց եկեղեցին որպէս անբաժան մէկ գործօնը ազգին եւ ազգապահպանման:

Յետոյ,

Հ.Մ.Ը.Մ. եղած է աստուածավախ, հետեւաբար եւ կրօնական ծէսերու եւ հասկացողութեանց հետ համընթաց քալող կազմակերպութիւն:

Հայ եկեղեցին պանծացուցա՞ծ է կրօնական որեւէ դէպք կամ դէմք — Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտները միշտ գտնուած են առաջին շարքի վրայ:

Հայ եկեղեցին ունեցա՞ծ է ազգային հաւաք — Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտները հսկած են կարգապահութեան:

Հայ եկեղեցին որեւէ առթիւ եւ որեւէ տեղ պէ՛տք ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ին — նուագախումբ եւ տարազ փայլք տուած են հրաւերին:

Կրկին յետոյ,

Ամէն Կիրակի եկեղեցի երթալը, ամէն առիթով ու ամէն

Վերջինը՝ Խորէն Ա. երջանկայիշատակն էր, Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտութեան ջատագով:

Զաւէն Պատրիարք Եղիաշեանը՝ իրմէ առաջ:

Տակախն՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, իրա՛ւ սկաւտ:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտ, կամ սկաւ՛տ եղած չըլլալուն տխրութիւնը ցարդ ապրող Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսն ան-

վեհափառ սկաւտներու ցանկին, որպէս



տեղ հայաստանեայց եկեղեցի այցը Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան համար ընկալուած նկարագիր է այլեւս:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան երդումի առաջին պարբերութիւնը, ա՛յդ է, «հաւատարմութիւն Աստուծոյ»:

Փոխադարձութեան օրէնքով, նոյն այդ սկաուտները համակրանքին եւ գորգորանքին ենթակայ են եկեղեցական հայրերուն՝ քահանայ, սարկաւազ, վարդապետ, եպիսկոպոս թէ կաթողիկոս, որոնք սկաուտութեան մէջ կը տեսնեն եկեղեցոյ փոքրիկ պահակները, որոնց ճակտին թէ գօտիին վրայ կը փայլի Արարատը:

Արարատը՝

Որուն վրայ մարդկութիւնը երկրորդ անգամ ըլլալով ծնաւ եւ որուն վրայ հանգչեցաւ տապանը նոյեան:

Հ.Մ.Ը.Մ.ին համար հայ եկեղեցին միշտ եղած է «տունը հայուն» եւ որուն հետեւանքով է անկասկած, որ Տան մեծերը Հ.Մ.Ը.Մ.ը նկատած են նոյն տան չարքաշ, եռանդուն, համակրելի երիտասարդը:

Երիցս երջանկայիշատակ Ջարեհ Ա. Կաթողիկոս, երբ կը խօսէր Հ.Մ.Ը.Մ.ի մասին, խօսքերէն աւելի խօսուն կը դառնային աչքերը, որոնք կը վերածուէին մէկական սիրածոր աստղի:

Եկեղեցի եւ միութիւն այնքան փոխադարձ սիրով եւ յարգանքով, փոխադարձ ազգաշահ ակնկալութիւններով իրարու չեն կապուած, որքան Հ.Մ.Ը.Մ. եւ հայաստանեայց եկեղեցին:

Որքան դիպուկ ու ներդաշնակ եղաւ վերջին երեւոյթը ընդ-մէջ Հ.Մ.Ը.Մ.ին եւ եկեղեցոյ:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն միակ վերապրողը եկեղեցական հայր մըն է՝ Տիգրան Քհնյ. Խոյեան, որուն յուշագրութեան հրատարակութեան առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս տուաւ սրբատառ Կոնդակ եւ որուն մէջ ԱԻԱԳութեան աստիճան շնորհեց արժանապատիւ քահանային:

Ազգային կառոյցները իրարու լրացուցիչ եւ շարունակութիւն են անկասկած, վկայ «սկաուտութեան սիրահար եկեղեցականներու վեհափա՛ն շարանը» եւ սկաուտութեան «պատուի առ»ը՝ անոնց դիմաց:

# ՈՐՈՒՆ ԶԳԵԼ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ



Հարստությունը դիրքին չդիզուեցաւ:  
Ոչ ալ ինկաւ՝ երկինքէն:

Հայ մարդը զերոյէն վար աստի-  
ճանէ սկսաւ կեանքի պայքարին եւ էթէ  
կրցաւ տուն շինել, այդ եղաւ իր հիսկէննե-  
րո՛ւն գնով:

Հարստությունը պապենական չե-  
ղաւ. պապենականը՝ աշխատելու կի՛րքն  
էր միայն:

Հայ մարդու քրտինքն էր, որ վե-  
րածուեցաւ աղամանդի:

**Պապենականը մնաց հո՛ն...**

Որքա՛ն բան մնաց դրամատուներուն, ապահովագրական  
ընկերություններուն: Որքա՛ն բաժնետիրոջեր մնացին անբաժնետէր:  
Սեփականագրեր այրեցան կամ դարձան անուժ:

**Չարդ էր՝ մարմնական, մշակութային եւ տնտեսական:**

Ոտաբոսիկ, անօթի եւ հիւանդ՝ հայ մարդը եղունգներով  
հող ճանկոտեց, ակոշալով մեքենայ խաճաւ եւ, հրա՛շք, վերաբազ-  
մացաւ թիով, արմատացաւ հոգով եւ բազմապատկուեցաւ նիւթա-  
կանով:

**Չմորաց:**

Հին ժառանգութիւն էր, արեւան ժառանգութիւնը, որ հայ  
մարդը մղեց յաղթութեան:

**Հիմա ուրիշ բան է:**

Հիմա հարցը այն է, թէ հարստությունը որո՛ւն պիտի մնայ:

Անոնք, որոնք զաւակ-թոռնիկ, ազգական-բարեկամ ունին,  
տակաւին գիտեն հասցէ մը, որուն կրնան բան ձգել:

Իսկ անոնք, որոնք բան չունի՛ն. հեռաւոր կամ մօտիկ ոչ  
մէկ ազգակա՛ն:

Երէկ ուրիշներ բռնի առին մեզմէ մերը. այսօր մենք կամո-  
վի՛ն մերը ձգենք ուրիշին, անորոշին:

Ժառանգը պէտք չէ մէջտեղ մնայ: Այլապէս կը նմանի ան-  
թաղ մեռելի, որուն շուրջ գիշատիչներ միայն կրնան հաւաքուիլ...

Չէ՛ք հանդիպած մարդոց, որոնք ծեր են կամ գործէ քաշ-  
ւած. մարդոց, որոնք գիտեն, որ իրենց օրերը հաշուրուած են, այսօր  
կամ վաղը պիտի մեկնին այս անցաւոր աշխարհէն, կամ հաշուած,  
որ էթէ հարիւր տարի ապրին ու օրական անհաշիւ այսքան ծախ-  
սեն, չի՛ վերջանար իրենց ունեցածը:

Չէ՛ք հանդիպած մարդոց, որոնք շուարած են պարզապէս,  
որ ի՛նչ ընեն իրենց հարստութիւնը:

Անոնց՝ այդ մարդոց տուէք մե՛ր հասցէն:

Նախ քան մահը մահկանացուն թող գիտնայ, թէ որո՞ւն պի-  
տի մնայ ժառանգը:

Նախ քան մահը ու մահէն ետք յարգենք մահկանացուն:

Միլիոններ, միլիոններ, միլիոններ կը կորսուին ամէն օր,  
որովհետեւ հասցէ տուող չկայ, հասցէ փնտռող չկայ:

Ափսոս է հարստութեան, որ կը կորսուի:

Անժառանգներու ժառանգը միայն եթէ միութիւններուն եր-  
թայ, միութիւնները կը զօրանան անհամեմատօրէն եւ անժառանգ  
մարդ չի մնար:

Ահա կրկին Հ.Մ.Ը.Մ.ը:

Իր հազարաւոր երիտասարդութեամբ, պայծառ գործով:

Աւելի լաւ հասցէ՞:

Անժառանգ մարդիկ, կտակեցէ՛ք ձեր ինչքը Հ.Մ.Ը.Մ.ին եւ  
ժառանգեցէք ամբողջ երիտասարդութեան մը օրհնութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը գրեթէ ամէն ինչ ունի՝ մարդուծ, անխախտ գա-  
ղափարական ու եռանդ: Իրեն պակսողը նիւթակա՛նն է:

Տուէ՛ք նիւթականը եւ պիտի ստանաք ամէն օր համաշ-  
խարհային չափանիշով մարզիկներ, մարզական խումբեր...:

Եթէ առաջին հերթին խօսքը կ'ուղղուի ազգական չունե-  
ցողներուն, խօսքի բաժին կը վերապահուի նաեւ ազգական ունե-  
ցողներո՛ւն:

Հ.Մ.Ը.Մ. բոլոր ժառանգներուն մէջ ինչո՞ւ բաժին չունե-  
նայ...

Ո՞ր ժառանգ ստացողը բնական պիտի չգտնէ Հ.Մ.Ը.Մ.ին  
բաժինը եւ ո՞ր կտակարարը պիտի չարժանանայ համընդհանուր  
յարգանքի:

Մահէն առաջ ու մահէն ետք անհատը միութեամբ կը մնայ  
անմահ:

Ու վերջապէս ո՞վ չի գիտեր, որ կտակել՝ մեռնիլ չի նշանա-  
կեր, այլ ապրիլ՝ մահէն ալ ետք:

# Յ Ե Ր Դ Թ Ի Ի Ը

ՄԱՐԶԻԿ **marzig**  
SPORTS MAGAZINE



Ասիկա «Մարզիկ»ի ՅՅրդ թիւն է:

«Մարզիկ»ի առաջին թիւը լոյս տեսաւ 1980 Փետրուարին: Ամսական մէկ թիւի հաշուով ՅՅրդ թիւը լոյս տեսած պէտք է ըլլար Փետրուար 1983ին: Բայց այդպէս չեղաւ:

Հարցը այն է, որ յապաղումով լոյս տեսած թիւերուն հաշի՞ւը պէտք է պահանջել թէ գնահատել ՅՅրդին ծնունդը:

Արա՛գ:

Եթէ անպայման հաշի տալ-առնելու հաշուական խաղին ուզենք բռնուիլ, կրնանք ապահովաբար փաստել որ այս ՅՅը բնական օրերու եւ տարիներու թիւերէն շատ անելի է ծանրութեամբ, զոհողութեամբ, յարատեւութեամբ, անկարելին կարելի դարձնող յամառութեամբ եւ այն բոլոր տոռեալներով, որոնք մամուլ մը կը պահեն մամուլ:

Յապաղումով լոյս տեսած թիւերու հաշիւը հաշուիչ ոչ մէկ մեքենայ կրնայ ընել:

Հաշուիչ բոլոր մեքենաները, բոլոր մեքենաներուն եւ մեքենացած մարդերուն նման, երբեք հաշուի չեն կրնար առնել հոգին, զոր, ի դէպ, ցարդ ոչ մէկ մեքենայի քմաչքին կարելի եղած է վըստահիլ, եւ որուն հետեւանքով բոլոր հաշուակցումները պակասատր են, վիրատր ու անտրամաբանական:

Այս երեսուն վեցը մաշր չարչարող ծննդաբերութիւն է:

Այս երեսուն վեցը Լիբանանի քաղաքացիական պատերազմին նետուած ձեռնոց է, Հ.Մ.Ը.Մ.ի աննկուն կամք է, երեսո՛յթ է:

Չքմեղա՛նք:

Քաւ լիցի:

Հ.Մ.Ը.Մ. իր ինքնադաստիարակութեան մէջ տեղ տուած է քննադատութեան, ինքնաքննադատութեան, որ սկիզբ է յառաջդիմութեան եւ բարձրացումի:

«Մարզիկ»ի տարուան մը վերջին թիւն է ասիկա եւ, որպէս հայ մամուլին մաս կազմելու կոչուած հրատարակութիւն, մանա-



ւանդ իր սկզբնական տարիներուն, ան պէտք է տեղ մը խօսի ինքն իր մասին, խօսի իր ընթերցողներուն, այս պարագային, նաեւ որպէս Միութեան մը պաշտօնաթերթ, խօսի իր անդամներուն եւ համակիրներուն, մանաւանդ խօսի ինքն իրեն հետ.

Որպէսզի սրբագրէ իր թերիները,

Որպէսզի բացատրութիւն տայ իր խոստացած, սակայն չիրագործած հարցերու մասին,

Եւ մանաւանդ, որպէսզի նորոգէ իր ուխտը:

Ուխտ ու ուխտագնացութիւն է հրապարակագրութիւնը, երբ կը միտի սերունդներ իրարու շողկապել, արձանագրել սերունդի մը հեւքը ու դառնալ պատմութեան համար կարեւոր ատաղձ, մաքրամաքո՛ւր եւ անվիճելի:

«Մարզիկ»ը Հ.Մ.Ը.Մ.ի յաճնառութիւնն է, ուրեմն՝ տոկո՛ւն:

«Մարզիկ»ի յաջորդ թիւը, որպէս շարունակականութեան լաւագոյն գրաւական, արդէն բացառիկ մը պիտի ըլլայ:

Թող դադրի պատերազմը, ու «Մարզիկ» կը խոստանայ մնալ բացառիկներու բացառիկը, որպէս մարզական հրատարակութիւն:

Ասիկա միաժամանակ խոստում է ու խոստումի գործադրութիւն:



# Ե Ր Կ Ո Ւ Ն Ք Ը



Զարդը 1915ին չսկսաւ, ոչ ալ այդ թուականին վերջացաւ:

Պարզապէս այդ մէկը մեծն էր, տխրահռչակն ու աշխարհահռչակը:

Այդ գլխագիր ջարդի լերդացած արեան, մոխիր դարձած վաստակին եւ համատարած աներակներուն վրայ ու անոնց մէջէն ծնաւ այս միութիւնը:

Ծնաւ, երբ տեղ մը ահաւոր գերեզման էր, այլ տեղ՝ անհաւատալի յաղթական կամար.— 1918, Մայիս...

Մարդիկ այնքան տխուր էին եւ այնքան խանդավառ, որ մանչուկը իր խանձարուրն ու մտուրը ի՛նք պատրաստեց եւ ինքզինք մկրտեց:

Մոգեր այցի չեկան իրեն:

Ոչ փող, ոչ թմբուկ: Պարզապէս ծնաւ: Այսքան:

Իր ծնունդէն ետք առաջին գործը եղաւ ուխտագնացութիւն կազմակերպել դէպի Հայաստան. ու արդէն իր ծնունդէն ե՛տք միայն փողն ու թմբուկը դարձան ահեղագոռ:

Միութիւններուն առջինները չեղաւ ան: Ոչ ալ թերեւս կրտսերագոյնը:

Սակայն, ազնուական ընտանիքի ամէնէն չարքաշ զաւկին պէս, մեծցաւ դղեակէն դուրս, պարիսպներու վրայ ու տակ. տղուն պէս, որուն ծնողքը այնքան կլանուած էին մահով ու հարսանիքով, որ ժամանակ չունեցան իրմով զբաղելու, բայց որոնք յանկարծ զայն տեսան բարձրահասակ ու ժպտադէմ, գեղադէմ ու վայելուչ երիտասարդի կերպարով:

Հանրային մեր կեանքին մէջ ո՞ր միութիւնը եղաւ ամէնէն քիչ ծախսալիցը,

Ամէնէն պարզը,

Ամէնէն տարածունը,

Ամէնէն՝ ամէնունը:

65 տարի է անցեր անոր երկունքէն ու կը թուի, որ տակաւին երկունքը ի լինելութիւն է:

65 հատորով կարելի չէ տալ այս միութեան ամբողջական պատմութիւնը, բայց կարելի է բնորոշել զայն երկուքական բառերով. բարձրացաւ, բարձրացուց, խանդավառուեցաւ, խանդավառեց, մեծցաւ, մեծցուց, շէնցաւ, շէնցուց:

Լեռ կորսնցուցած ժողովուրդի մը լեռնաշղթան եղաւ, դրօշ կորսնցուցած ժողովուրդի մը դրօշը եղաւ. ու իր քաջերգը ազգային քաջերգի վերածած այս միութիւնը պարզապէս քալեց:

Ու այդ իսկ պատճառաւ մամուռ չկապեց:

Իրը եղաւ դաշտն ու ձորը, երգն ու կանչը, մարզականն ու կրթականը. իրը եղաւ Աստուած ու Հայրենիք:

Ան դարձաւ ու մնաց ոչ թէ հայերէն չորս նշանակալից գիր միայն, այլ հայրենաշունչ նկար, հաղորդական պատկեր.

— Հ.Մ.Ը.Մ.

Այս պատկերը զօրացուց դիտողը:

Ասոր համար 65 տարուան աշխատանքի պէտք չեղաւ: Առաջին օրէն իսկ, երկունքո՛վ, Հ.Մ.Ը.Մ. ժայռացաւ ու դարձաւ անխորտակելի:

Փալիք վաթսուն հինգ անգամ վաթսուն հինգ տարիներուն ալ՝ օտարութեան մաշեցումին դէմ պահակ այս երիտասարդին, որ Հ.Մ.Ը.Մ. կը կոչուի,

Երի՛ցս ողջոյն:

# Օ Ր Է Ն Ք Ը



Օրէնքը ինչո՞ւ եղած է:

Ու նախ՝ ի՞նչ է օրէնքը:

Օրէնքը, ստեղծագործութիւն ըլլալէ առաջ, գոյութիւն է, ինչպէս երկիրն ու երկինքը, ու անոնցմէ առաջ՝ Աստուած:

Օրէնքը հիմքն է ո՛չ միայն մարդկային իրաւունք-պարտաւորութիւններուն, այլ բնութեան, տիեզերքին, բոլոր շարժուն եւ յարափոփոխ բաներուն:

Եթէ օրէնքը դադրի գոյութիւն ունենալէ, այն է, կը վերստեղծուի քառսը, որ կար իրմէ առաջ:

— Նախ լոյսը բաժնեց խաւարէն, ու եղաւ առտու եւ իրիկուն...

Այսինքն՝ օրէնքը գործի անցաւ:

Օրէնքը սովորութիւն չէ, թէւ սովորութեան մը արտապատութիւնն ալ կրնայ նկատուիլ:

Քարուն-ամառ-աշուն-ձմեռ յաջորդականութիւնը բնութեան սովորութի՞ւնն է թէ օրէնքը:

Մէկը կրնա՞յ գալ միւսէն առաջ:

Ատիկա կ'ըլլայ օրէնքի խախտում: Կամ կը դառնայ նոր օրէնք:

Իրողութիւնը այն է, որ օրէնք մը կրնայ վերատեսութեան ենթարկուիլ, նոյնիսկ փոխուիլ, սակայն չի կրնար վերցուիլ:

Որովհետեւ վերցուիլն անգամ օրէնքի մը հաստատումն է: Օրէնք է, որ հոն օրէնք չմնայ:

Չափազանցութի՞ւն պիտի ըլլար ըսել, որ ամէն ինչ օրէնք է ու օրինաչափութիւն, սկսած մարդու շնչառութենէն, արտի զարկէն մինչեւ թաւալումը լուսինին ու աստղերուն:

Օրէնքին մէջ կայ մահն ու կեանքը:

Ո՞ր մէկը միւսէն առաջ. — Մա՞հն է որ կեանքը կը ծնի թէ կեանքը կը բերէ մահը:

Հապա ցորենի հատի՞կը, որ պէտք է մեռնի, բազմապատկուելու համար:

Սակայն օրէնքը պետք չէ շփոթել իշխանութեան ու մանաւանդ իշխանատրին հետ:

— Օրէնքը վեր է ամէն բանէ եւ պետք է վեր մնայ,— կը պատգամէր երիցս երջանկաշիշատակ Զարեհ Ա. առիթով մը:

Այսինքն ու մանաւանդ օրէնքը վեր է իշխանատրէն. այլապէս ստրկութիւն է կամ բռնատիրութիւն:

Կանոնագի՞րը:

Կանոնագիրը օրէնքի կարելի պարզաբանումն է պարզապէս. անոր հիմքը օրէնքի ձգտումն է, բիրեղացումը:

Օրէնքը չէ երբէք խարազան, որով կարելի ըլլայ հարուածել մերկ կռակները: Ընդհակառակն, օրէնքը մերկութեան վերարկու է:

Կը կարծուի, որ օրէնքը կը ԴՐՈՒԻ, իրականութիւնը այն է, որ օրէնքը ԿՈՒ ԳԱՅ: Բխումն է իսկականն ու մնալունը: Անհկա պատկերին մէջ այն կշիռքն է, որուն երկու նժարները կը համբուրին:

Կայ ընդհանուր օրէնքը եւ կայ բացառութիւնը:

Ամենէն տխեղձը՝ բացառութիւնները նկատի ունենալով պատրաստուած, բայց ընդհանուրին պարտադրուած այն կարգադրութիւնն է, որուն ոմանք կը կարծեն օրէնք անունը տալ:

Ո՞ր երեւոյթը չունի իր վրիպակը:

Մարդկային օրէնագիտութենէն եւ օրէնքներու կիրարկումէն մինչեւ քսա՞ն թէ քսանմէկերորդ դարու ադամացած Եւան կամ եւայացած Ադամը ողբերգութեան չե՞ն վերածուած, տրուած ըլլալով որ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԱԾ են կամայականօրէն, շահադիտաբար եւ դիտումնատր կերպով:

«Երկու չափ, երկու կշիռ» հասկացողութիւնը չէ՞, որ մարդիկը ցարդ չէ կրցած ձերբազատել նոյնինքն մարդոց ստրկատիրութենէն...

Հ.Մ.Ը.Մ.ը ինքը օրէնք է, անկախաբար իր կանոնագրէն:

Բարձրանալու եւ բարձրացնելու օրէնքը:

# Ծ Ն Ո Ղ Ն Ե՛ Ր



Դուք, որ այնքան մտահոգուած էք  
ձեր զաւակներու ապագայով,

Դուք, որ ձեր երջանկութիւնը կը  
գտնէք ձեր զաւակներուն երջանկութեան  
մէջ,

Դուք, որ աչքի լոյսին պէս կը փայ-  
փայէք ձեր զաւակները,  
Նկատած չէ՞ք.

Քսաներորդ դարը բերաւ հրաշալի  
ժամանցներու նստակեաց կարելիութիւն

մը ու երիտասարդութիւնը գամեց չորս պատերու մէջ:

Հեռատեսիլը սենեակ տարաւ աշխարհի մեծագոյն դաշտը,  
մինչ մարդկութեան պահանջը սենեակէն անջրպետ բացուիլն էր  
անկասկած:

Քսաներորդ դարը մովսի եւ գործատուններու հեքին կա-  
պեց սրտի զարկը մարդկութեան, որուն, որպէս թէ հանգիստի  
պահ, տրամադրեց էլեկտրական խաղերու ամբողջ ալլազանութիւն  
մը:

Ճըլիփըրները երեսակայութիւն փայփայեցին եւ քամեցին  
գրպանի վերջին սենթը:

Քսաներորդ դարը, ճագ-միզիքի, ծխախոտի եւ հաշիշի գու-  
լաներով պարուրուած մութ անկիւններու մէջ, խենդացո՛ւց երիտա-  
ւարդութիւնը ու ծնողները այդ մեղկութեան մէջ չճանչցան իրենց  
արզանդի արդի՛ւնքը անգամ:

Դաշտերն ու դաշտաչիւր մնացին հոն, ադամանդեայ աստ-  
ղերու աչքկապուկին տակ:

Քսաներորդ դարը մարդը զրկեց բնութիւնը գրկելու հաճոյ-  
քէն, երջանկութենէն, կեանքէ՛ն:

Ծնողներ՛ր,

Ընտրութիւն մը ընելու կարելիութեան պարագային, ինչ-  
պէ՛ս կարելի է միութեան մը յանձնելու տեղ՝ զաւակը ձգել պողո-  
տաներու քմաչքին, զաւակին զաւա՛կ ընկեր մը նշանակելու տեղ՝  
անձանօթին ընկերակից դարձնել եւ անոր արտատնային կեանքը  
տնայի՛ն բարեխղճութեամբ դաստորոտիւն տալու տեղ՝ փորձու-  
թիւններու յորձանուտին յանձնել:

Երբ ձեր հոգեհատորին համար կը ճշդէք ամէն ինչին լաւա-



գոյնը կամ առնուազն կը ձգտիք անոր (դպրոցին լաւը, հագուստին գեղեցիկը, կերակուրին համովը, սենեակին օդասունը), ապա ինչպէ՛ս բացատրել, որ տակաւին չէք տեսած միւսը, որ պիտի զբաղի ձեր զաւակին նկարագրի հարցով, գաղափարական կազմաւորումով եւ ընկերութեան մէջ մտնելու խնդրով եւ որ կը կոչուի միութիւն:

Այդ միութիւններէն մէկը, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն է:

Տակաւին չէ՞ք տեսած Հ.Մ.Ը.Մ.ը:

Այն, որ կը տողանցէ տարագով, որ փողերախումբերով կը դրդացնէ հող, կը փշաքաղէ հոգի, կը բարձրանայ օրէ օր ու կը բարձրացնէ այնպէս ու այնքան, ինչպէս եւ որքան ծնողքը կը բարձրացնէ իր զաւակը:

Հ.Մ.Ը.Մ.ը երկրորդ տուն, երկրորդ ծնողք, առաջին ընկեր, բնութեան ներկայացուցիչ, մոլութիւններու զտիչ: Հ.Մ.Ը.Մ.ը բանակում ու խաղ, դասախօսութիւն ու կարգապահութիւն, արտադպրոցական կրթի՛չ աշխատանք, արտատնային ընտանեկա՛ն հասկացողութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային, համամարդկային, համընդհանու՛ր միութիւն:

Ծնողնե՛ր,

Կակուղ թաթիկէն մինչեւ Ծեր Գայլը, մարզական բոլո՛ր խաղերու բոլո՛ր ներկայացուցիչները, վարչական բոլո՛ր Մարմինները գրկաբաց կը սպասեն ձեր զակին, որ նաեւ իրե՛նց զաւակն է, արեան եւ հողի ճամբով:


Ամբողջական ու անսպառ հարստութիւն է Հ.Մ.Ը.Մ., որմէ ինչպէ՛ս կարելի է զրկել սիրասունը:

Ու հարստութեանց հարստութիւնը, զանձերու զանձը այն է, որ ամբողջ բանակ մը ձեր զաւակը պիտի կոչէ Քոյր կամ Եղբայր:

Ծնողներ, ծնողնե՛ր,

Սպասել ո՞ր օրուան, սպասել ի՞նչ բանի՝ զաւակը յանձնելու համար ա՛զգի զակին, որ Հ.Մ.Ը.Մ. կը կոչուի...

# ՎԵՐԵՐԱՆՆԵՐԸ



**Հ.Մ.Ը.Մ.՝ Հ.Մ.Ը.Մ.** եղաւ իր հիմնադիրներով, ծրագիր-կանոնագրով, նաեւ ու մանաւանդ՝ իր անդամ-անդամուհիներու ժրաջան հետեւողականութեան, հաւատքին եւ զոհաբերումին գումարով:

**Հ.Մ.Ը.Մ.՝ Հ.Մ.Ը.Մ.** եղաւ, որովհետեւ սերունդ մը անով լիացաւ, սերունդ մը անով սերնդացաւ, սերունդ մը զայն ժառանգե՛ց:

**Հ.Մ.Ը.Մ.՝ Հ.Մ.Ը.Մ.** եղաւ, որովհետեւ եղաւ ժառանգ եւ ժառանգորդ, միաժամանակ՝:

Ով որ ալ եւ ինչպէս ալ գրէ պատմութիւնը այս միութեան, պիտի չկարենայ ըլլալ ամբողջական. էջաթիւերը պիտի չըլլան բաւարար ու ոչ մէկ էջ պիտի կարենայ ամբողջապէս եւ ճշմարտապէս պատկերել սերունդները, որոնք անցան՝ պարզած դրօշ, դարձած շարժական վարձան:

Այս միութիւնը ունի պատմութիւնը սերունդներու եւ ոչ թէ պատմութիւնը սոսկ միութեան մը. հետեւաբար, մէկ կամ երկու սերունդ բաւ պիտի չըլլան տալու համար պատմութիւնը այս միութեան:

## Ահա վերերանները:

Թիզ, թիզ ու կէս կակուղ թաթիկներէն մինչեւ Արջու թաթ Հ.Մ.Ը.Մ.ի գոյն կրած թուխ ու պաշտօն ճակտով այս մարդիկը, որոնք օր մը ֆուրպոլով հպարտութիւն ներարկեցին բազմութեանց, օր մը պասքէթպոլով, օր մը տողանցքով, օր մը բանակումով, օր մը հսկողութեամբ ու հսկումով, օր մը աթլէթով, օր մը, օր մը, ամէ՛ն օր...

## Ասոնք՝ վերերանները:

Գաշտի տղոցմէ մաս մը որոշ տարիքէ ետք օրացոյց կախեց պատէն, կուրծքէն՝ զինանշան, ու վայելե՛ց Հ.Մ.Ը.Մ.ը: Լսեց Հ.Մ.Ը.Մ.՝ ու յիշեց ինքզինք, իր մանկութիւնը, պատանութիւնը, երիտասարդութիւնը, մինչեւ... ծերութի՛ն:

Ծերացած Հ.Մ.Ը.Մ.ական տեսա՞ծ էք երբեւիցէ:

Գործի վրայ գործող բոլորը ուղիղ են, նոյնիսկ կորաքա-

մակները աշխոյժ են, կը բուրեն հաւատք ու եռանդ:

Վերերանները յիշատակ ձգած ու յիշատակ դարձած խըլեակներ չեն, քաշուած՝ դաշտէն ու ժողովէն: Եքանշան ստացած ու անով իրենց ողջութեան մեռածներ չեն վերերանները: Վերերանները մէկական խստաբիբ ու պահանջկոտ նայուածք են, հսկիչ, որոնց ներկայութեան նորերը փողկապ կը շտկեն, կը շտկոտուին, կը քաշուին ու պատրաստ են հաշի տալու: Ակնածանք կը պարտադրեն վերերանները եւ կը մնան օրինակելի:

Հ.Մ.Ը.Մ.՝ Հ.Մ.Ը.Մ. եղաւ, որովհետեւ վերերանները շարունակեցին իրենց միութեան նաչիլ աչնպէս, ինչպէս հաշրերը կը նաչին իրենց զաւակներուն:

Հ.Մ.Ը.Մ. հա՛յր եղաւ սերունդներուն համար թէ զաւակ:

Ամենայն դէպս, եթէ վերերանները օր մը կազմեցին այս միութեան ուժը ու հաւաքեցին բաժակ ու շքանշան, քաղեցին դափնեպսակ հազարանուն դաշտերէ, անոնք՝ վերերանները հիմա ու ընդմիշտ դարձան աղ ու համովցուցին նայուածքը, քալուածքը, յաջորդականութիւնը, երթը:

Վերերանները աղքատացած մեծահարուստներ են, որոնք կը շարունակեն ազնուական մնալ: Անկիւն մը պահուած ադամանդ, պատէն կախուած հազուագիտ նկար, հնութեան վերածուած գորգ...

Վերերանները տակաւին կը մնան այն լապտերները, որոնք կրնան գործածուիլ անկասկած, երբ կտրուին էլեկտրականութեան թելերը, երբ մութը կախէ մոռութը, իրենք՝ վերերանները կը դառնան կանթեղ եւ կը լուսաւորեն, կը լուսաւորեն՝

Իրենք զիրենք, շրջապատը, զիրենք ծնող, իրենցմէ ծնած նորը, հինը՝

Հ.Մ.Ը.Մ.ը:

# Թ Ո Ռ Ն Ի Կ Ը



Լուս Անճելլա պատմության անցաւ:

Ողիմպիականներու ջահը իր 23րդ բռնկումը կատարեց հոս, հարիւր հազարաւոր հանդիսատեսներու խելացնոր ծափերուն եւ հուռաններուն տակ: Միլիոնաւոր մարդիկ, բարեկամ ու մրցակից, հեռատեսիլներու առջեւ այսքան պերճանքի ի տես սարսաղի:

Տխրեցան բացակաները:

Ինչ բացատրութիւն ալ տրուի եւ ինքնադարացման ինչ պատճառաբանութիւններ ալ շարուին, մեր կողմէ պարզապէս ասիտսանք՝ հին, նոր ու գալիք բացականերուն հաշուոյն:

Օրին անդրադարձած ենք արդէն բացականերու անընդունելի կեցուածքին եւ մեր խմբագրականներէն մէկով բանաձեւած ենք մեր հաւատամքը՝ «ԲՈԼՈՐԻՆ ԴԷՄ» խորագրով:

Այս չէ սակայն թոռնիկին պատմութիւնը:

Ամերիկայի Միացեալ Նահանգները, ինչպէս միշտ եւ ինչպէս բոլոր մարզերուն մէջ, ցարդ կազմակերպուած բոլոր կազմակերպուածներուն լաւագոյնը ընելու տենդէն բռնուած, ողիմպիականի բացման հանդիսութեան հրաշալիքներ հրամցուցին:

Դարու թեքնոլոժիին գծեց ողիմպիականին մասնակցող բոլոր երկիրներու դրօշները, կոճակի մը կոխելու պարզութեամբ:

Չահին բոցը ՀԻՆԳ օղակներէ անցաւ նախ քան կեդրոնական ջահ հասնիլը, ինչ որ իմաստալից էր եւ թեքնիքի մը ուրիշ արտայայտութիւնը:

Աւելի քան տպաւորիչ, երազականէն վեր բան էին երգչախումբը, ֆանֆարը, հազարաւորներու կշռութաւոր ու անկշռոյթ պարը...

Բայց մանաւանդ տեսնելու բան էր կրակը դաշտ բերող, կրակը վերջին մարզիկին փոխանցող սետուլիկ աղջկան նշանակումը Մ. Նահանգներու ողիմպիական խաղերը կազմակերպելու կոչուած կոմիտէին կողմէ:

Ժպտադէմ այս սեւամորթուհին թոռնիկն էր Ճեպի Օվընսին,



որ ճիշդ 48 տարի առաջ, Պերլինի մէջ կապացած ողիմպիականին, իր յաղթանակով խորտակե՛ց Հիթլերի ռասիզմը եւ Հիթլերը փախցուց դաշտէն... Մ. Նահանգներուն ապահովելով ոսկի մետալ:

Յաղթանակ՝ մարզական եւ բարոյական գոյգ առումներով:

Մ. Նահանգները ինչ լա՛ւ, որ գիտեն պատուել Մ. Նահանգներու պատիւը բարձր պահողներու յիշատակը:

Մ. Նահանգները ինչ լա՛ւ, որ ո՛չ միայն նիւթական սեփականութիւնը կը ճանչնան որպէս ժառանգելի իրաւունք, այլ ժառանգական կը նկատեն պատիւը, երախտիքը, արժանատրութիւնը, անցեալի մէջ պատահած դէպք մը:

Մ. Նահանգները, վերջապէս, բնական է որ չկարենա՛ն մոռնալ որեւէ դէպք, որ յուզած է զիրենք:

Ահա ողիմպիական 28րդ խաղերուն իր թոռնիկով յարութիւն առած Ծեսի Օվընսը:

Կեանքի եւ հաշտեցիքի շարունակականութիւնը անշո՛ւշտ պայմանաւորուած է մեծ հաշտերէն թոռնիկներուն փոխանցուած աւանդով, թոռնիկներով ու ծոռերով ապրող մեծ-մեծ-մեծ հաշտերու իրողութեամբ:

Ու այս հասկացողութեան մէջ մենք որքա՛ն նման ենք իրարու, մէկ պզտի՛կ տարբերութեամբ: Մինչ Մ. Նահանգներու թոռնիկներուն ժառանգ ինկած է փառքի բախտը, հաշտրու թոռնիկներուն ինկած է ցաւի բաժինը: Բախտ կամ ցաւ, նոյնն է, ժառա՛նգ:

Ո՞վ չի գիտեր, թէ ամէն տեղ մեծ հաշտիկը մեծ հաշտիկ է, ու թոռնիկը՝ թոռնիկ:


Հաշտեցիքն ու հաշտեցասիրութիւնը՝ հաշտեցի՛ք է ու հաշտեցասիրութի՛ւն:

Ամէ՛ն տեղ, ամէ՛ն ժամանակ, ամէ՛ն ազգի համար:

Փառքի կամ ցաւի մէջ, հաւասարապէ՛ս...



# Ա Ր Ա Ր Ա Տ



Ու որովհետեւ մարզական միութեան օրգան է ասիկա, վերնագիրը կրնայ մտածել տալ հաշտեցի ֆութպոլի ներկայացուցչական խումբ՝ Արարատի մասին:

Առանց այդ կապին, գինի եւ քոնեա՛կ կրնայ բուրել վերնագիրը, որովհետեւ կայ եւ այդ վաճառանիշով բան՝ Արարատ:

Մեր մշակութային միութիւններէն մէկը կը կոչուի այդ անունով:

Մեր սկաուտները իրենց գլխարկին ու գօտիին վրա՛յ կը կրեն զայն...

Սակայն այս վերնագիրը՝ Արարատ, հազարէն մէկը չէ, այլ հազար բան ստեղծող միակը, բունը:

Ո՛վ չի գիտեր, որ Արարատը մեզի համար միայն լեռ չէ, այլ յուշարձան է, հաւատք է, հաւատամք է, երազ է, ձգտում է ու պատմութեան լեռնացած էջ:

Արարատը մեզի համար ջրհեղեղին հակադրուող նաւամատոյց է, նոյեան հանգստարան, խաղաղութեան աղանի, ձիթեցիի ճիւղ, ծիածան ու այգի՛:

Հոս չէ՞ որ բանտարկուած է Արտաւազդ, ու հոս չէ՞ որ գամբեր կը կրծեն երկաթ շղթայ, ու վիհէն դուրս երկաթագործներ կը զարնեն սալին, հա՛ կը զարնեն...

Արարա՛տը:

Բայց ան մեր գրականութեան հնչեղ լարն է, որուն վրայ իւրաքանչիւր մեր գրողի ճպտուն է շարժեր, որմէ ծներ է հեքիաթ, երգ ու քերթուած:

Արարատ, Արարատեան դաշտ, Արարատեան աշխարհ:

Հայաստա՛ն:

Աշխարհ գիտէ որ ջրհեղեղէն ետք Նոյ շինեց տապան, որ հանգչեցաւ Արարատ լեռան վրայ, ուրկէ մարդկութիւնը վերածըննաւ...

Հիմա, ամերիկացի աստղաչու մը անգամ մը եւս փորձեց բարձրանալ անոր լանջերուն, գտնելու համար տապանը:

Մարդիկ միշտ սիրած են ճշմարտութիւնը գտնել, ճշմար-

տութիւնը կրկին ու կրկին վերահաստատել, փաստարկել, վերափաստարկել:

Այս առիթով էր որ Արեւմտեան աշխարհի մամուլը վերնագրեց. — Արարատը, որ կը գտնուի Թուրքիոյ արեւմտեան կողմը...

Ամէն մարդ գիտէ որ լեռ մը կը պատկանի անոր, որուն հողերուն վրայ կը գտնուի:

Տարօրինակ սակայն:

Արարատը կը գտնուի տեղ մը, կը պատկանի ուրիշի մը:

Նոյեան տապանի առեղծուածը լուծելէն առաջ, ամերիկացի աստղաչուն կամ ամերիկացիները, եւրոպացիները, աշխարհի բոլոր մարդիկը պահ մը գէթ անդրադարձան այս անօրինակութեան:

Է՛հ, Աւետարանը վկայ. երբ Արարատ-Տիգրիս-Եփրատ կ'ըսես, կը հասկնաս Հայաստան: Երբ Վան կ'ըսես եւ կամ Սեւան, կը հասկնաս որ անոնք նոյն երկրի երկուորեակներն են: Հիմա՛: Հիմա, նախ քան նոյեան տապանի ճշմարտութեան ստուգում, մարդիկ հարց չե՞ն տար.

— Հոս է Արարատը, այո՛, սակայն ո՞ր են հայերը:

Ո՞ր են Սրբազան Լեւան ծնունդները:

Տէրե՛րը:

Մինչ Արարատի փառքը կ'երգեն միայն հայերը, միւսները տեղեակ իսկ չեն, որ Արարատ մը կայ: Մինչ հայերը իրենց չաստուածն են դարձուցեր զայն, միւսները անոր կը նային այնպէս, ինչպէս օձերը՝ ոզնիին:

Մինչ հայերը, ուր ալ գտնուին, իրենց հետ կը տանին Արարատը, միւսներուն համար Արարատը... Արարատ անգամ չէ:

Աշխարհ գիտէ՞ կարդալ բնութենէն խլուած այս մտրհակը:

Նոյին ու նոյեան տապանին հասնելէ առաջ ու հասնելու համար՝ պէտք է նախ ճշմարտութեան ա՛յլ արձաններ վերականգնել:

Այլապէս, պէտք չէ մոռնալ, որ լեռներն ալ լեցուն են անէծքով...

# ՔՈՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ



Նոյն որովայնէն, նոյն նոյնութեան ծնունդ քոյր-եղբայրներ թերեւս անլի քոյր ու եղբայր չեն, որքան ճակատագրին կապուած, նոյն անցեալէն նո՛յն ապագային ճակատագրուած այս արիներու փառանգն է:

Առնուազն այդ է ձգտո՛ւմը, որուն դաստիարակութիւն կ'ըսենք, կամ՝ Ծրագի՛ր:

Հ.Մ.Ը.Մ.ականին համար քոյր կամ եղբայր ըսելը վերանորոգ երդում է:

Հ.Մ.Ը.Մ.ականին համար քոյր կամ եղբայր ըսելը յիշեցում է այն մասին, որ գաղափարականի նոյնութիւն կայ, աշխատանքի գումար կայ, կապ կայ, եւ բռունցքուելու պատրաստակամութի՛ւն:

Հ.Մ.Ը.Մ.ականին համար քոյր կամ եղբայր ըսելէն ետք, ի՛նչ քէն, ի՛նչ վէն, ի՛նչ յամեցող տարակարծութիւն:

Քրոջ կամ եղբօր առջեւ կը հալին բոլո՛ր խոչընդոտները:

Այդ երդումէն կամ յիշեցումէն ետք կարգ ու կանոնի կը մտնէ ամէն ինչ. մեծ եղբօր առջեւ փոքր եղբայրը հնազանդութիւն կը ցուցաբերէ, ու փոքր եղբօր նկատմամբ մեծ եղբայրը միայն գուրգուրանք կ'արձանագրէ:

Ա՛յդ է:

Հ.Մ.Ը.Մ. միութիւն ըլլալէն բարձրացած է ընտանիք հասկացողութեան, որուն անդամները անոնք են, քոյր ու եղբայր, եւ որոնց արիւնակցութիւնը շատոնց դադրեցուցած է քոյր եղբօր ընտրանքը՝ վերածուելով նկարագրային բնականութեան:

Այնքան,

Որ Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցութիւնն անգամ պայման չէ Հ.Մ.Ը.Մ.ական նկատուելու համար. կը բաւէ որ մարդիկ տրամադիր ըլլան քոյր ու եղբայր նկատուելու, արդէն կը դառնան ընտանիքի անդամ...:

Յեղի կանչին պէս Հ.Մ.Ը.Մ.ականը ոչ միայն քոյր ու եղբայր է Հ.Մ.Ը.Մ.ականին համար, այլեւ իրաքանչիւր հայո՛ւ:

Պարզապէս այդ է ձգտո՛ւմը,

## Ծրագիրը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կանոնագրի ամենէն անձակ բաժինը կարգապահական տրամադրութեանց յատկացում յօդուածներն են, որ պատիժներու շարքը կեղծ յաջորդականութեան մը տպաորութիւնը կը թողու, եւ կանոնագրի ոգիի պրիսմակէն յստակ կ'երեւի, որ պատիժներու սահմանումը կայ պարզապէս անոր համար, որ սովորութիւն մըն է, եւ աշխատանք պիտի տարուի որ անոնց գործադրութիւնը... ՆՐԱՍԱՅ:

Սխալներն ու յանցանքները վրէպներ են այս միութեան մէջ, եւ միութիւնը կայ, որ վրէպներ գոյութիւն ունենալէ դադրին:

Մանկավարժական վերջին տեսութիւններէն շատ առաջ Հ.Մ.Ը.Մ. ժխտած է պատիժի դրական ազդեցութիւնը կրթական արդիւնքին մէջ եւ, հաւանական սխալներու պարագային, հաւասարակշռութեան նժարը հիմնած է յիշեցումին, վերանորոգ երդումին, սիրոյ, ներողամտութեան, հարազատութեան եւ զգաստութեան միեւնոյն ճիշին մէջ. քոյր կամ եղբայր:

Ի՞նչ անոյշ կը հնչէ սեփական անուան առջեւ դրուած ընդհանրական քոյր ու եղբայրը, որ կը ստեղծէ հարազատութեան անկրկնելի մթնոլորտ, ինչպէս բուրվառներու խնկարկումին ընկերացող հրաշափառ ալելուիա:

Ի՞նչ աւելի սրտառուշ, անմիջական, սրտաբուխ, պարտադիր եւ բնական կապ, քան ա՛յս. քոյր կամ եղբայր:

Իսկ այս շարաբերութեան վրայ իր հիմքը նետած հսկան, որ Հ.Մ.Ը.Մ. կը կոչուի եւ որ քոյր կամ եղբայր կը կոչէ,

Ինքնին ժպտադէմ բարեւ մըն է, որուն առջեւ սերունդներ միեւնոյն խանդաղատանքով պատուի պիտի կենան եւ պիտի կրկնեն, աղօթելու պէս.

Քոյր ու եղբայր Հ.Մ.Ը.Մ.:

# 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1974

(Տ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ)



Կան թուականներ, որոնք պետք է առնուին շրջանակի մէջ եւ չմոռցուին:

Կան թուականներ, որոնք անկիւնադարձաչին են, խորհրդանիշ են, երկար երկունքի խտացո՛ւմ:

Կան թուականներ, պարզ ու մեկին, որոնք պատմակա՛ն են:

15 Դեկտեմբեր 1974, Պէյրուօ:

Պէյրուօի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբի սրահ, յաւելեալ ճշգրտութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի զանազան մասնաճիւղերէն 23 ներկայացուցիչներ, ա՛յդ թուականին, ա՛յդտեղ, այս մեծ միութիւնը բարձրացուցին իր արժանի առաքելութեան, ընտրելով Կեդրոնական Վարչութիւն եւ վաւերացնելով ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր:

Այլ բացատրութեամբ, Հ.Մ.Ը.Մ. 15 Դեկտ. 1974ին ծիածանացաւ աշխարհի երկնակամարին վրայ, դառնալով համազաղութային:

Անշուշտ մեր փափաքը այդ չէր:

Մեր աշխարհը մե՛ր աշխարհն էր, ոչ թէ աշխա՛րհը:

Սակայն այս աշխարհի վրայ կարենալ ապրելու ու այս աշխարհի վրայ իր սեփական՝ աշխարհը ունենալու համար անհրաժեշտ էր Կեդրոն ունենալ, Կեդրոնանալ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը այդ փափաքի, այդ պահանջի երթին՝ քար դրաւ քարի վրայ:

Իր ծնունդով այս միութիւնը արդէ՛ն Ընդհանուր էր. այս թրւականին դարձաւ համընդհանուր:

15 Դեկտեմբեր 1974:

Ո՞վ չի գիտեր, որ երբ Կեդրոնը ուժով է, ուժով է ամբողջը:

Ո՞վ չի գիտեր, որ երբ Կեդրոն կայ, ուրեմն կայ եւ թաւալք, ինչպէս տիեզերական օրինակ եւ օրէնք:



Ո՞վ չի գիտեր, որ Կեդրոնը, Կեդրոնականը, Կեդրոնանալը կենսականէն աւելի բան են: Ատով կ'ամբողջանայ լինելութիւնը, որուն կը ձգտին բոլոր շարժումները. ակերը՝ առուններուն, առուները՝ գետերուն եւ գետերը՝ ծովուն:

Միութեան մը համար աւելի մեծ իրագործում կարելի՞ է երեւակայել, մանաւանդ մեր ժողովուրդի դժխեմ ճակատագրին ենթարկուած հաւաքականութեան մը համար, քան ա՛յս:

Հիմա աշխարհով մէկ ցրուած երիտասարդութիւնը (ճակատագրականօրէն ու հազար անգամ դժբախտաբար) կ'ենթարկուի մէկ եւ միեւնոյն ԿԱՄՔԻՆ (անշեղօրէն եւ հազար անգամ բարեբախտաբար):

Հիմա այս միութիւնը, որպէս կառոյց եւ առաքելութիւն, համապատասխան իր անուան եւ կոչումին, դէմ է տեղայնական հասկացողութիւններու եւ մտայնութեանց, ինչպէս եւ մանաւանդ գործելակերպի: Միութիւնը ինք՝ ինքնանպատակ չէ, այլ կը ձգտի նրպատակի մը, որ յայտարարուածն է, եւ մանաւանդ՝ հետապնդուածը. —

Հաւատարմութիւն Աստուծո՛յ, Հայրենիքի՛, Մարդո՛ւ:

1974-1984:

Տասը տարուան մէջ ի՛նչ ըրաւ Կեդրոնականը. —

Հրատարակեց «Մարզիկ», կազմակերպեց սկաւտական համագաղութային բանակում (Յունաստանի մէջ, Ֆրանսայի մէջ), պասքէթպոլի մրցաշարք (Գանատայի մէջ), կազմակերպեց Ընդհ. Ժողովներ (Կիպրոսի մէջ, Յունաստանի մէջ), Ծրջանային Ժողովներուն ներկայացուցիչներ դրկեց (Ամերիկաներ, Աւստրալիա, Եւրոպա, Մերձ. Արեւելք), ստացաւ հազարաւոր նամակ, պատասխանեց հազարաւոր անգամ...

Կեդրոնականը՝ աշխարհը աշխարհին կապեց:

Ամենայն դէպս,

Առ այժմ կարելորը Կեդրոնական Վարչութեան ըրածն ու ընելիքն ալ չէ, որքան եղած ըլլալու իրողութիւնը:

Վերջին հաշուով, Հ.Մ.Ը.Մ.ի պէս Միութեան մը համար՝ տասը տարին վայրկեան իսկ չէ...

# ՄԱՐԶԱՆՔԸ ՄԻՋՈՑ, ՄԱՐԶԻԿԸ՝ ՆՊԱՏԱԿ



Որպէսզի մարմինը մնայ առողջ, ու տակաւին որպէսզի մարմինը ամբարտ յաւելեալ ուժ եւ կենսունակութիւն,

Ինչո՞ւ չէ,

Որպէսզի մարմինը գեղեցկանայ աւելի՛,

Մարդիկ փորձով ու փորձառութեամբ հաստատած են, որ կարեւոր է մարզանքը:

Ու մարդիկ տակաւ գեղեցկացուցած են մարզանքը, զայն վերածելով մարզախաղի եւ մրցանքի:

Մարդիկ շարժումներն ու անոնց նպատակը մասնաւորաբար են ու անոնց տուած՝ վախճանական նպատակ:

Մարզանք չէ՞ն ֆուրպոլն ու պասքեթպոլը, փինկ-փոնկն ու թենիսը, վոլիպոլն ու աթլետիքը իր բոլոր ստորաբաժանումներով:

Մարզանք չէ՞ սահնակը, լուդոորդութիւնը, նոյնիսկ կոփամարտը, գօտեմարտը:

Պարարուն՝ստը:

Ծարեցէ՛ք բոլոր այն խաղերը, որոնք ողիմպիականներէ ողիմպիական վերաքաղաքի պէս կը տողանցեն ցուցակներու վերայ:

Պարզ ու մեկին, ամէն մարմնական շարժում, որ համաչափ է ու նպատակաւոր, մարզանք է կամ մարզախաղ:

Ըստած է, որ լճացած ջուրը կը նեխի, կը հոտի, կը բերէ հիւանդութիւն:

Ժահրահոտ է լճացած ջուրը, ինչպէս դիակ: Չէ՞ որ կը մեռնի ամէն բան, երբ կը դադրի շարժելէ:

Մարզանքը, շարժումը, մարզախաղը, մրցանքը՝ ա՛յդ է, կեա՛նք:

Հանելի՛, օգտակա՛ր, անհրաժե՛շտ:

**Մարգախաղերը երկուք են:**

Խմբական մարգախաղերը կը միտին, բացի մարզանքի բարիքէն, մարդոց մէջ զարգացնելու խմբական ոգին: Ֆութպոլի խումբ մը այնքան զօրաւոր է, որքան գիտէ խմբական խաղարկութիւն կիրարկել: Տասնմէկ հոգի իրարու պիտի օգնեն, պիտի զոցեն իրարու բաց, ու տասնմէկը մէկ հոգիի պէս պիտի երթան դէպի նըպատակ, կոլ:

Անհատական խաղերը կը միտին զօրացնել անհատականութիւնը, կամքը, ձեռներեցութիւնը: Անհատական խաղերը տեսակ մը մրցում են մարդուն եւ բնութեան միջեւ, մարդուն եւ կենդանիներուն միջեւ:

Փիղէն ատլի ծանրութիւն վերցնել, վազել եղնիկէն արագ, լողալ ձուկէն ատլի ճարտար...

Տատակ է, որ մարզանքը միջոց է, մարզիկը՝ նպատակ:

Իսկ մարզիկը Հ.Մ.Ը.Մ.ին համար միայն մարդ չէ, միայն մարզիկ չէ, այլեւ հարազատ զաւակ, հաշրեցիքէն բերուած հունտ, ինքն իր մէջ սերմ ու սերմնացան:

Հ.Մ.Ը.Մ.ին համար իւրաքանչիւր մարզիկ հաշրեցի զինուոր է, իւրաքանչիւր մրցանք ու մրցանքի յաղթական՝ նոր շունչ, վարար անձրեւ՝ յաղթանակի կարօտով պապական ճոզիներուն:

Աշխարհին համար մարզանքը միջոց է ու մարզիկը՝ նպատակ:

Հ.Մ.Ը.Մ.ին համար, սակայն, տիպար մարզիկը այն է, որ ինքզինք միջոց կը նկատէ Հայոց Պատմութեան փայլքի ճամբուն:

Այլապէս ի՞նչ Հ.Մ.Ը.Մ., ի՞նչ ցեղի կանչ...

# Ժ Ո Ղ Ո Վ Ը



Հ.Մ.Ը.Մ. էապես մարզական միութիւն մը ըլլալով հանդերձ, ունի ժողովական կեանք եւս, որուն գոյութիւնը գրեթէ լուսարձակի տակ չէ առնուած:

Ժողովուրդը կը տեսնէ մարզական արդիւնքը, սակայն նոյն այդ ժողովուրդը տեղեակ չէ մարզական արդիւնքէն առաջ մարզական շարժումը ստեղծող գործիքէն, որ ժողովն ու ժողովականութիւնն է:

Արդարեւ:

Հ.Մ.Ը.Մ. ունի շեշտուած բնոյթով երեք ժողովներ.—

ա.— Ընտրական-քննական, զորս կարելի է կոչել օրէնրսդրական ժողովներ,

բ.— Կազմակերպչական բնոյթի ժողովներ,

գ.— Դաստիարակչական նպատակի ժողովներ:

Ա.— Ընտրական ժողովները անպայման նախ քննական բաժին ունին: Յետոյ՝ ծրագրային: Կանոնագրային հարցեր եւս կրնան քննուիլ այս բնոյթի ժողովներուն, եթէ անոր կարիքը զգացուի:

Նման ժողովներ կը գումարուին՝

1. Տարին մէկ անգամ, մասնաճիւղերուն համար (քաղաք, արուարձան), որ կ'ընտրէ մասնաճիւղի վարչութիւն եւ որ կը կոչուի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով,

2. Երկու տարին անգամ մը Երջաններուն համար (երկիր), որ կ'ընտրէ Երջանային Վարչութիւն եւ որ կը կոչուի Երջանային ներկայացուցչական ժողով,

3. Չորս տարին անգամ մը (բոլոր մասնաճիւղերու ներկայացուցիչներով, աշխարհով մէկ), որ կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւն եւ որ կը կոչուի Պատգամատրական Ընդհանուր Ժողով:

Բ.— Վարչական եւ յանձնախմբային բոլոր ժողովները կազմակերպչական բնոյթի են. անոնք կոչուած են Օրէնսդրական (քննական-ընտրական) ժողովներու ցուցմունքներն ու որոշումները իրագործելու: Նման ժողովներ կը գումարուին ընդհանրապէս շաբաթական հերթական դրութեամբ:

Գ.— Կրթական-դաստիարակչական բնույթի են սկսուտական-մարզական խումբերու պարբերական կամ հերթական ժողովները, որոնք առաելաբար կը ձգտին բան սորվեցնելու:

Այս բոլոր ժողովները իրենց իրաունք-պարտաւորութիւններով կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի մտքի բուրգը, որուն հիմքը ժողովըրդավարութիւնն է եւ որ կը կազմէ միութեան Կանոնագրութիւնը:

Կանոնագրութիւնը յաճախ փոփոխական է, ծրագիրը ընդհանրապէս անփոփոխ:

Հ.Մ.Ը.Մ.ի ժողովական կառոյցի այս ուրուանկարէն առաջ կամ ետք թերեւս պէտք էր յստակացնել թէ ի՞նչ կը նշանակէ ժողով:

Ժողով կը նշանակէ քննութիւն, համադրութիւն, ծրագրում, հսկողութիւն եւ պահպանում:

Ժողով կը նշանակէ նաեւ ու մանաւանդ՝ փնտտութիւն, վէճ... համաձայնութեան համար:

Ժողովի ընթացքին իրաւքանչիւր ժողովական ղեկավար է: Արդէն հոս է ազատութիւնը:

Ժողովի մը մասնակից իրաւքանչիւր միութենական կը պարզէ իր տեսակէտը, որ եթէ արժանանայ մեծամասնութեան համաձայնութեան, կը վերաճուի օրէնքի, որուն գործադրութիւնը կը դառնայ պարտադիր՝ բոլորին: Հոս է կարգապահութիւնը:

Ժողովը մտքի փոխանակութեան եւ լաւագոյնին ձգտելու կարելիութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ.ին թէ որեւէ մեծ եւ իրաւ միութեան մը պարագային յստակ է մէկ բան. որքան ժողովականութիւնը կազմակերպուած է եւ ուժեղ, այնքան «դաշտ»ի վրայ պայծառ է արդիւնքը:

Ու արդէն եթէ Հ.Մ.Ը.Մ. Հ.Մ.Ը.Մ. եղած է, եղած է շնորհիւ նաեւ ժողովներուն՝ առողջ, գործնական, անաչառ, հեռատես եւ եղբայրական:



# ԱՇԽԱՐՀ ՊԻՏԻ ԾԱՓԱՀԱՐԷ ՄԵԶ



Անոր համար՝ որ եօթանասուն տարի անց, կը շարունակենք յիշել...

Եօթանասուն տարի ետք ու անցած եօթանասուն տարուան ընթացքին ու վտահաբար գալիք եօթանասուն անգամ եօթանասուն տարիներուն, այսինքն քանի արդարութիւնը չէ վերահաստատուած, ու մինչեւ արդարութիւնը վերահաստատուի, ոչ միայն յիշած ենք, կը յիշենք ու պիտի վերյիշենք՝

Այլեւ ապրած ենք ու պիտի վերապրի՛նք ջարդը:

Ու այս պատճառաւ աշխարհ պիտի ծափահարէ ու յարգէ

մեզ:

Ջարդը մեր սնունդն է:

Ջարդը հայրենի հողը փոխարինող, հայրենի հողը հող պահող ուժն է, ուրկէ սերունդներ իրենց հոգիի սափորը պիտի լեցնեն:

Ջարդը ուրիշ Արարատ մըն է մեզի համար:

Հետեւաբար, ո՛չ միայն պիտի յիշենք, այլեւ պիտի վերակառուցե՛նք զայն, պիտի վերապրի՛նք զայն, ի հարկին մենք մեզ պիտի արհմենք, որպէսզի չմոռնա՛նք զայն:

Ու մեր այս ոճը փրկարար պիտի ըլլայ բոլոր այն ցեղերուն ու ազգերուն համար, որոնք ենթակայ են կամ ենթակայ պիտի դառնան ջարդուելու:

Ու ջարդի ենթակայ կրնան մնալ ոչ միայն փոքր ու տկար ազգերը, այլեւ դարուս մեծագոյնները: Ջարդելու տրամադրութիւնը մեծ ու փոքր չի ճանչնար:

Այս իսկ պատճառաւ աշխարհ պիտի ծափահարէ մեզ, որովհետեւ չենք մոռցած ու աշխարհ պիտի քաջալերէ մեզ, որպէսզի չմոռնա՛նք:

Այլապէս, մոռացութեան կարելիութիւնը հիմք ունենալով, մարդկային պատմութիւնը պիտի շարունակէ կրկնել ինքզինք արհմի խնճոյքներով:

Ա՛յս է:

Ամէն անգամ, որ բռնապետ մը, ամէն անգամ, որ իշխանութեան բարձրացած ոճրագործներու խումբ մը հաւաքական ոճիր գործելու տրամադրութիւնը որոճայ, պէտք է տեսնէ մեզ ու սարսափի կեանքին վերադարձող ոգիներու յանախանքէն:

Մարդկութեան համար մեր ջարդը ջրհեղեղը պիտի ըլլայ,  
իսկ մեր զայն ապրեցնելու տենդը՝ նոյեան տապան: Փրկութեան  
լաստ:

Ասիկա պիտի ըլլայ մեր ջարդուածութեան բարիքը մարդ-  
կութեան համար:

Ու այս իսկ պատճառաւ, աշխարհ պիտի ծափահարէ մեզ:

\* \* \*

Արդէն որո՞նք եւ ինչո՞ւ կ'ըսեն՝ մոռցէ՛ք:

Մեր խօսքը բարի, այլ միամիտ մարդոց համար ալ է, որոնք  
ամենայն անմեղութեամբ կը թելադրեն մոռնալ, որովհետեւ դէմ  
են զարկի, վրէժխնդրական արարքներու:

Աշխարհի ամենէն բարի ժողովուրդներէն ենք նաեւ մենք.  
ու մանաւանդ մե՛նք որքա՛ն պիտի ուզենք մոռնա՛լ, մոռնա՛լ,  
մոռնա՛լ:

Կը կարծուի հաճո՞յք է ջարդի յաճախանքը մեր հոգիներուն  
մէջ...

Սակայն մոռնալ ի՛նչը, ինչպէ՛ս եւ ինչո՛ւ:

Մոռնա՞նք, որ աշխարհացրիւ ենք: Մոռնա՞նք, որ մեզմէ  
խլուած հող ունինք: Ո՞վ իր պապեճական գերեզմանէն թիզ մը հող  
է զիջեր, որ կը թելադրուի ամբողջ հայրենիքի մը վրայէն գիծ  
քաշել:

Ո՞վ որուն հաշուոյն կը թելադրէ մոռնալ ու ի՞նչ կ'առաջար-  
կէ մոռնալու փոխարէն:

Ո՞վ պիտի շահի մեր մոռացումէն:

Ու ինչպէ՛ս կարելի է ջարդուածին ըսել՝ մոռցի՛ր, ջարդողին  
չըսել՝ զղջա՛:

Մենք տուինք՝ մոռնանք: Ի՞նչ ընեն առնողները:

Սխա՛լ, սխա՛լ, սխա՛լ ու անարդար բան կայ այս բոլորին  
մէջ:

Յստակ է, որ ճիշդը միւսն է: Այն, որ, յանուն արդարութեան  
եւ մանաւանդ ինքնապաշտպանութեան, աշխարհ պիտի սիրէ ու  
քաջալերէ մեզ:

Որովհետեւ, վերջին հաշուով, մեզի հետ ըլլալ կը նշանակէ՝  
պաշտպանուիլ ջարդին դէմ:

Մեզի հետ ըլլալ կը նշանակէ ընել այնպէս, որ այս՝

Առաջին եւ վերջին ցեղասպանութիւնը ըլլայ:

# ՖՈՒԹՊՈՒԼԸ, ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏԸ ԵՒ ՆԱԽԱԳԱՀԸ



Ֆութպոլը աշխարհ մըն է աշխարհի մէջ իր համակիր-սիրահարներով, դաշտ հոսող բազմութեամբ, մրցումի ընթացքին գոռումով, հսկայ պաստառներու յաղթական ցուցադրութեամբ, հուռաներով, սուլոցներով, ծափերով, կանչերով ու մասամբ նորին:

Ֆութպոլը աշխարհ մըն է աշխարհի մէջ իր քուլիսներով՝ ծախտող ու գնտող խաղացողներով, կաշառուող իրաւարարներով, սակարկուող յաղթանակներով,

գրաներով ու կոփներով:

**Մեղայ, մեղայ դաշտային սրբութիւններուն:**

Բայց եւ ֆութպոլը՝ շարժումի համանուագ է, գրոհներու եւ խոչանքներու հաղորդական թռիչք, յոյսի եւ յուսախաբութեան ելեւէջ: Ամբողջ մէկ ու կէս ժամ սրտեր արագ կը զարնեն, աչքեր, գնդակ-մագնիսէն բռնուած, կը շարժին ամէն ուղղութեամբ, եւ այդ ժամանակամիջոցը տեսակ մը նիրվանա է:

Ֆութպոլը հին հռովմէական չաստուածներու մրցանքն է՝ կրկէսներու մէջ, ուր հրաշքներ կը յաջորդեն իրարու. գնդակը ա՛յս դարպասը մտնելու տեղ, անակնկալօրէն եւ «քաջ»երու ճարպիկուկեան շնորհիւ, կը մտնէ մի՛ւս դարպասը. եւ ուռկանի խշրտոցը ոչ թէ կը լսուի, այլ կը տեսնուի՝ պարզապէս խելագարած ամբոխներուն կողմէ:

Ֆութպոլը մարզական այն հրաշալի խաղն է, ուր կոլ ընդդին չափ կը հրճուի դիտողը, ուր իրաւարարը արդար է, ինչպէս խստագոյն դատախազ, ուր սուլիչը կշռոյթ կու տայ խաղին եւ ուր տապալող մարզիկին չափ կը ցաւի անկումին պատճառ դարձողը:

**Փա՛ռք մարզական ոգիին:**

Ֆութպոլը աշխարհ մըն է աշխարհի մէջ, ի՛նչ փոյթ, որ աշխարհ մը մարդիկ ալ կան, որոնք կը զարմանան գնդակի մը ետեւէն վազող մարդոց ու այդ վազվռտութիւն դիտող բազմութեանց հետաքրքրութեան վրայ:

Ճաշակը հազար ճաշակ ունի...

Ամենայն դէպս, այս մարզախաղին սիրահար ըլլանք թէ

ոչ, չենք կրնար անտարբեր անցնիլ անոր հետեանքներուն վրայէն:

Ֆուֆայուի խաղ մը կրնայ պատճառ դառնալ միջ-պետական պատերազմի (մոռցա՞նք Հոնտուրասն ու Սալվատորը): Դաշտի վրայ կռիւ մը կրնայ պատճառ դառնալ անհաշի զոհերու (տակաւին ամիս մը առաջ էր, Պելմիքայի մէջ տրուեցաւ 38 մեռեալ, 350 վիրատը):

Միս կողմէ, սակայն, ֆուֆայուի կարեւոր յաղթանակ մը կրնայ ամբողջ երկիր մը մղել, որ երեք օր երեք գիշեր պարէ փողոցներու մէջ, ու յաղթանակ ապահովող մարզիկներ ստանան անհաւատալի նուէրներ՝ ինքնաշարժ, վիլլա, անհաշի տոլար...

Նուէրներու վերջին նուէրը եկաւ նոյն ինքն Ֆրանսայի հանրապետութեան նախագահէն:

Արդարեւ, ֆուֆայուի սիրահարները կը ճանչնան Փլաթինին, որուն շնորհիւ Ֆրանսայի Ազգ. խումբը շահեցաւ Երրոպայի ախոյեանութիւնը:

Յետո՞յ:

Յետոյ ահաւասիկ Ֆրանսայի նախագահը Միթերան, որ անձնապէս Փլաթինին Պատուոյ Լեգէոնի Ասպետ հռչակեց պաշտօնական մասնատը արարողութեամբ, որուն ընթացքին խօսքը Փլաթինին եւ անոր ընկերներուն ողղելով բառացիօրէն ըսաւ.

— Դուք ծառայեցիք երկրին եւ նպաստեցիք Ֆրանսայի ճառագայթումին աշխարհի մէջ...

Այս էր եւ պատճառը, որ Փլաթինիի արձանը կանգնեցաւ Կրէվընի թանգարանին մէջ, ի Փարիզ:

Ուրեմն այսպէ՛ս:

Ֆուֆայուիստ մը ու ֆուֆայուի յաղթանակ մը կրնան նպաստել մեծ երկրի մը «առաել ճառագայթումին» աշխարհով մէկ:

Եթէ ասիկա ճշմարիտ է ՄԵԾ երկիրներուն համար, հապա որքա՞ն ճշմարիտ պէտք է ըլլայ նաեւ ՓՈՔԲ ԱԾՈՒՆԵՐՈՒՆ համար:

Երբ կը վերլուծենք ֆուֆայուը, ֆուֆայուիստը եւ նախագահը, չենք կրնար չիշել ՄԵՐ Փլաթինիները, որոնք այնքան կոլ ըրին, այնքան բաժակ շահեցան... եւ երջանկացուցին «Փոքր Ածու»:

Բայց մերիւններուն մասին՝ յաջորդի:



# ՄԵ՛Ր ՓԼԱԹԻՆԻՆԵՐԸ



Աշխարհին պատկանել է առաջ մարդիկ անպաշտան կը պատկանին, պէ՛տք է պատկանին քաղաքի մը, գիւղի մը ու նախ՝ տան մը: Եթէ արմատ չունեցողը կարենայ նոյնիսկ աշխարհը ծածկել, սունկէ մը աւելի չ'արժեր:

Մերինները աշխարհին չպատկանեցան, աշխարհահռչակ չեղան: Իրենց բարձրացուցած աղմուկը ընդհանրապէս քաղաք մը լեցուց, երբեմն նաեւ երկիր մը: Քիչ պատահեցաւ, որ անոնց անունը, այդ ալ վախկոտ քայլերով, մօտակալ երկիրներու սահմանը անցնի:

**Այդքան:**

Բայց մերինները տուն տաքցուցին:

Մեր Փլաթինները կոչուեցան Դանիէլ Դանիէլեան, Արտաւազդ, Հաճի Հայկ, Եղիշէ, Վարդապետ, Արսէն, Վազգէն, Համազասպ, Սուրեն, Յակոբ, Յակոբիկ, Սարգիս, Օննիկ, Ծորճիկ, Միկէ, մեծ ու պզտիկ Աբօ, Հրայր, Գէորգ. մեր Փլաթինները ունեցան կեղծանուն՝ Կոլճի Լեւոն, Մանուկ Մուխը Մարէ, Վարպետ, Ծոքի, Նեկրօ, Գարաօղլան, Սաաթճի, Մասրի, Կիլիւմ, Գասսասպ, Մաշա, Զեւո, Մնչիկ, Գուլում, Ապու Լուս, Ուխաքի, Կնոս Սահա՛կ...

Մեր Փլաթինները խմբովին կոչուեցան «Դեղին սատանայ», դաշտը լեցուցին ազնուականութեամբ, ճաշակ ճառագայթեցին իրենց դաշտ մուտք-ելքով, իրենց մարզական ոգիով, իրենց... տարազո՛վ:

Տեղացի թէ հարազատ՝ ամէն մարդ մերինները ճշդեց որպէս մարզական տիպար, ու ամէն մարդ ուզեց նմանիլ մերիններուն:

Մեր Փլաթիններուն առած իրաքանչիւր կոլի երջանկութեան աղաղակը կտրեց ձայնի պատը, կոլի արձագանգը քիլոմետրներով անդին արդիւնքին սպասող՝ դաշտէն ակամայ բացակայ բազմութեանց հասաւ, ակումբները լեցուեցան յաղթանակով գինով տղոցմով, ու հաշկական դրօշը տարբեր փաշք ստացաւ ամէն անգամ:

Ու մեր Փլաթինները ԽՄԲԱԿԱՆ հռչակ դարձան եւ ոչ թէ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՓԱՌՔԻ արժանացան:



Մեր Փլաթինիները եղան այնպէս, որ իրենց տակաւ անող ժողովրդականութիւնը երբեք ստուեր չձգէ զիրենք ծնող Միութեան վրայ. ընդհակառակն, իրենցմով ու իրենցմէ առաջ միշտ Միութիւնը փայլեցաւ ու այդ իսկ պատճառաւ առաջին Փլաթինին ոչ թէ խաղացողները եղան, հակառակ իրենց ամբողջ հմայքին, այլ զիրենք խաղի մղողը՝ Հ.Մ.Ը.Մ.ը:

Օր մը նախագահ մը կամ նախագահութիւն մը Ասպետի շքանշանով պիտի պատուէ անշուշտ մեր անհատ, խումբ թէ մասնաւանդ Միութիւն Փլաթինին:

Ու պայման չէ, որ մոմէ կամ մարմարէ արձանիկներով տեղ մը ժամանակին նաչին մեր Փլաթինիները:

Սակայն մեր պատմութիւնը արդէն սկսած է փսփսալ, որ հաշոց Փլաթինիները երբեմն իրենց յաղթանակներով հիմնական յաղթանակներու կարօտին զով շուք դարձան, պաղորակ ջուր:

Հիմա ա՛յդ է:

Աշխարհով մէկ ցրուած մերիկները երէկ հաւաքուեցան տեղ մը՝ Լոս Անճելըս, պասքէթպոլի համագաղութային Ա. մրցաշարքէ մը ետք, ֆութպոլի ալ համագաղութային մրցաշարքի առաջին քաւրը դնելու համար:

Դժուար չէ երեսակայել թէ Լոս Անճելըսի մէջ, Հ.Մ.Ը.Մ. Մ. Նահանգներ, Հ.Մ.Ը.Մ. Աւստրալիա, Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսա, Հ.Մ.Ը.Մ. Յունաստան, Հ.Մ.Ը.Մ. Լիբանան, Հ.Մ.Ը.Մ. Գանատա դաշտ հաւաքուած, փոքրանկար ու բացառաբար հայերէ կազմուած ՄԱԿին մէջ ի՛նչ յիշատակներ արթնցոց:

Իրաքանչիւր խաղացող անպայման յիշեցոց աստղ մը, հիներէն մէկը, ու Մ. Նահանգներու այդ դաշտին մէջ, այդ օր, կրկին ամէն ինչ զուտ Հաչաստան եղաւ, թէկուզ քանի մը ժամուան համար, ինչպէս երկնքէն անցնող ասուպ:

Եւ ասիկա՝ շնորհիւ նաեւ մե՛ր Փլաթինիներուն:

Կարելի՞ է երեսակայել ասկէ ատելի մեծ շքանշան, որ երբեք-իցէ նախագահ մը կարենայ կուրծքէ կախել:

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ

ՄԱՐԶԻԿ  
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
SPORTS MANAGER



Իրաքանչիւր ազգ ունի իր ուրոյն  
նկարագիրը եւ ազգերու ընկերութեան մէջ  
իրաքանչիւրը անոնցմէ իր այդ գիծերուն  
համար բնորոշումի ենթակայ է:

Անգլիացի՞ն — պաղարիւն է, ֆը-  
րանսացի՞ն, ռո՞ւսը, միւսնե՞րը:

Իրաքանչիւր ազգի իրաքանչիւր  
նահանգ անգամ իրարմէ տարբեր հասա-  
րակաց գիծերով կը ճանչցուի: Այս անգամ  
օրինակները բերենք մեզմէ. այնթապցի  
այսպէս, մարաշցի՛ն այդպէս, տիգրանակերտցի՛ն ու միւսները:

Իրաքանչիւր միութիւն այս կարգով ունի իր գիծը, նկարա-  
գիրը, կնիքը: Եւ իրաքանչիւր միութենական ունի իր միութեան  
որոշ յատկանիշները:

Հ.Մ.Ը.Մ.ականը տիպար մըն է եւ երեսակաչութիւններու մէջ  
ստեղծած է պատկեր մը իր հաշուոյն, որ եթէ չերեւի՝ զինք կը վե-  
րածէ ինչ որ ի լինելութեան վստահուած յոյսի:

Հ.Մ.Ը.Մ.ականը նախ ժպտերես է, հաճոյակատար, ծառա-  
յատէր:

Հ.Մ.Ը.Մ.ականը խոստմնապահ է ու վստահելի:

Հ.Մ.Ը.Մ.ականը անաղմուկ հայրենասէր մըն է, անմեղ պա-  
տանի մը, որ պատրաստ է ձեզի օգնելու, ձեզի հետեւելու, ձեզի հա-  
ւատալու:

Մոռալ դէմքով Հ.Մ.Ը.Մ.ականի հանդիպա՞ծ էք: Եթէ այո, ախալ բան կայ հոն. կա՛մ ենթական անհանգիստ է, կա՛մ... Հ.Մ.  
Ը.Մ.ական չէ:

Հանդիպա՞ծ էք ծոյլ Հ.Մ.Ը.Մ.ականի: Եթէ այո, վստահ  
կրնաք ըլլալ որ անդամատետր չունի. իսկ եթէ ունի՝ զայն իրեն  
չեն պահեր պատասխանատուները: Ծոյլը Հ.Մ.Ը.Մ.ական չի կըր-  
նար մնալ:

Հանդիպա՞ծ էք հայրենիքով ու ազգով չհետաքրքրուող  
Հ.Մ.Ը.Մ.ականի: Անկասկած որ ոչ: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ արդէն  
կը նշանակէ հաւատալ դրօշի մը, քայլերգի մը, նուիրական հողի  
մը, դատի մը:

Հ.Մ.Ը.Մ.ականը չի կրնար խառնակիչ ըլլալ եւ ոչ ալ եսակեղրոն արարած մը: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ կը նշանակէ ըլլալ անանձնական մարդ. բաժնուելու պատրաստ հաց:

Այլապէս, եսասէր ու եսակեղրոն մարդուն տեղը հոս չէ: Հ.Մ.Ը.Մ.ը բոլորին կը պատկանի. հետեւաբար Հ.Մ.Ը.Մ.ականը պէտք է բոլորին ըլլալու գիծը ունենայ:

Հ.Մ.Ը.Մ.ը կը նմանի ծովուն: Կա՛մ ինք իր մէջ կը լուծէ իրեն եկողը, կա՛մ զայն ափ կը նետէ, որպէս խորթ:

Հ.Մ.Ը.Մ.ականը երդումի տակ գործող մարդ է: Ան ոչ թէ իր միութենական գործունէութեան շրջագիծին մէջ միայն կը գործէ այդ գիտակցութեամբ, այլեւ իր կեանքի բոլոր երեսներուն վրայ կը տարածէ երդումի ճառագայթումը՝ հաւատարմութիւն Աստուծոյ, ծառայութիւն հայրենիքի եւ մարդկութեան:

Հ.Մ.Ը.Մ.ականը ծերութիւն չի ճանչնար: Անոր քալուածքին մէջ ազնուականութիւն մը ինքզինք տեսանելի կը դարձնէ ու անոր խօսելաձեւը պատշաճ ու զուարթ է:

Երանի անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ական բարեկամ ունի:

Երանի մանաւանդ անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ական է:

Յիշեալ բարենիշները վարժութեամբ եւ հետեւողականութեամբ միայն ձեռք կը բերուին:

Անդամատետր ունենալով կարելի չէ այդ արժանիքները ժառանգել, ինչպէս օդաչուին տարազը ունենալ չի բաւեր... կարենալ օդանաւ քշելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ը ինք տուն է, ընտանիք է, դպրոց է, եկեղեցի առաջնորդող միջոց է, մաքրամաքոր ու անսահման դաշտ է:

Կը բաւէ որ հոն ինկող հունտը փուն չըլլայ:

Ու Հ.Մ.Ը.Մ.ականը կը ծլի ու կ'աճի, ինչպէս բարսի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի արեւուն տակ ազգի ներկան կը խմորուի, եւ ապագան աիշ կը ծծէ հողէն, պատմութենէ՛ն:

# ՇՔԱՆՇԱՆԸ ԵՒ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ



Այս Միությունը միշտ ալ ժլատ եղած է իր գնահատանքին մէջ:

Այս Միությունը շնորհակալութեան խօսք իսկ չէ ուզած ըսել իր անդամներուն ո՛չ անոնց ողջութեան, ո՛չ իսկ յետ մահու:

Քաղցր դամբանական մը առաւելագոյն դափնեպսակը եղած է երախտաւորներուն:

Ու, իրենց Միութեան պատկերով, այս Միութեան անդամները եւս երբեք շքանշան կամ նշան, գնահատանքի որեւէ

ձեռի արտայայտութիւն չեն ակնկալած Միութենէն:

Ո՛վ որուն համար կ'աշխատի:

Ո՛վ զով պիտի գնահատէ:

Իրաքանչիւր գիտակից անդամի կուրծքին տակ Արարատ մը հաւատք կայ հանդէպ Մարդուն եւ Ազգին ու ազգայինին:

Իրաքանչիւր հասուն անդամի ճակտէն հոսող աղամանդեայ քրտինքը իբրեւ իրեն ակունք ունի Պատմութիւնը Գլխագիր, որ պարզապէս Արմենականն է:

Պարզ ու յստակ:

Այս Միութեան մէջ միևնչեւ մահ հաւատարմօրէն աշխատող արժանաւորները իրենց մեծագոյն շքանշանը տեսած են իրենց հոգեկան գոհացումին մէջ միայն: Իրենց հաւատքի խորացումին մէջ միայն: Իրենց աշխատանքի պտղաբերումին մէջ միայն:

Առաջ պարբերական էր շքանշանը, չըսելու համար պարագայական: Հիմա, յարաբերաբար անկասկած, նոր է շքանշանը, որպէս կանոնագրութեամբ ալ սահմանուած արժեչափ:

Ու շքանշանը, Հ.Մ.Ը.Մ.ի շքանշանը, անհատի մը կուրծքէն կախուելով հանդերձ, անհատական չէ, անհատի մը տրուելով հանդերձ, անհատին չի պատկանիր:

Հ.Մ.Ը.Մ.ի շքանշանը անձի մը տրուած գնահատանքէն աւելի, սերունդ մը, շրջան մը արժեւորելու աղոտրութիւնն է:

Այսօրուան շքանշանակիրը Արժանթինի Արժանապատիւ S. Շաւարշ Քհնյ. Մեհրապեանն է:

Երէկ շքանշանակիրները կոչուեցան Տիգրան Քհնյ. Խոյեան, Յովհաննէս Շահինեան, Լուտեր Մասպանաճեան, Թորոս Խաչատրեան, Գէորգ Յարէթեան, Լեւոն Գալեան, Վահան Գաւորճեան, Դանիէլ Դանիէլեան, Քերոբ Առաքելեան, Ալպէր Յա-



կորեան, Գարեգին Ծամլեան, ոսկի, միւսները՝ արծաթեայ շքանը-  
շանով. Խաչիկ Բարթեմեան, Հրանտ Մուրատեան, Տիգրան եւ  
Սարգիս Ոսկերիչեան:

Դատեցի՞ք շքանշանակիրներէն:

Տիգրան Քհնյ. Խոչեանով չե՞ն վերակենդանանար Հ.Մ.  
Ը.Մ.ի հիմնադիր միւսները՝ Հինթլեան, Գրիգոր Յակորեան, Ծա-  
ւարշ Քրիսեան: Տիգրան Քհնյ. Խոչեանով չէ՞ք մտաբերեր Պ. Պ.  
Ատրունին, միւսները, հիմնադիր սերունդը, հիմնադիր սերունդէն  
Վ. Չերազը:

Երբ Յովհաննէս Ծահինեանի կուրծքէն կը դիտէք շքանը-  
շանը, այդ շքանշանի ընդմէջէն չէ՞ք տեսներ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր  
Արեւելքի Երջանաչին Վարչութիւնը իր հազարանոն ողջ ու մեռած  
եղբայրներով: Այս եղբայրը կը բերէ Եգիպտոսը, միւսը՝ Յունաս-  
տանը, մէկալը՝ Սուրիան, անպայման տեղ մը, սերունդ մը, Պոլսէն  
Ժառանգ կամ ոչ, բայց անպայման բունէն ճիւղաւոր:

Իւրաքանչիւր շքանշանակիրի ետեւէն բանակ մը կը քալէ  
ու այդ բանակին աղոտութեան ու զօրութեան խտացումն իսկ է  
շքանշանը:

Եքանշանին մէջ անպայման կայ պատկերը խոնարհ հերո-  
սին, տեսակ մը անծանօթ զինուորին: Միայն պատերազմի դաշ-  
տի՞ն վրայ մարդիկ կը զոհուին:

Իւրաքանչիւր շքանշանի մէջ կայ համեստ կամ նշանաւոր  
Հ.Մ.Ը.Մ.ականի մը քրտինքը, շքանշանը շքանշան ընող բարոյա-  
կանը:

Այս առիթով անկարելի է չյիշել անոնք՝ որոնք շքանշան  
էին եւ անշքանշան անցան:

Մոմի պէս լուսաւորեցին, մաշեցան:

Հիմա, հեռաւոր, հեռաւոր Արժանթինի պայծառ եղբայրնե-  
րըն են, որոնք կ'ապրին իրենց ամէնէն յուզիչ պահերէն մէկը Մեհ-  
րապեանով. արդարեւ ամբողջ գաղութ մը, հին գաղութի մըն ալ յու-  
շով, կը ստանայ շքանշանը:

Անկասկած շատ են արժանաւորները, քիչ՝ շքանշանակիր-  
ները:

Ամենայն դէպս, փառք նաեւ անոնց, որոնք շքանշան չըս-  
տացան գուցէ, սակայն շքանշան՝ դարձա՛ն:



# ՔՈՒԷՆ, ՔՈՒԷԱՐԿՈՂԸ, ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ



Բոլոր հասարակարգերը, մարդկային բոլոր խմբակցությունները, պետական թե միութենական բոլոր եւ ամեն ձեւի կառույցները որպէս հասարակաց գիծ ունին **ՔՈՒԷՆ**:

Վարէն վեր թէ վերէն վար, ընտրութիւնը իր բաղդատական եւ ազատ առումով թէ նշանակում իմաստով, որպէս միջոց ունի **քուէն**:

Միութեանց, կազմակերպութեանց թէ պետութիւններու կառույցէն բացի, ամէնօրեայ անհատական կեանքի մէջ ալ կը տեսնուի **քուէն**. այն, որ կը տրուի եւ կ'առնուի ամէն վայրկեան, կեանքի իւրաքանչիւր թաւալքին:

Վերջին հաշուով քուէարկել է հաւնիլ մէկը, հաւնիլ գործ մը, հաւնիլ-չհաւնելու ամբողջ ընթացքը:

Քուէն միայն ընտրել եւ ընտրուիլ չէ, ոչ ալ քուէատուսի երթալու արարք մը:

Ընտրող եւ քուէ նոյն բաներն են:

Քուէն այն է, ինչ որ է քուէարկողը: Եթէ քուէարկողը պարկեշտ է, անկաշառ է, անկողմնակալ է, եթէ քուէարկողը պայծառաւտես է, գիտէ դիտել ու դատել, ապա քուէն կը տրուի մեծին, արժանատրին, իրաւին:

Վայ այն քուէարկողին, որ կը խաղայ իր ես-ի քմայքը:

Վայ այն քուէարկողին, որ ելած է կրքի ու հաշուի կաղապարէն:

Այդ պարագային, նաեւ վայ ընտրեալին:

Որովհետեւ այդ պարագային ընտրուիլ ընտրեալ չի կրնար նշանակել:

Այլ խօսքով, քուէն ինքնանաճաչման ստորագրութիւնն է: Ես այն եմ, ինչ որ է իմ քուէ:

Միութիւններ, կազմակերպութիւններ, պետութիւններ ու կառավարութիւններ կրնան ճարճատիլ կամ կանգուն մնալ, քուէներու վատ կամ մաքրամաքուր հետեւանքով:

Պարտադրուած քուէն չի կրնար հաւաքական կամք ցուցնել, հետեւաբար կրնայ եւ հաւաքական աղէտի պատճառ դառնալ:

Քուէի խելկատակութիւնը կրնայ ծիծաղելի դարձնել գահ մը անգամ:

Ինչպէ՛ս եւ ինչո՛ւ քուէարկել անոր, որ անուանարկած է իր մրցակիցը, փոխանակ փաստարկելու իր ծրագրի գերակայութիւնը մրցակիցի ծրագրին վրայ:

Ինչպէ՛ս եւ ինչո՛ւ քուէարկել անոր, որ ձեզի կաշառք կու տայ, ձեզ իր կառքին կապելու համար շողոքորթութիւն կ'ընէ, անցողակի բարեկամական կապեր կը ստեղծէ եւ որուն բարեւն անգամ պայմանական է:

Ինչպէ՛ս կրնայ մէկը մեծ ըլլալ, դառնալ ղեկավար, երբ ընտրուելուն մէջ կը տեսնէ շահ ու փառք եւ ոչ՝ յանելեալ ծառայութեան առիթ:

Քնուած քուէն չի կրնար գաղտնի մնալ, որովհետեւ գնողը նաեւ պիտի գանձէ:

Շահու եւ բարեկամութեան վրայ ձեռուած քուէն չի կրնար արժանատորը պատասխանատու դիրքի հասցնել. հասցնելու պարագային ալ կա՛մ հասնողը կը գլորի կամ, աւելի գէշը, կը վտանգէ նոյն ինքն դիրքի կարելորութիւնը: Ունէ քուէարկող կամ քուէ կամ ընտրութիւն ու ընտրեալ չի կրնար երես ճերմկցնել, ճակատաբաց քալել, երբ ընտրութիւնը հիմնուած է թակարդի կամ թակարդանման ինչերու վրայ:

Հանրային կեանքը կը քայքայուի՛, երբ ընտրողը բարեխիղճ չէ:

Հանրային կեանքը կը քայքայուի՛, երբ քուէարկութիւնը կը դառնայ «խնամփական»:

Հանրային կեանքը կը տժգունի՛, երբ ընտրութեան ընթացքին ընտրողը կը վերածուի աչքկապուկ խաղացող մենակատարի:

Քուէն աչք է, դատողութիւն է, կշիռք է, դատում է, խիղճ է, գիտակցութիւն է, ապագան ու ներկան կշռել է. քուէն գնահատանք է, քուէն յոյս է:

Բախտատուր են անոնք, որոնք քուէարկելու իրաւունք ու կարելիութիւն ունին: Այդ բախտին հետ պէտք չէ բախտախաղի մըտնել: Գէշ քուէարկողը վերջին հաշուով ինք կը վնասէ:

Որպէսզի իմս ալ ըլլայ օրէնքը, որ կը դրուի, պէտք է անոր բանաձեւումին մէջ ես ալ ձայն ունենամ: Քուէարկութիւնը այդ առիթը կու տայ ինձի: Հետեւաբար, քուէն ազատութիւն է ու պէտք չէ ըլլայ ազատութեան անիշխանութիւնը:

Այս բոլորը ճիշդ են բոլոր միութեանց, կազմակերպութեանց եւ պետութեանց համար:

Ճիշդ է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ին համար:

Քուէ մըն ալ միւսն է. Հ.Մ.Ը.Մ.ի՛ն թէ կեանքին, որ միութեանկան չէ...

# Ք Ա Լ ՈՒ Ա Ծ Ք Ը



Երբ թմբուկները ճպոտներու ճարտար համազարկին տակ պատրաստ կը ճշան, իրենք զիրենք թոյլ ձգած տղաքը, մեղուներէ խայթում մարդոց պէս, անմիջապէս կը վազեն դէպի խումբը, կը գտնեն իրենց տեղը, կը շտկուեն գօտի-փողկապու կը սպասեն փողերախումբի «քալ առաջ, օ՛ն»ին:

Մեծ դէպքի մը նախօրէին ծնող սպասումի լրջութեան մէջ, ժողովուրդը խոշոր բացում աչքերով ակնդէտ կը հետեւի պատրաստութեան, ներքուստ իր կարգին պատրաստուելով, որ ընդունի, դիմաւորէ, դիտէ, դատէ, ընթոշխնէ՛...

**Մի՛շտ այսպէս սկսած են տողանցքները:**

Փողերախումբէն առաջ կամ վերջ քալած են դրօշակները, իր ծամերը հովին տուած սիրուն աղջկան մը գեղեցկութեամբ ցուցադրելով քաղաքացիական դրօշին հետ հայրենականը. ապա, փողերախումբէն ետք, անվերջ շարանը սկառուներուն, արենոշներուն, գայլիկներուն, մարզիկներուն՝ քալած է ինչպէս պատերազմէն յաղթական վերադարձած զինուոր:

Պատուոյ թրիալինին մէջ յոտնկալս բարեւի կեցած է օրւան ընտրանին, ու ժողովուրդը, ծովածալ ժողովուրդը յուզումէն շարժած է, ինչպէս ցորենի արտը կը շարժի հովի շոյանքին տակ:

Ծափահարութիւնը արագացուցած է սիրտերու զարկը, պարապին նետուած գետի նման:

Այսպէ՛ս սկսած են տողանցքները, ու այսպէ՛ս շարունակուած են անոնք դաշտերու վազբողիին թէ պողոտաներու ընդմէջէն, առաւօտուն թէ գիշերը՝ ջահերը արեւու վերածած:

Փողերախումբը դորդացուցած է հողը, դրօշը արթնցուցած է ի՛նչ կարօտ. սակայն այդ բոլորին մէջ տիրական մնացած է՝ քալում՝ ծքը:

Քալում ծքը՝ համաչափ, արու, ճակատաբաց, դուրս ցցուած կուրծքով:

Քալում ծքը՝ մէկ մարդու պէս, քալում ծքը՝ հաւաքական կամք արտայայտող, քալում ծքը, որ կը պոռայ. «մենք պատասխանն ենք կանչին»: Մենք մէկի վերածուած ամբողջութիւն, հրճագանդութիւն, հաւատարմութիւն ու կարգապահութիւն:



**Քալուածքը, որ կրնայ քաղցրացնել կամ կարծրացնել նայ-  
ւածքը:**

**Այսպէ՛ս եղած է Հ.Մ.Ը.Մ.ի տողանցքը ու տողանցքին մէջ՝  
քալուածքը:**

**Քալուածքը, կեցուածքը, հագուածքը:**

Բանակի մը համար կամ բանականալու ձգտում ճշացող համազգեստաւոր խումբի մը համար, քալուածքը ամէն ինչ է: Ան է, քալուածքը, որ կը ցուցադրէ մինչեւ տողանցք եղած բաները՝ փորձերը, հուաբական աշխատանքը, հանրութեան ներկայանալու պատասխանատուութեան զգացումը, քննութենէ անցնելու լրջութիւնը եւ խումբին միաձուլուած ըլլալու տենչալի իրողութիւնը:

**Քալուածքը, կեցուածքը, հագուածքը:**

Միայն գեղագիտական չէ նոյն տարագի որդեգրումը բանակի մը կողմէ եւ ոչ ալ միայն գործնական կամ տնտեսագիտական խնայողութեան հարց: Ամէն բանէ առաջ անհատը խումբի վերածելու, խումբը մէկ անհատի պէս մտածել տալու եւ գործի մղելու դաստիարակչական համոզումն է, որ զայն՝ տարագը դարձուցած է պարտադիր:

Ծիշո՞ղ է, լաւ կամ գէշ քալուածքով չէ որ բանակ մը կը դառնայ զօրաւոր. բայց լաւ բանակ դառնալու համար, առ այդ նկարագիր տալու համար, անհրաժեշտ է եւ կարեւոր միջոց է քալուածքը:

Երբ բոլոր կրունկները միեւնոյն ուժգնութեամբ կ'իջնեն հողին, երբ բոլոր բռունցքները միեւնոյն հորիզոնականը կը գծեն եւ բոլոր նայուածքները կը սեւեռին միեւնոյն կէտին, ա՛յո՞ղ է, այդ բանակը, կամքի միեւնոյն քուրային մէջ միաձուլուած, կրնայ հրաշքներ գործել:

**Այդ իսկ պատճառաւ քալուածքը հիմնական նշանակութիւն ունի:**

Իսկ Հ.Մ.Ը.Մ.ին համար, քալուածքը քալուածք ըլլալէ աւելի երթ է, երթ՝ արմատներէն մինչեւ արմատ:

**Այս իսկ պատճառաւ, միշտ ուշադի՛ր քալուածքին.**

**Տողանցքի պահուն, համազգեստով թէ առանց համազգեստի, պա՛րզ փողոցով:**

**Մեր ե՛րթն է, որ պատմութիւն պիտի կերտէ...**

# ԱՆՁԻՆ ՕՐԻՆԱԿՈՎ



Մարդկային կազմակերպ թե՛ անկազմակերպ հաւաքականութիւններ, անոնք ըլլան միութիւն, կազմակերպութիւն, համադաշնակցութիւն, ցեղախումբ թե՛ ինչ, եթե՛ նոյնիսկ չունենան դաստիարակչական նպատակ ու առաքելութիւն, անպայման կը յայտնաբերեն որոշ եւ յըստակ դաստիարակութիւն, որ կը նշանակէ հասկացողութիւն, կնիք: Կենցաղ:

Եթե՛ պարտաւորութիւնս չէ դաստիարակելը, անպայման պարտաւորութիւնս է դաստիարակուած ըլլալը:

Հ.Մ.Ը.Մ. այն հաւաքականութիւնն է, այն միութիւնն է անվիճելիօրէն, որ իր շատ աշխատանքներու կողքին առաջնահերթօրէն ունի դաստիարակելու սրբազնագոյն առաքելութիւնը:

Անշուշտ շատ են ու բազմատեսակ՝ դաստիարակելու եղանակները: Այդ եղանակներուն, այդ ձեւերուն ու միջոցներուն կարեւորագոյնը սակայն կը թուի որ ԱՆՁԻՆ ՕՐԻՆԱԿՆ Է:

Ամէնէն փոխանցիկ բաներէն մէկն է անձին օրինակը, վախին ու քաջութեան պէս, լաւատեսութեան ու չոռեստութեան պէս, հիւանդութեան ու ժպիտին պէս:

Միութեանց պարագային, յատկապէս դաստիարակչական արդիւնաւորման մէջ, անձին օրինակը միակն է, որ անմիջապէս է՛րեւի, կը տպաւորէ, կը փոխանցուի դրական կամ ժխտական առումներով: Հակադարձութիւնն ալ կը ներառուի դրական-ժխտական հասկացողութեան մէջ:

Ասոր համար ըստած է ապահովաբար, որ ի՛նչ արժէք ունի խօսքը, առանց գործի:

Ասոր համար անընդունելի է, անկասկած, այն դարձուածքն ու «իմաստութիւն»ը, ըստ որուն՝ դուն ըրածիս մի՛ նաչիր, գործադրէ՛ ըսածս:

Փաստօրէն, ի՛նչ բացատրութիւն ալ ճարէ խմբապետը, ինչո՞վ կրնայ համոզել պարզ սկաւտուն ու աստիճանաւորը, որ, օրինակ, ծխելը վնասակար է, երբ այդ մասին այդքան վճռական խօսած միջոցին կը ծամէ սիկարէթի կտոր մը:

Ինչպէ՞ս կրնաս տպաւորել, որ վնասակար է խմիչքը, երբ խօսած միջոցիդ ալքով կը հոտիս, ինչպէս դիակ:



Ինչպէ՛ս կրնաւ սուտի, կեղծիքի, բամբասանքի, այլամերժութեան, անուանարկութեան, մեծամտութեան, անձնասիրութեան, գողոզութեան, շահագործումի թէ այլ ունակութիւններու դէմ խօսիլ, պայքարիլ, երբ շրջապատդ քու անձիդ մէջ կը տեսնէ այդ բոլորը կամ այդ բոլորէն մաս մը:

Ղեկավարին կարեւորագոյն բարենիշներէն մէկը չէ, այլ հիմնակա՛ն բարենիշը ա՛յս է, իր անձին օրինակը, որ ուզէ-չուզէ պիտի դառնայ ու մնայ ցուցանիշ կեղծիքին ու անկեղծութեան, հաւատքին եւ ձեռացնելուն ու պիտի անեցնէ կամ ցամքեցնէ...

Երբ խօսքը տարբեր ըլլայ գործէն, այն ատեն պիտի պատահի այն, որ ղեկավարի հանգամանքը չարգելով՝ մարդիկ անոր երեսին պիտի չպոռան իրենց մտածածը, հասկնալի փափկանկատութեամբ պիտի անցնին տգեղութեան վրայէն լուրեամբ, իրենց կարգին ակամայ տգեղնալով:

Ու ամէնէն գէշը, վնասակարն ու անսրբագրելի՛ն՝ մարդոցմէ խումբ մը պիտի կապկէ իր ղեկավարը, խորհելով որ անոր ըրածն է բնականը, որ ա՛յս է կեանքը, միութիւնը, ու նկարագրային փոփոխութիւններու ընթացքը:

Ընդունինք, որ ամէն մարդ ունակութիւն մը, երբեմն մոլութիւններ կ'ունենայ, ունի: Ընդունինք նաեւ, որ մարդիկ տկարութիւնները բնական կը գտնեն ՊԱՐԶ մարդուն մէջ ու պարագային, բայց ՉԵՆ ՆԵՐԵՐ երբ անոնք նշմարուին եւ չսրբագրուին ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ մարդուն մօտ:

Մեր Միութեան պարագային, դաստիարակչական առաքելութեան մէջ ԱՆՁԻՆ ՕՐԻՆԱԿՈՎ գործելու հասկացողութիւնը ճշդած է նաեւ իր ներշնչման աղբիւրը:

Հ.Մ.Ը.Մ., որ համեստութեան, պարզութեան, մաքրութեան, այլասիրութեան, բարութեան եւ հաւատքի Միութիւն մըն է,

Հ.Մ.Ը.Մ., որուն անդամները սկաւտ են, մարզիկ են, որուն վարչական կազմերու եւ յանձնախումբերու անդամները կու գան սկաւտ-մարզիկ աղուոր ու մաքուր ակունքներէն,

Հ.Մ.Ը.Մ., իր ծրագիր կանոնագրով, իր ձգտումով ու էութեամբ, ամբողջութիւն մըն է, ինչպէս անձ, գերազանցապէս օրինակելի:

Մեծով-պզտիկով, հետեւաբար, պէտք է շարժիլ ա՛յս «անձ»ին օրինակով:

# ԿՈՐՈՒՍՏ



Եւ ի՛նչ կորուստ:

Կորուստ՝ անհատական, ընտանեկան, միութենական, ազգային թէ մարդկային հնգեակ առումներով:

Երեք կուսակիցներ, նոյն միութեան անդամներ, նոյն ազգի զաւակներ, ընտանիքներու ջահեր, երեք մարդիկ, որոնք կացինահար կաղնիներու նման միաժամանակ ինկան, իրենց անկումի ընթացքին ցացնելով շրջապատող միւս ծառերը, ամբողջ անտառը:

Այդ անհատակներէն մէկը Հ.Մ.Ը.Մ.ի շրջուն Կեդրոնական Վարչութիւնն էր, միւրը՝ հանրային կեանքին նուիրածներուն Հ.Մ.Ը.Մ.ական հայրը, եղբայրը, մէկալը՝ Հ.Մ.Ը.Մ.ին նոր բացուած ծաղիկ:

Վարդգէ Տէր Կարապետեան, Լեւոն Պերպերեան, Ներսէս Խիտավերտեան:

Վարդգէս Վարդգէս ըլլալու համար, Լեւոնը՝ Լեւոն ու Ներսէսը՝ Ներսէս, ի՛նչ ժամանակ ներդրուած էր իրե՛նց կողմէ, իրենց ընտանիքներո՛ւն կողմէ, իրենց ազգի՛ն եւ միութեա՛նց կողմէ, մարդո՛ց կողմէ:

Ինչ ժամանակ, զոհողութի՛ն, հաւա՛տք, աշխատա՛նք, կա՛մք, յո՛յս:

Գնդացիքը հնձեց ամէն բան:

Կորո՛ւստ:

Անկասկա՛ծ: Եւ ի՛նչ մեծ:

Վարդգէսը աշխատասէր էր, Լեւոնը մեծհոգի, Ներսէսը՝ երիտասարդ, որ կը նշանակէ ամէն լաւ բան:

Վարդգէս եւ Լեւոն միջին սերունդի «ծեր»երէն էին, Ներսէսը՝ նոր սերունդի «հասուն»ներէն:

Վարդգէսը արեւու պէս մէջտեղն էր, Լեւոնը՝ ամպերու ետեւ պահուած արեւ, Ներսէսը՝ արեւու առաւօտեան ճառագայթ:

Լեւոնները դրկող տեսակէն էին, Վարդգէսները՝ գացող ու Ներսէսները՝ պատրաստուող:

Երեքն ալ հայ. հաւատաւոր, նուիրեալ: Պատնէշի վրայ:

Կորո՛ւստ:

Եւ որչա՛փ:

Մահը միշտ ալ վիշտ է բերեր, որովհետեւ մեռնիլը միշտ ալ կորստիլ նշանակած է յարաբերաբար կեանքին: Հարցը այն

է սակայն, որ այս մահ չէ, այլ սպանութիւն: Ու տարբեր, շատ տարբեր բաներ են զոյգ այս սեւաւորները:

Մինչ մէկը բնական է ու ճակատագրականօրէն բաժին՝ բոլորին, միւրը՝ սպանութիւնը սպանութի՛ւն է, կեանքէն բրտօրէն եւ անբնականօրէն բաժնել է, ոճիր է:

Ոճիր՝ անշահ, աննպատակ, անտեղի, կամայական, հետեւաբար՝ անա՛րգ:

Ու միշտ հարցը այն է, այս պարագային բարեբախտաբար, որ սպաննուիլ անպայման մեռնիլ չի նշանակեր, այլ կրնայ նշանակել նաեւ՝ անմահանալ:

Ինչպէս որ եղաւ:

Ծիշոյ է որ քիչերու, բացառիկներու տրուած է բնական մահով մեռնելու պարագայի՛ն անգամ հերոս հռչակուելու պատիրը: Ծիշոյ է նաեւ այն՝ որ ամէն սպաննուած մարդ ո՛չ նահատակ է եւ ո՛չ հերոս: Ոճիրին շարժառիթը պիտի բնութագրէ ամէն բան:

Մեր երեք եղբայրները սպաննուեցան, պարզապէս որովհետեւ հա՛յ էին:

Այսպէս չէ՞ր եօթանասուն տարի առաջ...

Հարցը այն է, սակայն, որ նահատակութիւնը շա՛հ է թէ վրնաս, նահատակները գումա՞ր են թէ հանում ազգաց պատմութեան մէջ:

Ո՞ր ազգաց պատմութիւն դարձեր է պատմութիւն՝ առանց արեան:

Ո՞ր ազգաց պատմութիւն չէ ամբացած հողի եւ արեան պատճառաւ:

Ու չե՛նք գիտեր, որ պատմութեան համար լերդացած արիւնը արիւն չէ, ընդունելի չէ, չի տոկար: Որպէսզի պատմութիւնը շնչէ, ապրի, շարունակէ, անոր համար նորոգ արիւն պէտք է ամէն անգամ: Այլապէս կը ծերանայ պատմութիւնը, կը ծերանայ, կը սրմքի, կը կորսնցնէ իր ուժականութենէն, կը դառնայ կնճռոտած ու խորշոմած դէմք:

Արիւնը պատմութեան շիճուկն է, այն, որ կը պահէ երիտասարդ:

Մի՛շտ:

Հիմա կրկին նոյն հարցումը. կորո՞ւստ թէ շահ ա՛յս արիւնը: Բացի արիւնէն ու հողէն, արեան ու հողի համար ազգեր հերոս ու նահատակ կը ծնին, կը կերտեն, որպէսզի՝ ապրի՛ն:

Հերոս ու նահատակ չունեցող ազգերը մինչեւ անգամ կեղծ հերոս ու նահատակ կը ստեղծեն, այլապէս հոգեվարքը անգամ չ'երկարիր:

Մենք պէտք չունինք կեղծին ու կեղծիքին:

Մենք իւրաքանչիւր սերունդի գալուստը ողջունած ենք կա-

մովին թէ պարտադրաբար, նո՛ր զոհերով, նո՛ր հերոսներով ու նո՛ր  
նահատակներով:

Մեր պատմութիւնը բարձրացած է արդէն արեան ու մար-  
տիրոսութեան վրայ:

Մեր պատմութիւնը կը շարունակուի անփոփոխ ոճով ու կը-  
նիքով: Այլապէս պատմութիւնը ըլլալէ կը դադրի հայոցը:

Կրկին բարեբախտաբար հարցը այն է, որ նորե՛ր կու գան:

Կը ծնին նոր Վարդգէսներ, նոր Լեւոններ, նոր Ներսէսներ:

Ինքնախաբէութիւն չէ, փաստ է, որ ջահը կը փոխանցուի  
սերունդէ սերունդ. ու եթէ հեւասպառ ջահակիր մը իշնայ անգամ,  
ուրիշ մը կը գտնուի, որ թաղէ՛ մեռելը եւ տանի ջահը դէպի առա՛ջ:

Մեր պատմութիւնն է այս, հայոց պատմութիւնը:

Առաջին եւ վերջին բոլոր մը հողը չէ, առաջին եւ վերջին  
խօսքը չէ պանթէոն իջնողներու դագաղին առջեւ:

Ոչ ալ առաջին եւ վերջին երդումը:

Պարզապէս այս ալ նորոգ ուխտ է նորոգ արեան պէս:

Մենք գիտենք ջահը բոցկլտուն պահել, գիտենք ինկողնե-  
րուն տեղ բերել նորը, գիտենք պատմութեան երթը անաղարտ ապ-  
րեցնել արեա՛մբ թէ քրտինքո՛վ, բայց մանաւանդ հաւատարմու-  
թեամբ եւ կրքո՛տ յամառութեամբ:

Գիտենք, որ կորուստին համար ցափը բնական է, բայց կո-  
րուստին համար կքիլը անբնական է եւ աղէտաբեր:

Գիտենք, որ կորուստը՝ շահո՛ւ վերածելու իմաստութիւնը  
պիտի ըլլայ մերը, եւ թափուած արիւնը պիտի ծառայէ ծաղկեցնելու  
նոր հաւատք ու պահելու պատմութիւնը՝ անաղարտ:



Օրը անուն ունի, ժամանակը՝ թուական:

Այդ օրը սակայն դար մը կամ վայրկեան մը տեւեց, դար մը կամ վայրկեան մը առաջ էր այդ օրը, ու գուցէ այդ օրը անուն ունենալէ ալ դադրեցաւ, կամ, ստացաւ նոր անուն:

Այդ օրն էր, երբ երեք դազաղ քայեցին մերթ քով քովի, իրարու հետ խօսելով, մերթ իրարու ետեւէ, մերթ ձեռքերու վրայ, մերթ՝ ուսերու, միշտ իրարու հետ խօսելով, կամ յանկարծ լռելով սխուր, սխրեցնող լուսթեամբ, ինչպէս սեփական զաւկի դիակը դիտող աչք:

Որո՞նք էին սգակիրները.— դրօշով պատուած ու դրօշի վերածուած երե՞քը, թէ, իրենց ետեւ թափօր կազմած մարդիկը:

Յստակ չէր անգամ, թէ որոնք էին մեռելները.— իրե՞նք, թէ իրենց ետեւէն հոսող մարդիկը, բոլորը գտարիւն հայեր: Բոլորը մեռնելու վարժ մարդիկ, յաճախ մեռած ողջեր:

Իրա՛ւ: Որո՞նք մեռած էին այդ օրը. ողջե՞րը թէ ողջակիզուածները:

Այդ օր, իրենք, երեք դազաղ, ինչպէս թուիէ քաղուած վարդ:

Ժողովուրդը՝ անասման ու ալեծուսի ցորենի արտ:

Երկինքը՝ ամպամած, յօնքուր յօնքուր լացող մայր:

Այդ օր հրեշտակները իրենց ցաւէն թէ ամօթէն, պարզապէս պահուրտած էին ամպերու կամ արեւու ետեւ:

Փողերախումբը կը հնչեցնէ Շոփէնի մահերգը, որ այլեւս չի յուզեր: Այս երթը այլ յօրինում կը պահանջէ: Մաղկեպսակները իրենք ալ մեռելներ են ու արիւն կը հոսին:

Շշմած, զարմացած մարդիկ: Փսփսուք չի լսուիր: Միայն անձերը դէմք կը ծծեն, ինչպէս ամպակի:

Ձայները քաշուեր են վանք:

Պողոտաները լեցուեր են ոչ թէ մարդերով, այլ տիրութեամբ, որ կը քալէ մեռելի ոտքերով: Ցաւէն աւելի գարմանքն է որ որմազդերու նման կը փակչի պատերուն, փստուսանքէն աւելի չհաւատալու զգայնութիւնն է որ կը տարածուի, որպէս թէ ամբան ձիւն տեղար:

Եկեղեցիէն գերեզմանատուն պողոտաները երկուք են. մինչ վարէն դազաղները ընդզվում կ'առջնորդեն, պատշգամները վերածուեր են ուրիշ պողոտայի, ուր ծերեր իրենց հեծկտուրք կը խեղդեն, ստեղծելով յուզումի նոր ալիք:

Ասոնք, ծերունիները, ո՛չ կը ճանչնան մեռելները, ո՛չ անոնց անունը գիտեն, ո՛չ ալ երբեւտիցէ տեսած են զանոնք որեւէ տեղ:

Իրենց համար այս դազաղները միացած են միւսներուն, անդազաղ մեռելներուն:

Ու կու լան:

Ձարհուրելի է ծերունիներուն լացը, որ պարզապէս անարցունք է: Արդէն հո՛ն իսկ է տառապանքը, երբ ի գո՛ւր, չորցած գեղձերէ արցունքի կաթիլ կ'աղբրուի:

Անոնց արցունքը պարզապէս ձեռքի շարժումն է — օրհնութի՛ւն թէ անէ՛ծք:

Իւրաքանչիւր ծերունիի աչք ճէր Ձօր մըն է հիմա, ովախի կարօտով տօթակէզ աւա՛զ: Հրեշտակները ո՛րք են:

Վարէն թափօրը յամբաքայլ կը քալէ, դազաղները կը պարեն:

Հազարաւոր երիտասարդներ իրենց արագահարուածները կը սեղմեն իրենց կուշտին այնպէս, որ կարծես ուզեն արիւնել զանոնք:

Սարսափած հրեշտակները կը փախչին:

Միայն ծերունիներն են որ չեն կրնար լալ:

Երիտասարդներն ալ, կին ու աղջիկ, բոլորը, բոլորը եկեղեցիէն գերեզմանատուն կ'երթան, այդպէս, կարծես ընկերակցելու համար դազաղներուն:

Միայն այն ժամանակ, երբ հատ հատ պանթիոն կը մտնեն երեքները, այն ժամանակ միայն նոր կը զգացուի որ անոնք ա՛լ պիտի չըլլան: Ու նոյնիսկ այդ ժամանակ լացը ներսէն կ'ըլլայ ու լացը ցամաք դուրս կու գայ:

Որպէս ծննդայ ու գերազոյն շարական, հրազնի 21 հարուածներ արլուիա կը դառնան ու «Վէրքերով լի ճան Փետայիճն կրկին յարութիւն կ'առնէ ու կը նստի գերեզմանաքարի մը վրայ: Երգում ու խոստում կ'ակնկալուի խօսողներէն ու միաժամանակ ամէն հայ բան կ'ըսէ ինք իր մէջ, ինք իր համար: Ու երբ կը վերադառնայ գերեզմանատունէն, կը տեսնէ, որ մեռելները իրմէ առաջ հասեր են տուն:

Ամէն մարդ նոր կը տիրի, իր չփոթանքը թաղելէ ետք:

Սարսափը կը մնայ հոն, գերեզմանատան մէջ: Ամէն մարդ կը խաչակնքէ ու կը լսէ մեռելները:

Հայոց Պատմութիւնը ուժեղ քայլերով կը շարունակէ իր ճամբան:

Հրեշտակները պարզապէս կը հիանան:



## Կ ՈՐ Լ...

ՄԱՐԶԻԿ  
marzi  
SPORTS MAGAZINE



Հիմա Մեքսիքոն է աշխարհի կեդրոնը:

Այսպան միլիոն մարդ տեղ կը փնտոտ մեքսիքական դաշտերէն ու այսպան միլիոն մարդ գամուած է հեռատեսիլներուն առջեւ: Ֆուտպոլ ու Մեքսիքո միաձուլուած են, ինչպէս մատ ու մատանի:

Այսպէս չեղաւ սակայն Մեքսիքոն, երբ տարի մը առաջ երկրաշարժի բռնուեցաւ ու նոյն Մեքսիքոյի մէջ հազարաւոր մարդիկ մեռան նոյնիսկ առանց հոգեվարքի:

Թերթերը թերթի յատուկ ոճով հաղորդեցին լուրը, վիրաւոր մարդէն աւելի ճեղքուած հողի նկարը ցոյց տուին, օգնութեան անարձագանգ աղմուկ փափսացին ու մոռցան:

Ոչ միայն աշխարհ մոռցաւ Մեքսիքոն, այլեւ մեքսիքոցիները մոռցան բնութեան գուցէ պատգամը եւ պարզապէս յարգեցին իրենց յաճախութիւնը ֆուտպոլի միջազգային համադաշնակցականի նկատմամբ եւ շարունակեցին կազմակերպել խաղերը:

Իրենց ցաւին մէջ լուսանցքի վրայ մնացած այս երկիրն ու ժողովուրդը յանկարծ իրենց ամբողջ հմայքով առնուեցան լուսարձակի տակ, երբ փաստեցին կազմակերպչական կարողութիւն:

Մարդիկ կ'երեւի միշտ կը սիրեն կռնակ դարձնել ցաւին ու յաղթականը համբուրել ճակատէն:

Ինչպէս համաշխարհային բոլոր մրցաշարքերուն ու ողիմպիականներուն, հո՛ւ եւս մրցաշարքը արժանացաւ կազմակերպիչ երկրի նախագահի բացման խօսքին ու բոլոր նախագահներու նախագահական պատգամին պէս, իր երկու խօսքով նաեւ ա՛յս նախագահը խաղաղութիւն ու եղբայրութիւն մաղթեց աշխարհին: Ձեռով մը խաղը հակադրեց ռումբին:

Մեքսիքոցի երգիչները, դաշտի կեդրոնէն ու իրենց կլոր ու լայնեզր գլխարկներէն վեր բուրվառեցին սիրերգներ ու անոնց մատներուն տակ կրկին մղկտաց նուագարանի իւրաքանչիւր լար:

Ու մրցումի ազդանշանը տրուեցաւ: Կրնայինք եւ ըսել՝ եւ եղել լոյս...

Իրօ՛ք: Եւ եղև լո՛յս:

Ահաւասիկ դաշտին մէջ թէ հեռատեսիլներու շրթներէն կախուած մարդկութեան կէտը, ֆութպոլի հմայքէն կախարդուած, մոռցած է շրջապատը, շրջապատի ցարը, մոռցած է ինքզինք ու իր ցարը ու պարզապէս կը հեւայ բերդէ բերդ տարուերորդ գնդակին հետ:

Ինչ երջանիկ են մարդիկ երբ գնդակը կ'ուղղուի դարպաս, կը մօտենայ, կը մօտենայ, բայց եւ ինչ «ախ ու օֆ» է, երբ կը դաշի ձողին, կամ ձողի մօտէն կ'անցնի, փոխանակ շարժելու՝ ուռկանը:

Հանդիսատեսներու կէտը կ'որախանայ, որ կոլ չեղաւ, մինչ միւս կէտը կը ջղայնանայ, որ կոլ չեղաւ:

Ու կը բաւէ, որ սիրուած խումբը համաչափ յառաջխաղացք արձանագրէ, անցնի հակաչարձակողականի, եւ ահա դէմքերը կը պաշտառանան, կոլ ընելու յոյսը կը գեղեցկացնէ դէմքերը, քաջալերանքը արմկահարումի ու աղմուկի կը վերածուի. իսկ երբ գնդակը կողմ փոխէ, այս անգամ մեղադրանքն ու յուսախաբութիւնն են, որ կը մլաւեն, ինչպէս ծեծ կերած կատու:

Կոլ պատրաստո՞ղն է անելի արժէքատրը թէ կոլ ընողը: Անկասկած հարց է, սակայն բոլորը կը համբուրեն կոլ ընողը ու կը մխիթարուին՝ որ կայ հաւաքական բաժակը:

Այլապէս, կեանքի մէջ անգամ, ո՛վ պիտի ուզէր բաս տալ...

Այս այսպէս է: Ու ճիշդ է նաեւ, որ չկայ անելի երջանիկ վաչրկեան, քան երբ գնդակը կը մտնէ դարպաս. այդ ատեն կոկորդները կը դառնան Ջէնով Օհան, աստիճաններէն դրօշակները կը շարժին, սուլոցներով երաժշտութիւն կը կազմուի, մարդիկ կը գիրկընդխառնուին, կը ցատկեն օդը, յաղթական խումբի խաղցողները իրարու վրայ կը նետուին ու կը վախճաս, որ յանկարծ խեղդուի կոլ ընողը...

Այս արդէն կոլի՛ պատմութիւն է:

Ուրիշ է՝ կոլերու կոլը...

# ԿՈՂԵՐՈՒ ԿՈՂԸ



Թե ով պիտի ըլլայ ֆութպոլի աշխարհի ախոյեան, անկասկած հետաքրքրական է ու գրաւ դնողներու մեծամասնութիւնը կարծէք պարտուած է կանխաւ:

Անակնկալի աշխարհ է ֆութպոլը, որուն յաղթականը անպայման լաւագոյն խումբը չէ, բայց որուն յաղթականը անկասկած բախտատրագոյնն է:

Ֆութպոլի մրցում մը շահիլ, պատերազմ մը, առնուազն ճակատամարտ մը շահիլ կ'երեւի կը նշանակէ: Ասոր համար

չէ՞, որ պետական մակարդակի ընդունելութիւն կը սարքուի «պատերազմէն դարձող յաղթական զօրավարներուն»...:

Երբեմն, երազանքի ու վերացումի պահու մը, փոխանակ երգիչ, արուեստագէտ, բժիշկ, հարուստ կամ այլ ինչ ըլլալ ուզելու, կը փափաքիս պարզապէս ֆութպոլիստ ըլլալ, ինչպէս Մարատոնան է կամ Փլաթինին...

Ա՛յս է աշխարհի բանը:

Խաղը աղն է կեանքին, ու աղի ընտրելագոյններէն է կ'երեւի ֆութպոլը:

Պէտք է ընդունինք, սակայն. լաւ է, որ ֆութպոլն ալ կայ:

Ֆութպոլն ու ֆութպոլիստները, իրենց բազմամիլիոն սիրահարներով, գէթ խաղի ընթացքին կը պարպուին իրենց ախտավարակ մոլուցքէն, կը լեցուին յարաբերաբար ընդունելի կիրքով: Կը մոռնան աշխարհի բանը ու անմեղ զբաղումով, կը վերանա՛ն...

Կոլ, գիտենք, որ կը նշանակէ նպատակ: Մի՛նակ նպատակ ալ չէ. կոլին մէջ կայ նպատակի իրագործումած ըլլալն ալ: Կոլը նպատակի ձգտում չէ, այլ նպատակի իրագործման յայտարարութիւն:

11 խաղացող, ձեռք ձեռքի, ուշիմութիւն ուշիմութեան, ճկունութիւն ճկունութեան, վարպետութիւն վարպետութեան, որպէս իրարու լրացուցիչ, հաւաքական ճիգով նպատակադրած են գնդակը գետեղել մրցակիցի դարպասին մէջ:

Ֆութպոլի խաղին նպատակը եթէ դարպասին մէջ գնդակ տեղադրելն է, համաշխարհային չափանիշով ֆութպոլի կամ մարզական որեւէ խաղի կազմակերպումի նպատակը, նախագահներու պատգամը վկայ, այն է, որ աշխարհի բոլոր ազգերու զաւակները իրարու մօտենան, զիրար սիրեն, ծանօթանան իրարու, որպէսզի հեռանայ... պատերազմի սարսափը:

Եղբայրութեան եւ խաղաղութեան կը միտին այս նախա-  
ձեռնութիւնները:

**Ահա կրկին Մեքսիքոն:**

Տարբեր ազգերու զաւակներ պատուի կը կենան, երբ իրա-  
րու ազգային քայլերգը կը հնչէ, կը համբուրուին, մտերմութիւն կը  
ստեղծեն, զարեջուր կը խմեն, կը մեկնին իրենց երկիրները յիշելով  
եւ համոզուած, որ ռուսերը մարդակեր չեն, իտալացիները առաւ-  
փախաւ չեն, ֆրանսացիները կոռուազան չեն, անգլիացիները պա-  
ղարիւն չեն, բոլոր մարդիկը, առնուազն մարդոց երիտասարդները  
իրարո՛ւ կը նմանին, ու աշխարհի լաւագոյն քաղաքը միայն իրենցը  
չէ, ա՛յլ երկիրներու մէջ ալ հեռատեսիլ կը գտնուի, որ Ալճերիա  
անուն երկիր մըն ալ կայ, որ արաբները սեւ չեն, որ միայն Ամերի-  
կայի մէջ չէ, որ սեւեր կան, որ մորթի գոյնը շատ ալ կարեւոր չէ,  
կարեւորը սրտի՛ ճերմակութիւնն է:

Մարդկային կատակերգութեան կրկնութիւնն է անկասկած  
եւ այն, որ եթէ Մեքսիքոյի մէջ համաշխարհային ֆութպոլի մրցա-  
շարք մը կազմակերպուի, որ եղբայրութիւն ըլլայ չերկիրս եւ խա-  
ղաղութիւն յաշխարհս, քիչ մը անդին, Հոնտուրասի մէջ պատե-  
րազմ է արդէն, Լիբանանի մէջ համաշխարհայի՛ն պատերազմ է՝  
եղբայրասպան պատերազմի ետեւ, անդին կոհի է Իրաքի եւ Իրանի  
միջեւ, կոհի պատրաստութիւն է ի Հնդկաստան, կարծէք կոհի չէ  
Իրլանտայի մէջ, Սրի Լանքան այսպէս, հապա Նիքարակուա՛ն:  
Հոս ու հոն, քիչ մը ամէն տեղ:

Ո՞վ ըսաւ որ քսաներորդ դարը սպաննած է ռոմանթիզմը  
եւ ո՞վ ըսաւ որ որեւէ դար կրնայ արգիլել երազանք եւ ինչո՞ւ լրջօ-  
րէն պէտք չէ երբեմն-երբեմն գէթ թերթատել Աւետարան եւ ընդօ-  
րինակել կարգ մը արձանագրութիւններ:

**Օրինակ, չիշել Դաւիթ ու Գողիարթ:**

**Իրա՛ւ:**

Պետութիւններու տարակարծութիւնները կարելի չէ՞ լուծել  
պատերազմէն տարբեր ձեւերով: Օրինակ՝ ֆութպոլի մրցումով մը  
թերեւս...

**Արգիլուա՞ծ է երեւակայել նման բան...**

**Այդ պիտի չըլլա՞ր կոլերու կոլը:**

Ափսո՛ս, առ այժմ ամերիկեան ֆութպոլ՛ն անգամ կը տար-  
բերի ռուսականէն: Թերեւս պէտք ըլլայ առաջին կոլը նշանակել  
ա՛յդ դարպասին մէջ, նոյնացնել ֆութպոլները, ապա անցնելու հա-  
մար կոլերու կոլին...



# ԲԱՆԱԿՈՒՄԸ



Սկաուտության հազարաճումն աղտորության թագուհին ինքն է՝ բանակումը: Արդէն սկաուտ՝ ձեռով մը բանակում կը նշանակէ:

Ով սկաուտ չէ եղած (նաեւ՝ ով ըսկաուտ եղած է, սակայն, բանակումի չէ գացած), անկասկած կարեւոր բան է կորսընցուցած իր պատանեկան տարիներէն, որովհետեւ չէ կրցած յիշատակներու ծառաստանի վերածել իր հոգին:

Պէտք է ընդունիլ:

Մանկութեան ու պատանութեան օրերէն շատ բան անպայման կը մոռցուի. նոյնիսկ դասընկերներու դէմքեր ժամանակին հետ կ'աղօտանան, կը մաշին, կ'անչաչտանան, սակայն կը դիմանան բանակումի յիշատակները, ինչպէս ժայռի վրայ քանդակուած արձան:

Միօրեայ բանակումին ալ բանակում կ'ըսենք, սակայն բանակումի բանակումը միւսն է, այն, որ կը տեսէ եօթնէն 10-15 օր: Այսինքն այնքան ժամանակամիջոց, որ տղան ԼՐԻԻ կտրուի տունէն, նոյնանայ բնութեան հետ եւ, գոյատեւելու համար, փարի ընկերներուն ու, մանաւանդ, ապառիկի ինքն իրեն:

Բանակումի երթալ՝ արդէն կը նշանակէ խզուիլ ընթացիկ կեանքէն եւ կեանքի սանձը ձգել բնութեան մէջ, ինչպէս ազատ հովուն հետ մրցող ձի:

Բանակումի երթալ՝ տեսակ մը մեծնալ է պզտիկին համար, ու երիտասարդանալ է մեծին համար:

Չե՛նք նշմարած, թէ ինչպէս պզտիկները մեծնալ, մեծի պէս հագուիլ, նստիլ, շարժիլ, խօսիլ կը սիրեն:

Եթէ մեծերը ինչէ՛ր պիտի չտաչին պզտիկնալու համար, — ինչ որ անկարելի է, — պզտիկները ի՛նչեր պիտի չուզէին տալ մեծնալու համար, ինչ որ անխուսափելի է:

Յամենայն դէպս, բնական է, որ ամէն տարիք սիրէ բանակումը, որովհետեւ ամէն տարիք կը սիրէ ջուրը աղբիւրէն խմել եւ օդին լաւագոյնը քաղել ամպերէն:

Սկաուտը, ինչպէս թռչուն կամ նախամարդ, ի՛նք պիտի շինէ իր բոյնը, ի՛նք պիտի սարքէ իր վրանը, ի՛նք պիտի եփէ իր կերակուրը, ի՛նք պիտի պաշտպանէ ինքզինք:



Սկսուտը փորձառութեամբ պիտի տեսնէ որ միայն ընկեր-  
ներով կարելի է յաղթահարել կեանքի դժուարութիւնները, որ մէկ  
ձեռքով կարելի չէ ծափել, որ ինք երբ քնանայ՝ իր վրայ հսկող պա-  
հակ կայ, որ երբ ընկերը քնանայ, ինք պարտի հսկել անոր ապա-  
հովութեան:

Բարութեան եւ օգնութեան փոխադարձութիւնն է, որ սկա-  
ուտները կը կիրարկեն բանակումին:

Սեռեակներու մէջ աանդուած գիտելիքները դաշտերու մէջ  
կամ լեռներու վրայ է, որ կ'ենթարկուին փորձարկումի եւ կ'իմաս-  
տաւորուին:

Ոչ մէկ կերակուր այնքան համով է, որքան բանակումի  
աւազախառն փիլլար կամ տակը վառած ինչ որ բան:

Առաւօտեան շատ կանուխ կ'արթննաս, կը շտկոտես անկո-  
ղինդ, կը հագուիս, կը լուացուիս, մարզանք կ'ընես, կ'առնես նա-  
խաճաշդ, ապա կը սկսիս... անօթութեան պատրաստուիլ:

Մինչեւ կէսօր կը յոգնիս, կը շարժիս, կը ստեղծագործես,  
կը վատնես էնէրժի՝ կէսօրին արջու ախորժակով սեղան նստելու  
համար:

Իրիկուն եւ առաւօտ իրարու կը յաջորդեն ժամու չափ  
արագ:

Այս բոլորին հակառակ զարմանալի չէ բնաւ, որ բանակու-  
մը կարգ մը սկսուտներու համար բացուի «դժգոհութեամբ». ու  
կրկին զարմանալի չէ, որ սկսուտներէն ոմանք աճապարեն տուն  
դառնալ դժգոհութեան պատճառաւ:

Տունը, տան ճաշը, ծնողքը, ամէ՛ն ինչ կրկնապէս կը քաղց-  
րանայ, երբ կը կորսնցնենք զանոնք նոյնիսկ ժամանակատրապէս:  
Ծիշդ ատո՛ր համար վերադարձին կրկնա՛կ ուժով կը սիրենք զա-  
նոնք՝ տունը, տան ճաշը, ծնողքը, ամէ՛ն ինչ:

Ասիկա արդէն շահ է, կորսնցնելէն ետք վերագտնելու գեր-  
երջանկութիւնը:

Բանակումի աղուորութեան, հաճելիութեան, օգտակարու-  
թեան գերագոյն փաստն ալ միւսն է. այն, որ «դժգոհները» տուն  
դարձէն ետք ամէնէն առաջ իրե՛նք կ'աճապարեն պատրաստուիլ...  
յաջորդ բանակումին:

# ԱՍՏՂԵՐՈՒ ՊԷՍ

ՄԱՐԶԻԿ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻ



Որ «բուռ մը աստղ ենք երկինքով ցրուած», որ երկինք նայինք՝ կը տեսնենք մենք մեզ, ճիշդ է լեդի դեղահատի պէս:

Թերեւս լաւ կ'ըլլար, որ աստղ չըլլայինք, ըլլայինք ծաղիկ՝ բայց մե՛ր դաշտին մէջ. մե՛նք ալ մեր ոտքին հող ունենալինք:

Բայց բանաստեղծի բարի բառին պէս, աստղ ենք...

Մենք աստղ ենք, այո, բայց տարբեր չափի, տարբեր հեռաւորութեամբ եւ ուրիշ աստեղութեան թաւալքի ռիթմով:

Մենք նոյն պատմութեան, նոյն արեան ծնունդ, տարբեր երկուորեակ:

Մեր մէկ մասը հայ է ու բան, բան է ու հայ: Մեր մէկ մասը գանատահայ, ամերիկահայ, մեր մէկ մասը արժանթինահայ, պրագիլահայ, մեր մէկ մասը ֆրանսահայ, իտալահայ, մեր մէկ մասը պարսկահայ ու իրաքահայ, մեր մէկ մասը լիբանանահայ ու սուրիահայ, մեր մէկ մասը չինահայ է, մաչինահայ, մեր մէկ մասը, մասը, մասէն մաս մը, հոս ու հոն ցրուած, ինչպէս բուռ մը աստղ՝ երկինքի վերեւ:

**Տեսէ՛ք:**

Մեր մէկ մասը մայրենին կը խօսի ինչպէս բերանը լեցուն, բարկացած այր մարդ. մեր մէկ մասը մայրենին կը խօսի ՐԷՆ Ղատ հնչելով. մեր մէկ մասը հայերէնին խառնած է արդէն սեմական փոշի, մեր մէկ մասը հպարտ է, որ գիտէ հայերէնով բարի լոյս ըսել ու մեր մէկ մասը հայերէն անգամ չի գիտեր, բարէ՛, թէն հայ է տակաւին, ինչպէս տերեւէ մերկացած անտառ:

**Տեսէ՛ք:**

Մեր երգը միայն տեղ-տեղ տօնական օրերու զարդ է, ծիսական ինչ որ անհաղորդ օրէնք. մեր աւանդութիւնը հիմնովին փոխուած, ինչ որ որդեգիր նոր շարմարեցում. մեր տօներն անգամ կարիքը ունին յուշարար մեծ մօր. այլապէս ի՛նչ տօն:

**Տեսէ՛ք:**

Նոյն արփին տարբեր ուժգնությամբ ճառագայթ սփռեց մեր մէկի վրայ, ու նոյն ձիւնը տարբեր հաստութեամբ ծածկեց մեր միւսը:

Այսպէս ճակտի գի՞ր:

Մենք մեր երկրի մէջ լուսատրչաց կանթեղ, մեր երկրին մէջ Աստուծմէ ծնկաչոք Ա. Բ. Գ. ընդօրինակող Մեսրոպ Մաշտոց:

Հիմա ո՞վ մեզ մեզմէ տարբերեց:

Բայց հարցը այն է, որ հակառակ մեր տարբերութեանց, մեր մէկ մասին այսպէս, միւս մասին այդպէս ըլլալուն, մենք մնացինք մէկ ու նոյն, ամէն անգամ որ հարցը հայրենիքի շուրջ ու մասին կայացաւ:

Ի դէպ, մարդիկ գիտե՞ն թէ ի՛նչ ըսել է հայրենիք ունենալ:

Մենք առնուազն լաւ գիտենք թէ ինչ ըսել է հայրենիք չունենալ:

Ու պարզ այդ իսկ պատճառաւ, եթէ աշխարհի լեռները կենան մեր միջեւ ու ծովերը մեզ հեռացնեն իրարմէ, աշխարհի ձորերը խրամատ ստեղծեն մեր միջեւ ու աշխարհի երկիրները սահման դառնան, որպէսզի չմիանանք իրարու, նոյնն է, առաւելագոյն պարագային՝ մեր մէկ մասը կ'ըլլայ այդպէս, բայց միւսը կը մնայ այսպէս, ինչպէս Արարատ. — խրոխտ, անխորտակ, հարազատի հաստատակամ ու հաւատարիմ սպասումով:

Պարզ է, որ հայրենիքէն հեռու ըլլալն էր որ մեզ կիսեց:

Պարզ է, որ առանց հայրենիքի կը մեռնի մարդը, ազգը:

Ու որպէսզի ապրինք, ու որպէսզի դիմանանք միմեզեւ վերադարձ, ու որպէսզի բռունցքուիմք վերադարձի համար, մեր բոլոր, բոլոր տարբերութիւններով միասին, տեսէ՛ք, հայրենիքի վերածած ենք ամէն ինչ:

Մեզի համար հայրենիք է սկառտութիւնը, մարզանքը, լեզուն, կրօնը, կերակուրը, անուն-մականունը, պարը, աւանդութիւնը. մեզի համար հայրենիք է մեր տխրութիւնը, կարօտը, ցարը, տառապանքը. մեզի համար հայրենիք է այլոց հայրենիքը, որպէսզի, որպէսզի ապրինք ու ապրի մե՛ր հայրենիքը:

Մենք իրարմէ տարբեր, բայց յար եւ նման իրարու, ինչպէս աստղեր...

# «Ն Ա Խ Կ Ի Ն»



— Նախկին նախագահ, նախկին վարչապետ, նախկին վարչական, նախկին...

Եթէ յարգանքի համար է յիշեցումը, «նախկին», անկասկած, դրական է ու բարարող:

Եթէ ծառայութեան մը, մեծութեան մը, նուաճում դիրքի մը վերահաստատումն է ընդգծումը՝ «նախկին», կրկին ու կրկնապէս գնահատելի է մօտեցումը:

Արդէն ընդհանրապէս թեական չէ, ա՛յդ իսկ է միտք բանին, երբ կ'ըսենք, կը շեշտենք, կը ներկայացնենք.

— Նախկին երեսփոխան, նախկին նախարար, նախկին քաղաքապետ, նախկին, նախկին, նախկին... «նախկին»ին մէջ այժմու անտիտղոս կամ նուազ արժէքաւոր վիճակը չէ որ կը մատնանշուի. «նախկին»ին մէջ կայ նախապէս մեծ եղած ըլլալու, հետեւաբար այժմ անոր ըստ այնմ նաշիլ տալու փափկանկատ զգաստութեան հրաւերը:

«Նախկին»ը չի նմանիր «հանգստեան կոչում»ին:

Կարելի է ըսել եւ կ'ըսուի հանգստեան կոչումը զօրավար, հանգստեան կոչումը տնօրէն, հանգստեան կոչումը պաշտօնի մարդ, սակայն այդ մէկը անպայման գրաւական չէ մեծ եղած ըլլալու այնքան, որքան երբ ըսուի՝ «նախկին»:

«Նախկին»ին մէջ կայ արժանաւորի, մանաւանդ արժանացածի արժեւորում, մինչ «հանգստեան կոչում»ին մէջ ինչ որ ծերացած, գործը աւարտած ըլլալու տխուր հաստատում, անկախ առ այդ կամ մինչ այդ ենթակաշին կրած հանգամանքէն ու դիրքէն:

Մարզական աշխարհի մէջ ալ կը գործածուի «նախկին»ը: Նաեւ «հանգստեան կոչում»ը:

Կ'ըսենք նախկին ֆութպոլիստ, նախկին կոփամարտիկ, նախկին ախոյեան, չենք ըսեր հանգստեան կոչումը հեծելանորդ, հանգստեան կոչումը ախոյեան: Ասոնց փոխարէն կ'ըսենք, սակայն, հանգստեան կոչումը մարզիչ, հանգստեան կոչումը իրաւարար...



Ամենայն դեպս, հարցը ոչ բառի ստուգաբանութիւնն է, ոչ ալ գործածութեան ճշդումը: Հարցը՝ բառին բարոյականը յայտնաբերելն է: «Նախկին» ըլլալու, սակայն մէկդի չնետուելու կարեւորագոյն հասկացողութեան հիմնատրումը:

Վերերաններն ու նախկինները, հիներն ու անցեալը, պատմութիւնը ու հանգստեան կոչուածներն անգամ չեն կրնար ու պէտք չէ մոռցուկ նկատուին:

Ինչո՞ւ: Բայց որովհետեւ մարդը լեմոն չէ, որ քամոյի, տայ հեղուկը, ու կեղելը նետուի:

Յետոյ, անցեալը միշտ ներկայ ընել գիտցող հաւաքականութիւններն ու ազգե՛րն են, որոնք ամէնէն աւելի կրնան դիմադրել ժամանակի աւերին:

Կան մարդի՛կ անգամ, որոնք իրենց տան պատերուն վրայ կ'արձանագրեն, թէ հռչակատր այսինչ մարդը ապրած է հոս, թերեւս քանի մը ժամ:

Նախկինը յափտենական ներկայի վերածելու արտայայտութիւն է ասիկա, յարգանքի ու հաւատարմութեան արձա՛ն:

Յարգանքն ալ հազար ձեւ ունի:

Զմոռնանք միաժամանակ, որ յարգելի ըլլալու զգայնութիւնը եւս մարդկային յառաջդիմութեան հիմնական գործօններէն մէկը եղած է: Ահա թէ ինչու այժմու թէ ապագայի բոլոր նախկինները պէտք է յարգուած մնան, միանգամընդմիշտ, եւ ոչ թէ ծրարին եւ նետուին... պարագայականի մէջ:

Ո՞վ չի գիտեր եւ համաձայն չէ, որ, եթէ նոյնիսկ նախկինները բան չկարենան տալ, անոնց օրհնութի՛ւնն ալ բաւարար է:

Այս բոլորով հանդերձ, անկասկած եւ պիտի ընդունինք, որ նախկիններն ալ ընելիք ունին. երբեմն-երբեմն, եթէ ոչ միշտ, անհրաւ՛ր, այցելել իրենց անցեալին, քրտինքին, շարունակուող գործին:

Ամենայն դեպս, Հ.Մ.Ը.Մ.ը իր կառուցով ու հասկացողութեամբ, «պատուի առ» մըն է նախկիններուն առջեւ եւ ոչ թէ «երթաս բարով» մը:

Հ.Մ.Ը.Մ.ը, որմէ կրնան օրինակ առնել ե՛ւ նախկինները ե՛ւ «նախկին» ըլլալու սահմանուած բոլոր հաւատատրները:



# ԽԱՐՈՅԿ ՈՒ ՑՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՐԳ



Խարոյկը անտառի ծառերը կը պոկէ իրենց արմատներէն եւ Սասնայ Դարօթի պէս զանոնք կը ճօճէ հա կը ճօճէ:

Շուքի վերածուած տերեւները մերթ կը կարմրին, ինչպէս քաղցրօրէն շիկնած ամօթխածութիւն, մերթ կը նոյնանան մութիւն հետ, մինչ խարոյկը կը վառէ երկնքի փէշերը:

Խարոյկէն հեռու ամէն ինչ խաւար է, խորհրդաւորութիւն, սարսափ, ինչ որ հեռակայ առեղծուած: Թերեւս ա՛յդ իսկ է պատճառը, որ մարդիկ կարելի չափով կը մօտենան անոր, խարոյկին, որպէսզի տաքնան՝ թէկուզ այրելո՛ւ չափ, ու լուսաւորուին՝ թէկուզ կէտօրուան արեւու ճառագայթներու խայթոցի՝ ուժգնութեամբ:

Խարոյկը այնքան քաշողական ուժ ունի, որ խենդացած տղաք կը ցատկեն անոր վրայէն, կարծես բոցերուն հետ նոյնանար: Ի համար, եւ հարա-հրոցով կը հասնին միւս կողմ ու հաճոյքով կը փշրեն խանձուած մազ ու աղումամազ:

Ջուր չէ, որ մեր նախահայրերը պաշտած են կրակը որպէս Աստուած:

Ահա խարոյկը, զոր վառեցին մեր տղաքը ու կ'արծարծեն իւրնքան խանդավառօրէն:

Ահա խարոյկը, որ ունի հեթանոս մեր հայրերու տարիքը եւ որ անշէջ է մնացած մինչեւ այսօր. որովհետեւ մինչ տեղ մը մոխրացած են կրակէ լեզուները, այլ տեղ ճարճատա՛ծ են այդ կրակէ լեզուները աւելի՛ ահեղօրէն, ու անոր շուրջ ահաւասիկ հիմա համազգեստաւորներ կը ծափեն, կը ճչան, կը պոռան, կը բացագանչեն, կը սուլեն, կը պարեն, կը շարժին, կը շարժեն, կը խնդան, կը քրքջան, խելահե՛ղօրէն, անսահմա՛նօրէն, վերացեա՛լ մաքրամաքրութեամբ:

Ուրուականներ են ասոնք, խարոյկի տղաքը, որոնք կը վառեն ինչ որ կը մարի, որոնք կը չաւերժացնեն ինչ որ թերեւս դատապարտուած է մահուան, որոնք մոխիրներու տակէն պահուած կաշծ ու բոց կը յայտնաբերեն եւ որոնք քրիստոնէայ հեթանոսներ են, ինչպէս Էջմիածնայ Խորան:

Անոնք, խարոյկի տղաքը, աշխարհի բոլոր կողմերէն եկած են հոս՝ որպէս պատգամաբեր, որպէս ներկայացուցիչ, որպէս նոր օրերու ասուն կռունկ եւ, նոյնացած իրենց արմատներուն,— որ ըսել է իրենց նախահաշրեւում,— գիշերաչին ոգիներու հետ կը շրջին անտառով մէկ:

Խարոյկի տղաքը կը նոյնանան իրարու՝ մինչ կը ծերանայ խարոյկը ու կը յոգնին, կը ծալապատկուին բոցերը:

Ա՛յս է ան, որուն սկառուները այնքան պարզօրէն խարուկահանդէս կ'ըսեն:

Սակայն խարոյկէն ու խարուկահանդէսէն վեր են իրենք՝ սա արեւոյշ-սկառուները, որոնք տարի մը Փարիզը, տարի մը Աթէնքը ու այս տարի, վաշրկեանի մը համար, Լոնտոնը ըրին Սփիւռքի մայրաքաղաք, բոլո՛րն ալ սիրուն ուտաններ. բայց կարօտով երգեցին միաժամանակ միւսը, յաւերժականն ու անփոխարինելին, անկրկնելի՛ն. «Երեւա՛ն դարձար, իմ Էրեբունի՛»...

Խարոյկի տղոց համար այս պայմանական միացումը երջանկութիւն պարգեւեց. բայց բոցերու մահը յիշեցուց, որ ա՛լ պէտք է աղօթել «Ցտեսութեան երգ»ը:

Ու տխրութիւնը բազուկներու շղթայ դարձաւ, հեզանկուն իրանները քովէ քով սկսան երերալ ու հարցականը, որպէս պաղատանք, երկինքը լեցուց:

— Արդեօք պէ՞տք է, որ հեռանանք ու գիրար մոռնանք...

Տխո՛ւր հնչեց «Ցտեսութեան երգ»ը: Խումբը նոր զգաց, որ կը սիրէ խումբը, խմբականը ու, երկրպագող դիրքով, տխրութեան շղթան երդուեցաւ.

— «Ցտեսութի՛ն մըն է միայն, միայն ցտեսութիւն»...

Մարդկայինն ու ազգայինը խառնուեցան իրարու, աչքեր տամկացան. արցունքը մարգարտացաւ այտերու վրայ ու գրկընդ-խառնումը երկարեցա՛ւ, երկարեցա՛ւ, մինչեւ որ յաջորդ առաւօտ Լոնտոնէն օդանաւերը բռնեցին աշխարհի բոլոր կողմերու ուղղութիւնը, սակայն ոչ մէկը այն՝ որ պէտք էր, այն որուն համա՛ր էր մանաւանդ խարոյկն ու ցտեսութեան խոստումը, աղօթքը, երգը:

— Ցտեսութի՛ն մըն է միայն, միա՛յն ցտեսութիւն, Հայաստա՛ն...

# ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ



Անոնք՝ նահատակները այնքան շատ են, որքան շատ են մե՛ր ծովու առազի հատիկները:

Անոնք՝ նահատակները չաճախ շա՛տ աւելի ողջ են, քան իրենք՝ ողջե՛րը:

Անոնք՝ նահատակները յարուրթին առնող մէկական խաչեալ, մէկական սու՛րբ, որոնց յիշատակը խունկ է, շարական ու ծնծղայ:

Մեր նահատակները — ազգային տառապանքի կամ հաւատամքի ապառաժեայ աղօ՛թք:

Իսկ մեր պատմութի՛ւնը — արդէ՛ն նահատակութեան թաւալք:

Առաջին օրէն ձիւնն ու ցուրտը գրկեցինք, որովհետեւ բաւ գտանք ազատութեա՛ն տաքութիւնը: Ֆշշա՛ց Հայկի նետը, ու այդ օրէն սկսեալ հրեշտակները նահատակութեան համանուագը ասեղնագործեցին եւ որպէս գերագոյն նուէր անցուցին իւրաքանչիւր հաշու վիզը, ինչ որ փաստօրէն երբեմն դարձաւ կախաղանի պարան, եղե՛ռն, երբեմն բանտի ցուրտ պա՛տ:

Նահատակները անհամար ծառերու նման միաբերան երգեցին դեղնած տերեւներու մահը, որով կշռոյթ տուինք մեր սրտի գարկին:

Նահատակութիւնը դարձաւ ազգային պահանջ, քէնտաճ հրճուանք, ապրելու ու ողջ մնալու պայման:

Կ՛երեւի ա՛յս էր Ազատութեան գինը, որ ճակատագրակա՛նօրէն վիճակուեցաւ Հայկի թոռներուս:

Ամէն անգամ որ հերոս մը ինկաւ կռնակէն վիրատր, սրբացաւ մարդ մը, անտես կանթեղ մը ստացաւ իղի նոր պաշար ու Հայաստանեայց աշխարհը մնաց երկրային ու երկնային լոյսերու մէջ: Նահատակը դարձաւ մորենի, որմէ ժայթքեց աննիթական լոյսը. ինչպէս ցայտաղբիւր, որով զմոռուեցաւ մեր պատմութեան իւրաքանչիւր էջը, ու այնուհետեւ ոչինչ մահացաւ:

Զի եղեւ լոյս:

Ահա թէ ինչու արդէն մեր հայրենի հողը հող չէ, այլ սուրբե՛-

րու փշրուած ոսկոր, ու հերոսներու լերդացած արիւն:

Ու զուր չէ, որ «Իր որդոց սուրբ արիւնով» անմահացաւ եւ երկիրը դրախտավա՛յր:

\*  
\*\*

Մեր նահատակներէն մէկը ծնաւ հարիւր տարի առաջ ու կոչուեցաւ Ծաւարշ Քրիսեան:

Հարիւր տարի առաջ ծնաւ նաեւ նահատակութեան նախա-  
սահմանուած ուրիշ մը՝ Վահան Չերագ:

Առաջինը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն գլխաւոր մը, երկրորդը՝ Հայաստան հաստատուած Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սկաւտո-  
ներէն մնալուն սկաւտուն ու «պատուի առ»ը, մինչեւ մահ:

Առաջինը 1915ի նահատակութեան արժանացաւ, երկրոր-  
դը՝ իր հայրենի բանտին մէջ, 1927ին: Այլ սպանդ:

Հիմա,

Նահատակութեան տարելից է նոր երեքի՝ Վարդգէս Տէր  
Կարապետեանի, Լեւոն Պերպերեանի եւ Ներսէս Խիտավերտ-  
եանի:

Ասիկա նահատակութեան ու նահատակներու շղթայ է, հին  
հին դարերէն մինչեւ թուականս:

Ամբարուող ցորենի հունս:

Անհաշի հարստութեան վերածուող ադամանդի հանք:

Արիւնը գինի չէ, որուն հինը ըլլայ արժէքաւոր: Արիւնը  
արիւն է, որմէ հողը սնունդ կ'առնէ, որմով հաւաքականութիւնները  
սնունդ կ'առնեն եւ որմով կը հիւսուի Պատմութիւնը:

Փառք ու պատիւ հին ու նոր նահատակներուն:

Փառք նահատակուելու պատրաստ հին ու նոր սերունդնե-  
րուն:

Փառք անոնց, որոնք պատմութիւն կերտեցին, կամ առան-  
ձինն դարձան փառահեղ մեր պատմութեան փառահեղ մէկ լուսոյ  
էջը:

Հայաստանեայց արիւնոտ Աշխարհին խաղաղութի՛ւն թող  
ըլլայ...



# ԱՐԻՒՆ ԵՒ ՔՐՏԻՆՔ



31 Յունուար 1987: Պէշրուֆ, Լիբանան: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Կեդրոնատեղիի բացման հանդիսութիւն:

Փողերախումբ, Սկաուտական «Պատուի՝ ա՛ն», ժողովուրդ, հրաւիրեալ: Առաջնորդ ու վեհափառ:

Կեդրոնատեղին, որուն բացման հանդիսութեան առիթով այսքան ծաղիկ ու հեռագիր է տեղացեր, այսքան պաշտօնականութիւն կայ ու ժողովրդական հետաքրքրութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Կեդրոնատեղին՝ հազիւ քանի մը փոքր սենեակներէ կը բաղկանայ եւ ունի հազիւ մեծ սենեակի մը տարածութեամբ սրահ:

Սակայն,

Փաստօրէն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Կեդրոնատեղին ըլլալով, ԽՈՐՀՐԳԱՆԻՇ մըն է այս փոքր յարկաբաժինը եւ, իր ներքին միջուկով (թանգարան, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրատուն), ան ճառագայթելու կոչուած աննիւթական հսկայական հարստութիւն է:

Ապա, խորհրդանիշ յարկաբաժնի սրահը զոհի մը անունին է, Վարդգէս Տէր Կարապետեան. ու Վարդգէսով միւս զոհերուն՝ Լեւոնի ու Ներսէսի, Լեւոններու եւ Ներսէսներու մահատակութեան ձեռով մը ՅՈՒՇԱՐՁԱ՛ՆՆ է այլեւս ինքը, այդ անսահման յարկաբաժինը:

Փոքր տարածութիւն, սակայն բարոյական մեծ լիցքով:

Ու այնքան մեծ ու նշանակալից, որ բացման հանդիսութեան առթած յուզումը ովկիաններ կը կտրէ, կը կտրէ անապատ, լեռ ու անտառ եւ կը սարսռացնէ հազար հազար եղբօր սիրտ:

Արդէն պարզ պատահականութեան մը հետեւանք չէ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Կեդրոնատեղիի բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 31 Յունուարին:

Այդ մէկը կը զգայ արար աշխարհ:

\*  
\*  
\*

31 Յունուար 1987: Տիբորյտ, Միացեալ Նահանգներ: Ծիշդայն ժամուն, երբ Հ.Մ.Ը.Մ. Պէշրուֆի մէջ իր Կեդրոնականի Կեդրո-



նատեղիի բացման հանդիսութիւնը կը կատարէ, այստեղ Հ.Մ.Ը.Մ. կը գումարէ իր 10րդ Շրջանային Ժողովը, ուր ժողովականները կը լսեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին խօսքը.—

«Ամէն ինչ պէտք է մեծնայ, ամէն նախաձեռնութիւն պէտք է հսկայանայ: Նպատակ հետապնդող ու դատ ունեցող ժողովուրդ մը չի կրնար ու պէտք չէ բաւարարուիլ գիտնայ: Ահաւասիկ: Ծիշոյ չէ, որ Կեդրոնականը յարկաբաժին ունենայ եւ շէնք չունենայ: Ծիշոյ չէ, որ Կեդրոնականը շէնք ունենայ եւ թաղամաս չունենայ: Ծիշոյ չէ, որ Կեդրոնականը թաղամաս ունենայ եւ քաղաք չունենայ: Ու երբ քաղաք ունենայ, ճիշդ չէ, որ միայն քաղաք ունենայ եւ հայրենի՛ք չունենայ»:

Համաձայն են բոլորը:

Ու ահա Տիրթոյտէն հեռաձայնի գիծ մը կը հաստատուի Պէլրոյթի հետ:

— Ալօ՛, — ԳՆԷՅԷՔ ՇԷ՛ՆՔԸ...

Չորս միութենական եղբայրներ, Ժողէֆ Մելիքեան, Մանուէլ Գարճեան, Յովհաննէս Սթամպուլեան եւ Եղիշ Խոստեղեան հաւաքաբար 120,000 (աւելի քան 13 միլիոն Լ. Ոսկի) կը դնեն Կեդրոնականի տրամադրութեան տակ, ա՛յդ նպատակին:

Տիրթոյտի մէջ Ժողովական Հ.Մ.Ը.Մ.ականներ յոտնկայս երկար, երկար կը ծափահարեն նուիրատուութիւնը, նուիրատուները եւ հոգիի աչքերով կը հետեւին հեռաւոր բացման հանդիսութեան:

Եղբ. Պետրոս Կարապետեան շորջ մէկ միլիոն Լիբանանեան արժէքով քոմբիւթըր կը նուիրէ՝ որպէս շէնքին դրկուած առաջին ընծայ:

Տեղէ մը արիւն կը նուիրուի, տեղէ մը քրտինք: Ու հետք ու հաւատարմութիւն ու հաւատք:

Միութիւնը լեռնէն գլորող ձիւնագնդակի մը պէս կը մեծնայ տակաւ:

Այս նուիրատուութիւնները բացման նոր հանդիսութիւններ են, աշխատանքի նոր ոճ, նոր ու ուժեղ օրինակ: Կարկինները լայն բանալու քաջութիւն: Կեդրոնը ուժով տեսնելու իմաստութիւն:

Անգամ մը եւս ու ընդմիշտ՝ Օրհնեալ ըլլան բոլոր անոնք, որոնք իրենց միութեան ու անոր ճամբով իրենց ազգին կը նուիրեն քրտինք, կամ արի՛ւն,

Կամ՝ ե՛ւ քրտինք, ե՛ւ արիւն...

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ



Իր համագաղութային կառույց եւ հետեւաբար տարողութիւն ստանալէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ. գումարած է Պատգամաւորական չորս Ընդհ. Ժողովներ:

Առաջին Պատգամաւորական Ընդհ. Ժողովը կազացաւ Դեկտ. 1974ին Պէշրոթի մէջ, եւ բնականաբար նկատուցաւ ՀԻՄՆԱԴԻԲ Ժողով:

Երկրորդ Պատգամաւորական Ընդհ. Ժողովը կազացաւ Կիպրոսի մէջ, 1976ին, եւ հոս առաջին անգամ ըլլալով

Կեդրոնական Վարչութիւն մը որպէս աշղպիսին միութեան ներկայացուցիչներուն զեկուցեց, ՀԱՇԻԻ ՏՈՒԱԽ իր գործունէութեան շուրջ:

Երրորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը կազացաւ 1983ին եւ վերջինը՝ 1987ին, երկուքն ալ Յունաստանի մայրաքաղաք Աթէնքի մէջ:

Իւրաքանչիւր Պատգամաւորական Ընդհանուր Ժողով ունեցաւ իր ինքնուրոյնութիւնը, մասնաշատկութիւնը, կնիքը, դրոշմը. իւրաքանչիւր Ընդհ. Ժողով առիթ եղաւ, որ համագաղութային կառույց ստացած այս միութիւնը ինքզինք վերանորոգէ եւ նորանոր պարտաւորութիւններ ստեղծէ՝ իր ուսերուն բառնալու համար զանոնք, ի անվերջ ծառայութիւն հայ երիտասարդութեան առողջ կազմաւորման:

Ու ամէն անգամ որ Կեդրոնական Վարչութեան մը կանոնագրով նախատեսուած ժամանակաշրջանը աւարտեցաւ, ան քառամեայ տեղեկագրով իր նիւթաբարոյական գործունէութեան հաշիւը ներկայացուց զինք ընտրող, հետեւաբար իրմէ բարձր Մարմնին, որ այս պարագային նաեւ միութեան Գերագոյն Մարմինն է, եւ այս առիթով անպայման չքաւարարուցաւ եղածը տեղեկագրելով, այլ եւ գալիքի հաշուոյն իր պատկերացումը գծեց, փորձառութիւնը խտացուց, երեւոյթ մը ընդգծեց եւ մանաւանդ՝ պատգամ մը բանաձեւեց:

Այս մէկը՝ «եզրափակում»ը շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ տեղեկագրի վերջին գլուխն է:

Իր ձեռին մէջ թերեւս զգացական թուող, խորքին մէջ եւ էապէս հաշտուած, ձեռուած, տրամաբանական հաստատում-ահագանգ-խոստում է այս մէկը, զոր անվարան կարելի է նկատել տեսակ մը հաւատամք:

Նոր օրերու մնայուն ու անփոփոխ հասկացողութիւն:

Ու մինչ այս մէկը եզրափակումն է Հ.Մ.Ը.Մ.ի շրջանաւարտ վարչութեան մը, կրնայ եւ այս եզրափակումը որպէս գործի ՆԱԽԱԲԱՆ նկատուիլ Հ.Մ.Ը.Մ.ի որեւէ նորընտիր վարչութեան:

Վերջին հաշտով Հ.Մ.Ը.Մ. յաջորդականութիւն մըն է արդէն որպէս ձգտում, օրէնք, հասկացողութիւն, ապրում, ճակատագիր, տեսլական, ծրագիր, կանոնագիր, գործելակերպ...

«Մեր Միութեան համար անցնող քառամեակը կարգ մը մարզերու մէջ որոշ դանդաղանքի, այլ մարզերու մէջ բաւարար յաջողութիւններու եւ կարգ մը մարզերու մէջ ակնբախ իրագործումներու յաջորդականութիւն մը եղաւ:

«Անցնող քառամեակը եղաւ նաեւ բնական շարժերու, որոշ վերիվայրումներու, միութեանական հասկնալի եւ սպասելի տարակարծութեանց ներդաշնակութիւն մը, եւ

«Մեր Միութեան համար անցնող քառամեակը, մեր հազարամեայ պատմութեան պէս, եղաւ նաեւ արհմտոց ցնցումներու արձանացած մէկ տատասկ:

«Սակայն, անցնող քառամեակը, հակառակ անբնականութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրի եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու հայօրէն գործելու կամքին առջեւ որպէս գործ ու արդիւնք, որպէս աներեք շարունակութիւն՝ մնաց բնական: Մնաց ու դարձաւ վաղուան բացուող լոյս, վճռական երթի երդում:

«Արդէն պէտք է ընդգծել որ մեզի համար անբնական չեղաւ միա՛յն անցնող քառամեակը:

«Արհմտոց ցնցումներու տատասկ չեղաւ միա՛յն անցնող քառամեակը:

«Փաստօրէն, մեր Միութիւնը հիմնադիր տուաւ Եղեռնին, մեր Միութեան պատմութիւնը բարձրացաւ արեա՛ն վրայ դէռ մօտի՛կ անցեալին:

«Ու ոչ միայն անբնական եղան անցնող չորս տարիները, անցնող բոլո՛ր քառամեակները, անցած քանի մը հազարամեակները,

«Այլեւ անբնական կը բացուի նաեւ գալի՛քը:

«Փաստօրէն ազգ ենք, ամբողջական հայրենիք չունինք:

«Ազգ ենք, ժողովուրդ ու յարանուանութիւն դառնալու վրտանգին ենթակայ ենք:

«Տրուած ենք աշխարհով մէկ. ու մինչ տեղ մը մեր բնակած երկրի օրէնքները խիստ են, սահմանափակ, ճնշիչ, հետեւաբար մեր գործերը դժուարացնող,

«Այլ երկրի մը օրէնքները այնքան այլազան են, այնքան լայնախոհ կը ներկայանան, որ նոյնքան վտանգ կը դառնան մեր հոգիներո՛ւն:

«Իսժան է աշխարհ մեզի հանդէպ տեղ մը իր այլամերժութեամբ, այլ տեղ մը՝ իր այլասիրութեամբ:

«Այսպէս կը բացուի եւ անմիջական ու գալիք քառամեակը:

«Ծիշդ է, որ մեր միութեան առաքելութիւնը Հայ երիտասարդութեան մարմնակրթանքն է. ճիշդ է նաեւ այն, որ մարմնին մէջ է սիրտն ու հոգին:

«Չենք կրնար բաժնել, չենք բաժնած, պիտի չբաժնենք ու չի բաժնուիր հոգին մարմինէն: Այլապէս մահ է:

«Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան առաջին բնորոշումը՝ ՀԱՅ՝ հիմնականօրէն ու առաջնահերթօրէն պիտի մընայ գուրգուրանքի տակ եւ մտահոգութեան առարկայ:

«Կեդրոնական Վարչութեան տեղեկագիրը սուկական թրտումներու, չոր զեկուցումի եւ թուաբանական աղիւսակներու պատկեր չի կրնար ըլլալ:

«Կեդրոնական Վարչութիւնը վարչութիւն ըլլալէ առաջ հասկացողութիւն է, խորհրդանիշ է ու, իր քառամեայ տեղեկագրին որպէս եզրափակում, զանազան մտահոգութեանց թուում է, ահագանգ է, զարթնեցնող ճիշ է ու գործակցութեան կոչ:

«Առաջին.— Այնքան ատեն, որ մեր շրջապատի վտանգը կ'երեւի, կը զգացուի, կը չափուի, վտանգ չէ:

«Կամքով, կիրքով, արժանատրութեամբ ու կազմակերպւածութեամբ կարելի է չէզոքացնել ամէ՛ն վտանգ:

«Պայմանը այն է, որ հոգիները խունապէ վարակուած չըլլան:

«Երկրորդ.— Վտանգներու վտանգը տեղայնական զգացումն է, որ յաճախ արդարացումի դիրքին տարագներ ունի, համո-

զիչ թուելու կարելիութեամբ կը ներկայանայ, բայց որ շարժող  
ուսազ է:

«Կեդրոնական Վարչութեան մէջ չերեցող, քառամեայ տե-  
ղեկագրին մէջ բառի չվերածուած հիմնական ու թելադրական բա-  
ժինը որ կայ, դերակատարութիւնը որ կայ, ա՛յս է.—

«Ծարժում, գործ, ընթացք՝ համընդհանուր եւ ընդհանրա-  
կան ոճով ու կնիքով:

«Մեզի յանձնուած ջահը մենք կը փոխանցենք մեր յաջոր-  
դին, հանդարտ ինքնավստահութեամբ եւ ինքնաճանաչումով:

«Կը ներկայացնենք մեր հաւաքական հրաժարականը:

«Վստահ ենք, որ ջահը պիտի շարունակէ վառիլ ու զայն  
բարձր պահելու կոչուած նոր բազուկները պիտի մնան ջլապինդ:

«Ու մեր Միութիւնը պիտի շարունակէ տակաւ գործել ո՛չ  
որպէս սոսկական Միութիւն, այլ հայրենիքէն հեռու, հայրենիքին  
համար հայրենիքի՛ վերածուած հասկացողութիւն ու համապա-  
տասխան գործընթաց:

«Աստուած պահէ բոլորս,

«Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը»:



# ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ



Գիտենք, որ նուիրել սիրել կը նշանակէ. կը նշանակէ վարձատրել, գնահատել: Նուիրելը նախադուռն է ՆՈՒԻՐՈՒԵ-ԼՈՒՆ, որ կը նշանակէ ՆՈՅՆԱՆԱԼ:

Արուեստ է նուէր ճշդելը:

Տպատրիչ նուէրը այն է, օրինակ, որ կու գայ ոչ թէ առիթով մը, այլ կու գայ յանկարծ, չսպասուած, չակնկալուած պահու մը:

Ու տպատրիչ նուէրը տակաւին այն է, որ քեզ կը մատնէ անակնկալի.— կը սպասէիր արծաթեայ օղ, կու գայ ադամանդեայ մանեակ, կը սպասէիր ադամանդեայ մանեակ, ահա մէկ հատիկ կարմիր մեխակ...

Նուէրն ալ իր համն ու հոտը ունի:

\*  
\*\*

Հաւաքականութեան եղած նուէրները:

Նախ ընդգծենք, որ Սփիւռքի մեր պիտոճեական կազմակերպութեան հիմնական ՄՈՒՏՔը նոյն ինքն նուիրատուութիւնն է: Կան անկասկած այլ մուտքեր ալ, սակայն անոնք՝ այդ «այլ մուտքերը» այնքան վտիտ են դժբախտաբար, որ կը ծառայեն միայն յիշուելու: Փաստօրէն,

«Ազգային Տուրք»ը գոչութիւն ունի որոշ գաղութներու մէջ միայն, այդ ալ նուազագոյն չափով ճշդուած եւ մասնակիօրէն արդիւնատրուած:

Միութեանց եւ կազմակերպութեանց գանձած ՅԵՆՋԵՐԸ պարզապէս կանոնագրային սահմաններուն մէջ են մնացած եւ դարձած՝ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ գումար:

ՄՆԱՅՈՒՆ ԱՂԲԻԻՐՆԵՐԸ այնքան քիչ են ու ազգապատկան կալուածները այնքան նոսր, որ շահարկումի ծրագիրները յաճախ մնացած են փափաքի սահմաններուն մէջ:

Ընդհակառակն, գաղութներու յաջորդական կազմաւորման ընթացքին ու մինչեւ այսօր, իւրաքանչիւր մեծ ու պզտիկ ձեռնարկներուն՝ մեծ ու պզտիկ ի՛նչ նուիրատուութիւններ եղած են, որպէսզի դպրոցները գործեն, միութիւնները իրենց առաքելութիւնը շարու-

նակեն, կազմակերպությունները շրջապատին զգացնեն հայութեան գոչութիւնը:

Իրաքանչիւր գաղութ ինքզինք նորոգած է մէկ կամ քանի մը բարերարներու առատաձեռնութեամբ: Հո՛ւս մեծ հոգի մը դպրոց շինած է, հո՛ն՝ ակումբ, ա՛յլ տեղ՝ հիւանդանոց:

Դիտենք: Հ.Օ.Մ.ը այսպէս, Համազգայինը այդպէս: Եթէ հաշուենք Հ.Մ.Ը.Մ.ի՛ն եղած նուիրատուութիւնները ա՛յս տարուան մէջ, արդէն կը լեցուինք հպարտութեան զգացումով.—

Ծանօթ են 2ՈՐՄԵՐԸ, որոնք 120.000 տոլար նուիրեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որպէսզի ան ունենայ իր սեփական շէնքը: Այդ առիթով, կրկին ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ական մը նուիրեց 5.000 տոլար արժողութեամբ համակարգիչ:

Այս տարուան մէջ էր, որ Աշոտ Մամիկոնեան Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղին ժառանգ ձգեց 150.000 տոլար:

Լոս Անճելըսի մէջ, վերջին Նաւասարդեան խաղերուն, բարերար Վաչէ Մանուկեան շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին նուիրեց 25.000 տոլար, իսկ օրուան հովանաւորը՝ կրտսեր Կարոյ Սողանալեան նուիրեց 100.000 տոլար ու հայր Սողանալեան՝ 50 էջքըր հող, որպէսզի դաշտ ունենան երիտասարդները: Պէշրոթի մէջ Տէր եւ Տիկին Նուէր եւ Նուպար Վարդանեաններ մէկ ու կէս միլիոն Լ. Ոսկի ծախսեցին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. ունենայ իր պասքէթի դաշտը:

Վերջին ձայնը ուժեղ, հնչե՛ղ հնչեց... Աւստրալիայէն: Անդրանիկ եւ Բենիամին Բանոյեան եղբայրներ 250.000 (երկու հարիւր յիսուն հազար) տոլար արժողութեամբ մարզաւանի մը շինութիւնը յանձն առին. ծախս, որ կրնայ բարձրանալ մինչեւ 400.000ի:

Այսպէս, ժողովուրդը, պարզ ու բարի ժողովուրդը, հազիւ նուիրատուի մը համար իր օրհնութեան աղօթքը աւարտած, սկսաւ նորի մը համար, նոյնքան խոր ու խորոց:

Իրապէ՛ս: Հարստանալը տալուն մէջ է, ո՛չ թէ ունենալուն:

Իրապէ՛ս: Կա՛յ անլի մեծ հարստութիւն, քան Աստուծոյ եւ իր սեփական ժողովուրդի օրհնութեան արժանանալու փաստը:

# ՏԵՂԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ



Շեղումներու ամենէն դիրին եւ ամենէն անառարկելի թուող չքմեղանքն է այս.— «Տեղական պայման»:

Գաղութ գաղութ կամբջումի, կանոնագրային (երբեմն նաեւ, ափսո՛ս, ծրագրային) նոյնութեան գլխաւոր, չըսելու համար միակ խոչընդոտն է այս. «տեղական պայման»ը:

Տեղի-անտեղի, գիտակցաբար-անգիտակցաբար, շատ եւ միշտ գործածող դեղահատ է ասիկա՝ «տեղական պայման»ը, որուն անխնայ գործածութիւնը անկասկած թոյն է, փոխանակ բալասան ըլլալու:

Անշուշտ կա՛ն անոնք՝ «տեղական պայմաններ»ը եւ սուտ չեն, շինծո չեն, կեղծ չեն. նաեւ կան անոնք, որ պատրուակ չեն, չքմեղանք չեն:

Կան՝ ճակատագրականօրէ՛ն:

Սակայն ամբողջ հարցը կը կաշանայ զանոնք՝ այդ «տեղական պայմաններ»ը չէզոքացնելու, անոնց դէմ մաքառելու մէջ:

Այլապէս անձնատուութիւն է, հաշտուածութիւն է, ընկրկում է եւ աւազախրում:

\*  
\* \*

Իր բազմա-տեղացիութեամբ, արտասահմանը բնականօրէն բազմատեսակ պիտի դարձնէր հայ զանգուածները՝ ի սփիռոս աշխարհի:

Որքան երկիր, այնքան օրէնք: Որքան երկիր, այնքան կենցաղային հասկացողութիւն:

Հետեւաբար, ո՛ր հայկական գաղութ՝ հոն տարբեր օրէնք. ո՛ր հայկական օճախ՝ հոն այլ կենցաղ. ո՛ր հայկական խմբաւորում՝ հոն նոր իրավիճակ:

Ծիշդ է, որ նորն ու նորարարութիւնը մեզ չեն մտահոգեր, մեզ չեն վախցներ:

Մեր ամբողջ պատմութիւնը վկայ, մենք եղած ենք նաեւ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՂ ժողովուրդ: Որքան տուած ենք մեր շրջապատին, նոյնքան եւ թերեւս ատելիւն առած ենք մեր շրջապատէն: Սա-

կայն «առնուած» ամէն բան հայացուցած ենք, մարսած ենք, դարձուցած ենք մերը:

Ընդօրինակած ենք բա՛ն անելցնելով ու բա՛ն փոխելով: Այդ իսկ պատճառաւ, հակառակ հազարամեայ մեր տարիքին, մնացած ենք երիտասարդ:

Ազգովի՛ն:

Նաեւ,

Կասկածէ վեր է ու վէճի առարկայ չի կրնար դառնալ, որ պարկեշտ քաղաքացի ենք ու պիտի մնանք պարկեշտ քաղաքացի: Պարկեշտ քաղաքացիութիւն Սփիւռքի մէջ մեր գոյութեան ապահովութենէն անկախաբար ու անկէ վեր՝ մեր ազգային ինքնահաւատարմութեան չափանիշն է, մեր հաւաքական օրինակելիութեան գրաւականն է, մեր ցեղային մաքրութեան փաստն է:

Երբեք երախտամոռ չենք եղած: Ոչ ալ՝ խնդրաչարոյց:

«Տեղական պայմաններ»ուն դէմ, տեղական սովորութիւններուն դէմ, տեղական բարքերուն դէմ, տեղական հասկացողութիւններուն դէմ, մեր նպատակներուն անչարիք բարոյական ըմբռնումներուն դէմ եւ ընդհանրապէս տեղական ու ՏԵՂԱՅՆԱԿԱՆ ամէ՛ն զգացումի դէմ պատնիշուելու այս հրաւերը ժխտումը չէ լաւը իրացնելու կարողութեան, ինչպէս նաեւ ու մանաւանդ պարկեշտ քաղաքացիութեան:

Պարզապէս, հաշու նկարագիրն ու խառնուածքը, հաշու բարոյական կերպարը անաղարտ պահելու մտահոգութիւնն է այս մէկը:

Պարզապէս, արտասահմանի մէջ, հայրենի լեռներու վրայ ապրած հաշուն պէս հաշ մնալու համար է այս մէկը, որ գործ է ու առաքելութիւն:

ՀԱԿԱՌԱԿ տեղական պայմաններուն՝ դիմացկունութիւնն է սպասուածը, ՀԱԿԱՌԱԿ տեղական պայմաններուն՝ մեր խառնրածքը անաղարտ պահելու աշխատանքն է պահանջուածը:

Հարցը այն է նաեւ, որ «տեղական պայմաններ»ուն պատճառաւ ընդհանրական գործեր չձախողին, լնացում չյառաջանայ, հաշտուածութիւնը չկաշկանդէ եռանդի թոռիչքը:

Այս է գերագոյն, գերագոյն պահանջը բոլոր երկնակամարներու տակ գործող բոլո՛ր հաշորդիներէն.— Դէ՛մ տեղականին ու տեղայնականութեան:





Ծնանք հայրենիքէն դուրս, ապրեցանք հայրենիքի՛ն համար:

Մեր ոտքերուն տակ հայրենի հող չունեցանք, հետեաբար՝ հողի վերածեցինք մեր հողի՛ն ու, մեր հողին կոխկոտելով՝ քալեցինք, մղկտալով, բաց ուժով:

Եօթանասուն տարուան մէջ վրան լարեցինք եօթանասուն երկնակամարի տակ, սակայն որովհետեւ բոլոր երկնակամարներն ալ ծածկեցինք Եռագոյնով, ամէն տեղէ նոյն երկինքը տեսանք:

Լեռներ ճանկոտեցինք՝ Արարա՛տ շալկած,  
Սահեցանք ձորերէ՛ Արաքս երգելով:

Մեզի համար ծովերը մէկ անուն ունեցան.— Սեա՛ն, ովկիանոսները կոչուեցան Վանայ ծով: Միշտ՝ այսպէս եղաւ.— մեր լինը՝ աշխարհի ծովուն չափ, մեր ծովը՝ աշխարհի ովկիանոսներէն ալ մեծ: Սակայն նոյնքան մեծ եղաւ մեր վիշտը, որքան անասնման եղաւ մեր ապրելու կամքն ու կիրքը:

Եօթանասուն Տարի:

Եօթանասուն տարի, ջղուտ տղաք տողանցք դարձան, Յարութեա՛ն տողանցք: Եօթանասուն անգամ եօթանասուն բաժակ ու մետալ մտաւ մեր տունը: Հարիրաւոր վարչութիւններ յաջորդեցին վարչութիւններու, գումարուեցան հազար-հազար ժողով ու նիստ: Մեր մշակներուն թիրը եղաւ երկնքի աստղերուն չափ ու մեզ ծափահարողները, մեզմով ծափողները՝ ցորենի հասկերուն չափ:

Եօթանասուն Տարի:

Եօթանասուն տարուան իրաքանչիւր ժամը, իրաքանչիւր վայրկեանը տեղ մը բանակում դարձաւ, պահակութեան պատրաստութի՛ն, այլ տեղ՝ ֆութպոլի մրցում, պասքեթպոլի յաղթանակ, աթլետի յաջողութիւն, հեծելարշափ ախոյեանութիւն, փինկփոնկի առաջնութիւն, առնուազն, շատ մարզախաղերու մեծ մրրցանք:

Մրցանք գոյատեւումի, մրցանք մահուան ու, մա՛նաւանդ՝ կեանքին հետ ու դէմ:

Ու երդումի անընդմէջ արարողութիւն՝ եօթանասուն տարի:

Այսպէս, երբ փողերախումբերը պայթեցան, թմբուկները գետինը շարժեցին ու Հ.Մ.Ը.Մ. քալեց, իրաքանչիւր հայ ինքզինք իր հայրենի հողին վրայ զգաց:

Այո՛, Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհը Հայաստանի վերածեց:

Եօթանասուն Տարի:



Եօթանասուն տարի առաջ որբ ծնանք՝ ինչպէս Դաւիթը Սասմայ: Սակայն մեծցանք ա՛յնքան արա՛գ՝ ինչպէս Դաւիթը Սասմայ: Զեւով Միութիւն եղանք, խորքով ընտանիք: Թերեւս ոչ մէկ հաւաքականութիւն ա՛յնքան քոյր ու եղբայր ունեցաւ, որքան ունեցանք մենք: Ո՛ր երկու հայ, հո՛ն պնդտուն աշուկներով գալիկ: Ու ակումբ, ժողովատեղի:

Մեր տուները վերածուեցան ակումբի, երբ չկրցանք քար դնել քարի վրայ. ու մեր բակերը դաշտերո՛ւ վերածեցինք, երբ չկրցանք տարածութիւն ունենալ:

Յամենայն դէպս, մեր հաւաքն ու հաւաքատեղիները յիշեցուցին ազգային աղօթքն ու աղօթատեղի՛ն:

Եօթանասուն Տարի:

Մեր միութիւնը եղաւ բարութեան, հաւատարմութեան, հրճագանդութեան, մեծարանքի, այլասիրութեան, սիրո՛յ միութիւն:

Ո՛չ մէկ ոստիկան այնքան հնազանդութիւն պարտադրեց սանձարձակ խուժանին, որքան մեր մէկ գալիկի վտիտ գաւազանը:

Ա՛յս եղաւ մեր ժողովորդին գուրգուրանքի եւ վստահութեան գերագոյն փաստը՝ մեզի հանդէպ:

Սակայն,

Հակառակ մեր հետքին, վազքին, ստեղծագործ ոգիին, հայրենիքը մնաց կրկներեւոյթ: Մի՛շտ տեսնուեցաւ, սակայն քանի մօտեցանք անոր, հեռացաւ, չքացաւ, վերերելելու համար տեղ մը, մի՛շտ հեռուն:

Փաստօրէն, բոլորեցինք եօթանասուն տարին:

Փաստօրէն, ակնթարթ մը՝ ու արդէն կը կենանք դարու մը վաստակին դիմաց: Կը ձեռնուինք հարիրամեակին հետ:

Մինչ ա՛յդ:

Նո՛յնն ենք: Անփոփոխ: Աննկուն: Աննահանջ: Կաշտառ ու արի: Հաւատարիմ ու պաշտառ: Մեր ճակտին, մեր կործքին՝ Արարատ, Երեւան, Սարդարապատ, Հայոց Պատմութիւն, Հայոց Տառապանք, որով՝ յաղթական ու, մա՛նաւանդ՝ հաւատարիմ երթ:

Ողջո՛ւն Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունամեայ կաշտառ բանակին, անոր մարզիկին, արծուերիք նայուածքին, դրօշին, երդումին, բաժակին, մրցանքին:

Ողջոյն Միութեան, Միութենականութեան:

Ողջոյն անցեալին, ներկային եւ պայծառ, պայծառ ու առնական, ու անյողդողդ ու աներե՛ր գալիքին:

# ԱՌԱՋԻՆ ԿԵՆԱՑ



Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունամեայ վաստակին դիմաց, բնական է, որ վաստակը վաստակ ընող ընտրեալներու ցանկը պատրաստուի եւ իւրաքանչիւրին համար առաջարկուի առնուազն բաժակ մը կարմիր գինի, քամուած՝ մեր հայրենի դաշտերէն:

Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունամեայ մեծղի Գործին ի տես, երիցս արդար է, որ Գործաւորին՝ ալլէլուիա, քրտինքին՝ ողջոյն, հեւքին՝ միւռոն, ու Հայաստան Աշխարհին՝ ցնծութեան յաղթերգ ձօնուի:

Ու առաջին բաժակը, ահա, Կեանքի՛ն համար, որ մեր հեթանոս օրերուն Ոսկեմայր Անահիտ կը կոչուէր, Չաստուածուհի՛ն, որուն տեղ Աստուածամայրը բերինք եւ որոնց առաքինութիւններով ծնաւ նորը, որ պարզապէս Հայունի՛ կոչուեցաւ, այնքան համաչափօրէ՛ն:

Առաջին բաժակը, ուրեմն, կենացը Մայր ծնողի՛ն:

Այսինքն անոր՝ որ չգնաց, դրկեց, չերեցաւ, ցուցադրեց, ի հարկին նսեմացաւ՝ բարձրացնելու համար, մեռաւ՝ գոյատեւելու սիրոյն, փառաւորուեցաւ պատուախնդրութեան մէջ, անմահացաւ՝ որովհետեւ Ծունչն էր Աստուծոյ ու դարձաւ հող հայրենի:

Հայունի՛ն:

Օ՛ր, երբ կը խօսինք մեր կիներու մասին, անպայման կը յիշենք Նուարդէն մինչեւ «տիկնայք փափկասունք հաշոց աշխարհի»ն, Թագունի Փառանձեմէն մինչեւ Սրբունիները քառասուն Հրոնիփսիմէ, Սօւէ Մայրիկէն՝ միւսները, որոնք լեռներէն իրենք զիրենք վար նետեցին, որ շարունակեն հայօրէն անմահանալ:

Ու միշտ ալ հայունին վերածնաւ Հայաստանի ծերպերուն վրայ ջախջախուած երգէն, հայրենի վերքէն.—

— Հայ տիկինը ստիպում էր ամուսնոյն գնալ...

\*\*\*

Այժմ եօթանասունամեակ ու Հ.Մ.Ը.Մ.:

Լոկի-մնջիկ ինչքա՛ն մրջնիկ ունեցանք մենք: Կայտառ ու արի՛ որքա՛ն աստիճանաւորուի:

Մեր խմբապետուհիները, երբ բարեւի կեցան մեր դրօշին, կամ երբ առաջնորդեցին աղջիկներու խումբերը տողանցքներուն ու բարեւի կեցան թրիպիւններուն առջեւ, թուեցաւ, որ դիցազնանուէր արձաններ կենդանացան:

Իր զաւակը պաշտպանող արու ինքնավստահութիւն կար մեր խմբապետուհիներու նաչուածքին մէջ, նազանքին մէջ: Կնոջ պատուախնդիր ազատութիւնը կար մեր խմբապետուհիներու կեցածքին մէջ:

Ու անոնք, մեր արեւոյշ-արծուիկները աղը եղան դաշտին, ու եղան Արեւելքի կնոջ խաւարակոյր լաչակը պատռող ինքնավրստահ առաջիկներէն:

Հապա՛ մեր աղջիկներէն ու կիներէն անոնք՝ որոնք տարազատր ըլլալու բախտը կամ առիթը չունեցան, եւ որոնք պարզապէս զաւակ մեծցուցին տան մէջ, գրկեցին չոր պատերը, երբ իրենց ամուսինները կամ եղբայրները ժողովի գացին, միութենական գործով դուրս ելան, երբեմն մինակ ձգելով մինչեւ անգամ նոր հարսը, հարսնութեան քողը վրան...

Մեր հարսները սպասեցին, որ ժողովները վերջանան, ձեռնարկները հասնին իրենց աւարտին, որ փեսան տուն դառնայ, որ տան հաչըր կրթէ իր առջիկները, որ ազգի գործին տուած ժամանակին անելցածով՝ նայի տան գործին:

Ո՛վ չի գիտեր, որ իրաւ հաշուհին մի՛շտ ալ կեանքի երկու ընկեր ունեցաւ, մէկը իր ճակտի զարդը, մարդը, միւսը՝ իր ու իր ամուսնոյն հոգին՝ ազգն ու գործը ազգին:

Ու անկարելի է թումներու շարքին չիշել մատիտ դարձած այն մատները, որոնք օրին աւազը գրատախտակ ըրին, որ ծնին նո՛ր Մեսրոպներ, եւ անոնք, որոնք այսօր գրատախտակ դարձան, որպէսզի իրենց կեանքի ընկերը բաժին մնայ ազգին:

Այսպէս, շատ այլ միութիւններու կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի փառապսակը մնացին մեր կիներն ու քոյրերը, մեր մայրերը, որոնք, արեւու պէս, եթէ նոյնիսկ ու մա՛նաւանդ պահուած մնացին ամպերու ետին, իրենք, միայն իրե՛նք լոյս ու տաքութիւն տուին:

Փա՛ռք մեր կիներուն, քոյրերուն, փա՛ռք մեր մայրերուն:  
Տան ու ազգի սիւներուն:

Առաջի՛ն կենաց:

# ԳԱՅԼԻԿ ՈՒ ԳԱՅԼԻԿԻ ԳԱՒԱԶԱՆ



Երբ հանդէս կազմակերպուեցաւ, գայլիկը կեցաւ տեղ մը, որպէս կարգապահութեան հսկող ուստիական, ու ամէն ինչ լաւ ընթացաւ:

Երբ փառատօն էր, թուեցաւ որ գայլիկը հայկական բանակի հրամանատար է, գաւազանը՝ հայ զինուորի հրացան կամ արքայական մական. ու երբ սգաւտօն եղաւ, գայլիկը կրկնակ խորհրդաւորութեամբ լեցուց հոգիները, ինք՝ խունկ, գաւազանը՝ բուրվառ:

Ու երբ գայլիկը տողանցեց, ժողովուրդի խանդաղատանքը աղանձի ու արծիւի թելերով երկինքն ի վեր ճախրեց:

Ոչ մէկ ուստիական ու զինուոր այնքան օրէնք պարտադրեց, որքան մեր վտիտ գայլիկը՝ իր նույնքան վտիտ գաւազանով:

Գեղարուեստական ոչ մէկ ելոյթ այնքան զօրեղ տպաւորեց, որքան անկիւն մը կեցած տարազաւոր, պնդուն աչքերով, փողկապի հանգոյցը քակած մեր տղան:

Ու ոչ մէկ բանակային այնքան հիացում, խանդավառութիւն ու հաւատք ներշնչեց, այնքա՛ն յոյս ու ինքնավստահութիւն փոխանցեց, որքան գայլիկներու խումբի ամէնէն ետեւ մնացած երկու տարու կաղիլի քալող կակուղ թաթիկն անգամ...

Իւրաքանչիւր Ապրիլ 24երուն, իւրաքանչիւր մարմարեայ Յուշարձանի քով կենդանի Յուշարձան դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկը. — միաժամանակ մխիթարանք ու յոյս:

Իւրաքանչիւր Մայիս 28երուն, Անձանօթ Զինուորի տակաւին չքանդակուած Յուշարձան դարձաւ ինքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկը:

Ապրիլ 24էն ու Մայիս 28էն ետք, ամբողջ 70-78 տարի, մենք սիրեցինք զայն՝ գայլիկը, մենք հնազանդեցանք անոր՝ գայլիկի գաւազանին: Ընդունեցինք զանոնք, ինչպէս Հայաստանեայց աշխարհէն առաքուած պատգամ...

\*  
\*\*

Այս բոլորը պարզապէս անոր համար՝ որովհետեւ Գայլիկը միայն գայլիկ չէր, ու որովհետեւ Գայլիկի գաւազանը սոսկական գաւազան չէր:



Պարզապէս ճակատագրականօրէն եղաւ այնպէս, որ Ապրիլ 24էն եւ 28 Մայիսէն ետք, ամբողջ 70-73 տարի, ինքնաբերաբար Գայլիկը դարձաւ չչայտարարուած, սակայն ընդունուած ԽՈՐՀԸԲԱՆԻՇ:

Խորհրդանիշ՝ ազգային հաւատարմութեան, ազգային դիմադրականութեան:

Խորհրդանիշ՝ Խաչելութենէն ետք հրաշափառ Յարութեան:

Խորհրդանիշ՝ փրկութեան եւ յոյսի:

Փաստօրէն, Գայլիկը տապալած ծառի բունէն ընձիղած ճիղ եղաւ, հին ու նոյն ծառի նոր բուն, Գայլիկը Սասմայ Դաւիթը եղաւ՝ օրուան մէջ տարիով մեծցող. Սասմայ Դաւիթ՝ գառնարած, խաշնարած, լեռներու չոպան, տէր՝ հրեղէն ձիու, թուր կեծակին ճօճող առնական բազկի, սակայն իր աշխարհասասան ուժին անտեղեակ անմեղութիւն... .

Գայլիկը եղաւ նաեւ կենդանի յուշարձան անոնց՝ նահատակներուն, որոնք ինկան Տէր Զօրի մէջ, Լիզպոնի մէջ ու Ղարաբաղի:

Գայլիկը կենդանի յուշարձան եղաւ անոնց, որոնք ինկան Բաշ Ապարանի մէջ, Ղարաքիլիսէի մէջ, Սարդարապատի մէջ:

Ու Գայլիկի Գաւազանը Խորհրդանիշ եղաւ հեղինակութեան, խորհրդանիշ՝ կորսուած ու վերագտնուելու համար երդում ստացած հայկական բանակի, խորհրդանիշ՝ Եղեռնի հերոսամարտերուն, լեռնային մօսիններուն, Մայիսեան թնդանօթներուն:

Խորհրդանիշ Զօրավարաց Վարդան Մամիկոնեանի, Վահան Մամիկոնեանի, Սիկիլեանի, Դրոյի, Արարատեանի:

Այս եղաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունամեայ Պատմութեան մէկ ա՛յլ էջը, պարզ, պարզ, պարզ.— Գայլիկ ու Գայլիկի Գաւազան...



# ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ



Հայկ հսկան, լերան պէս, լերան վրայէն աղեղ լարեց, նետ արձակեց ու դիտապաստ գետին փոեց բռնակալն ու թըշնամին: Ան, մեր նախահայր առաջին զինուորը, այսպէ՛ս բացաւ մեր պատմութեան առաջին էջը. ընդվզումով, ճակատումով ու յաղթութեամբ:

Յետոյ, ու շարունակաբար ամբողջ դարեր, ամէն անգամ որ թշնամիներ մարախներու պէս իջնէին մեր դաշտերուն, աշրուձիեր, արքայական գոյներով ու դրօշներով զարդարուն, սրարշաւ դուրս կը նետուէին պարիսպներու ապառաժեայ դռներէն, իրենց դոփիւններուն տակ կը հերկէին հողին կուրծքը, քրտնաթոր հելքով կը հալածէին թշնամին, կը գերէին, կը վանէին, ապա կը վերադառնային նոյն վեհափառ շուքով, կը հալէին դղեակներուն մէջ՝ անգամ մը եւս հայրենիքին ապահովելով ազատօրէն շնչելու երանութիւնը:

Դարեր, դարեր առաջ էր, երբ մեր թագաւորները արքայական թագ կը կրէին, որովհետեւ հայրենի հողը կ'երկարէին սահմաններէն ալ անդին, աշխարհակալ դարձնելով Թորգոմայ «խրդանուկ» տունը, աշխարհին փաստելու համար բարկացած ցեղի մը արութեան մեծադորդ սաստը:

Դարեր, դարեր առաջ էր, ազատութեան եւ անկախութեան նշանակ՝ զինուոր ունէինք ու բանակ, ու գահակալ, ու թագ...

\*  
\* \*

Օր մը, սակայն, ոգիներ տխուր շուրջպար դարձան Հայաստանի մէջ, Արտաւազդ քէնտեցաւ, Խոր Վիրապ խոր հառաչեց, Մհեր անհետացաւ, հայրենի բանակը կորսուեցաւ հայրենի ծերպերուն մէջ՝ անտէր ու անտիրական ձգելով Արարատն ու հայրենի բոլոր սրբութիւնները:

Ու ահա թշնամիները եկան, նստեցան Հայաստանի սրտին, ինչպէս օձ ու տգրուկ:

Մեր թագաւորները թաւալզոր ինկան, արքաները դարձան այլոց ձիերու սանձ բռնող, շիկնք ծուռ մնաց Ձէնով Օհաններուն:

Ու դարերու փառքէն ետք, դարերով ստրկութեան լուսան-

քը ապրեցաւ մեր ժողովուրդը, մինչեւ որ հաչրենի հողը կմախքներուն յարութիւն տուաւ, որով հազար անգամ մեռած մարդիկ կրկին բացին ազատութեան ճամբան՝ որոտաձայն երդուելով՝ «Ազատութիւն կամ Մահ»:

Ֆետայական գունդեր ջղուտ քայլերով հաչրենի դաշտերը լեցուցին, ըմբոստացան, ու հաչրենի լերանց կատարներէն հաչ զինուորին ձայն տուին:

Եկաւ հաչ զինուորը, կեցաւ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի բացուտներուն ու գոռաց.

— Ով քնած է՝ արթուն կենալ...

Թոր կեծակիին պէս աղմկոտ ու սուր՝ հաչ զինուորի բազուկը իջաւ թշնամիին՝ բարկացած Աստուծոյ մը ապտակին պէս, ու վատը սարսափած՝ փախաւ, պարտուա՛ծ, ամօթահա՛ր:

Հաչկի ծողը, Հաչկին պէս, աչսպէ՛ս ազատութիւնը տուն բերաւ, ու աչսպէ՛ս շարունակեց գրել մեր պատմութեան յաջորդ էջը:

Ու աչս՝ դարեր առաջ չէր, սակայն դարերու ուխտն ու երդումն էր, դարերու գումարն էր, փառքի դարերու կրկնութիւնն էր, արքաներու յարութիւնն էր, ջարդուածներու վրէժն էր, լսուած աղօթքն էր սուրբերուն, ու կրկին հրապարակ իջած բանակն էր հաչկազնեան:

Ու աչս՝ դարեր, դարեր առաջ չէր, այլ պարզապէս եօթանասուն տարի առաջ միայն, դեռ երէկ, աչս առաւօտ, հազար ինը հարիւր տասնութ թուի Մաչխի քսանութի՛ն:

Օ՛ հանրապետութիւն, որ գահ բարձրացար, ողջո՛՛ն քեզ:

Ու տակաւին յուշարձան չունեցող օ՛ հաչ զինուոր, հոգո՛ւղ դուրպան

# ԽՈՆԱՐՀՆԵՐԸ



Անշո՛ւշտ պիտի յիշուին, նշուին ու մեծարուին անոնք, որոնք տեսնուեցան:

Տեսնուեցան դաշտերու վրայ՝ որպէս ախոյեան, ժողովներու մէջ՝ որպէս մեկնաբան, մրցումներու ընթացքին՝ որպէս խումբի «ազատարար» կամ շաղթանակի կերտիչ, բեմերու վրայ՝ որպէս պատգամախօս:

Գիտենք, որ պատմութիւնը մարդկը կերտէ, ու գիտենք նաեւ, որ կան մարդիկ ալ, որոնք իրե՛նք պատմութիւն կը կերտեն,

պատմութեան առջեւ կը բանան նո՛ր ուղի, պատմութեան կուտան նո՛ր ընթացք:

**Հ.Մ.Ը.Մ.** հարուստ է մեծանուն ու ճառագայթող այդ փառանգով:

**Հ.Մ.Ը.Մ.**ի եօթանասունամեայ պատմութիւնը կարելի է տալ նկարներովը մեր շահած բաժակներուն եւ նկարներովը մեր մեծանուն եղբայրներուն, առա՛նց գիրի օգնութեան:

Սակայն, **Հ.Մ.Ը.Մ.**ի եօթանասունամեայ պատմութիւնը վկայ, մեր խոնարհները եղան բազում անգամ աւելի շատ եւ, թէւ մինչեւ անգամ նկա՛ր չունեցան, թերեւս անոնց սխրագործութիւններն ու կեցուածքները եղան նո՛յնքան ուսանելի, նո՛յնքան եւ թերեւս աւելի՛ հաղորդական ու սրտաբոխ, որքան միւսներունը, որոնք դարձան աչքառու եւ առաջնորդեցին:

Մեր միութեան եօթանասունամեայ շաղթական երթի պատմութեան մէջ երի՛ցս արդար է, որ նաեւ ու մա՛նաւանդ յիշուին, նշուին ու մեծարուին անոնք, որոնք չտեսնուեցան...

\* \* \*

Այդ օր, պետական պահանջով, պետական պաշտօնական ու բարձրաստիճան հիրերու ներկայութեան եւ պետական տօնի մը առիթով՝ **Հ.Մ.Ը.Մ.**ի սկաուտական փողերախումբը պարտէր ելոյթ ունենալ:

Սակայն այդ օր **Հ.Մ.Ը.Մ.**ի փողերախումբի լաւագոյն փոդահարներէն մէկը պիտի ամուսնանար եւ հետեւաբար պիտի չկարենար իր մասնակցութիւնը բերել մեր միութեան ուժի ցուցադրութեան:

Այդ օրուան **Հ.Մ.Ը.Մ.**ի փողերախումբը հռչակ ուներ, ինչ-

պէս ունի եւ հիմա՛: Այդ հռչակէն բան կրնար պակսիլ, եթէ փեսացոյի թոքերէն հաւատարմութեան շունչը ձայնի չվերածուէր ու չդրդացնէր հող ու ժայռ:

Ասոր գիտակից եւ անսալով սկառու խմբապետի թելադրանքին, իր փեսայութեան զգեստին տակ փողահարը իր սկառուտական տարազը հագաւ, Ս. Պսակի արարողութենէն անմիջապէս ետք հարսներները տուն դրկեց, ինք գնաց, միացաւ նուագախումբին, նուագեց... ապա՛ միայն վերադարձաւ տուն, փեսայացաւ:

Եղաւ նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի հռչակաւոր զատկական տողանցքներէն մէկը բացուի... ջահով: Միջազգային ողիմպիականներու մնանողութեամբ, ջահակիր մարզիկ մը պէտք է ընէր դաշտին շրջանը, ապա վառէր կեդրոնական ջահը, որպէսզի սկսէր... տողանցքը:

30.000 հանդիսականներու առջեւ, ընդհանուր խանդավառութեան մէջ եւ թմբուկներու միօրինակ զարկին ու ժողովուրդի խանդավառ ծափին տակ՝ մարզիկը ճամբայ ելաւ: Սակայն, առաջին քայլէն իսկ, ջահէն քարիւղը սկսաւ հոսիլ եւ վառել... ձեռքը:

Որքան յառաջացաւ մարզիկը, այնքան աւելի սկսաւ աչրիլ, ճենճերիլ ձեռքը: Անտանելի ցաւերու մէջ գալարուելով հանդերձ, մարզիկը ջահը չնետեց: Դաշտի շրջանը ամբողջացուց, հասաւ կեդրոնական ջահին, գայն վառեց, ապա՛ միայն ձեռքէն նետեց փոքր ջահը, բռնեց ինք իր դաստակէն, մարեցաւ, ինկաւ գետին:

Կրակը հասած էր ոսկորին: Մատը հրաշքո՛վ չկտրեցին: Սպին՝ մնա՛ց:

\* \* \*

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ին նոր փայլ տալու համար իրենց փեսայութիւնը յետաձգելու պատրաստ երիտասարդներու շնորհիւ, շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի ջահը վառ պահելու համար աչրելո՛ւ պատրաստ տղոց ու շնորհիւ անոնց, որոնք տոմս ծախեցին, աֆիշ փակցուցին, ծափեցին, տեղ ցոյց տուին, ջուր բաժնեցին, Հ.Մ.Ը.Մ.՝ Հ.Մ.Ը.Մ. եղաւ եւ Հ.Մ.Ը.Մ.՝ Հ.Մ.Ը.Մ. մնաց:

Բաժակ՝ խոնարհներո՛ւն կենացը:



# ԲԱՑԱԿԱՆԵՐԸ



Անշուշտ խօսքը բանատր բացականերուն մասին չէ: Չէ եւ չի կրնար ըլլալ անոնց համար, որոնք հիւանդացած են, արկած ունեցած են կամ մեկնած են քաղաքէն:

Բանատր բացակաները իրենց ընդունելի բացատրութիւնը ունին եւ բնական է որ անոնց հասցէին մեղադրանք չըլլայ, չմնայ:

Ի՛նչ պէտք է ըսել սակայն միւսներուն մասին, որոնք արդարանալի պատ-

ճառ չունին ու բացակայ են:

Բացակայ՝ ժողովներէն, բացակայ՝ հաւաքներէն, բացակայ՝ հանրային բոլո՛ր ձեռնարկներէն:

Ասոնք՝ մնաչուն բացակաները ո՛չ ճաշկերոյթ-պարահանդէս վայելած են, ո՛չ քաղաքական հաւաքներու սարսուռով երջանկացած են, ո՛չ մարզահանդէսներով ու տողանցքներով թարմացած են, ո՛չ դասախօսութիւններու լրջութիւնը քաղած են, ո՛չ գեղարուեստական ցուցահանդէսներէն ներշնչուած են:

Ասոնք՝ մնաչուն բացակաները:

Ասոնք թերեւս երբեք չեն զգացած, որ շարժո՛ւմ կայ իրենց շուրջ:

Ո՛չ թմբուկի ձայն լսած են, ո՛չ ցեղի կանչ:

Ասոնք՝ հանրային կեանքի դժբախտները:

\* \* \*

Օրինակները բազում են, փաստարկումները անհատնում են եւ՝ ամէնօրեայ:

Օրինակի համար, այդ օրերէն, այդ գլխագիր օրերէն Օր մը ծագեցաւ նաեւ ա՛յս Յուլիսին, Լոս Անճելըսի մէջ: Ու արդարեւ, ա՛յդ օր, օրը կրկնակ վեհոյթին զգեցաւ եւ դաշտը դարձաւ միաժամանակ մարզաւան, թատրոն ու պատարագի սեղան:

Վեհափառ Հայրապետը վեհափառօրէն բազմած էր հանդիսականներու առաջին շարքի կեդրոնը, ձախին՝ բարձրաստիճան եկեղեցական հայրեր՝ եկեղեցի արտաշնչող շքեղանքով:

Միութեան Կեդրոնական Վարչութիւնը ներկայ էր հոն, լրման կազմով:

Հին ու նոր Օրուան Նախագահները հոն էին ու հոն էր մա-



նաւանդ ցեղին սիրտը՝ երիտասարդութիւնը, հոն, դաշտին մէջ: Ու հոն էր, դաշտին շուրջ, հաւատաւոր ժողովուրդն հայոց...

Մեղուաջան աշխատանքի որպէս արդիւնք՝ ահա փողերախումբ, տողանցք, պաստառ, տարազաւոր տղաք ու աղջիկներ, զարդարուն կառքեր, նշանախօսքեր, երգչախումբ, մեններգ ու ճառ, ու ծափ, ո՛ր հուռա՛...

Այդ օր, ոգիի քայլերով ովկիանոսներ կտրած՝ նաւասարդեան խաղերը հաչրենի դաշտերէն եկած էին Լոս Անճելըս:

Ժողովուրդը ուխտաւորներու խումբ էր:

Դաշտը՝ ուխտավայր:

Ո՛ր էին, սակայն, բացակաները:

\* \* \*

Ու ուրիշ օր մը, Օրը օրերէն զատուեցաւ եւ պատմական դարձաւ Պէլրութի մէջ, երբ, Մայիսեան փառատօնին, դաշտի կեդրոնը դարձաւ Հայաստանի քարտէս ու պատգամ Ղարաբաղի:

Ուրիշ օր մը Սիսնիի մէջ, Փարիզի մէջ, Պուէնոս Այրէսի մէջ, Աթէնքի մէջ եւ Յորդանանի...

Ու միշտ՝ ո՛ր էին բացակաները:

Ո՛ր հեռատեսիլը, ո՛ր հաճոյքի վայրը աւելի երջանկութիւն տուաւ Կիրակի կէսօրները ճաշասեղանի վրայ սպառող հաշուն, քան դաշտերու վրայ, դաշտերո՛ւ չափ երանութիւն բաշխող հայոց համախումբ ներկայութիւնը՝ Հայ տղոց պայծառ ճառագայթումին ի տես:

Դժբա՛խտ, դժբա՛խտ բացականեր:

Ահաւասիկ. ու մինչ ամբողջ 70ամեակ մը, եօթանասուն ամեակնե՛ր, այս կամ այդ միութեան հանրային շարժումին ներկաներուն կենացը բաժակ կ'առաջարկէ Պատմութիւնը,

Հայոց մեծադղորդ նոյն Պատմութիւնը միւսներուն՝ հանրային եռուզեռէն բացականերուն համար պարզապէս «վայ» ու «ափսոս» կը մղկտայ...

# Ա Ր Յ ՈՒ Ն Ք Ը



Ողիմպիականները ծնունդ առին չաստուածներու մաշրաքաղաք Աթենքէն ու յաջորդաբար այցելեցին Փարիզ, Սէն Լուիզ, Լոնտոն, Սթոքհոլմ, Անսվերպէն, կրկին Փարիզ, ապա Ամսթերտամ, Լոս Անճելըս, Պերլին, վերադարձան Լոնտոն, անցան Հելսինքի, ապա Մելպուռն, Հոնոմ, Թոքիօ, Մեքսիքօ, Մոնթրէալ, Մոսկուա, նորէն Լոս Անճելըս ու հասան Սեուլ:

Ողիմպիականները ո՛ր ալ գացին, ընդունուեցան բացառիկ կազմակերպչաճծութեամբ, խանդավառութեամբ, շքեղանքով:

Իրաքանչիւր հիւրընկալ երկիր իրեն համար վարկի հարց նկատեց նախորդէն անելի լաւը ընելու նախաձեռնութիւնը: Ողիմպիականները երկրի հոշակը տարածելու առիթ նկատուեցան, նոյնիսկ՝ քաղաքական յաջողութիւններու միջոց: Պետական վարչամեքենանէ՛րը տէր դարձան կարգադրութիւններուն եւ կրկնակ ուշադրութեամբ ու բժախնդրութեամբ կազմակերպուեցան խրախճանքներ, արուեստի եւ թեքնոլոճիի ցուցադրութիւններ, գարմանահրաշ բանե՛ր...

Ամէն նոր տեղ՝ նո՛ր բան մը աչքի զարկաւ, ուշադրութիւն գրաւեց, խօսեցուց ինք իր մասին: Ամէն երկիր իր ուրոյն կնիքը դրաւ իր մօտ տեղի ունեցող ողիմպիականներուն վրայ ու իր տոհմիկ նկարագիրն ու ճաշակը դրսետորեց:

Բոլոր ողիմպիականներն ալ, իրենց կարգին, ամէն տեղ իրենց հիմնական առաջադրանքը պահեցի՛ն, նպատակը արժեցուցի՛ն.— մարզական ոգի, եղբայրութիւն, բարեկամութիւն՝ մարդկային բոլոր գոյներուն եւ աշխարհի բոլոր երկնակամարներուն միջեւ: Գէթ դաշտերուն վրայ, մինչեւ ողիմպիական խաղերու աւարտ...

Թէ ցարդ իրագործուած ողիմպիականներէն ո՛ր մէկը եղաւ լաւագոյնը, դժուար է ճշդել:

Սակայն ու տարօրինակօրէն՝ անվարան կարելի է յայտարարել՝ որ ամէն տեղ, բոլոր ելոյթներուն լաւագոյնը միշտ ալ մնաց այն՝ որ նախապատրաստուած չէր, յայտագրի վրայ չէր:

Արդարեւ, ամէն ամէն տեղ, ելոյթներուն ամէնէն բիւրեղը,

ամէնէն մաքուրը, ջինջը, յուզիչը միշտ ալ մնաց ինքը՝ արցունքը:

Այն արցունքը՝ որ ժայթքեցաւ աշխարհի՛ ախոյեան դարձած ախոյեաններո՛ւ աչքէն...

Ու արցունքը, որ զլացուեցաւ մե՛ր ախոյեաններուն:

Վերջին ութը ողիմպիականներուն Հայաստանին ոսկի մետալ բերին՝ Հրանդ Ծափնեան, Ալպեո Ազարեան, Վլատիմիր Ենգիպարեան, Եուրի Վարդանեան, Եդուարդ Ազարեան:

Սէուլի ողիմպիականներուն ոսկի բերին ոսկի նորերը. Լեոն Զուֆալագեան, Օգսէն Միրզոյեան:

Երբ անոնք՝ աշխարհի լեռներէն աշխարհի գագաթ բարձրացած մեր տղաքը պատուանդան բարձրացան, ո՛չ ազգային դրօշ ծածանեցաւ, ո՛չ ազգային քաչլերգ հնչեց: Ու երբ աշխարհ ծափեց՝ չգիտցաւ որ կը ծափէր Յարութիւն առնող ժողովուրդի մը զաւակներուն...

Մեր ախոյեանները գերերջանկութեան այդ պահերը չունեցան: Հպարտութեան արցունքի տեղ՝ զրկուածութեան արցունքն էր, որ կազմուեցաւ ողիմպիականի սիրահար բոլոր հայերու աչքին:

Ու անարդարութիւնը հոս կանգ չառաւ...

# ՆՈՐԷՆ ՍԷՈՒԼ ՈՒ ՀԱՒԱՏՔ



Կարծէք ճակատագրականօրէն դատապարտուած ենք անոր՝ որ աշխարհի բոլոր ազգերը իրաւունք ունենան լրիւ ըմբռոշխնելու իրենց անարատ յաղթանակը, սակայն մենք՝ ոչ:

**Քննեցէ՛ք Սեւուր:**

Հոս համայն մարդկութեան յոյսը եղող երիտասարդութեան ու երիտասարդականին պատկանող ողիմպիականներու սուրբ դաշտերուն վրայ անգամ, նորէ՛ն անսուրբ բան պատահեցաւ ու անարդարութիւնը կրկի՛ն կոխկոտեց ժողովուրդի անխառն ուրախութեան իրաւունքը: Մեր գինիին ջուր խառնուեցաւ:

**Քննեցէ՛ք Սեւուր:**

Աշխարհ երբեւիցէ գիտցա՛ւ որ մե՛նք ալ յաղթանակ տարինք: Աշխարհ գիտցա՛ւ, որ ջարդուած ժողովուրդի մը զաւակները շա՛տ ատելի մետալ ապահովեցին, քան շա՛տ մը հսկայ պետութիւններու տղաքը:

Երբ աշխարհի ընտրեալներուն մրցումը ճշդեց իր լաւագոյնը՝ ու այդ պատճառաւ, որպէս գերագոյն, գերագո՛յն վարձատրութիւն՝ հնչեց ախոյեանի՛ երկրին քայլերգը, ծածանեցաւ ախոյեանի՛ երկրին դրօշը, այդ նոյն երկրին պարզագոյն թէ համեստագոյն մահկանացուն անգամ, հպարտութեան շղարշին մէջ պարտուած ու գերազանցապէս ուժով՝ ոտքի կանգնեցաւ ու ճշաց.

— Ասիկա ի՛մ երկրիս դրօշն է, ասիկա՛ ի՛մ երկրիս քայլերգըն է. հիացէ՛ք, աշխարհի՛ մարդիկ...

Այսպէս ու բնականօրէն, ամէն անգամ որ հնչեց երկրին անունը, սարսուռաց երկրացին, ու երջանկութենէն՝ լացաւ:

**Մենք այդ սարսուռէն բաժին չունեցանք:**

Մեր յաղթական նոր ու Գեղեցիկ Տորքերուն հետ նաեւ մենք, հանդիսատեսներս, հպարտութեան ԱՅՌ արցունքը լճացած չզգացինք մեր աչքերուն:

Աշխարհի ողիմպիականներուն ԱՐՄԵՆԻԱ սուրբ անունը հնչեց ո՛չ մէկ ժամանակ հակառակ անոր՝ որ շատ առիթով ՀԱՅԱՍՏԱՆ իր հարազատ զաւակներու բազուկով աշխարհի մրցադաշտը իջաւ ու նուաճեց աշխարհի ախոյեանութեան պատուանդանը՝ քանի՛ մը անգամ...

Փաստօրէն, Սեւուրի ողիմպիականին մասնակցեցան 160 երկիրներ, որոնց միայն 52ը մետալ ապահովեց: Եթէ Հայաստան

իր անունով իջած ըլլար մրցադաշտ՝ 160 երկիրներու մէջ պիտի հանդիսանար 2Յրդ...

Զգտնուեցաւ երկիր մը, որուն բնակչութեան թիւը ՆՈՒԱԶ ըլլար Հայաստանի բնակչութեան թիւէն՝ ու յաղթած ըլլար Հայաստանին:

Թուրքիան մէկ ոսկի մետալ շահեցաւ, այդ ալ Պուկարիալէն գնած կամ գողցած Սիւլէյման Օղլիով ու լոկ՝ որք արծաթ մետալ մը: Ժիշդ մեր կէսին չափ բան: Սակայն այնքա՛ն մելան հոսեցաւ հիւանդացնո՛ղ այդ երկրին հաշուոյն...

Հայաստանէն նուազ մետալ ապահովեց նաեւ Պրազիլիան, Սպանիան, Փորթուկալը, Արժանթինը, Մեքսիքոն:

Բացի 22 երկիրներէ (քսաներկուքն ալ՝ հազա՛ր անգամ Հայաստանէն աւելի տարածուն ու բազմամարդ) աշխարհ ետ մընաց Հայաստանէն:

Սակայն ո՛չ Արմենականը հնչեց, ո՛չ Արմենականը ծածանեցաւ: Միայն «ԵԱՆ»ը յիշեցուց, որ ասկէ դափնեզարդ ճակատներով քալեր են Արարատի կորիւնները:

Տակաւին: Հակառակ մեր յաղթութեան, մենք չունեցանք մեր յաղթանակը երգ ու պարով, գինիի խնճոյքներով պանծացնելու բախտատրութիւնը:

Ինչո՞ւ այլ ազգեր կարելիութիւնը պիտի ունենան Ռիօ Տէ Ժանէշրոյական խնճոյքներու, եօթը գիշեր եօթը ցերեկով, իսկ մենք պիտի շարունակենք դատապարտուած մնալ մեր արդար յաղթանակները չվաչելելու ճակատագրին:

Ինչո՞ւ մեր ախոյեանները իրենց տուն դարձի ճամբան ալ շեղելով, համահայկական հպարտանքը պիտի չտարածեն ամբողջ Սփիւրքին վրայ, անցնելով Ամերիկաներէն, ուր համախումբ հայկա՛յ, ապա, կրկնակ շքեղանքով իջնեն Երեւանի Զուարթնոց օդակայանը ու ընդունուին ծովածաւալ հաշորդիներու հոռուներով, բոլորն ալ գերերջանիկ ու գինով:

Ասիկա՛ մեր հասարակական զրկուածութեան պատմութիւնն է:

Պարզ է, որ մեր ախոյեաններուն հետ մենք ալ երջանկութեան արցունքի կարօտով կը մղկտանք... շատ ճակատներու վրայ:

Բայց, ինչպէս միշտ, անձրեւէն ետք կը փայլի արփին:

Մինչ այդ ու առ այդ կը բաւէ որ մեր ախոյեանները չքնանան իրենց դափնիներուն վրայ... ու պատրաստուի՛ն, պատրաստուի՛ն:



# ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ



Մեր անկրկնելի միության եօթանասունամեակի առաջին բաժակը վերցուցինք կենացը մեր մայրերուն, մեր կիներուն ու քոչրերուն.

Անոնք էին, որ մեզ մղեցին Սրբազան Խենդութեան:

Եօթանասունամեակի առթիւ մենք խօսեցանք մեր «զօրավար» գայլիկներու մասին.

Անոնք վերածնած Դաւիթներ էին Սասմայ:

Ու երգեցինք փառքը հայ զինուորին.

Ան մեր անցեալի ուժն էր եւ Ան կոռուան է մեր երջանիկ վաղուան:

Ու տակաւին բաժակ բարձրացուցինք մեր Խոնարհներուն կենացը.

Անոնք էին արտը՝ ուր ծառ ու ծաղիկ, որթատունկ ու ցորենի հասկ՝ բերք դարձան:

Զմոռցանք անգամ բացակաները, ի՛նչ փոյթ, անոնց ներկաչութեա՛ն միայն բաժակ բարձրացնելու խոստումով:

Մեր միության եօթանասունամեայ փառատօնը հազիւ սկսած, ահա՛ տարին, որ կը խառնուի դարուն: Բաժակի իրաւունքէն դուրս մնացած են այնքան դէմքեր ու դէպքեր՝ որոնք մեզ մերը ըրին, գործընթացք մը Պատմութեան վերածեցին. այնքան՝ որ առանց անոնց՝ այդ դէմքերուն ու դէպքերուն՝ տօն ու տօնակատարութիւն կը թօին կիսաւարտ. ու ոչինչ կրնայ փառատօն մկրտողի:

Այդ իսկ պատճառաւ՝ այս ամենայն Սրբոց է:

\* \* \*

Ու ամենայն սրբոց է մանաւանդ անոր համար, որ մեր քրրտիներով ու հաւատքով լեցուած բաժակը արդէն կը յորդի Հայրենիքի արեամբ: Ու «մարմին»ը որուն համար «առէք կերէք» կը հրահանգուի՝ նոյնիքն Արարատեան Աշխարհն է, հազար անգամ բզկտուած:

Տեսակ մը Խաչէն տակաւին վար չառնուած Յիսուս, փշապսա՛կ ճակատով:

Ե՛ւ ժողովուրդն Հայոց, ե՛ւ Հայրենիքն Արմենական:

Այս ամենայն սրբոց տօնակատարութիւն ալ չէ, այլ՝ սրբութիւն սրբոց պատարա՛գ:

Հայրենիքէն դուրս բոլոր տօնակատարութիւնները Կաղան-  
դի գիշեր եղան մեզի համար կեղծ, կեղծ, կեղծ Կաղանդ պապուկով  
ու կեղծ՝ ամէն ինչով:

Ո՞վ կրնայ երեւակայել ու հասկնալ՝ որ հայրենի միութիւն  
մը հայրենիքէն դուրս ծնի, հայրենիքէն դուրս ապրի...

Մերը աչդպէ՛ս եղաւ:

Մենք տօնակատարութիւններ սարքեցինք դիմադրակա-  
նութիւն ու տոկունութիւն ամբարելու համար ու իրականին մէջ մերը  
տօն ու տօնակատարութիւն չեղաւ արդէն, այլ վերաքաղ՝ տարուած  
սրբազան գործին, արձանագրուած հաւատարմութեան, մարգար-  
տացած քրտինքին:

Ու մանաւանդ՝ գալիք եօթանասունամեակներու պատրաս-  
տութեան համար երդումի արարողութիւններ եղան մեր տօնակա-  
տարութիւնները ի սփիռն աշխարհի:

Ամենայն դէպս, 1988 տարին սկսաւ զանգերու ուրախ դօ-  
ղանջով, սակայն նոյն տարին փակուեցաւ զանգերու տխրահունչ  
հծծիւնով:

Ոչ մէկ սուրբ, կամ բոլոր սուրբերը համախումբ՝ չկրցան օգ-  
նել մեզի, այսինքն Հայաստանին:

Երկրաշա՛րժ:

Կէս մնաց շատ բան, յետաձգուեցաւ շատ բան, ջնջուեցաւ  
ամէ՛ն բան:

Ակնթարթի մը համար խորտակուեցաւ մեր եռանդն ան-  
գամ:

Հիմա, ահա այս տարուան, կամ եօթանասունամեակի, կամ  
հայոց տասնհազարամեայ պատմութեան վերջին բաժակը՝ որ կը  
հրամցուի ամենայն սրբոց:

Ու ահա մեր սուրբերուն հետ աշխարհի բոլոր սուրբերուն  
ու անգամ անսուրբերուն բողոքը.

— Տէ՛ր, դա՛նն է Բաժակը, դա՛նն է ու անգո՛ւրթ...

Սակայն, ամենայն սրբոց համար բարձրացած բաժակը  
մենք կը պարպենք ահաւասիկ, ցմրո՛ւր, ինչպէս Քրիստոս՝ Յարու-  
թեան ինքնավստահութեամբ:

Այս՝ վերջին էջն է արդէն եօթանասունամեայ տօնակատա-  
րութեան. Հայոց Պատմութեան նմանակ, տեսակ մը արեամբ  
մկրտուած՝ ի՛նք Ամենայն Սրբոց...

# ՄԻ՛ ԼԱՐ, ՀԱՅԱՍՏԱ՛Ն



Մեր ցարը որքան ալ ըլլայ մահուան  
չափ ճնշիչ ու ծանրութեամբ կապարի,

Որքան ալ բնութեան այս սպան-  
դին, աւերին ու աւերակին դէմ յանդիման  
չկարենանք մենք տոկալ ու հաչրենի ցափն  
փարած՝ փղձկինք ի խորոց սրտի եւ նմա-  
նինք Մայր Հայաստանին, որ նստէր կու  
լայ,

Մանաւանդ՝ երբ քրիստոսացած  
մեր երկիրը սրտապատառ ու կողկողագին  
տակափն կը մղկտայ ու կը պաղատի՛ հայու Աստծուն.

— Տէ՛ր, դա՛նն է բաժակը,

Այսուհանդերձ, որպէս գերագոյն, գերագոյն մխիթարանք  
պիտի ընդունինք, որ ո՛չ մէկ անգամ հողին հետ նոչնացած մար-  
դիկ՝ ա՛յսքան իրենց հողին ծառայեցին:

Պիտի ընդունինք, որ ոչ մէկ ժամանակ թելատներ ու կա-  
ղեր, տնանկներ ու վիրաւորներ, մեռելներ՝ իրենց հաչրենիքին  
շուրջ՝ ա՛յս տարողութեամբ համակրանք ու վշտակցութիւն ապա-  
հովեցին:

Մեր անասհման ու անբացատրելի ցափն մէջ անգամ պիտի  
ընդունինք, որ հաչրենի համատարած այս տառապանքը յումպէտս  
չանցաւ:

Փաստօրէն, երկրաշարժէն ետք հաչրենի հողը մարդացաւ  
քիչ մը աւելի, շնչաւորութեամբ քիչ մը աւելի ու սրբացաւ՝ շա՛տ աւելի:

Փաստօրէն, 25.000 հաչեր սահած հողի տեղ՝ տեղ գրաւե-  
ցին, հող դարձան ու Հայաստանը անգամ մը եւս Հայաստան ըրին:

25.000 հաչեր պարգապէս եւ գործնապէս դարձան՝

Նահատա՛կ,

Հերո՛ս,

Սո՛ւրբ:

Մինչ Յիսուսի Խաչելութենէն պէտք եղաւ որ երեք օր անց-  
նի, որպէսզի հրաշագործուի Յարութիւնը,

Այս սրբարանին մէջ, վերանորոգ ուխտավայր, Խաչելութեան յաջորդեց Յարութիւնը՝ ակնթարթ մը ետք:

Մահը պարզապէս կեանք ծնաւ:

\* \*

Ու փաստօրէն, երբ երկրաշարժ եղաւ յերկիրն Արարատեան, այս անգամ ո՛չ միայն քարերը հեկեկացին, բլուրները մըղկըտացին, ջուրը հուն փոխեց, հողը խորշոմ կապեց, այլ, հրա՛շք, մարդի՛կ անգամ լացին:

Ասիկա տասնազարամեայ մեր պատմութեան ընթացքին թերեւս առաջին համամարդկային սրտակցութիւնը եղաւ մեզի հետ: Աշխարհ իր արցունքը խառնեց մեր հեկեկանքին ու աղօթքի մը պէս հաղորդական՝ մեզի հետ երգեց.

— Քեզի համար, Հայաստան:

Երգեց ու լացաւ, աշխարհ:

Ու մենք այնքա՛ն կարիքը ունէինք աշխարհի սիրոյն...

Մարդոց սրտակցութեան դարաւոր երաշտէն ետք, աշխարհի մեզի՛ համար թափած արցունքը երկինքէն հեղեղի պէս իջնող մանանայ թուեցաւ:

Ու մխիթարանքը մեզի ամպերու ետեւէն ծիծաղող ծիծառնի պէս երեցաւ, անգամ՝ այսքան ատերի ու ատերակի դիմաց ու դիմաց՝ բնութեան անողորմ սպանդին:

Իրօ՛ք:

Երբ մեր երկիրը շարժեցաւ, Հայաստան դարձաւ Միացեալ Ազգերու Սիրոյ Կեդրոն, ուր ամէն գոյնի եւ ամէն կողմի մարդիկ, ձեռք ձեռքի, մահուան ճիրաններէն մարդ փրկեցին, վերք փաթթեցին ու մեռել թաղեցին...

Գէթ վայրկեանի մը համար, մեր տառապանքին դէմ յանդիման, աշխարհ սիրեց նաե՛ւ ինքզի՛նք:

Աշխարհ եղբայրացաւ աշխարհին հետ:

Իրապէ՛ս յումպլետս չանցաւ հաշոց խաչելութիւնը՝ թէ՛ Հայաստանին համար, թէ՛ աշխարհի՛ն:

\* \*

Հիմա մենք ենք, Հայաստա՛ն:

Մենք՝ որդիներդ աշխարհացրի թէ որդիներդ կուրծքիդ փարած, մերթ պրկուած տառապանքով, մերթ ընդվզումով կատա-

դի, ահաասիկ իր մօր առջեւ ծունկի եկած սիրող որդու ամբողջական կապուածութեամբ, կը պաղատինք:

Մի՛ լար, մի՛ լար, Հայաստան:

Մենք, որդիներդ հողմահալած, քեզի այցի՛ կու գանք ահա, ու փլատակներէդ անգամ մը եւս քեզ կը տանինք յաղթանակի այգիներու բարձունքներուն:

Տապալած իւրաքանչիւր ծառի փոխարէն, ամբողջ անտառ մը կը տնկենք, ու իւրաքանչիւր փլած շէնքի փոխարէն, հազարատր պալատանման բերդ կը շինենք:

Կ'ընենք այնպէս՝ որ ո՛չ մէկ շարժ հիմքիդ հասնի:

Միայն, մի՛ լար, մի՛ մղկտար:

Մենք տխրութիւն շատ ենք տեսեր, մենք դարերով շատ ենք լացեր, մենք յոգներ ենք ախ ու վախէ, ալ զգուեր ենք փախուստ տալէ:

Ալ չենք ուզեր որ կրկնուի

— Մայր Հայաստան նստեր կու լայ...

Հիմա մենք ենք:

Մենք, որդիներդ աշխարհացրիւ, թէ՛ որդիներդ կուրծքիդ փարած, նո՛ր հաշտուած եղբայրներ, բռունցք կազմած, ու ուս ուսի, կ'ամոքենք վերքերդ խոր, կը կառուցենք շէնքերդ տուֆ, կը ժայթքեցնենք աղբիւրներ նոր ու կը բանանք ուղիներ լայն ու բազմաճիղ:

Ու, Հայաստա՛ն, հին դրօշով վերք կը փաթթենք, Դեկտեմբերին կ'երգենք Մայիս, Ղարաբաղը կը բերենք տուն, որ մոռնասք ու մեծ ցաւդ դուն:

Միայն, մի՛ լար, մի՛ մղկտար,

Յա՛ւոյ տանենք,

Յախի՛ղ դուրպան,

Ջա՛ն Հայաստան:



# ԿԱՂԱՆԴ Է ԵՒ ՀՈՐՆ



**Կաղանդ է, նորէ՛ն:**

Նորէ՛ն լոյսերը լալով կը ժպտին, նորէ՛ն երգեր կը փշրուին պողոտաներուն վրայ՝ թանկարժէք քրիսթալներու վնկոցով ու ղօղանջները, ղօղանջները, յայտնի չէ, կու լա՛ն, կը խնդա՛ն, կ'աւետեն ծնո՛ւնդ թէ կը գուժեն՝ մա՛հ:

Ծիւնկը պէլզ, ճիւնկը պէլզ...

**Կաղանդ է, նորէ՛ն:**

Յոյս ու յուսահատութիւն, տխրութիւն ու ուրախութիւն թե՛ թե՛ի մտած, աղմկարար զոյգերու պէս կը վազեն ճառագայթներու ետեւէն:

Ամէն ինչ ինքնամոռացումի գինովութիւն է: Ինքնախաբէութեան քաղցրութիւն: Հակառակ անոր որ նուէրներու տարափ է, Կաղանդ Պապուկներու զուարթացնող անցք է, տխրութիւնը կը շարունակէ ծորիլ ամէն անկիւնէ:

Տխուր ու տխրեցնող են Կաղանդի պատմութիւններն անգամ:

Գիրքերը կը խօսին բարութեան՝ չարութեա՛մբ տրուած պատասխաններու մասին, անմեղութիւն յօշոտող՝ չորութիւններու մասին ու երբեմն երբեմն կը խօսին նաեւ զոհողութեան՝ երախտագիտութեա՛մբ տրուած աղուորութիւններու մասին, որով մարդ կրկնապէս կը յուզուի...

Հեռատեսիլները հուրի-բերիներ կը ցուցադրեն ու այնտեղ եւս Կաղանդի պատմութիւնները կ'աւարտին տխրեցնող բարութեամբ:

Տարօրինա՛կ. Կաղանդ Պապուկները կը սիրուին, հակառակ անոր որ ծե՛ր են, ի՛նչ փոյթ, թէկու՛զ՝ կարմրադէ՛մ:

Ամէն ինչ անօրինակ է, տարօրինա՛կ է Կաղանդին:

Արդէն տարօրինակ եղած է աշխարհի բանը աշխարհի սկիզբէն ի վեր, ինչպէս մեր աշխարհը միշտ Կաղանդ եղած է, մեր աշխարհը ըլլալէն ի վեր:

**Կաղանդ:**

Այսինքն՝ լաց ու ժպիտ, ծնունդ ու մահ, յաղթանակ ու պարտութիւն, ձախողութիւն ու յաջողութիւն, շինարարութիւն ու քանդում, պատերազմ ու խաղաղութիւն, կայունութիւն ու... երկրաշարժ:

Կաղանդ:

Այսինքն ցտեսութեան երգ, առաջին ու վերջին համբոյր մեռնող ու ծնող տարիներուն, փոխանակուող քաղցր մաղթանքներ, առանձնութիւն, յաճախանք հեռաւոր սիրելիներու, կարօտ բացականերու, չքաւորութիւն բախտի, բնութեան, բնաւորութեան:

Կաղանդ:

Ծայրայեղութիւնները երկուորեակներու պէս: Երկուքը միասին: Հակահիշերը այնքան ներդաշնակ: Ամէն ինչ այնպէս, ինչպէս անձրեւ ու ծիրանի գօտի:

Ժպտացող արցունք:

Կաղանդ:

Հիմա, հարցականը:

Հիմա, որ Կաղանդ է աշխարհով մէկ, Կաղանդ է եւ «Հո՞ն»: «Հոն»՝ ուր Կաղանդը Կաղանդին չէ եկած... երբե՛ք:

\*  
\* \*

«Հոն»ը, հասկնալի է անկասկած, աշխարհի մէջի մե՛ր աշխարհն է, որ կարծէք մաս չի կազմեր աշխարհին:

Արդարեւ ու փաստօրէն ա՛յս Կաղանդն ալ աշխարհին համար բան մը եղաւ, մեր աշխարհին համար եղաւ ուրի՛շ բան:

Ինչպէս՝ մի՛շտ:

Մեր Կաղա՞նդը այս Կաղանդին:

Ահաւասի՛կ:

Արարատի բարձրութեամբ Կաղանդի ծառ է շտկուեր, որուն վրայ Լուսաւորչի Կանթեղը լոյս կը մաղէ եւ ուր հրեշտակներ կ'ելեւջեն:

Շուրջ բոլորը՝ մեռելներ:

Ալելուիա՛, ալելուիա՛...

Մեր Կաղա՞նդը ա՛յս Կաղանդին:

Երեւակայեցէ՛ք մեռելներ, որոնք Կաղանդի գիշերով այցի կու գան, կը նստին սեղան: Փոքրիկները կարօտով կը համբուրեն զանոնք, միանգամընդմիշտ մոռնալով բոխերիկները՝ որոնցմէ կրնար չիր ու չամիչ, կօշիկ ու գուլպայ տեղալ:

Զէ՛ մեռելները մէկական արեւ են, անսահման սէր են, ու գորգուրանք, ու ամէնօրեայ Կաղանդ Պապա:

**Փոքրիկներուն համար ի՞նչ են ծնողները հապա:**

Երեակաչեցէ՛ք այս անգամ մեծերը. հայրերը օրինակ՝ որոնք Կաղանդին իրենց զաւակները կը տեսնեն դրան առանքէն ու կը վազեն զանոնք գրկելու:

**Կա՛յ զաւկէն աւելի քաղցր Կաղանդ:**

Ինչպէ՛ս խօսիլ մեռած կամ իրենց մեռած զաւակը Կաղանդ գիշերով գրկած մայրերու մասին:

**Պա՛րզ է: Հոն մեռելներո՛ւ Կաղանդ է:**

Այս նուիրական գիշերով հոն ամէնէն շատ մեռելներն են որ պիտի յիշուին ու նշուին, ամէնէն շատ մեռելներն են որ պիտի տեսնուին ու Կաղանդը մեռելոց պիտի ըլլայ:

**Ու մեռելները իրենք ողջերուն աչքի լոյսի պիտի երթան:**

**Տարելից ու տարեդարձ:**

Կաղանդի գիշերով տարելից պիտի ըլլայ ու տարեդարձի պատրաստութիւն: Տարելից անոնց հոգուն՝ որոնք նոյնացան հայրենի հողին հետ ու տարեդարձի պատրաստութիւն անոնց համար՝ որոնք հայրենի պատմութիւնը վերակենդանացնելու համար հրապարակ իջան ու բռունցքներով պատռեցին երկնքի կուրծքը:

Տարելից մեռելներուն ու տարեդարձի պատրաստութիւն՝ ծածանած դրօշներուն, բարձրացած բռունցքներուն ու բարձրանալիք բազուկներուն համար:

«Հոն» այս Կաղանդը Սումկաչիթ պիտի կոչուի, պիտի կոչուի Սպիտակ, պիտի մկրտուի՝ Արցախ: Ու դրօ՛շ Եռագոյն:

Ամէն մարդ պիտի զգայ որ հաշոց լեռներով սուրբեր, նահատակներ ու հսկաներ են որ կ'անցնին:

Այս Կաղանդին «հոն» Կաղանդ Պապուկը ԵՐԴՈՒՄ պիտի կոչուի ու Սարդարապատի զանգերուն դօղանջները Երկինք պիտի հասնին:

Այս Կաղանդին «հոն» ալ Կաղանդ պիտի ըլլայ՝ իրական Կաղանդներու կարօտով:

**Կաղանդ պիտի ըլլա՛յ, եւ՝ ի՛նչ Կաղանդ:**

**Ալելուիա, ալելուիա...**

# Յ Ա Ր Գ Ա Ն Ք Ը



Վեճը նոր չէ, ընդվզումը՝ նմանապես:

Տարեցները մոռցեր են իրենց երիտասարդ տարիքի երիտասարդական ըմբռստությունները ու երիտասարդները մոռցեր են՝ որ տակալին երէկ երեխայ էին, յետոյ պատանի...

Տարեցները գիտեն՝ որ չեն կրնար մանկանալ, երիտասարդները չեն հաւատար՝ որ պիտի ծերանան:

Տարեցները կառչեր են իրենց փորձառութեան հետեւանքով կուտակուած «իմաստութեան», իսկ երիտասարդները ամէնէն աւելի կ'ատեն ա՛յդ փորձառութիւնը, ա՛յդ իմաստութիւնը ու կ'ուզեն ապահովել իրենց սեփականը, ի հարկին՝ «իյնալ-ելլելով»:

Մուրալու տպաւորութիւն կը թողո՛ւ երբ երէց մը կ'ըսէ՝ «յարգէ՛ մեծոյ»: Կամ կը թարգմանի՝ որ տարեցները բռնատէրեր են...

Միւս կողմէ՝ ազատութեան չարաշահում կը նկատուի երբ երիտասարդ մը բացագանչէ. «կ'ուզեմ կը յարգեմ, կ'ուզեմ չեմ յարգեր», առանց անդրադառնալու, որ ազատութի՛ւնն ալ իր սահմանները ունի եւ ազատութի՛ւնն ալ... շատ ազատ չէ:

Արդարեւ կը թուի, որ ո՛րքան ազատութիւնը վերելք արձանագրէ, այնքա՛ն վայրէջք կ'արձանագրէ... յարգանքը: Կարծէք մէկը միւսին մրցակիցը կամ հակառակորդը ըլլար:

Տակաւ յարգանքի արտայայտութիւնները ձեւ կը փոխեն, ինչ որ հասկնալի է, սակայն յարգանքի ըստ էութեան հասկացողութի՛ւնն ալ երբեմն կասկածի տակ կ'առնուի, ինչ որ ըմբռնելի չէ:

Վեճը, որ կայ մարդուն ծնունդէն ի վեր, տակալին կը շարունակուի:

Հարցը այն է, որ կողմերը չեն ըմբռնած մէկ բան. գուցէ կարելի է վիճիլ այն մասին որ պզտի՞կը միայն մեծը պիտի յարգէ, թէ մե՛ծն ալ պարտի պզտիկը յարգել: Գուցէ պէտք է վերաբժեւորել

յարգանքի արտայայտութեան եղանակները, ձեւերը, տեղը:

Սակայն տարօրինակօրէն հարցը այն է, որ շատ այլ նիւթերու պէս, հո՛ւս ալ վիճելի կը մնայ՝ անվիճելիս...

Այս պարագային պարզապէս նոյն ինքը՝ յարգանքը:

\*  
\* \*

Յարգանքը վիճակ մըն է, զգացում մըն է, հասկացողութիւն մըն է որ կայ իր իրաւութեամբ, անհրաժեշտութեամբ եւ կիրարկումով:

Յարգանքը աստուածային պատգամ մըն է:

Յարգել կը նշանակէ մեծարել, պատուել, արժեւորել, հետեւաբար՝ ուրախացնել:

Ամէն մարդ, ի՛նչ սեռի, ցեղի եւ գոյնի ալ պատկանի, արժանի է յարգանքի նախ անոր համար՝ որ մարդ է: Նաեւ ա՛յս պատճառաւ եզրակացուած է որ դիմացիներ յարգել՝ ինքզի՛նք յարգել կը նշանակէ:

Յարգանքին մէջ կայ կենցաղագիտութիւն, վարուելակերպ, քաղաքավար մարդու կեցուածք:

Յարգել ստորնանալ չի նշանակեր: Յարգել ստորադաս ըլլալ չի նշանակեր: Յարգել՝ իր անհատականութենէն բան կորսնցընել չի նշանակեր:

Յարգողը աւելի՛ կը շահի, քան յարգուողը:

Յարգանքի ակնկալութիւնը, իր կարգին, պատուընելու փառասիրութիւնը չէ:

Յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի պէս միութեանց պարագային՝ յարգանքը դաստիարակչական նպատակ իսկ է եւ կառուցային հասկացողութիւն:

Հ.Մ.Ը.Մ. բարձրացած է փոխադարձ յարգանքի վրայ եւ անով է որ փառաբանուած է եւ ինքզի՛նք արժեւորած:

Ինչպէ՞ս կարելի է բարձրանալ-բարձրացնել՝ առանց յարգանքի:



Հ.Մ.Ը.Մ.ին համար յարգանքը կանոնագիր է, փոխյարաբերութեան մշակոյթ է, կարգապահութիւն է եւ օրէնքի ճանաչում:

Յարգանքը Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչութեան հիմքն է եւ այդ պատճառաւ իսկ պէտք է անասատողներուն յիշեցուի յարգելու պարտաւորութիւնը, յարգանքի անվերապահ կիրարկումը:

Փառքի մուրացկանութիւն չէ յարգանքի պահանջքը: Ա՛յդ եւս գործ է, առաքելութիւն՝ որ կրնայ սիրտ կոտրել, թիրիմացութիւն ստեղծել, բայց առանց որուն, հեղգութիւնը կրնայ իջնել շարքերուն, ու ծնունդ տալ բարոյալքութեան:

Ի՞նչ աւելի տպաւորիչ պատկեր քան՝ իր աստիճանաւորին առջեւ բարեւի կեցող գալլիկը, ու անոր բարեւին լրջութեամբ բարեւ փոխադարձող պատասխանատուն:

Հ.Մ.Ը.Մ. մանաւանդ ա՛յս է:

Յարգա՛նք:

\*  
\* \*

Յարգանքը, մեր պարագային, նաեւ ազգապահպանման միջոցներէն մէկն է եւ կրնայ այդպիսին ալ մնալ, մեզ զատորոշելով մեր շրջապատէն:

Վա՛յ այն տան, որ չէ բարձրացած յարգանքի վրայ: Վա՛յ այն տան՝ որուն անդամները՝ հաշր, մաշր ու զաւակ, փոխադարձ յարգանքով զիրար չեն պարուրած:

Ազգի մը նկարագիրը կը ցոլայ նաեւ ա՛յս ճամբով:

Մեծ է ու մեծ կրնայ մնալ միայն այն ազգը, որ յարգանք կը տածէ զինք մեծ պահողներուն հանդէպ:

Յարգանք՝ տարեցներուն հանդէպ, յարգանք՝ երախտաշատ մարդոց հանդէպ, յարգանք՝ մտաւորականներուն, հերոսներուն, ազգային բարերարներուն եւ ազգի պատասխանատուներուն հանդէպ:

Յարգանք պատմութեան հանդէպ ու յարգանք բոլոր անոնց հանդէպ՝ որոնք աշխատած են կամ կ'աշխատին ի սէր հաշրենեաց:

Բարեբախտաբար յարգանքը մեռելներուն եւ նահատակ-

ներուն հանդէպ տակաւին ազգային մեր նկարագրին մաս կը կազմէ եւ այդ մէկը՝ չէ թօշնած...:

Փաստօրէն՝ Մեռելոցին կ'աչցելենք մեր մեռելներուն, Քառասունքներուն ու Տարելիցներուն կը յիշենք զանոնք, անոնց յիշատակին ծունկ մը աղօթք ու պտղունց մը խոնկ կը ծխենք ու ազգային մեր տօնակատարութիւններուն կը փակենք վաճառատուն ու դպրոց, ներկայ կ'ըլլանք սգատօներուն, փառատօներուն:

Կարելի է ըսել որ ազգովին մի'շտ ալ յարգած ենք մեր մեռելները, երբեմն շատ աւելի՝ քան ողջերը...

Յարգանքը ապրեցուցած է մեզ ու յարգանքը մեզ կապած է պատմութեան, անցեալին:

Անհրաժեշտ է այդ յարգանքէն բաժին հանել նաեւ ողջերուն:

Անհրաժեշտ է որ տարիքները իրենց յարգանքի իրաւունքը ստանան, աստիճանները, պաշտօնները հեղինակութիւն մնան, կարգ ու սարքերը արմատանան՝ որպէսզի անհատը երջանկանայ եւ ազգը կրկնապէս ինքզինք ուժեղ ու ամուր զգայ:


Յարգանք՝ մեռելներուն եւ ողջերուն հանդէպ, միաժամանակ:

Թէ՛ անհատական կեանքի մէջ, թէ՛ հաւաքական կեանքի մէջ:

Նահատակներու եւ նահատակութեան պատրաստ սերունդներուն առջեւ, յարգանքի հաւաքական կեցուածքը ազգային փրկութեան նախաքայլը պիտի ըլլայ:

Որովհետեւ յարգանքը միայն անուշ խօսք չէ, այլ մանաւանդ՝ գործակցութեան տրամադրութիւն:

# Ք Ա Յ Լ Ե՛ Ր Փ



Այս՝ Ղարաբաղ պահանջելու քաջությունն էր դատուելո՛ւ, բանտարկուելո՛ւ, արիւնելո՛ւ գնով, այս՝ հայրենի ժողովուրդին հեղեղային ու տարերային ցոյցն էր ընդդէմ բռնութեան եւ անարդարութեան, միշտ՝ արիւնելո՛ւ գնով, այս՝ հայոց միահամուռ արհամարհանքն էր Երեւան մտած կարմիր հրասալներուն դէմ յանդիման եւ վերջապէս այս՝ Հայաստանի հանրապետութեան ճանաչումն էր պայծառ եւ եռագոյն դրօշի յաղթական վերադարձն էր դէ-

պի հայոց կապոյտ երկնակամար:

Ամէն ինչ տեղի ունեցաւ մէկ անգամէն, ամէնքը մէկ, այնպէս արա՛գ, որ ոմանք ցարդ կը մնան՝ նման «անկարելի» տեսիլքներու ցնցումին տակ:

Ինչպէս հուն փոխող գետ՝ մտայնութիւններ նոր ուղղութիւն ստացան, դատումներ հիմնովին ու գնահատանքներ՝ գլխիվա՛յր շրջեցան:

**Խելագարուա՛ծ էին ամբոխները սրբազան:**

Ամբոխները խելագարուած՝ նոր խոյանքներու էին բացւած, կամար էին նետած դէպի մօտիկ ու հեռաւոր անցեալ, բարձրացուցած էին ինչ որ պահած զինանշան ու ամբոխները խելագարուած, ուժգնութեամբ ժայթքող կարմիր լաւաներու, կը պատռէին երկնի կողը՝ բռունցքներով առնական:

**Սակայն,**

Նոյն հողին, նոյն դրօշին, նոյն բռունցքին ու նոյն հոգուն նոյն ե՛րգն էր պէտք, ու ամբոխները խելագարուած՝ երգ չունէին:

Քայլերգը հին, համակ կեղծիք, ինչ որ կաղկանձ պետական, շատո՛նց պարպուեր էր իր բառերէն, որոնք, ամօթահար, պահուեր էին բռնաւորի մահուան հետ, խորն անդունդին գեհեճական:

Ամբոխները խելագարուած կը նախընտրէին երգ չունենալ, քան թէ երգել՝ ինչ որ վէ՛րք էր:

Ամբոխները երդուեր են արդէն մնալ այսպէ՛ս, խելագարուած, մինչեւ... քայլե՛րգ ունենան:

Հիմա, ա՛յդ է. որ կատարեալ ըլլայ բանը, պէտք է նախկին,

արդէն կիսով մեռած հիմնը ընդմիշտ թաղել ու քայլերգով նոր ու հնչել՝ ամբոխները խելագարուած առաջնորդել արդարութեան, ազատութեան բարձունքներուն՝ նո՛ր ու ահե՛ղ:

Հիմա, ա՛յդ է. պէտք է անոնց, ամբոխներուն խելագարուած տալ նոր քայլերգ, որ նույնանա՛ն, արմատանա՛ն, ու նո՛ր թափով, նո՛ր կշռոյթով, ամբոխները իմաստնացած՝ քալեն յառա՛ջ...

.....

Ու բառերը նոր քայլերգին պէտք է քաղել եղեմակա՛ն պարտեզներէն:

Ու ձայնանիշերը նոր քայլերգին պէտք է ընտրել երկինքներէ՛ն:

Ու վերջապէս պէտք է արեան թաթխել սուրը՝ վառելու համար նոր քայլերգին ներքին հուրը:

Նոր քայլերգը պէտք է բերէ գիտ աղերսող վանականին պաղատանքը, Խոր Վիրապին մէջ լոյս երկնող բանտարկեալին հաւատամքը, ժայռը խաչքա՛ր ընող զարկին վսեմ փայլքը, աստղերուն հետ սիրաբանող, ռատիօ ալիք չափող կամ քարերէն մետաքս հանող նոր սուրբերուն հպարտանքը:

Նոր քայլերգը պէտք է բերէ անլռելի զանգակներուն ահագանգը, ճակատի վրայ ճակտէ՛ն խփող ջան ֆետաչու Դալթի զարկը, յեղափոխող մեր երգերու մարտի կանչը, ողջ աշխարհին խաղաղութիւն, հիւանդներուն՝ բժշկութիւն, ազգիս հաշոց սէր միութիւն աղերսող մեր շարակնոցին հառաչանքը:

Նոր քայլերգը պէտք է բերէ աստղերուն հետ մեր լիճերուն աչքխփուքը, հովերուն հետ մեր դաշտերուն սիրուրտուքը, երկինքն ի վեր՝ խիզախանքը մեր սարերուն, իրենց գլխուն՝ Նոյեան Տապան, իրենց լանջին՝ գինու աչգի ու աղանի՛ խաղաղութեան:

Ու Անտունի՛, Հոռովել Հօ՛...

Պէտք է ծնիլ այնպէս քայլերգ մը, որ երբ հնչէ՛ կարմի՛ր թոփ անցեալը, ներկան՝ կապո՛շտ, իսկ ապագան՝ արդար քրտի՛նք, ցորենի հա՛սկ, նարնջագոյն բե՛րք անսահման:

Ու վերջապէս պէտք է երկնել քայլերգը նոր, այնպիսի խո՛ր, Աստուածահո՛նչ եղանակով ու բառերով հրաշագործ՝ որ երբ հնչէ,

Մեռելներն անգամ ցատքեն իրենց գերեզմանէն, պատուի՛ կենան,

Ու մեզի հետ աշխա՛րհ երգէ՛

— Հազա՛ր ապրի Հայաստան:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

## Կեղերոնականի խօսքը

### Ա. ՏԱՐԻ

1. Առաջինը .....	6
2. Մարզիկը, Մամուլը, Գրագէտը .....	8
3. Ապրի'լ .....	10
4. Համազգեստի Կարօտով .....	12
5. Ուրկէ՛ Առինք .....	14
6. Կապ ու Ճամբայ .....	16
7. Բոլորին Դէմ .....	18
8. Սերունդը Լեռներուն Վրայ .....	20
9. Մեր Դիւցազնավէպին Ոգիով .....	22
10. Վերամուտ, Վերանորոգում, Վերածրագրում .....	24
11. Հայ Մարզիկի Կեցուածքը .....	26
12. Ղեկավարը .....	28

### Բ. ՏԱՐԻ

13. Տարուան Մը Հունձքը .....	30
14. Դաշտի Տղաքը Եւ «Միւս»ները .....	32
15. Մեր Միութիւնը Եւ Պիւտճէն .....	34
16. Համասփիւռքեա՛ն .....	36
17. Եղաւ .....	38
18. Ուրիշներուն Կարծիքը .....	40
19. Հայ Մկանի Ուժը .....	42
20. Նո՞ր Տարի .....	44
21. Ձեռնարկներու Շուրջպար .....	46
22. Հ.Մ.Ը.Մ.ի Սկսուողութիւնը .....	48
23. Միւս Դպրոցը .....	50
24. Ձգտումը .....	52

### Գ. ՏԱՐԻ

25. Կը Շարունակուի .....	54
26. Ի՞նչ Կ'ընեն Մեր «Միւս» Եղբայրները .....	56
27. Խօսքը .....	58
28. Փոխանցումը .....	60
29. Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական Ժողովը .....	62
30. Յարութեան Շունչով .....	64
31. «Խիստ Գնահատելի» .....	66
32. Հաւատարմութիւնը .....	68
33. Պատիւը .....	70
34. Իրարու Լրացուցիչ .....	72
35. Որուն Ձգել Հարստութիւնը .....	74
36. 36րդ Թիւը .....	76



Դ. ՏԱՐԻ

37-38.	Երկունքը .....	78
39.	Օրէնքը .....	80
40.	Ծնողներ	82
41.	Վեթերանները .....	84
42.	Թոռնիկը .....	86
43.	Արարատ .....	88
44.	Քոյր Ու Եղբայր .....	90
45.	15 Դեկտ. 1974 (Տասնամեակ) .....	92
46.	Մարզանքը Միջոց, Մարզիկը՝ Նպատակ .....	94
47.	Ժողովը .....	96
48.	Աշխարհ Պիտի Ծափահարէ Մեզ .....	98

Ե. ՏԱՐԻ

49.	Ֆութպոլը, Ֆութպոլիստը Եւ Նախագահը .....	100
50.	Մե՛ր Փլաթինինները .....	102
51.	Հ.Մ.Ը.Մ.ականը .....	104
52.	Շքանշանը եւ Շքանշանակիրները .....	106
53.	Քուէն, Քուէարկողը եւ Քուէարկութիւնը .....	108
54.	Քալուածքը .....	110
55.	Անձին Օրինակով .....	112
56.	Կորուստ .....	114
57.	Կո՛ւլ .....	118
58.	Կուերու Կոլը .....	120
59-60.	Բանակումը .....	122

Զ. ՏԱՐԻ

61.	Աստղերու Պէս .....	124
62.	«Նախկին» .....	126
63.	Խարոյկ Ու Յետուիթեան Երգ .....	128
64.	Նահատակները .....	130
65-66.	Արիւն Եւ Քրտինք .....	132
67-68.	Եզրափակում .....	134
69-70.	Աստուծոյ Եւ Ժողովուրդի Օրհնութիւն .....	138
71-72.	Տեղական Պայման .....	140

Է. ՏԱՐԻ

74.	70 Տարի .....	142
75.	Առաջին Կենաց .....	144
76.	Գայլիկ Ու Գայլիկի գաւազան .....	146
77.	Հայ Զինուոր .....	148
78.	Խոնարհները .....	150
79.	Բացականները .....	152
80-81.	Արցունքը .....	154
82.	Նորէն Սէուլ Ու Հաւատք .....	156
83-84.	Ամենայն Սրբոց .....	158

Ը. ՏԱՐԻ

85-96 Մի' Լար, Հայաստա՛ն	160
--------------------------	-----

Թ. ՏԱՐԻ

97-98 Կաղանդ է Եւ «Հո՞ն»	163
99-100 Յարգանքը	166
101-102 Քայլե՛րդ	170

Ծանօթ.— Իրաքանչիւր խմբագրականի մուտքին դրուածը՝ պարզապէս «Մարգիկ»ի նոյն թիւի կողքի նկարն է:



ՀԱՄԱՁԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon

by Hamaskaine Wahe Sethian Press

